

2259

241
₹ - 30

1907

010

2001

12012

ՔԱՐՈՋՆԵՐ

ՎԵՐ. ԱՏՈՒՅ ՄՈՆՈ

Ո՞Վ ԾԱՐԱՒ Է

«Եթէ մէկը ծարաւ է, թող ինձի գայ ու խմէ:» Յով: Է. 37:

Կա՞յ արդեօք հոս մէկը, որ ծարաւ է. մէկը որ ծարաւ է վայելքի, և չէ կրցած երբէք գտնել զինք դո՛հացներու կարող հաճոյքներ. մէկը, որ ծարաւ է լոյսի, և չէ կրցած երբէք յաջողիլ բան մը հիմնովին ճանչնալու. մէկը, որ ծարաւ է սիրոյ, և չէ կրցած երբէք իր ամբողջ սիրտը փոխանակել ուրիշի մը ամբողջ սրտին հետ. մէկը, որ ծարաւ է սրբութեան, և չէ կրցած երբէք իրաւցնէ ազատիլ մեզքի սեղմումներէն. մէկը, վերջապէս, որ ուժասպառ եղած է մինչև հիմա հալածելու նպատակ մը, որուն չէ կրցած հասնիլ, և ասկէ ետքը հասնելու յոյս ալ

57684-Ա. հ.

МБС ЧО. РАУПР
Г.С. Е. МОТЕНА
ЗУУТ-Арм.ССР
М. А. МЯСНАЯ
И. УСУ
37959-67

չունի: Դուք ամէնքդ, որ ծարւած էք, ա-
կանջ դրէք Յիսուս Քրիստոսի, ձեր Եղբօր և
ձեր Աստուծոյն. եղբայր՝ ձեր ցաւը զգալու,
և Աստուած՝ զայն բուժելու, որ ձեզ կը կան-
չէ այս ձեզ սպառող ծարաւին միջոցով, ձեզ
յագեցնելու բուն իր անձովը, և ձեզ զրկելու
այնչափ լեցուն որչափ թափուր եկած պիտի
ըլլաք իրեն: “Եթէ մէկը ծարաւ է, թող
ինձի դայ ու խմէ:”

Այս խօսքերուն մէջ սուրբ բան մը կայ,
զոր մարդ կը վախնայ աւրել անոր դպչելով,
և դժկամակութեամբ կը համարձակիմ պար-
զել Փրկչին քաղցր հրաւերը: Այսպէս բնա-
բանիս առջև լուռ պիտի ըլլայի յօժարու-
թեամբ, և ամէն բանախօսութեան նախա-
պատիւ պիտի սեպէի կէս ժամու լուծիւն
մը, եթէ կարենայի յուսալ որ այդ կէս
ժամը պիտի անցնէր “անբարբառ հեծու-
թիւններով, որոնցմով ինքն Հոգին բարեխօս
կ'ըլլայ մեզի” (Հռով. Բ. 26): Բայց այս վրս-
տահուծիւնը քիչերու վրայ միայն ունիմ. ինչ
որ շատերը առանձին չպիտի ընէին, ես սիրով
կ'ընեմ. չեմ ըսեր իրենց համար, բայց ի-
րենց հետ. և այդ կ'ընեմ փափաքելով ձեզ
բերելու՝ ոչ թէ մարդկային իմաստութեան
աշխատութիւնը, այլ աղօթքով հարցաքըն-
նուած և փորձառութեամբ մեկնուած Աս-
տուծոյ խօսքին պտուղը:

Ծարաւը երկու բան կ'ենթադրէ. նախ՝

զգացուած պէտք մը ներսէն, և, երկրորդ՝
դրսէն ոչինչ որ զայն յագեցնէ: Եթէ այս
պէտքը դրսէն յագենալիք բան մը գտնէր՝
ծարաւը տեղի պիտի տար յագեցումի, և
այսպէս երջանկութեան պատճառ պիտի ըլ-
լար: Եթէ պէտքը ներսէն չզգացուէր՝ ծարաւը
տեղի պիտի տար անտարբերութեան, և այս-
պէս պիտի դադրէր գոնէ ցաւի պատճառ ըլ-
լալէ: Բայց խնդրել առանց ստանալու,
փնտռել առանց գտնելու, տենչալ առանց
ձեռք բերելու, ահա ծարաւը, աւճ, ահա մար-
դուս ներկայ կացութիւնը. ահաւասիկ մեր,
ձեր ու իմ կացութիւնը: Մեր սրտին մէջ
կայ անհուն պարագ մը, ու կեանքի մէջ ոչինչ
զայն լեցնելու. շատ շատ քանի մը գձուծ
խաբուսիկ գոհացումներ, որոնք այս պարագ
պին մէջ կը նետուին կորսուելու համար մի-
այն, ինչպէս չոր տերև մը նիակարայի մէջ:

Մեր սիրտը, ա՛հ, ի՞նչ կայ անկէջ աւելի
անյագ. բայց ի՞նչ կայ նաև անկէջ նուազ
յագեցած: Փորձեցէք յիշել ձեր փափաք-
ներէն հատ մը, որ իր հանդիպած յուսա-
խաբութեանց պատճառով դառնացած չըլ-
լայ: Բոլոր այս ծարաւները, որ մեզ կը նեղեն,
բնական կարողութիւններ են որ կոչում ը-
րած են գոյութեան, և որոնց ոչինչ պատաս-
խանած է գոյութիւնը: Վայելքի ծարաւը
զգալու կարողութեան յուսահատութիւնն է:
“Սխալօրէն կոչուած գիտութեան” թողունք

իր հարևանցի արհամարհանքը ֆիզիքական մարդուն համար : Սրբազան Մատեանէն սորվեցանք յաւէտ յարգանք տալ երկրի փոշիէն ձևակերպուած այս մարմինին, որուն հիանալի կազմութիւնը Սաղմոսերդուն չի կրընար բաւականաչափ ճանչնալ : Նոյն ինքն Սատուած երբէք չարհամարհեց մայրական որովայնին յանձնուած մարմինին անդամները իր գիրքին մէջ արձանագրել, մինչև այն օրը ուր ծննդեան գաղտնիքը իլոյս բերելու էր կեանքի մեծագոյն գաղտնիքը : Սրբաբնիկ ծրագրին մէջ, “որուն ողորմութիւններն իր բոլոր գործերուն վրայ են,” այս մարմինին անդամները պարտէին օրինաւոր վայելքի և օգտակար գործունէութեան մը գործիքները ըլլալ : Կ’ուզեմ որ անոնք հիւանդութեամբ կամ արկածով ցաւի պատճառ չըլլան, այլ ստեղծագործութեան կարգովը մնալին, բթանան, տարիքով խանգարուին, այսինքն մեր էութեան բնական և կանոնաւոր զարգացումովը : Բնութիւնը կը փորձէ զմեզ զրկել այն վայելքներէն որոնց համար տրուած է մեզի կեանքը, և վերջապէս զմեզ նոյն ինքն կեանքէն ալ կ’արտաքսէ :

Լոյսի ծարաւը ճանչնալու կարողութեան յուսահատութիւնն է : Այս տեղեկանալու պէտքը, զոր ծնած ատեննիս միասին կը բերենք, թէ մեր անձին նկատմամբ, թէ աչխարհի նկատմամբ և թէ ամէն բան ստեղծող

անտեսանելի Սատուծոյ նկատմամբ, այս պէտքը, ժամանակին ու միջոցին ամենահեռաւոր սահմաններուն հասնելով և մարդկային մտքին բոլոր մեծ խնդիրներուն իրագրել ըլլալով միայն պիտի դադրի, և քաղելով միայն կրնայ յագենալ : Գիտնալու համար, վերջապէս, քիչ մը բան զոր դուք և ես, խեղճ արարածներ, առջևէն տկարութեամբ, ետևէն՝ յոգնութեամբ, աջէն՝ ժամանակի օղութեամբ, ձախէն՝ կեանքի պիտոյքներով, և ամէն կողմէն՝ աննուաճելի տգիտութեամբ սահմանափակուած ենք : Շատ շատ հաղուադէպ մարդիկ կարող կ’ըլլան գիտնալ ինչ որ Արիստոտէլ մը, Հերոնիմոս մը, Անսելմոս մը, Տէքարթ մը, Լայպնից մը, այսինքն մարդ մը, որ իր տգիտութեանը աւելի տեղեկացած է քան ուրիշները, իր տաղանդն ու ջանքերը գործածելով տեղեկացած է : չեմ ըսեր աստուածային կատարելութեանց և կամ արևը սևցնող բիծերուն գաղտնիքին նկատմամբ, այլ այն բանին որ իր մէջը կը խորհի, և կամ իր ոտքերուն տակ ծիւ արձակող խոտին ծղօտին նկատմամբ :

Սիրոյ ծարաւը սիրելու կարողութեան յուսահատութիւնն է : Եթէ կայ բան մը որ մեզ ստորակարգ արարածներէն կը զանազանէ, բան մը որ մեր մէջ կը ճանչցնէ Սատուծոյ ցեղը, “որով կ’ապրինք, կը շարժինք ու կանք,” բան մը վերջապէս, որ մեզի ըմբռնանել տայ կեանքին

երանութիւնը և փառքը, ապահովաբար այն խորհրդաւոր և քաղցր կարողութիւնն է զոր ունինք կեանքը բազմապատկելու, մեր մէջէն դուրս ելլելով՝ ուրիշի մը մէջ ապրելու համար. ահա սէրը: Սիրել, երբ մէկը կը սիրէ ոչ թէ շահու և ցանկութեան սիրով որ ծպտեալ եսասիրութիւն է միայն, այլ այն սիրով որ իր սկզբունքն ու տիպարը Աստուծոյ մէջ ունի, սիրել է արտափայլել պատկերը Աստուծոյ որ սէր է, սիրել կը նշանակէ երկինքը երկրի վրայ իջեցնել: Այո՛, բայց այդ երկինքը ո՞ւր է երկրիս վրայ: Սէրը, ինչպէս զայն կ'անուանէ և անոր կը ցանկայ մարդուս սիրտը, սէր մը, որ սիրտը կը դիւթէ առանց մոլորցնելու, որ սիրտը կ'ողողէ առանց արբեցնելու, որ սրտին կը տիրանայ առանց զայն յափշտակելու. ճշմարիտ, մաքուր, սուրբ, աստուածային սէրը ո՞ւր գտնելու է. ո՞ւր կրնանք փնտուել զայն հոս, աշխարհիս վրայ: Ո՛հ, ըսէք ինձի, եթէ գիտէք, բաղդը ունեցած երբէք հանդիպելու արարածի մը՝ ուրուն կրցաք տալ ձեր ամբողջ սիրտը իրենինին փոխարէն, առանց վերապահութեան, առանց խղճահարութեան, առանց փոխարէնի, առանց ընդհատութեան, ինչպէս մարդուս սիրտը պէտք ունի յանձնուելու, որ ըսել կարենայ, կը սիրեմ և երջանիկ եմ սիրելով— արարած մը, սիրելի և սիրող, ըլլայ այն աշխարհիս քեզի մատուցանել կրցած ամենա-

սիրելին և լաւագոյն սիրողը, սիրելու ընդունակութիւնդ լեցնելու բաւական առանց հոն պարապ մը թողելու, և գոհացնելու սիրտ մը որ միշտ կը փնտուէ անխոնջ յարատեութեամբ հանգչելիք տեղ մը:

Սրբութեան ծարաւը բարիք գործելու կարողութեան յուսահատութիւնն է: Եթէ միտքը կեանքին աղն է, եթէ սիրտը անոր հրապոյրն է, խիղճն ալ անոր մրցանակն է: Երիցս սուրբ Աստուծոյ նմանելու գերագոյն փառասիրութիւնը, ամէն բան անոր կամքին հպատակեցնելու, և ինչ ալ պատահի, ամէն բան անոր օրէնքովը կարգադրելու որոշումը, ահա ամենէն խորունկ, ամենէն տիրական, ամենէն անփոխանցելի, և անտարակոյս կատարեալ գոհացումի մը նկատմամբ ամենավստահ պէտքը մարդկային բնութեան սրբութիւնն է: Կատարեալ գոհացում: Աւա՛ղ, չէ՞ք տեսներ այն դառն ժպիտը զոր այս յոյսը ամենուն մէջէն լաւագոյններուն դէմքին վրայ յառաջ կը բերէ: Հաւատացէք մարդու մը, որ սրբութեան մէջ հաւանօրէն երբէք չգերազանցուեցաւ ուրիշէ մը և կամ թերևս անոր հաւասարող ալ չեղաւ: Լսեցէք սուրբ Պօղոսին, որ ժամանակակից եկեղեցիին և ապագայ սերունդներու առջև կը պարզէ վկայութիւնը իր անկարողութեան, բայց որ երբէք այս բառերով պիտի չյայտնուէր եթէ իրեն այդպահուն մնացած չըլլար բան մը որուն

վրայ Սուրբ Հոգւոյն միջոցովը կը հեծէ այն-
քան ցաւագին: “Օրէնքը հոգւոր է, բայց
ես մարմնաւոր եմ, մեղքի տակ ծախուած: Գանդի
ինչ որ կ’ընեմ չեմ ճանչնար. ոչ թէ
ինչ որ կ’ուզեմ զայն կ’ընեմ, հապա ինչ որ կ’ա-
տեմ՝ զայն կ’ընեմ . . . Քանզի գիտեմ որ իմ
ներսիդիս, այսինքն իմ մարմնիս մէջ, բարի բան
չբնակիր. վասն զի կամեցողութիւն կայ քովս,
բայց բարին ի գործ դնելը չեմ գտներ: Քանզի
ոչ թէ բարին, զոր կ’ուզեմ, կ’ընեմ, հապա չա-
րը, զոր չեմ ուզեր, զայն կ’ընեմ. . . Ուտի
ես կը գտնեմ օրէնք մը, որ երբ բարին ընելը
կը կամենամ, չարը իմ քովս է: Վասն զի ներսի
մարդուն նայելով Աստուծոյ օրէնքին կը հաւ-
նիմ. բայց ուրիշ օրէնք մը կը տեսնեմ իմ ան-
դամներուս մէջ, որ իմ մտքիս օրէնքին դէմ
կը պատերազմի, և զիս գերի կ’ընէ մեղացօ-
րէնքին որ իմ անդամներուս մէջն է” (Հռով.
Է. 14—23): Երբ Պօղոս մարդկային բնութեան
վրայ այս կերպով խօսած է, աւերորդ աշխա-
տանք մը պիտի ըլլար մէկիկ մէկիկ հաւաքել
Սոկրատի մը, Քանթի մը, Օգոստինոսի մը
կամ Լուտերի մը խոնարհեցուցիչ խոստովա-
նութիւնները: Վերջապէս ուրիշ վկայութիւն
հարկ չէ ձեզի քան անկեղծութեամբ քննուած
բուն ձեր խղճին վկայութիւնը: Ե՞րբ իրա-
գործեցիք, ե՞րբ մօտեցաք միայն իրագործե-
լու, սրբութեան գաղափարականը զոր կը կրէք
ձեր մէջը: Ե՞րբ կրցաք աստուածային օ-

րէնքին ենթարկել ձեր խորհուրդները, խօս-
քերը, մինչև իսկ արարքները: Ե՞րբ կրցաք
ընել ամէն ինչ որ կ’ուզէիք, ամէն ինչ որ
պարտէիք, և ամէն ինչ որ կրնայիք: Ա՛հ,
ո՞վ պիտի չխոստովանէր որ այն կէտը, ուր
մեր ներքին փափաքներուն դժհացումը ամե-
նակարևորն է, է նաև այն կէտը ուր այդ դժ-
հացումը մեզմէ խոյս կու տայ անյեղիօրէն:
Ո՞վ կրնայ յիշել թէ ինչ պարտի ըլլալ բա-
րեպաշտութեան, դուրի, մաքրութեան և
համբերութեան մէջ, և իր հոգիին ամենա-
ներքին խորքերէն չաղաղակել, “Ծարաւ եմ:”
Ծարաւ եմ. պէտք է ասանկ վերջացը-
նել ամէն անգամ որ սրտին պէտքերը կեան-
քի իրականութեանց հետ բաղդատութեան
կը դուրին: Մեր կեանքի երկու կէսերուն միջև
գտնուած անհամաչափութիւնը այնչափ մեծ
է որ մարդ դժուարաւ կը համոզուի թէ անոնք
իրարու համար շինուած ըլլան: Տուէք ինծի մար-
դուն սիրտը, այն այնքան մեծ, այնքան փա-
ռաւոր, այնքան եռանդոտ սիրտը. երբէ՛ք, ո՛հ,
երբէ՛ք պիտի չկրնամ անոր համար իբր թատր
ճանչնալ կեանքը, որ մեր աչքերուն առջև
դրուած է: Եւ, իր կարգին, տուէք ինծի
կեանքը, եղածին պէս, այն այնքան անձուկ,
այնքան ցուրտ և այնքան շուտ սպառող
կեանքը. երբէ՛ք, ո՛հ, երբէ՛ք, պիտի չկրնամ
անոր համար իբր դերասան ճանչնալ սի՛րտը,
որուն բաբախելը կը լսենք մեր ներսիդին: Ան-

պատշաճ կը կոչուի այն միութիւնը որ բռնազբօսիկ մերձեցումը բնութեանց անհամաձայնութիւնը երևան բերելու միայն կը ծառայէ: Եւ մարդ, ցորքան Աւետարանէն սորված չըլլայ այս գոտութեան գաղտնիքը, պիտի փորձուէր կարծելու թէ այս սիրտը ուրիշ աշխարհի մը համար ստեղծուած է, և կամ այս աշխարհս ուրիշ սրտի մը համար, և թէ անոնք տարօրինակ ու կոյր խառնակութեամբ մը միայն նետուած են միասին: Բայց ինչ ալ ըլլայ, բան մը ստոյգ է, որ կեանքին բաժակը, զայն մինչև յատակը խնդրին կը պահէ դառն մրուր մը, զոր անփորձութիւնը պատրանք կ'անուանէ, ու փորձառութիւնը՝ մեղամաղձոտութիւն: Մեղամաղձոտութիւնը, ինչպէս ռամիկը կը կարծէ, հիւանդ ուղեղի մը ունայն երազը չէ. անիկա խիստ իրական վիճակի մը նկատմամբ մտախոհ գիտակցութիւնն է. անիկա բորբոքած մարդուն մէջ չէ, այլ ինքզինք ճանչցող մարդկութեան մէջ: Մեղամաղձոտութիւնը երկրային կեանքին վերջին բառն է. և անոնք, որոնց վրայ անիկա ամենէն ծանր կը կոխէ, այն արտօնացեալ մտքերն ու սրտերն են որ մարդուն ճշմարիտ վախճանովը կը զբաղին և ամենալաւ կերպով կը հաստատեն անոր հասնելու անկարելութիւնը: Այս մեղամաղձոտութիւնը կը շնչէ մարդկային բոլոր բաներուն մէջ, սկսելով լաւագոյններէն. իմաստասէրին խորհրդածութեանց մէջ, բա-

նաստեղծին երևակայութեանց մէջ, արուեստագէտին ստեղծագործումներուն մէջ, պետական մարդուն յղացումներուն մէջ, մեկուսացումի զրկողութեանց մէջ, հասարակ կեանքի սխալանքներուն մէջ, ամուսնութեան և ընտանիքի մէջ, ծնունդի և դաստիարակութեան մէջ, ամէն ձեռնարկի սկիզբին ու վախճանին մէջ, մեր ցաւերուն և մեր հաճոյքներուն մէջ, և, վերջապէս, մեր ամբողջ կեանքին մէջ, որ ջահի մը պէս սպառելու պայմանաւ միայն կը պահուի: Ինչ կ'ըսեմ. անիկա կը շնչէ նոյն իսկ բնութեան մէջ, կենդանիին մէջ որ կը պարտասի, ծաղիկին մէջ որ կը հակի, տերեւին մէջ որ կը թափի, ջուրին մէջ որ կը վազէ, օրուան մէջ որ կը տարաժամի, եղանակին մէջ որ կը վերանորոգուի, վերջապէս այս շարունակական փոփոխութեան մէջ՝ որմէ կը բաղկանայ արարածներուն շարժումը, որոնք իրարու տեղ կ'անցնին, իրարու կը յաջորդեն, իրարմով կը սնանին:

Դուք այս ոճը կեանքի եղերերգը մի' նկատէք. ասիկա անոր եղերերգը չէ, այլ պատմութիւնը: Բանաստեղծական կեղծիքը հակառակ կերպով կը կազմուի. անիկա կեանքը կը գեղեցկացնէ առանց զայն ճանչցած ըլլալու, և կը ժպտի նկարի մը՝ որուն գոյները իրական աշխարհը դեռ հայթայթած չէ: Գտէք ինձի հոգի մը, որ իր գոհացումը դեռ

կեանքէն կը սպասէ . անիկա , կանխաւ կ'ըսեմ ձեզի . ձորին մէջ իր առաջին քայլերը առնող ու իր առաջին ծաղիկը քաղող պատանի մը պիտի ըլլայ . գեղարուեստի երիտասարդ սիրահար մը , որ իր անդրանիկ գլուխ գործոցին վրայ կ'երազէ , մատաղատի պուէտ մը , որ իր առաջին տողերը կ'երգէ , կամ թերևս նորատի ամուլ մը , որ իր մեղրալուսինը կ'անցնէ : Լաւ ուրեմն , ձեր յուսախաբութեանց մէջ իսկ , սիրելի երիտասարդներ , գացէք , ըրէք ձեր փորձերը , քանի որ դեռ ըլլալիք են . արտաքինը ներքինին հետ համաձայնեցուցէք , եթէ կրնաք . յագեցուցէք ձեր աչքը տեսնելէն , ձեր ականջը՝ լսելէն . մինչև ծայրը գոհացուցէք ձեզ տանջող դիտնալու հետաքրքրութիւնը : Գտէք միակ առարկան , որ պարտի ամէն կերպով համապատասխանել ձեր սիրելու պէտքին , իրագործեցէք բարոյական դաղափարականը , որուն կը տենջայ ձեր ներսի մարդը . վերջապէս գտէք ձեր սրտին ցանկացած բարին , ու երբ անգամ մը գտնէք , հաստատեցէք զանիկա ու յետոյ եկէք քսածներս հերքելու . կը սպասեմ ձեզի բայց մենք , չափահասներս , ունինք մեր փորձառութիւնները , ու Ժողովողի այնքան խորապէս տխուր , բայց ոչ նուազ խորապէս ճշմարիտ տողերուն մէջ զանոնք գերազանցող բան մը չենք գտներ , և կ'ըսենք անոր հետ , « Ունայնութիւն ունայնութեանց , ամէն բան

ունայնութիւն է . . . Սրբուն տակ բոլոր գործերը տեսայ , ու ահա ամէնն ալ ունայնութիւն ու հոգիի տանջանք է . . . Եւ ես ձեռքերուս ըրած ամէն գործերուն , և ընելու համար իմ քաջած ամէն աշխատանքիս նայեցայ , և ահա ամէնն ալ ունայնութիւն էր ու հոգիի տանջանք . . . Սնոր համար այս կեանքէն զգուեցայ , վասն զի արևուն տակ եղած գործերն ինծի գէշ երևցան » (Ժող. Ա.) : Խնդրեցինք ու ոչինչ ստացանք . աղաղակեցինք և մեզի պատասխան չտուին . ուստի յիրաւի ծարաւ ենք : Ինչ որ մեր սրտին պարապին մէջ նետեցինք՝ մեր ծարաւը շտոցնելու միայն օգնեց . ինչ որ փորձեցինք անոր ցանկութիւնները յագեցնելու , զանոնք աւելի ևս գրգռելու միայն ծառայեց . ծարաւ ենք : Ոչ միայն կեանքը մեզ բնաւ չյագեցուց , հապա այլևս չենք սպասեր որ մեզ երբէք յագեցնել կարենայ . լաւ հասկցանք որ անիկա չունի մեր պահանջած բանը , զոր այլևս իրմէ չենք խնդրեր . ծարաւ ենք : Մեր բոլոր խուզարկութեանց իբր փոխարէն և ի վախճանի մեր բոլոր հառաչանքներուն , ահաւասիկ պասքած ու պապակած սիրտ մը մեր մէջ , գոյութեան մը առջև որ մեզ գոհացնելէ դադրած ըլլալուն համար միայն դադրած է մեզի պատրանքներ պատճառելէ : Ծարաւ ենք , միշտ ծարաւ , և աւելի ծարաւ :

Կեանքի և սրտի միջև կեցած այս շարուն

նակական հակասութիւնը անհանդուրժելի կը դառնայ ժամանակով. անոր մէջ հանգչել անկարելի է. պէտք է անկէ ելլել ամէն գնով. և անկէ ազատելու համար այս երկու միջոցներէն մէկին կամ միւսին ընտրութիւնը միայն կը մնայ մարդուս, այսինքն կամ կեանք մը գտնել որ սրտին մակարդակին բարձրանայ, և կամ, եթէ ատանկ կեանք մը գոյութիւն չունի, սիրտը իջեցնել կեանքի մակարդակին: Սիրտը կեանքի մակարդակին իջեցնել — ահաւասիկ գուհիկ միջոցը, որուն կը դիմէ մարդկութեան ինը տասներորդը: Սիրտը կեանքի համար շատ մեծ է արդեօք. թող ատիկա արդելք մը չըլլայ: Սիրտը կը դրուի իր տեղը, կը ճնշուի մինչև որ սօրվի կեանքի պարագաներուն վրայ իր պահանջները կանոնաւորել, ինչպէս կը կտրեն ծառի մը շատ զեղի ճիւղերը, մինչև որ հովանոցին մէջ մէկ գծի վրայ գայ. և կամ ինչպէս բարբարոսն Պրոկիւստ իր զոհերուն իր մահիճէն աւելցած մարմինի մասերը կը կրճատէր: Մեր բնական էութիւնը զգալի կարողութիւն մը ունի, քաղցր և միանգամայն փափուկ վայելքներու ընդունակ. սակայն անիկա իրեն արժանաւոր գոհացում չի գտներ աշխարհային բաներուն մէջ: Ուրեմն պէտք է քիչով գոհանալ, և մեր բնական մարդուն հիանալի կազմածը վերածել իր պէտքերուն և ախորժակներուն յագեցումին մէջ փակուող անասունի չափերուն:

379-6567

Մեր միտքը ունի հարցաւորձելու և ճանչնալու ընդունակութիւն մը, որ երբէք չի յոգնիր խուզարկելէ, և որ հոս իր հանգիստին համար երբէք տեղ մը չի գտներ: Պէտք է ուրեմն կտրել, նետել այս անտանելի հետաքրքրութիւնը, ուսման ծարաւը դարձնել առևտրական շահագիտութեանց կամ քաղաքական վիճաբանութեանց եռանդին, և մեր խաբուած խելքը վարժեցնել ինք իր վրայ դառնալ, անվերջ և անարդիւն, ինչպէս իրեն վանդակի տեղ ծառայող անիւին շարժումովը անդադար ինքզինք թմրեցնելու դատապարտուած դժբաղդ սկիւռը: Մեր սիրտը ունի սիրելու ընդունակութիւն մը, զոր արարածներէն լաւագոյնները իրենց զայն յագեցնելու անկարողութեամբ պարզապէս կը դրդուին: Ուրեմն պէտք է հրաժեշտ տալ սիրոյ, և կերտել նուազ պահանջկոտ սիրտ մը և յարմարիլ ստացուած չափով սիրելու, գրեթէ — ներուի ինձի այս ընտանի բաղդատութիւնը — ինչպէս եղբ կամ ձին կը յարմարի իր պէտքերուն: Մեր խիղճը ունի սուրբ հնազանդութեան ընդունակութիւն մը, որ իր վեհ թուիչքին համար ոչինչ չափազանց բարձր կը գտնէ, և որ սակայն թուշիլ փորձել չի կրնար առանց իւրաքանչիւր քայլին զարնուելու հոգիին խորքը պահուած թակարդներուն կամ շարին թելադրանքներուն և կամ ապականած ընկերութեան մը առածներուն: Ու



րեմն պէտք է կտրել անոր թևերը, պէտք է բռնել անոր մտացածին կատարելութեան սուգը, պէտք է յանձն առնել ապրիլ այնպէս ինչպէս կ'ապրի ամէն մարդ, և ինք իր մով գոհ ըլլալ, պայմանաւ որ մարդ խոյս տայ անհեթեթ զգայնականութեան մը մոլորանքներէն, գձուձ ագահութենէ, յիմար զեղիսութենէ կամ անպարկեշտ անձնասիրութենէ:

Մարդ այս բոլոր բաները իր անձին չըսեր, բայց կը շարժի այս մտքով. մարդ այս անարգ վխտածանք իրեն չառաջադրեր, բայց անոր կը հակի աղօտ բնազդով մը. և, աւա՛ղ, վերջապէս կը հասնի անոր: Այսպէս կը ձևուին, ըսելու էի յաւէտ՝ կը տձևուին մարդիկ, որոնց մարդ ըլլալու համար մարդ ըլլալ միայն կը պակսի. մարդիկ, որոնք անզգալաբար կը մերկանան իրենց ներսը գրոշմուած Աստուծոյ պատկերէն, առնելու համար պատկերը անկեալ սերունդին, որուն ծոցին մէջ նետուած են. մարդիկ, որոնք կրցած են, ինչպէս իրենք կ'ըսեն, իրենց համար իրաւունք, ըսէ յաւէտ՝ օրապահիկ մը շինել, և որոնք զգացումէ, հետաքրքրութենէ, սէրէ, սրբութենէ այնքան միայն կը պահեն իրենց որ կը հասնի իրերու բարձրութեան, այն իրերուն՝ որոնց պարտ էին տէրերն ըլլալ, բայց գերիններն եղած են: Շատ ցաւալի է արդէն երևոյթը անհատի մը որ հաւանած է այսպէս անդա-

մատել ինքզինքը. հապա ի՞նչ ըսել. ամբողջ սերունդի մը համար որ յանձնառու ըլլայ իր վրայ կատարել այս ամօթալի գործողութիւնը: Եւ սակայն ի՞նչ տարբեր տեսարան կը ներկայացնէ աշխարհը քան այն յարատև և անվերջ շարժումը բազմութեան մը, որ իր մէն սիրտը հեռացուցած է կեանքին հետ համաձայնելու համար: Եթէ երբէք այս բազմութեան ծոցէն բարձրանան քանի մը ազնիւ հոգիներ, որոնք կը նախընտրեն իրենց ծառաւը, անոր պատճառաւ բոլոր տանջանքներովը, քան թէ անկէ ազատիլ իրենց անձերը ոչնչացնելով. նոյն իսկ ասոնք կրնան պարծիլ թէ այս ազնիւ որոշումը մինչև վերջը կ'իրագործեն: Կա՞յ արդեօք հատ մը որ բոլորովին ազատ ըլլայ այս ընդհանուր նուատացումէն. մէկը որ չափով մը թերացած չըլլայ զիջանելով սովորութեան, օրինակին, կարծիքին, հարկին, վերջապէս եղած բոլոր բաներուն:

Մարդկային բնութիւնը չմեղադրենք. անիկա հոս աւելի գութի արժանի է քան զայրոյթի: Անգամ մը ևս իրերու ոյժը կը քաշէ, և կը ստիպէ սիրտը և կեանքը իրարու հետ համաձայնելու: Եւ մեզի ուրիշ ճար չի մնար բայց միայն աստիճանաբար մարել մեր սիրտը կեանքի հեղձուցիչ մթնոլորտին մէջ, եթէ չը գիտնայինք, ընդհակառակը, կեանքը սրտին հնուցովը նորոգելու միջոց մը: Փոխանակ սիրտը

կեանքին մակարդակին իջեցնելու, կեանքը սրտին մակարդակին բարձրացնել — ահա աստիկ այս ահագին առեղծուածին միակ մարդավայել լուծումը: Այս միայն կարող է մեզ գոհացնել առանց ստորնացնելու. բայց այս լուծումը հնա՞ր է արդեօք: Այո՛, հնար է, ինչու որ պարտի այնպէս ըլլալ: Հնար է, ինչու որ մեր մէջէն բան մը Աստուծոյ կողմէն այնպէս կ'ըսէ մեզի. հնար է, ինչու որ Աստուած իր Որդւոյն, իր միւս անձին, միջոցովը կը յայտարարէ մեզի՝ «Եթէ մէկը ծարաւ է» . . . ի՛նչ պարտի ընել. խեղդե՞լ իր ծարաւը. ոչ. այլ անոր տալ ազատ ընթացք մը, և զայն յազեցնել Յիսուս Քրիստոսով. «Եթէ մէկը ծարաւ է, թող ինծի դայ ու խմէ:» Փա՛ռք Աստուծոյ, կայ ուրեմն կեանք մը, որ լիովին կը համապատասխանէ իր ամենաբարձր բնազդներուն հասած մարդկային սրտին բոլոր պէտքերուն: Այս կեանքը Յիսուս Քրիստոսի մէջ է, ուսկից մեզի կը հաղորդուի հաւատքի ճամբով:

Մեր երկրին սնուցած բոլոր մարդերէն ո՞վ է ան որ իր անձին մէջ տուած է ներքին ներդաշնակութեան և խաղաղութեան ամենակատարեալ օրինակը, լաւ ևս՝ նախատիպարը: Պատասխանեցէք, «Յիսուս Քրիստոս մարդը:» Ասիկա է անունը զոր Պօղոս առաքեալ կու տայ Աստուծոյ Որդւոյն, նկատելով զայն իր մարդկային բնութեան խոնարհ կատարե-

լութեանը մէջ: Այս խաղաղութիւնը, այս ներդաշնակութիւնը կ'ենթադրէ որ Յիսուս Քրիստոս մարդուն սիրտը, հակառակ մերիւնին, գտած էր կեանք մը որ անոր կը համապատասխանէր ամէն կերպով, և ի՛նչ էր այն կեանքը:

Ասիկա երկրային կեանք մը չէր: Երկրային կեանքէն դատելով՝ Յիսուս Քրիստոս մարդը բոլոր մարդոց մէջէն այն է՝ որուն մէջ ներքին պէտքերու և արտաքին գոհացումի միջև կեցած հերձուածը, ամենակատարեալ և միաժամանակ ամենազգայուն եղած ըլլալու է: Ինչու որ ոչ մէկը այնչափ մեծ սիրտ մը ունեցաւ, և ոչ մէկուն այնչափ դառն եղաւ կեանքը: Յիսուս Քրիստոս, զոր Պիղատոս իր կարծածէն շատ աւելի հաւատարմութեամբ նկարեց երբ Հրէաներուն դառնալով ըսաւ, «Սհա այն մարդը:» Յիսուս Քրիստոս միայն մարդ մը չէ. ան մարդն է, մարդերուն մարդը, մարդ ուրուն մէջ կը բովանդակուի ամբողջ մարդկութիւնը, և որ իր որոշիչ յատկանիշերը կը հաղորդէ անոնց ամենաբարձր կարողութեան: Անոր էութեան բոլոր մասերը, խիղճ, սիրտ, հոգի, մինչև իսկ մարմին օժտուած էին գերազանց ընդունակութեամբ և նրբութեամբ մը, և ինք իր սիրտը ուրիշ ունէ մէկէ աւելի կը բնար վայելքներու, որոնց համար եղած է կանոնաւոր մարդկութիւնը. ուրիշ ունէ մէկէ աւելի կը մատնէր նաև իր սիրտը անկեալ մարդկութեան

վերապահուած զրկանքներու և դառնութեանց զգացումին : Այսպէս երբ Որդին Մարդոյ, վեհ վախճանին մօտ, ուր ամէն բան պիտի վերջանար իրեն համար և իրմով, կ'արձակէ հետևեալ աղաղակը, հազար տարիէ ի վեր Սուրբ Գրոց միջոցով ծանուցուած, “Մարաւ եմ” (Յովհ. ԺԹ. 28, Սաղ. ԿԹ. 21) : Հա՛րկ է ըսել թէ ան մեր խեղճ երկրին ծոցը կուտակուած քիչ մը ջուրով յազենալի նիւթական պէտքէ մը աւելի բան մը կը յայտնէ : Յիսուսի բնական ծարաւը յայտարարն է աւելի խոր և աւելի մեծ ծարաւի մը, որ կը տանջէ անոր ամբողջ մարդկային էութիւնը : Երջանկութեան ծարաւ, լոյսի ծարաւ, սիրոյ ծարաւ, սրբութեան ծարաւ, մեղ սպառող ըողոր ծարաւները անոր մէջ կը կեդրոնացնեն իրենց բոլորքը, Եւ ոչ ոք երբէք պիտի զգայ անորինին հաւասար պէտք մը, ոչ՝ անվիշտ կեանքը վայելելու, ոչ՝ անստուեր ճշմարտութիւնը նկատելու, ոչ՝ անվերապահօրէն սիրելու և սիրուելու, և ոչ՝ Աստուծոյ հաղորդութիւնը ճաշակելու առանց ամպի :

Այս ծարաւներուն ծարաւը յազեցած է արդեօք : Աւա՛ղ, քացախով լեցուած սպունգ մը — ահա ինչ որ իր ճգնաժամին մէջ կը ստանայ խաչեալը իր դահիճներէն : Գիրքերը արդէն նախատեսած էին ասիկա . “Կերակուրի տեղ լեղի տուին ինձի, ու ծարուած աւտենս քացախ խմցուցին” (Սաղ. ԿԹ. 21) :

Ահա այս լեղին, այս քացախը նշանակն է ան պատասխանին զոր երկիրս կուտայ Որդին Մարդոյ լավիող ծարաւին : Անոր երջանկութեան ծարաւին երկիրս կը պատասխանէ այն բաժակով՝ որուն իր շրթանց մօտ ենալը ան չի կրնար տեսնել առանց յետս ընկրկելով կանչելու, “Հայր, եթէ կարելի է՝ թող այս բաժակը ինձմէ անցնի” (Մատ. ԻԶ. 39) : Անոր լոյսի ծարաւին երկիրս կը պատասխանէ այն խաւարով որ կը քողարկէ աւրևուն երեսը, խորհրդաւոր առհաւատչեայ այս միւս խաւարին որ այն մթին ժամուն կը ծածկէ աստուածային արդարութեան խորհուրդները, և որուն մէջ ինքն Աստուածորդին իսկ դժուարութիւն կը զգայ ինքզինք գտնելու . “Քու երեսդ մի՛ դարձնեք քու ծառայէդ . . . Սիրտս խռոված է . աչքերուս լոյսը ա՛լ փախած է :” Անոր սիրոյ ծարաւին, որ իր քաւչական զոհովը կոչում կ'ընէ անիծուած ու կորսուած աշխարհին, այս ապաշնորհ աշխարհս կը պատասխանէ զոհին կռնակ դարձնող անտարբերութեամբ, զայն լքանող վատութեամբ, զայն մատնող նենգութեամբ, զայն դատապարտող ատելութեամբ, զայն սպաննող կատաղութեամբ . “Անոնք իմ ձեռքերս ու ոտքերս ծակեցին . . . մինչև անգամ հացս ուտողը ինձի դէմ կրունկ վերցուց . . . Սպասեցի որ մէկը գլխայ ինձի, բայց մէկը չի կար և մխիթարիչներէն

մէկը չգտայ։” Ու եթէ ան վերջապէս ապաւինի իր Աստուծոյն ու իր Հօրը ծոցը, անոր իր Աստուծոյ և իր Հօր հաղորդակցութեան ծարաւին աշխարհս կը պատասխանէ իր անթիւ և անչափ մեղքերով, զորս իր վրայէն կը նետէ անոր անմեղ գլխուն վրայ, և ուրոնք անտանելի ծանրութեամբ մը կը ճնշեն մինչև իսկ անոր հոգիին աղօթքին վրայ. “Իմ անօրէնութիւններս գլխէս վեր են. անոնք իմ կրեւու կարողութենէս աւելի ծանրացան։ Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ զիս թողուցիր. զիս փրկելէն ու ազազակիս խօսքերէն հեռու եղար։”

Բայց եթէ Յիսուս Քրիստոս մարդուն երկրային կեանքը անոր ծարաւը կը գրգռէ փոխանակ յագեցնելու, ի՞նչ է ուրեմն այն միւս կեանքը, որ անոր ծարաւը կ’անցնէ, որ անոր կը խմցնէ, և որ զայն կ’ողողէ խաղաղութեամբ և ներդաշնակութեամբ։ Այս միւս կեանքը այն է զոր ինք կը նկարէ իր մեռելներէն յարութեանը յաջորդող ԺԶ Սաղմոսին մէջ, ըսելով. “Կենաց ճամբան ինձի պիտի ցուցնես։” Այն կեանքն է, զոր Հայրը անոր կը խոստանայ Եսայեայ ըբերնով, իբր փոխարէն իր զոհուած երկրային կեանքին. “Անոր անձը մեղաց համար զոհ ըլլալէն ետքը անոր օրերը պիտի երկնցնէ։” այն կեանքը, վերջապէս, որով առաքեալը կը պարզէ մեզի աշխարհիս փառքէն և կեանքէն իր հրաժարումին գաղտ-

նիքը. “Յիսուսի նայինք, մեր հաւատքի առաջնորդին ու կատարողին, որ այն ուրախութեան համար, որ անոր առջև կեցած էր, յանձն առաւ խաչը, արհամարհեց ամօթը, և նստաւ Աստուծոյ աթոռին աջ կողմը” (Եբր. ԺԲ. 2)։ Հաւատքի միջոցով թափանցիկ եղած երկրաւոր կեանքի մէջէն Յիսուս կը գտնէ երկրորդ կարգի կեանք մը, որուն մէջ պիտի առաջնորդէ ծարաւ եղողին վաղու ան օրը. կեանք մը, որ եղած է իր սրտին համար, ինչպէս իր սիրան եղած է այդ կեանքին համար. կեանք մը, որուն իր ծարաւը կը սպասէ ուղածին պէս յագեցնալու համար։ Եթէ մարդ ծարաւ է երջանկութեան, ահաւասիկ այս նոր կեանքին մէջ “Տէրօջը երեսին առջև լեցուն ուրախութիւն կայ, ու անոր աջ կողմը միշտ հաճութիւններ կան” (Սաղ. ԺԶ. 11)։ Եթէ ծարաւ է լոյսի, ահաւասիկ բոլոր քօղերը վերցած, աստուածային սիկ բոլոր քօղերը վերցած, աստուածային ճշմարտութեան լեցունութիւնը կը փայլի անոր մէջ և անոր համար։ Եթէ ան ծարաւ է սիրոյ, ահաւասիկ իր փրկածներուն ընտանիքը, որ իր սիրոյն կը պատասխանեն սիրով, և կը պատմեն իրարու մէջ և սուրբ հրեշտակներուն հետ սիրոյ դասը, զոր իրմէ սորվեցան։ Եթէ ան ծարաւ է Աստուծոյ հետ հաղորդութեան, ահաւասիկ Հայրը, որ կը լեցնէ Որդին իր անճառելի սիրովը, և Հօրը սուրբ կամբը կը կատարուի Որդւոյն միջոցով

աղատուած ու վերանորոգուած արարչագործ
 ծուծեան մէջ: Թող երկիրս խաչեալ Որդւ-
 ւոյն Մարդոյ ծարաւին լեղիով ու քացախով
 միայն պատասխանէ. քիչ մը աւելի վեր
 նայեցէք, քիչ մը աւելի հեռուն, և պիտի
 տեսնէք թէ ինչպէս երկինք անոր կը պատաս-
 խանէ “իր բաց պատուհաններովը”, որոնք
 լիառատ կը պարպուին Որդւոյն Մարդոյ
 աստուածային անձին մէջ, զոր մարմինին
 ցաւերն ու խաչին զոհաբերութիւնը զնա
 մեծցնելու համար միայն տանջեցին:

Ահաւասիկ ան, որ կ'ըսէ ձեզի, որ ծարաւ
 էք այսօր, ինչպէս ատենօք էր ինքը, “Ան որ
 ծարաւ է, թող ինձի դայ ու խմէ:” Այս
 յաւիտենական կեանքը, որուն մէջ ան կը
 նորոգէ իր էութեան ներդաշնակութիւնը
 զոր աշխարհի կեանքը խանգարած է, զանիկա
 շահողին համար միայն չէ, այլ այն անկեալ
 խեղճ արարածներուն համար, որոնք մեղքի
 միջոցով ապականեցին կեանքը և խռովեցին
 աշխարհը: Թող անոր միայն հաւատան. ա-
 ռանց վերապահումի թող նետուն գրկին
 մէջ Աստուածորդւոյն, որ Մարդու Որդի եղաւ
 զիրենք փրկելու համար. որ չուզեն “ուրիշ
 բան գիտնալ բայց միայն Յիսուս Քրիստոս,
 և այն՝ խաչը ելած.” որ չուզեն ուրիշ ար-
 դարութիւն գիտնալ բայց միայն անոր հնա-
 զանդութիւն, ուրիշ քաւութիւն՝ բայց միայն
 անոր զոհը, ուրիշ փրկութիւն՝ բայց միայն

անոր շնորհքը, անոր բոլորովին ձրի շնորհքը:
 Բաւական է որ ան բաժնէ անոնց հետ
 ինչ որ ինք Հօրմէն ստացած է. և հաղորդէ
 անոնց այն աստուածային կեանքը, որու
 արժանացաւ անոնց համար: Մարդարէական
 Սաղմոսներուն ամենէն մարդարէականին մէջ,
 զոր քիչ առաջ յիշատակեցի, հազիւ թէ սկսած
 էր Քրիստոս ուրախանալ իր ցաւերէն յե-
 տոյ Աստուծոյ իրեն պահած փրկութեանը
 համար, ինք իր անձէն անմիջապէս անցնելով
 իր “եղբայրներուն” կ'ապահովէ անոնց ի-
 բենց սրտին կեանքը իր սրտին կեանքին
 մէջ. “Չէր սիրտը յաւիտեան պիտի ապրի”
 Սաղ. ԻԲ. 26). խոստում մը զոր ան տաս-
 նրմէկ դարեր անցնելէ յետոյ կը կրկնէ
 Յովհաննու բերնով. “Քանզի ես կենդանի
 եմ, և դուք կենդանի պիտի ըլլաք” (Յովհ.
 Ժ. 19): “Ան որ Որդին ընդունած է կեանք
 ունի” (Ա. Յովհ. Ե. 12): Որդւոյն կեանքը,
 սրտին համապատասխանող կեանքն է. վերջա-
 պէս այն կեանքը որ կեանք է: Եթէ այս
 կեանքը այսօր Քրիստոսով Աստուծոյ քով
 պահուած է, անոր իրոյս եկած ըլլալը տես-
 նելու համար վաղուան միայն սպասելու է.
 “Երբ Քրիստոս, մեր կեանքը, յայտնուի,
 այն ատեն դուք ալ պիտի յայտնուիք անոր
 հետ փառքով” (Կող. Գ. 4): Հոն, և միայն
 հոն պիտի գտնէք ձեզ սպառող ծարաւը

մարելու միջոցը. — Յիսուսի կեանքին մէջ, որ եղած է ձեր կեանքը:

Ծարաւ էք սրբութեան. ահաւասիկ ձեզ յազեցնելու միջոցը: Եւ ալ ո՞վ կրնայ խռովել ձեր հնազանդութիւնը, ձեր աչքերուն առջև պարզուած տեսարանը: “Նոր երկինքի և նոր երկրի մը կը սպասենք, որոնց մէջ արդարութիւնը կը բնակի” (Բ Պետ. Գ. 13) Յիսուսի իշխանութեան տակ: Փորձիչը — բայց անիկա չի կրնար “ձեզ հետևիլ ուր որ դուք կ'երթաք.” և ա՛լ ձեզմէն բաժին չունի: Ձեր անձնական ապականութիւնը — բայց անիկա տեղի տուած է Աստուծոյ Հոգիին, որ ձեզ կը լեցնէ “անչափելի չափով” մը, որ է Յիսուսի բաժինը: Ձեր չըջապատը — բայց դուք մեղքէն ազատուած երկրային ընտրեալներու և մեղքը երբէք չճանչցող հրեշտակներու ընկերութեան մէջ էք. այո, անոնց պաշտած Յիսուսի ընկերութեան մէջ, որուն նման “պիտի ըլլանք, վասն զի զանիկա պիտի տեսնենք ինչպէս որ է” (Ս. Յովհ. Գ. 2). մաքուր, ինչպէս որ ինք է. սուրբ, ինչպէս որ ինք է. անոր հետ մէկ, ինչպէս որ ինք է Հօրը հետ: Դուք “արդարութեան համար անօթի և ծարաւ էք”. ահաւասիկ յազենալու և Աստուծոյ բոլոր լրութեամբը լեցուելու միջոցը: Դուք ծարաւ էք սիրոյ. ահաւասիկ յազենալու միջոցը: Դուք հոս բաւականաչափ սիրելի և սիրող ա-

րարած մը չգտաք ձեր սրտին ընդունակութեան պատասխանելու. բայց այլևս դժուարութիւն չկայ Մարդոյ Որդւոյն առջև որ երկինքն է, և որ երկնային սիրոյ զուարճութիւններ պատրաստելու չափ բարի և մինչև ի մահ, “ի մահ խաչին” սիրող է: Դուք զուր տեղը կը վնտուէք ձեր մէջ սիրտ մը, որ կարող ըլլայ անոր ձեզի ներշնչած և ձեր ամէն կողմէն բզկտող սէրը պարունակել, առանց յիշելու այն սէրը՝ զոր այսուհետև ձեզի կը ներշնչեն սրբուած և անոր նմանութեան փոխակերպուած արարածները անոր համար և անոր մէջ: Այս երկնային ընտանիքին ծոցին մէջ, որուն գաղափարը ոչ մէկ երկրային ընտանիք կրնայ տալ, դուք պիտի ապրիք սիրոյ մէջ, սիրով, ու սէր պիտի ըլլաք, ինչպէս է Աստուած: Դուք ծարաւ էք լոյսի. ահաւասիկ յազենալու միջոցը, Յիսուսը, “որուն մէջ պահուած են իմաստութեան և գիտութեան բոլոր գանձերը:” Եթէ կրնայիք ամէն օր անոր հետ խօսակցիլ, զայն հարցաքննել, ի՞նչ պիտի պակսէր ձեր ճանչնալու պէտքին, որուն զգացուիլն ու յազենալը մէկ պիտի ըլլար: Եւ ահա դուք անոր հանապազօրեայ խօսակցութեան մէջ ընդունուած, և ազատ՝ ձեր ուզածին պէս հարցումներ ընելու անոր. ինք փառաւորուած, բայց ոչ ևս այնպէս ինչպէս զայն կը հարցափորձէին իր աշակերտները անոր մարմինի

օրերուն մէջ: Դուք իրեն հետ փառաւորուած
բայց ոչ ևս բանտարկուած ձեր այս օրուան
մարմիններուն մէջ, որ՝ իր անբաւականու-
թեան պատճառաւ՝ երբեմն նպաստէ աւելի
արգելք ունենալ, և ճշմարտութիւնը գտնե-
լէ աւելի զայն արգելել կը թուին: Բայց և
այնպէս Յիսուս դեռ աւելին կը խոստանայ
ձեզի. “Եւ այն օրը ինձի բան մը պիտի
չհարցնէք” (Յովհ. ԺԶ. 23). սա այնքան ճշ-
մարիտ է որ այլևս ոչինչ պիտի կրնայ ծած-
կուիլ ձեր խուզարկութիւններէն, Աստուծոյ
կենդանի լոյսովը ողորուած, Վերջապէս ծա-
րաւ էք երջանկութեան, երջանկութեան մը
որ ամբողջ մարդը զօհացնէ. ահաւասիկ
դարձեալ ձեզ յագեցնելու միջոցը: Այն եր-
ջանկութիւնը, զոր Յիսուս ձեզի վերապահած
է իր “պատրաստած տեղին” մէջ, ամբողջ
մարդուն համար է, անոր նորոգուած մար-
մինին, ինչպէս նաև անոր սրբուած հոգիին
համար: Փոյթ չէ թէ փիլիսոփայութիւնը
ձեզի խոստանալու ցուրտ անմահութիւն մը
միայն ունենայ, որուն մէջ մարմինէն բաժ-
նուած հոգին շատ շատ կրնայ պահանջել
անկատար և անըմբռնելի գոյութիւն մը, զոր
իր անձին ա՛լ իր հետը չեղող միւս կէսին
ետեէն վաղելով սպառելու պարտաւորուած
կ’երևի: Յիսուսի Աւետարանը ձեզ կը կանչէ
վերստին ապրելու ամբողջովին մարմինի մը
մէջ՝ զոր Առաքեալը կարգաւ կը կոչէ “երկ-

նաւոր, փառաւոր, անապական” և վերջա-
պէս “հոգևոր” (Ս. կոր. ԺԵ. 44), իբր թէ
նա զայն անսահմանելի հակասութենէ մը
տարբեր կերպով սահմանելու ճար չունենար:
Մարմինի մը մէջ, որուն բոլոր կարողութիւն-
ները միաժամանակ բարձրացած ու սրբուած՝
հաւասար ընդունակութեամբ կը ծառայեն
Աստուծոյ փառքին ու ձեր անձին երջանկու-
թեանը: Մարմինի մը մէջ, վերջապէս, զոր
կը սնուցանէք “նոր պտուղով մը երկինից թա-
գաւորութեան մէջ, Աբրահամի, Իսահակի
և Յակոբի հետ սեղան բաղմամբ, և երես առ
երես նկատելով անոնց և ձեր հաւատքին ա-
ռարկան: Եւ ի՞նչ պիտի ըսէի դեռ. — Յի-
սուսի մէջ եղած այն սրբութեան սիրոյ, լոյ-
սի և ուրախութեան այն անսպառ ակին վրայ
հակած՝ պարտիք միայն ծուխ կուշտ կուշտ
խմելու և մարելու համար ձեր ունեցած և
այսուհետև ունենալիք ամբողջ ծարաւը: Բայց
ի՞նչ կ’ընեմ փորձելով նկարագրել “բաներ,
զոր աչք չէ տեսեր, ականջ չէ լսեր, և որ
մարդու մտքէն չեն անցնիր:” Մեր Փրկչին
խօսքին վրայ կենանք. “Ան գիտէ թէ մեզք
ինչ բանէ շինուած ենք,” և ինչ է այն ծա-
րաւը՝ զոր մեզի հետ բաժնելու համար աչ-
խարհ եկաւ. ան մեզի կը խոստանայ որ պի-
տի յագեցնանք. և թող ասիկա մեզի բաւա-
կան ըլլայ: Եւ այսօր չէ որ ան մեզի կը խոս-
տանայ, նոյնը երէկ կը խոստանար ան իր

առաջին դալուստը հռչակող առաջին մարգարէին փառաւոր խօսքերովը, «Ազգատները և տնանկները ջուր կը փնտռեն, բայց չկայ, անոնց լեզուն ծարաւէն չորցած է, ես Տէրս անոնց խնդրուածքը պիտի լսեմ. ես Խորանջի Սասուածը զանոնք երեսէ պիտի չձգեմ. բարձր տեղերու վրայ դետեր և հովիտներու մէջ աղբիւրներ պիտի բանամ, անապատը ջուրի լիճի և չոր երկիրները ջուրի աղբիւրներու պիտի դարձնեմ» (Ես. ԽՍ. 17, 18)։ Ան նոյնը պիտի խոստանայ վաղը, իր երկրորդ գալուստը հռչակող առաքեալ-մարգարէին քաղցր հրաւերովը, «Ես ծարաւին ձրի պիտի տամ կենաց ջուրին աղբիւրէն . . . Եւ հողին ու Հարսը կ'ըսեն, Եկուր, և ով որ կը լսէ թող ըսէ, Եկուր. և ով որ ծարաւ է թող գայ, և ով որ կ'ուզէ կենաց ջուրը թող առնէ ձրի . . . : Այսուհետև ոչ պիտի անօթենան և ոչ ծարաւին . . . վասն զի Գառնուկը, որ աթոռին մէջ է, պիտի հովուէ և կենդանի ջուրերու աղբիւրները պիտի առաջնորդէ զանոնք» (Յայտ. ԽՍ. 6, ԻԲ. 17, Է. 16, 17)։ Աւ ի՞նչ պէտք է մեզի։ Մեր այսօր ունեցած այս անբաւական միջոցներով զանոնք միտք բերել ամէն ինչ որ կրնայ մեր սրտին բոլոր պարագները լեցնել. բայց ասիկա ընելէ յետոյ ըսենք որ «Աստուած մեր խնդրել ու երևակայել կըցածէն անհունապէս աւելին կրնայ ընել» Երկերը

ոչ աւելի վար է երկինքէն քան որչափ մեր ամենաեռանդուն իղձերը և ամենայանդուզն յոյսերը վար կը մնան կենդանի իրականութենէն, զոր Յիսուս մեզի գտնել պիտի տայ իրեն մօտ, իր մէջ, վաղը՝ երբ մեզ իրմէն բաժնող մարմինին այս քօղը իյնայ։ Աներկիւղ յանձնուէ՛, ուրեմն, ով հողիս. տարածէ՛ թւերդ անհուն սահմանին մէջ, «լայն բաց բերանդ»։ Ուզէ, խնդրէ, պահանջէ, և ա՛լ բանէ մը մի՛ յուսահատիր իր անհունութեանը մէջ վայելել կարենալու համար յագեցումը, որ խոստացուած է այս միւս կեանքին համար, զոր Աստուած դրաւ իր Օծեալին առջև, և զոր անոր Օծեալը դրած է քու առջևդ. «Եթէ մէկը ծարաւ է, թող ինձի գայ ու խմէ»։ Այո՛, վաղը. բայց այսօր։ Մեր սրտին ու այս երկնային կեանքին միջև, որ պարտի զայն յագեցնել, ինչո՞ւ արգելքը այս երկրաւոր կեանքին, որ այնքան անգթօրէն կը խափանէ սպասուած յագեցումը. այս կեանքին, որ կարճ է անհունութեան համար և այնքան երկար ժամանակին համար մանաւանդ երբ մարդ կը տառապի. այս կեանքին, զոր ընդունելու համար նուազ դժուար կը զգանք իր բազմաթիւ ցաւերովը քան այն պարագով և անկատարով զոր անիկա կը մատուցանէ էակի մը, որ լեցունութեան և կատարելութեան մէջ միայն պիտի կրնար հանգչիլ։ Այս հարցումին կրնայի պատաս-

խանել այն խառնակութեամբ զոր մեղքը բերաւ Սրարչին գործին մէջ, և որ դարմանուելու համար ճանչցուելու պէտք ունի: Բայց հոս կեանքը բնաբանիս ոգւոյն մէջ լաւագոյն ևս չափուած և աւելի յաջող պատասխանին վրայ: Այսօր իրեն համար նշանակուած տեղը ունի վաղուան յագեցումին մէջ. երկրային կեանքը երկնայինը կը խափանէ զայն պատրաստելու համար միայն. անիկա անոր արգելք չէ, այլ անոր աշկերտութիւնն է և կը թանք:

Դարձեալ Յիսուս ֆրիստոս մարդուն մէջ է որ պէտք է ուսումնասիրել այս որքան հրահանգիչ նոյնքան մխիթարիչ վարդապետութիւնը: Աւետարանը որքան սխալ հասկցած պիտի ըլլայ ան, որ Յիսուսի երկրային կեանքին մէջ իր երկնային կեանքի զարգացումին դէմ արգելք մը կամ յապաղում մը միայն կրնայ գտնել: Աւետարանը մեզի նկատել կու տայ մէկին մէջ միւսին նախերգանքը, պիտի ըսէի՝ պայմանը: «Մահուան չարչարանքին համար էր որ Յիսուս պսակուեցաւ փառքով ու պատուով.» «մինչև խաչը զիջանելուն» համար էր որ տիրաբար բարձրացաւ և ընդունեց «անուն մը որ բոլոր անուններէն վեր է:» Երկրիս վրայ անոր «հոգիին աշխատանքին պտուղն» է որ պարտի դարէ ի դար «յագեցնել զայն.» Ան լաւ գիտէ ասիկա, և այս խորհուրդը կը քաղցրացնէ անոր երկրա-

յին կեանքին դառնութիւնները: Բնական մղումով մը ան ետ կը մղէ գաւաթը՝ որուն միւս կողմն ատեն ծարաւ է իր գործին կատարումին համար. և եթէ ան կ'աղաղակէ՝ «Հայր, ազատէ զիս այս ժամէն,» հակազգացումով մը կը յաւելու իսկոյն, «Բայց ես ասոր համար եկայ մինչև այս ժամս. Հայր, փառաւորէ քու անունդ (Ղու. ԻԴ. 26, Յովհ. ԺԲ. 27): Ծարաւ է ան այն ցաւի մկրտութեան՝ որով պարտի մկրտուիլ. «Մկրտութիւն մը ունիմ՝ մկրտուելիք, և ո՞րքան կ'արտորամ որ անիկա կատարուի:» Ծարաւ է ան այն վերջին զատիկին, որ պարտի նախապատկերել անոր զոհարելութիւնը, և զայն քանի մը ժամով կանխել. «Փափաքելով փափաքեցայ այս զատիկը ձեզի հետ ուտել չարչարուելէս առաջ» (Ղու. ԻԲ. 15): Ծարաւ է ան այն դաւադրութեան արագ կատարումին. «Ինչ որ պիտի ընես՝ շուտով ըրէ,» ըսաւ մատնիչ Յուդային: Ծարաւ է ան վերջապէս «Ստատուծոյ կամքին,» որ կը յանգի խաչի զոհին. «Իմ կերակուրս այն է որ զիս զրկողին կամքն ընեմ և անոր գործը կատարեմ» (Յովհ. Դ. 34): Ծարաւ մը, զոր ան վաղուց յայտնած է մարդարէութեան մէջ (Սաղ. Խ. 7, 8): Այսպէս սպասելով իր ծարաւը ապառնի ուրախութեան մէջ անցընել՝ Յիսուս

զայն կը յագեցնէ ներկայ դառնութեանց մէջ, որոնց գինն է այն ուրախութիւնը :

Այս տեսութիւնը դեռ շատ հարեանցի է : Աւելի խորը թափանցենք Աստուծոյ խորհուրդին փիլիսոփայութեանը, որուն բոլոր մասունքը իրարու մէջ այնքան հրաշալի կերպով հիւսուած են : Յիսուս Քրիստոս մարդուն երկնային ուրախութիւնը անոր կրած երկրային դառնութեանց գինը միայն չէ, այլ անոնց պտուղը . մէկը միսին այնպէս միայն կապուած չէ ինչպէս վարձքը աշխատանքին, այլ նաև այնպէս՝ ինչպէս զարգացումը սերմին : Սուրբ Գիրքը ներկային և ապառնիին մէջ կը ճանչնայ մէկ բնական և հարկաւոր կապակցութիւն, որ իրերու վիճակին մէջ կը գտնուի . «Ինչ որ մարդ կը սերմանէ, նոյնը պիտի հնձէ» (Գաղ. Զ. 8) : Յիսուս Քրիստոս մարդուն երկրաւոր կեանքը և երկնաւոր կեանքը՝ իրենց ներքին էութեան մէջ նկատելով՝ իրարու կը միանան ու կը խառնուին . ինչու որ անոր երկնաւոր կեանքը ուրիշ բան չէ եթէ ոչ ազատ ծաւալումը Աստուծոյ Հոգիին, որ արդէն առանց չափի կը լեցնէ զայն իր երկրային կեանքին մէջ, բայց իբր մարմինի մէջ խափանուած : Հոգին, որ միայն կրնայ մարել մարդուս ներքին ծաւալը, Սուրբ Մատեանին մէջ ներկայացուած է բնական մարդուն ծարաւն անցընող ջուրի նշանով (Ես. ԽԳ. 3) : Նոյնը կը տեսնենք

մասնաւոր կերպով Աւետարանի մէջ, ուր բնաբանիս յաջորդող համարը որոշ կերպով կը խօսի, «Ասիկա ըսաւ Հոգիին համար, զոր անոր հաւատացողները պիտի ընդունէին :»

Յիսուս, այս Հոգիով լեցուն, որ անոր մարդկային բնութեան մէջ առաջին անգամ ըլլալով կ'իրագործէ ինչ որ ան մարդկութեան մէջ կատարելու կու գայ, այնպէս մէկ է Հօրը հետ, և այնպէս հաստատուած երկնից թագաւորութեանը մէջ, որ երկինքը երկիր կը փոխադրէ և ժամանակին ծոցը գտնուած պահուն անհունութեան մէջ կ'ապրի : Ասկէ սկսելով է որ ան կը ջանայ յագեցնել իր սրտին պէտքերը, իր երկրային կեանքին բոլոր պարագաներուն մէջ, Աստուծոյ մէջ տեսնուած : Եւ որովհետև անոր մէջ Աստուծոյ կեանքը պարզելու համար ոչինչ աւելի յարմար է քան անոնք՝ որ մարմինը կը պատուեն իբր թէ Հոգիին աւելի ազատ անցք մը տալու համար, նոյնպէս չկայ տեղ մը ուր ան կարենայ աւելի լաւ մարել զինք նեղող ծաւալը : Հոգին որ վաղը պիտի յագեցնէ զայն վերին խաղաղ փառքին մէջ, կը յագեցնէ զայն այսօր մինչև ահաւոր բայց յաղթական պայքարը, զոր ան կը մղէ մարմինին դէմ :

Ինչ որ է վարդապետը, նոյն են աշակերտները : Մեզի համար ալ այսօրուան բորբոքած ծարաւը հարկաւոր պատրաստութիւն և հայրենի կրթութիւն է, որ պիտի յանդի

վաղուան յագեցած ծարաւին: Մեզի համար ալ փորձութիւնները, որոնցմով հարկ է որ քիչ մը տրտմինք, որպէս զի մեր հաւատքին փորձը գովութեամբ, պատուով ու փառքով դանուի Յիսուս Քրիստոսի յայտնուելու ժամանակը (Ս. Պետ. Ա. 6, 7). խառնուած են «անպատմելի և փառաւոր խնդութեամբ»: Մեզի համար ալ երկնաւոր կեանքը կը սկսի այս տեղէն, հոգևոր կեանք անուան տակ, այն հոգիով որով Յիսուս կ'ողոզէ մեր սրտերը, ինչպէս ցամաք երկիր մը կենդանի ջուրի հոսանքով: Հոգևոր կեանքը արդէն երկնային կեանքն է, բայց միայն տեսանելի իրերով քողարկուած. և երկնաւոր կեանքը դարձեալ հոգևոր կեանքն է, բայց տեսանելի իրերէ ազատուած. և ասիկա այնքան ճշմարիտ է որ Աւետարանը միևնոյն անուանը կու տայ այս երկու կեանքերուն, «յախտենական կեանք», որ կը սկսի երկրիս վրայ, շարունակուելու համար երկնից մէջ, և որով Այն ամէնը, որ կենդանի է և կը հաւատայ Յիսուսի Քրիստոսի, յախտեան պիտի չմեռնի (Յովհ. ԺԱ. 26): Մեզի համար ալ ուրեմն ոչինչ կորսուած է և ոչինչ յետաձգուած. կեանքի փորձութիւններով, արցունքներով է որ կը ցանուի այն թանկագին սերմը, որուն պտուղը որ մը պիտի քաղուի յաղթական երգով: Խաչը միակ ճամբան է փառքի, և ամենածանր խաչերը անոր ամենակարճ ճամբ

բաներն են: Երբ անգամ մը թախանցենք Աւետարանի այս վարդապետութեան, կամ լաւ ևս, երբ անգամ մը ոգևորուինք Յիսուս Քրիստոսի հոգիովը, այն ատեն քրիստոնէական հոգին տեսակ մը ուրախութիւն պիտի ճաշակէ կեանքի յուսախաբութեանց, զբրկանքներուն ու ցաւերուն մէջ. ինչու որ անիկա անոնց մէջ պիտի զգայ խորունկ ծարաւ մը, զոր այն յուսախաբութիւնները, զրկանքներն ու ցաւերը կը յագեցնեն իրենց կերպովը: Անիկա պիտի սորվի ըսել անընկճելի Պօղոսի հետ, «Հաւներ եմ ես աւկարութիւններու, նախատինքի, տառապանքի, հալածանքի և նեղութիւններու Քրիստոսի համար» (Բ Կոր. ԺԲ. 10), և հեղաբարոյ Եղեկիայի հետ, «Ո՛վ Տէր, մարդիկ ասոնցմով կ'ապրին, և հոգիս կեանքը ասոնց ամէնէն է» (Ես. ԼԸ. 16):

Ո՛հ, ի՛նչ լոյս, ի՛նչ փառք, ի՛նչ երանութիւն կը հոսի այն հոգևոր բարձունքներէն երկրային կեանքին վրայ: Ըսել թէ «Ամէն բան բարիի գործակից կ'ըլլայ անոնց՝ որոնք զՍտուած կը սիրեն», շատ բան ըսել է անշուշտ. բայց անիկա մեզի հոս յայտնուած ամէն բանը չի նշանակեր: Կեանքի ցաւերը չեն միայն որ առողջարար փորձութիւններու փոխուած են. ամբողջ կեանքին դրոշմը փոխուած և այլակերպուած է: Այսուհետև փոխանակ լաւ կամ դէժ երևնալու, թող

մարդ՝ լաւագոյնին սպասելով՝ ընդունի գոնէ երկնաւոր կեանքը իբր այնքան կատարեալ իր տեսակին մէջ, ինչպէս երկնաւոր կեանքը իր տեսակին մէջ. ինչու որ երկնաւոր կեանքի համար պատրաստութեամբ և կրթութեամբ մարդ երկնաւոր կեանքէն աւելի անոր լաւ յարմարած բան մը չի կրնար երեւակայել: Եւ անկէ հեռացնելով ինչ որ այսօր մեր ծարաւը կը բորբոքէ, հեռացուցած կ'ըլլանք ինչ որ ապահովաբար կ'երաշխաւորէ մեր ապառնի յազեցումը: Երկրաւոր կեանքը առնչակից է երկնաւորին, գրեթէ ինչպէս Հին Կտակարանը Նորին: Հին Կտակարանը կ'երևի արտակարգ, անյարիր երբեմն խիստ մինչև որ Նորը դայ, “ոչ թէ աւրելու, այլ կատարելու (Մատ. Ե. 17): Նոյնպէս երկնաւոր կեանքը, որ կը բացատրէ ու կը շարունակէ երկրայինը, անոր մէջ կը տարածէ կարգ, ներդաշնակութիւն և խաղաղութիւն:

Այս ամենուն առաջարկուած սիւստանքէն առէք ձեզի ինկած մեծագոյն բաժինը, ո՛վ դուք, որ կը սպառիք ուրիշները տանջող ծարաւէն: Այլ մի՛ կարծէք թէ դուք երկնաւոր Հօրը անժառանգ զաւակներն էք: Անորը չէ յանցանքը որ դուք իր առանձնաշնորհեալ զաւակները չըլլաք, “կերպարանակից իր Որդւոյն պատկերին” (Հռով. Բ. 29): Դուք՝ զօրացած հաւատքով ու սիրով՝ չպիտի գտնէք դառնութիւն մը որ ձեզի կանխագոհացում չմատու-

ցանէ: Ահաւասիկ Յիսուս Քրիստոսի խեղճ ծառայ մը, որ տարիներէ ի վեր անշարժ ու ցաւագին, անկողինի մը վրայ երկնցած՝ անքուն գիշերներու տեղի տալու համար միայն տառապանքի օրերուն վախճանիլը կը տեսնէ: Եւ Ստուած ահա այս միջոցը ընտրած է անոր ծարաւը յազեցնելու համար: Առողջ մարմինով ու քաղցր կեանքով ան պիտի կրնար ազատիլ շատ մը ցաւերէ. բայց պիտի կորսնցունէր թանկագին պատեհութիւններ ինքզինք պատրաստելու, աղօթքով: “Ահա երանի կու տանք համբերողներուն” (Յակ. Ե. 14): Բայց անոնք որ կը տառապին այսօր, վաղը տառապածներ պիտի ըլլան: Ահ, եղբայր իմ, պիտի արտնջաս այսօր այն բանին համար որ վաղը քու “զօրութիւնդ ու սաղմոսդ պիտի ըլլայ” (Սաղ. ՃԺԸ. 14): Եւ դու, քոյր իմ, որ ներքնապէս կը սպառիս սիրելու և սիրուելու մեղմ ու բուռն պէտքով, և ընտանեկան յարկին սիւստանքները քեզմէ աւելի ոչ ոք պիտի գնահատէր, և այս սիւստանքները քեզի մերժուած են, և աւասիկ դու “և վշտահար” (Սաղ. ԻԵ. 16.), մերժուած, բայց որմէ՞ն. կոյր ճակատագրէ՞ մը. ոչ. այլ հայրական Նախախնամութենէ մը, և ինչո՞ւ. քեզ զրկելու համար ուրիշներուն եղած շնորհքէն. ոչ. այլ ամենուն մէջ քեզ հարստացնելու համար: Հաւատա որ Ստուած քեզի համար լաւագոյն բան մը նա-

խասահմանած է, ստիպելով քեզ փնտռել քու լիութիւնդ անոր սիրոյն մէջ, և անոր մէջ միայն սահմանելով քու բնութեանդ ամենաօրինաւոր, ամենաազնիւ և ամենափոխանցելի ցանկութիւնները, ի՞նչ տիրացած ըլլայիր այն ընտանեկան կեանքին, որուն այնքան տենչացիր, թերևս նախանձեցար, անոր մէջ պիտի վայելէիր ուրախութիւններ, որոնք հիմա քեզի կը պակսին. բայց դու պիտի կորսնցընէիր բարերար կրթութիւն մը: Եւ դուք ամենքդ, “ցաւի մարդիկ,” կարօտ, հիւանդ, մելամաղձոտ, լքեալ, կը զանգատիք, ի՞նչ բանի համար — այն “լացող երջանիկներուն” կարգը դրուած ըլլալն^{ու}դ համար, այն աղքատներուն, որ ամենահարուստ են. այն տկարներուն, որ ամենահզօր են: Մտիկ ըրէք ինձի, ըսել կ’ուզեմ՝ մտիկ ըրէք դուք ձեզի. կ’ուզէի՞ք այս պահուս ձեր դիւրքը փոխել կեանքի նպաստաւորութեան հետ: Փորձեցէք ձեր բոլոր սրտով խնդրել Աստուծմէ, ինչպէս Գաբէս, “ազատել ձեզ չարէն, որ ալ ձեզի տրտմութիւն չըլլայ” (Ա Մնաց. Գ. 9, 10), ո՞վ գիտէ, թերևս անորինին պէս լսելի ըլլայ նաև ձեր աղօթքը յարատևութեամբ. . . Բայց ոչ, դուք պիտի չհամարձակիք Գաբէսի պէս աղօթել, որ ձեզի պէս Աւետարանը ճանչցած չէր, ոչ ալ ձեզի պէս Սուրբ Հոգին ստացած: Դուք պիտի սոսկալէք ձեզմէ կարել նետելու փորձութիւններ,

զորս ձեզի հայթայթած է Հայր մը “որ իր կամքովը նեղութիւն չի տար ու մարդոց որդիները չի տրամեցնէր” (Ողբ Գ. 33), ցորքան ձեր սրտին խորքը համաձայն է ինձի հետ, ըսել կ’ուզեմ Յիսուս Քրիստոսի հետ: Բաջալերուեցէք ուրեմն, սիրելի զաւակներ, նախընտրեալ զաւակներ, ինչպէս կը նշանակէ զձեզ այն ծարաւը որ զձեզ կը լափէ: Յիսուսի հաւատքին մէջ աչքերնիդ յառած “այն ուրախութեան, որ ձեզի սահմանուած է,” օրհնեցէք Յիսուսի հոգիովը բոլոր ցաւերը, որոնք ձեզի կը բանան անոր ճամբան. ազատութեամբ, սիրով ու երջանկութեամբ քաղելով ամենաչնչին ծաղիկը, հոգ չէ թէ ըլլայ մինակ ու շատ փոքր, զոր Աստուած արտասուաց ձորին մէջ պիտի աճեցնէ ձեր ոտքերուն տակ: Եւ արդ, դուք պիտի անցնիք զարմանալի փորձառութիւններէ, զորս Յուդայի անապատը կու տայ Դաւիթի, անոր սրտին մէջ եղած այն միւս անապատին վրայ: Անոր հետ ազազակել սկսելով, “հոգիս կը ծարաւի քեզի, և մարմինս քեզի կը փափաքի չոր և ծարաւ տեղը, ուր ջուր չկայ,” դուք աստուածային կեանքին մէջ պիտի գտնէք մարդկային կեանքին բոլոր ցաւերէն ինչպէս նաև բարիքներէն աւելի գերազանց բան մը. “Բու ողորմութիւնդ կեանքէն աղէկ է.” և պիտի վերջացնէք յաղթական երգ մը արձակելով, իբր թէ հակառակ ձեզի և զձեզ

չըջապատող ամէն բանի. “իրբ թէ ճարպով ու պարարտութեամբ պիտի յագենայ իմ անձս և իմ բերանս քեզ պիտի դովէ ցնծութեան շրթունքներով” (Սաղ. ԿԳ. 1-6): Այսպէս կանխելով այն օրը, երբ Յայտնութեան հրեշտակը ձեզ պիտի հրաւիրէ խմել Յիսուսի ձեռքէն, իր երկնային ուրախութեան բաժակէն (Յայտ. ԻԱ. 6), անյագօրէն պիտի խմէք նոյն Յիսուսի ձեռքէն, անոր երկրաւոր դառնութեան բաժակէն. թէ որ մէկը ծարաւ է, թող ինծի գայ ու խմէ:”

Կարող էք արդեօք ընդունիլ սփոփանք մը աւելի բարձր, սփոփանք մը զթալից, ոչ թէ ձեր ծարաւին յագեցումին, այլ ուրիշին ծարաւին յագեցումին մէջ ստացուած: Եւ սակայն սփոփանք բառը շտտ տկար է հոս. աւելի լաւ պիտի յարմարէր փառք բառը: Քանզի ի՞նչ կրնայ ըլլալ աւելի փառաւոր քան մտնել անոր բուն գործին մէջ, և քան կերպով մը խաչուիլ ձեր նմաններուն համար: Փութանք բացատրել:

Պտուղը, զոր Յիսուս իր խոնարհութենէն և զօհարբերութենէն պիտի քաղէր իրեն համար, իր ցաւերուն մէջ անոր խաղաղութեան միակ սկզբունքը չէր, և ոչ ալ անոր զխաւոր սկզբունքը: Յիսուս առաջին տեղը սիրոյ կը թողու միշտ: Իր Հօրը փառքէն յետոյ, որուն անունը մարդոց յայտնելու համար եկած էր, զինքը ամէնէն աւելի զբաղեցնող

բանն էր փրկութիւնը “անոնց զորս Հայրը իրեն տուած էր աշխարհէն,” և առանց որոնց կարծես ոչ իր փառքը, ոչ ալ իր երջանկութիւնը կրնային կատարեալ ըլլալ, “Հայր, անոնք որ դուն ինծի տուիր, կ’ուզեմ որ ուր որ ես եմ” անո՛ր ալ իմ հետս ըլլան, որպէս զի տեսնեն այն փառքը, զոր տուիր ինծի”: Այս խորհրդաւոր ծարաւը, զոր անոր դառնութեան մկրտութիւնը, հրաժեշտի զատիկը, Գեթսեմանիի բաժակը, Գողգոթայի զոհը սեպեցինք, վստահաբար կ’ըմբոստանար իրեններուն յագեցումին պապակովը: Ո՞վ կրնար ըսել այն բաժինը զոր ունէինք մինչև անոր վշտի վերջին աղաղակին մէջ, “Ծարաւ եմ,” որուն կը յաջորդէ իսկոյն անոր խաղաղութեան վերջին խօսքը, “Ամէն բան կատարուեցաւ” (Յովհ. ԺԹ. 30): Օր մը պիտի գայ, երբ ամէն բան պիտի կատարուի փառքով, ինչպէս ամէն բան կատարուեցաւ ցաւերով. և այս նոր փառքը Յիսուս առաջին անգամ պիտի գործածէ իրեններուն ծարաւին մատուցանելով յաւիտենական յագեցում մը. “Եղաւ, ես եմ Ալֆա և Օմէգա, Սկիզբը և Վախճանը. ես ծարաւին ձրի պիտի տամ կենաց ջուրի աղբիւրէն” (Յայտ. ԻԱ. 6). ձրի մեզի համար, բայց անոր համար ո՞րքան սուղ արժեց անիկա: Հոգ չէ. անոր ինին նման սիրտ մը խաչին վրայ կը ճաշակէ չեմ գիտեր ի՞նչ դառն քաղցրութիւն մը,

զգացումով մը տառապելու ոչինչ որ մեզ չփրկէ, և չզգալու տանջանք մը, որմէ չխնայէ իր փրկեալները:

Ետ, ե՛տ թող երթայ Յիսուսի քաւչական գործին մասնակցելու ամէն խորհուրդ: Աստուծոյ միակ Որդւոյն վերապահուած է ան և այս հողին վրայ ո՞ր մարդ, ո՞ր հրեշտակ, ո՞ր արարած պիտի համարձակէր առանց յիմարութեան և առանց ամբարշտութեան: Բայց եթէ մենք չենք կրնար տառապիլ մարդիկը փրկելու համար, կրնանք տառապիլ գոնէ զանոնք փրկչին բերելու համար: Եւ ասիկա մեզի նման անարժան մեղաւորներուն համար շատ փառաւոր խաչուիլ մըն է իրենց եղբայրներուն համար: Պողոս առաքեալ զանիկա բնաւ չարհամարհեց, մինչև իսկ անով յափըշտակուած էր, երբ ան այս մտքով իր ցաւերը իր վարդապետին ցաւերուն կցորդելով՝ այս զարմանալի բառերը կ'արտասանէր. Հիմա ուրախ եմ իմ չարչարանքներուս մէջ ձեզի համար, և Քրիստոսի նեղութիւններուն պակասը կը լեցնեմ իմ մարմինիս մէջ անոր մարմինին համար, որ է եկեղեցին (Կող. Ա. 24): Յիսուս Քրիստոսի ճշմարիտ պաշտօնեայ, Եկեղեցիի ճշմարիտ ծառայ, որ իր վարդապետին՝ մարդկային տառապանքի դաշտին վրայ անխուզարկելի թողել կրցածը սպառելով վերջապէս՝ կը գտնէ ճոխ մխիթարութիւն, խորհելով որ ինք ոչ մէկ տառա-

պանք չի կրեր որ չծառայէ “Սուրբերուն կատարելութեանը և Քրիստոսի մարմինին շինութեանը”: Եւ ահա ցաւի և սիրոյ մխիթարութիւնը, բարախուն ուրախութիւնը կ'առաջարկէ ձեզի Յիսուս բնաբանիս մէջ. վստահելով ձեր սիրոյն, ձեր ծարաւը իրմով յագեցնելու խոստումն հագիւ ըրած՝ “Թէ որ մէկը ծարաւ է, թող ինձի գայ ու խմէ,” կը խոստանայ նաև որ գուք ալ պիտի յագեցնէք ուրիշներուն ծարաւը. Ան որ ինձի կը հաւատայ՝ կենդանի ջուրի գետեր պիտի բղխին անոր ներսէն: Արդէն անգամ մը նոյն խոստումն ըրած էր ան նոյն իմաստով, “ով որ խմէ այն ջուրէն որ ես պիտի տամ անոր, յաւիտեան պիտի չծարաւի. բայց այն ջուրը, որ ես պիտի տամ անոր, անոր մէջ պիտի ըլլայ կենդանի ջուրի աղբիւր, որ յաւիտեանական կենաց համար կը բղխի” (Յովհ. Գ. 13, 14): Քաղցր խօսքեր, զորս մեր Աւետարանիչը, մարգարէի փոխուած, քիչ ետքը մեզի պիտի ցուցնէ՝ Յայտնութիւնը աւարտող յուզիչ տեսարանին մէջ իրականացած. “Եւ Հոգին ու հարսը կ'ըսեն, Եկուր, և ով որ կը լսէ՝ թող ըսէ, Եկուր,” ամէն անոնց որ տակաւին եկած չեն, և դէպի կեանքի աղբիւրը ոչ ոք պիտի բարձրանայ առանց ձեռք կարկառելու իրեն հետևողներուն: Եւ ո՞չ ապաքէն բարութեան ուրիշ մէկ կարգովը նոյն զգացումն է որ կը

ներչնչէ Սուրբ Պօղոսին հետեեալ յորդո-
րը, Այլ մանաւանդ բարի գործի պարապե-
լով աշխատի իր ձեռքով, որ կարող ըլլայ
տալ կարօտ եղողին (Եփես. Գ. 28): Բնու-
թեան, ինչպէս նաև շնորհքի մէջ «աւելի ե-
րանելի է տալը քան թէ առնելը» (Գոր. Ի. 35):
Եւ աւետարանական սիրոյն յատուկ է ոչ
այնքան վայելք զգալ ստանալու հաճոյքին
մէջ, որքան տալու կարողութեան մէջ:

Յիսուսի յագեցած ծարաւը ձեզի սորվե-
ցուց իր մէջ փնտռել այն հոգևոր կեանքը
որ ձեր ծարաւը պիտի յագեցնէ: Եւ արդ-
թող ձեր յագեցած ծարաւն ալ նոյն դասը
տայ ուրիշներուն, առաջնորդելու համար
զանոնք ոչ թէ ձեզի, այլ անոր, որ ձեզ
յագեցուցած է, և որ զանոնք ալ պիտի յա-
գեցնէ իրենց կարգին, եթէ միայն իրեն գան
հաւատքով: Այս դասը այնքան աւելի հա-
մոզիչ պիտի ըլլայ որքան բուռն ըլլայ ձեր
ծարաւը, և որքան դժուար՝ անոր յագեցու-
մը: Եթէ դուք անոնցմէ էք զորս Աստուած
ընտրած ըլլալ կ'երևի օրինակ ընելու համար
ծարաւի մը, զոր ոչինչ պիտի կրնար մա-
րել, թէ որ դուք «ձեր աչքերուն հաճոյքը»
կազմող բոլոր բաներուն իրարու ետեւէ
իյնալը տեսաք ձեր չորս կողմը, եթէ
մուծ մեղամաղձոտութիւն մը ճամբուն սկիզ-
բէն գրաւելով ձեզ՝ ձեր սիրտը կրծած,
ձեր ուժերը ջլատած, ձեր ծրագիրները

խանդարած և ձեր ամբողջ կեանքը տակն ու-
վրայ ըրած է, վերջապէս եթէ ձեր ցաւը
շարունակական ու ձեր վէրքը անբուժելի է,
ձեր ծարաւը, այն պայմաններու ներքև մա-
րած ինչպէս կրնար մարիլ, ինչպէս պարտէր
մարիլ, և ինչպէս պիտի մարի եթէ դուք
հաւատարիմ էք, պիտի ցուցնէ յստակօրէն
թէ ոչ մէկ բանէ յուսահատելու է Յիսուս
Քրիստոսի մօտ: Կեանքի բեմին վրայ թող
երևնայ հիմա ուրիշ ծարաւ մէկը, «որ ջուր
կը փնտռէ ու չի գտներ», և որ երկար ու
ապարդիւն ջանքերէ յետոյ «վհատած, նուա-
զելու» մօտ ըլլայ, անուն մը, ի բացակայու-
թեան Յիսուսի անուան, զոր ան ճանչցած չէ,
անուն մը պիտի դայ զետեղուի անոր և
վհատութեան մէջտեղ. այդ անունը է ձեր
անունը: Այն ձեզ նկատելով պիտի ըսէ ինք
իրեն, Այս մարդը ինձի չափ ծարաւ եղած
է. դրսէն ինչ տառապանք, ներսէն ինչ
լքում ունեցած չէ ան. ինչ արցունքներ թա-
փած չէ. ինչ պայքարներ ունեցած չէ մղե-
լու. քանի՞ քանի անգամ փորձուած չէ խոր-
հելու թէ ամէն բան կորսուած է. և սա-
կայն ահաւասիկ ազատած, դոհ, զուարթ,
ինչո՞ւ ես ալ չհասնիմ նոյն արդիւնքին եթէ
բռնեմ նոյն ճամբան: Եթէ ան ըսէ այսպէս
ու ըսածին պէս ալ ընէ, դուք այս թշուա-
ռին եղած պիտի չըլլաք այն ինչ որ Յի-
սուս Քրիստոս եղած է ձեզի համար. անոր

համար մարդկային չափով խաչուած պիտի չըլլա՞ք միթէ :

Չեմ գիտեր թէ այս ենթադրութիւնը ի՞նչ կ'ըսէ ձեր սրտին, բայց անիկա կը դողացնէ իմ ամբողջ սիրտս : Այս ամպիոնին վրայ և այս բնաբանին առջև դրէք իմ տեղս «վիշտերու մարդ» մը, զոր խոր թաղծութիւն մը սովորականէն աւելի հարկադրած ըլլայ Յիսուս ֆրիստոսի փարելու, մարդկային սրտին պարապութեան մէկ արտասովոր զգացումովը, մարդ մը, զոր դառնութեան ընթացք մը կրկնակի պատրաստած ըլլայ խօսելու ձեզի ծարաւի և յագեցումի մասին, իր խօսքերը միաժամանակ աւելի ազդեցիկ ընելով երբ կը նկարագրէ ծարաւը, և իր օրինակը աւելի համոզիչ՝ երբ կը ճաշակէ դողահացումը . մարդ մը, որ Աստուծոյ ընտրուած ըլլայ իր եղբայրներուն նշան ըլլալու, ինչպէս ատենօք Եղեկիէլ էր իր հոգիին վէրքերովը և իր կեանքին պայքարներովը . ի՞նչ ազդեցիկ թելադրութեամբ ձեր սրտերուն կոչում պիտի ընէր ասանկ մարդ մը . և երբ ան ձեզմէ մէկը Յիսուսի համար շահած ըլլայ, որքա՞ն աւելի թեթեւ պիտի զգայ իր խաչը, տեսնելով որ Աստուած զանիկա իրեն տուած է ձեզի համար կրելու :

Ծարաւած և ցաֆած հոգիներ, ձեզ սպառող ծարաւը մարեցէք ուրեմն ուրիշներուն ծարաւը մարելու յոյսով : Եկէք, և թող

մարդիկ ձեզմէ սորվենան որ չկայ մէկը որուն ծարաւը յագեցնել չկարենայ Յիսուս, յագեցուցած ըլլալով մինչև ձեր ծարաւը : Եկէք, և թող ձեր բոլոր ցաւերը, զգացուած բայց հանգարտած, ձեր շուրջը եղողներուն սորվեցնեն թէ մարդուն ներքին պէտքերը և թէ Աստուծոյ մէջ եղած ճոխութիւնները : Եկէք, և եթէ Աստուած ձեզ այն խաչեալներուն կարգը դրած է, զորս ուզած է ծարաւի և յագեցումի կենդանի տիպարներ ընել, խաչուեցէք անձուրացութեամբ, ուրախութեամբ, սիրով : Յագենալով ու յագեցնելով, ձրիաբար առնելով ու ձրիաբար տալով, եկէք Յիսուսի բաժակին մէջ մարելու այն մնացած ծարաւը զոր անոր կեանքին բաժակը և դառնութեան բաժակը ձեզի թողած էին, «թէ որ մէկը ծարաւ է, թող ինձի գայ ու խմէ :»

Եւ այս սէրը ո՞ր ատեն աւելի պահանջուեցաւ քան այսօր : Բնաբանիս հրաւէրը ո՞ր ատեն աւելի անգիտուեցաւ . ե՞րբ աշխարհս միաժամանակ աւելի ծարաւ և սակայն նուազ տրամադիր գտնուեցաւ Յիսուս ֆրիստոսի մէջ մարելու իր ծարաւը : Մեր դարը ուրիշ ուէ դարէ մը աւելի գիտէ զինք սպառող ծարաւը, զայն կը զգայ, անով կը տառապի, անկէ կը դանդաւոր . բայց զայն յագեցնելու համար անիկա այս խաբուսիկ և գրգռիչ կեանքէն անդին բան չի տեսներ :

Մեր դարը կարծես կը պարծի երկրի ծոցին մէջ կորսուած Եդեմի մէկ աղբիւրը դատած ըլլալուն համար, զանիկա աւելի խորունկ փորելու պայմանաւ : Ինչ որ անիկա այսօր չի տար, անկէ կը պահանջէ վաղուան համար . — Իբր թէ վեց հազար տարիէ ի վեր իր յուսախաբութեանց փորձը առնելու ժամանակ ունեցած չըլլար . և ինչ որ անիկա չի տար անհատին, անկէ կը պահանջէ ցեղին համար, իբր թէ ցեղը անհատներու միութենէն տարբեր բան մը եղած ըլլար, և կամ անձնական կեանքը կարենար կորնչիլ հաւաքական կեանքին մէջ, ի մեծաբանս օրուան փիլիսոփայութեան :

Աւաղ, փոխանակ Յիսուսի հետևելու երկնաւոր կեանքին մէջ, ուր ինք կ'առաջարկէ մեր ծարաւը անցընել, մարդիկ իրենց համար կը շինեն կեղծ Յիսուս մը, աշխարհային, անսուրբ, մարմնական, անոր պատուական անունը դիւրաւ կանչելու համար առանց սակայն հնազանդելու անոր պատուիրանքներուն : Այս ամէնը այնքան տխմարական է որքան մեղապարտ : Որչափ ալ աշխարհս ամէն կողմ դարձնեն ու դարձնելու ըլլան, անիկա իր ունեցածը միայն պիտի տայ . բայց ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ անիկա ձեր սրտին ծարաւը մարելիք բան մը չունի : Նոյն իսկ Եդեմ, եթէ հնար ըլլար հոն վերադառնալ, չունի այդ բանը . անոր

մանկական ու պարզ կեանքը ա'լ չպիտի բաւէր մարդուն սրտին, որ ալ բացուած է բարիին ու չարին ահարկու գիտութեանը : Անոր պէտք է աւելի հասուն, աւելի առնական, աւելի լուրջ, ջուրով և արիւնով աւելի մկրտուած կեանք մը . և Յիսուս միայն կրնայ զանիկա անոր տալ, “Երէկ, այսօր և յաւիտեան :”

Թող գիտնան որ Յիսուս ինչ որ անհատին կ'ըսէ, կ'ըսէ նաև դարերուն . “Թէ որ մէկը ծարաւ է, թող ինձի գայ ու խմէ :” Ուրեմն եթէ կայ դար մը, որ ծարաւ է, եթէ կայ դար մը, որ մարդկութեան վէրքը քննած է, եթէ կայ դար մը, որ ընկերային հարցը լուծած ըլլալ կը կարծէ, եթէ կայ դար մը, որ կոչուած է ուսումներով ճոխ անցեալ մը կուտակել, բարիքներով լեցուն ապագայ մը պատրաստելու համար, եթէ կայ դար մը յուզուած, շնչասպառ, տառապած, յոգնած, բայց իր կոչումին մէջ մեծ, իր յոյսերուն մէջ եռանդուն, իր ձեռնարկներուն մէջ աննուաճելի, եթէ կայ վերջապէս ներկայ դար մը, թող դադրի իր ծարաւը երկնից չորս հովերուն բանալէ . թող յուսահատի իր վարդապետութիւններէն . թող ձայնը կտրէ, թող գլուխը ծռէ, թող Յիսուսի գայ ու թող խմէ :

ՓՐՈՑ. ՅԱԿՈՒՐՈՍ Շ. ՃԷՃԻՁԵԱՆ



«Երբոր տեսնեմ երկինքդ, քու մատերուդ գործը, լուսինը ու աստղերը, զորոնք դուն հաստատեցիր, մարդը ի՞նչ է՝ որ զանիկա կը յիշես, կամ մարդու որդին, որ անոր այցելութիւն կ'ընես: Քիչ մը վար ըրիր զանիկա հրեշտակներէն, փառքով ու պատուով պսակեցիր զանիկա. քու ձեռքերուդ գործերուն վրայ իշխան դրիր զանիկա. ամէն բան անոր ոտքին տակ դրիր:» Սաղ. Ը. 3—6:

Ով որ Սաղմոսերգուն պէս աչքերը դէպի երկինք դարձնէ և մտածութեամբ թաղուի անհունութիւններուն մէջ, բնականաբար պիտի ունենայ նոյնօրինակ զգացումներ: Բնութիւնը իր անսահմանութեամբ և իր յաւերժական ու անխախտելի օրէնքներով ամէն ատեն խորհիլ տուած է մարդուն իր փոքրկութեան և աննշանութեան վրայ: Բնութիւնը երկու կերպով այս զգացումը կը բերէ մեր վրայ: Իր անսահման ընդարձակութեամբ և մեծութեամբ, և իր մնայուն ու անյեղի օրէնքներով: Շատ բնական է որ մտածելով այն տիեզերքին մեծութեան վրայ որուն մէջ կը գտնուի ինք, հարցնէ Սաղմոսերգունին

հետ. «Յիրաւի մարդկային էակի պէս փոքրիկ, տկար արարած մը կարևորութիւն ունի՞ այս անսահման տիեզերքին մէջ:» Նոյնպէս շատ բնական է որ երբ կը դիտենք Բնութեան անշարժելի անփոփոխ կարգաւորութիւնը, հաստատուն և տևական օրէնքները, կրկին հարցումը կու գայ մեր շրթանց վրայ. «Կա՞յ մեզի համակրող մը այս յաւերժ տենական տիեզերքին մէջ. կարելի՞ է որ այսօրան հաստատուն և միօրինակ անփոփոխութեան մէջ քեզի համար մասնաւորապէս հոգ տարուի և մեր անհատական ասպարէզին ու ճակատագրին համար շահագրգռութիւն մը զգացուի, երկաթ օրէնքներն, որոնցմով կը շրջապատուինք, երբեք կարեկցութիւն կրնան ունենալ մեզի համար:» Յայտնի է թէ բնաբանիս մէջ արտայայտուած գաղափարը յաւէտ նիւթական տիեզերքին մեծութենէն արթնցած է, բայց միւսն ալ, այսինքն Բնութեան օրէնքներուն անյեղի հաստատունութիւնն ալ նոյնքան, թերևս աւելի, աննպաստ գաղափար մը կու տայ մարդուն տիեզերքի մէջ ունեցած կարևորութեան ու նշանակութեան մասին: Բայց այս երկու տեսակէտէն ալ, մեր ժամանակի գիտութեանց յառաջադիմութեամբ, Սաղմոսերգունին մարդուն նկատմամբ ուղղած հարցումը աւելի կը շեշտուի. չնորհիւ արդի գիտութեան տիեզերքը հիմա շատ աւելի ընդարձակ է, անհունապէս ա-

ւելի ընդարձակ քան որչափ էր Սաղմոսերգուին ատենը: Այն տիեզերքը զոր արդի աստեղաբաշխութիւնը կը պարզէ մեր շմորած աչքերուն առջև, ապշեցուցիչ բան մըն է: Ամենէն հսկայ միտքերը, ամենէն հզօր երևակայութիւնները ուժասպառ գետինը կ'իյնան իրենց հեւքոտ վաղքին մէջ, հետեւելու համար այն մեծութեանց, այն անհուն հեռաւորութիւններուն զորս գիտութիւնը իրենց առջև կը պարզէ: Նայեցէք սա Ուրանոսին, որ բաղդատարար շատ հեռու չէ մեզմէ, եթէ քիչ մը աւելի մօտ ըլլար մեզի, սոսկական աչքով պիտի կրնայինք տեսնել զայն, մեր ընտանիքին կը վերաբերի, մեր դրացիներէն կը սեպուի, ուրիշ հեռաւոր լուսաւորներուն հետ համեմատելով, սակայն այդ բաղդատական մօտութեան մէջ իսկ այնքան ահագին շրջան մը կը կատարէ արևին բոլորտիքը զոր ժամը քառսուն միոն արագութիւն ունեցող շոգեկառք մը 32,000 տարիէն միայն կրնայ կատարել: Կրնա՞ք երևակայել այդ անհուն տարածութիւնը: Աչքերնուդ առջև բերէք երկրի այն ընդարձակ տարածութիւնը որկէ նոյնչափ արագութեամբ թռչող շոգեկառք մը կրնայ անցնիլ ամբողջ օր մը անընդհատ հև ի հև վազելով. ու յետոյ երևակայեցէք, եթէ կարող էք, թէ ի՞նչ պիտի ըլլայ այն ընդարձակութիւնը որկէ պիտի կրնայ անցնիլ այդ նոյն շոգեկառքը

ոչ թէ հարիւր օրուան, հազար օրուան մէջ, ոչ թէ հազար տարուան մէջ, այլ 32,000 տարուան մէջ: Հիմա նայեցէք արևին: Գիտնականներուն հաշիւներուն նայելով 93,000,000 մղոն մեզմէ հեռու է: Բայց որքան որ այսչափ անըմբռնելի հեռաւորութիւն մը ունի ան մեզմէ, ամէնէն մօտիկ լուսաւորը անկէ 200,000 անգամ աւելի հեռի է, և մինչ լոյսը 8 վայրկեանէն կու գայ մեզի այդ ամէնէն մօտ դրացի լուսաւորէն, նոյն արագասլաց լոյսը 4½ տարիէն կու գայ մեզի միւսէն: Բայց այս բան մը չէ դեռ: Սըր Ուիլեմմ Էրշել իր հսկայ դիտակով նայեցաւ “Ծիր կաթին” կոչուած այն բոցավառող արևներու մեծ ակումբին, և հաշիւ ըրաւ որ լուսաւորներու անանկ խառի մը թափանցած է որուն խորունկութիւնը 500 անգամ աւելի էր քան ամէնէն մօտիկ լուսաւորին երկրէս ունեցած հեռաւորութիւնը, և այն վերոյիշեալ շոգեկառքով այդ մօտիկ լուսաւորին միայն հասնելու համար 52,000,000 տարի պէտք է: Բազմապատկեցէք հիմա այդ 52,000,000 տարին 500ով և պիտի ունենաք թիւը այն տարիներուն որոնք պէտք պիտի ըլլան յիշեալ շոգեկառքով անցնելու համար այն անհուն միջոցին մէջէն ուր կը շոգչողան անհուն անհամար արևներ՝ իրենց միլիոնաւոր աշխարհներով շրջապատուած: Օհ, ի՞նչ փառք է այս, ի՞նչ մեծութիւն, ի՞նչ հա-

ըրստութիւն. կրնա՞ք տոկալ, կրնա՞ք նայիլ անոր վրայ: Ո՛չ, ո՛չ, փակեցէք աչքերնիդ, կը խտրտին, կը կուրանան անոնք:

Կը պատմուի թէ հին ատենը երբ մարդիկ կը մտնէին Արտեմիսի տաճարին մէջ, երբեմն իրենց աչքի տեսութիւնը կը կորսնցընէին, որովհետեւ տաճարին ներսը՝ տարապայման կերպով շքեղ, շլացուցիչ տեսարան մը կը պարզուէր իրենց առջև: Ոսկին ու ամէն տեսակ թանկագին քարերը արևներու պէս կը շողշողային հոն, և ամէն ինչ այնքան հոյակապ, այնքան անպատմելի կերպով մեծափառ էր որ դռնապանները երբ ներս մտցնէին օտարականներ՝ միշտ կ'ըսէին անոնց, «Սչքերնուդ հող տարէք:» Օտարականը ներս կը մտնէր աչքը հովանաւորելով: Աչքերնուդ զգուշութիւն ըրէք դուք ալ, ով մահկանացուներ, երբ կը մտնէք այսպէս՝ ո՛չ թէ Արտեմիսին այլ Ամենակալ Աստուծոյ անհուն տաճարին մէջ: Հովանաւորեցէք աչքերնիդ երբ կրնայիք Անոր այս փառահեղ տիեզերքին վրայ: Իրա՛ւ է որ մեր տեսութիւնը կը շիջանի, մեր միտքը կը դողդողայ, և մեր երևակայութեան հզօր թռիչները կը ջախջախուին ու ան կանգ կ'առնէ զարհուրած այս անհունութեան առջև որ ցնորք մը կամ հայեցողութիւն մը չէ, քանի որ արդի գիտութիւնը շօշափելի բան մը ըրած է զայն: Ուստի շատ բնական բան մըն է, այս մե-

ծութեան առջև կանգնելով՝ գոչել, «Մարդը ի՞նչ է որ զանիկա կը յիշես, կամ մարդու որդին որ անոր այցելութիւն կ'ընես:» Տիեզերքի մեծութեանց առջև ի՞նչ ենք մենք: Մեր աշխարհը անգամ իր վիթխարի լեռներով, իր անհուն ովկէաններով աւազի հատի մը պէս է անոնց քով, և մենք ամենափոքրիկ միջատներու պէս ենք անոր վրայ:

Երբ դիտենք, մանաւանդ, բնութեան անողոք, երկաթ օրէնքները, կատարելապէս անկարեկիր և անտարբեր կը թուին անոնք մարդկային ցաւերու և աղէտներու հանդէպ: Ո՛չ ապաքէն լուսինը ճակատամարտի մը արիւնալից դաշտին վրայ նոյնքան հեղաբար և մեղմիկ կը ծագի որչափ հանդարտութեամբ պիտի թափէր իր արծաթ լոյսը հայելանման ըճի մը վճիտ և անվրդով ջուրերուն վրայ: Արևը իր բոցափայլ ճառագայթներով հաւասարապէս չո՞ղոզեր թէ՛ սուղի մառախլապատ տուն մը և թէ՛ խրախճանութեանց աղաղակներով հնչող տուն մը: Մարդուն ցաւերուն կամ խնդութեանց համար բնութիւնը կը զգա՞յ երբեք բան մը: Օդին թրթռուն ալիքները հաւասարապէս չեն փոխադրեր աղթքի անոյշ միմուռները և անէծքի ու հայհոյանքի վայրագ գոչիւնները: Լուսարեր թերը անջրպետին ծայրագոյն եզրերէն իր պատգամները կը բերէ հաւասար ճշտութեամբ թէ՛ սուրբին թէ՛ ապականեալին:

Ամենագեղեցիկ ու ամենամաքուր տեսարանները, ինչպէս նաև ամենատղեղ ու ամենագարշելի երևոյթներն նոյնքան հաւատարմութեամբ և ճշգրտութեամբ կը փոխադրուին եթերի անտեսանելի և գաղտնածածուկ ալիքներու միջոցով: Կը թուի թէ Բնութիւնը բացարձակապէս անտարբեր է բարոյական իրերու մէջ:

Բայց չաճապարենք վճիռ տալու: Խնդրոյն միւս կողմն ալ կայ, զոր Մաղմոսերդուն անմիջապէս ձեռք կ'առնէ տիեզերքի մեծութեան վրայ իր արձակած բացագանչութենէն վերջ: Յանկարծ կարծես իր աչքին կը փայլատակէ ուրիշ մեծութիւն մը՝ այնքան գերափառ, այնքան շողարձակ որ անմիջապէս կը մտաբերէ թէ նիւթական մեծութիւնները գերազանցող ուրիշ կարգի մեծութեան մը առջև կը գտնուի: Եւ ուստի «Մարդը ինչ է» ին իբր պատասխան կը գոչէ «Քիչ մը վար ըրիր զանիկա հրեշտակներէն» կամ եթէ կարգանք ինչպէս կը կարգան ամէնէն հմուտ Եբրայագէտները «Քիչ մը վար ըրիր զանիկա Աստուծմէ. փառքով ու պատուով պսակեցիր զանիկա. քու ձեռքերուդ գործերուն վրայ իշխան դրիր զանիկա, ամէն բան անոր ոտքերուն տակ դրիր»: Այս խօսքերուն մեկնութիւնը պարզ է: Որչափ ալ որ տիեզերքը զարմանալի է իր անհուն մեծութեամբ ու փառքով, որչափ ալ որ մարդ շատ փոքր ըլլալ կը թուի անոր

քով, մարդ իր ճշմարիտ բնութեամբ, իր ներքին էութեամբ, իր ընդունակութիւններով, իր անսահման կարելիութիւններով, Բնութենէն վեր է. և աւելի մօտ Աստուծոյ: Մարդկային բնութիւնը Աստուծոյ պատկերին պէս ստեղծուեցաւ, միայն իր հունաւորութեամբն է որ վար կը մնայ Աստուծմէ: Այս ճշմարտութիւնը մասնաւորապէս յստակ կ'երևի, երբ որ մարդկային բնութիւնը նկատենք իր գաղափարական փառքին մէջ այն մեծ Էական անձին վրայ որ միանգամայն Որդի Մարդոյ և Որդի Աստուծոյ էր: Տիեզերքին մեծութիւնը և փառքը, ուրեմն, մարդկային բնութիւնը չկրնար պղտիկցնել, քանզի այդ բնութեան վրայ Աստուծական փառք մը ու մեծութիւն մը կայ որ վեր է ամէն ուրիշ մեծութենէ: Ոչ ալ Բնութեան օրէնքներուն անտարբերութիւնը կամ անյերդի հանգամանքը որ և է կերպով մը կըրնայ ցուցնել թէ Բնութեան օրէնքները անտարբեր են մարդուն բարոյականին ու անոր գործքերուն հանդէպ, քանզի մարդուն համար ըսուած է հոս թէ, ան տէրն է բոլոր Բնութեան ոչ թէ անոր գերին, կամ ծառան: Մարդ Բնութեան երևոյթներէն կամ օրէնքներէն չէ որ պիտի սպասէ որևէ համակրանք կամ բարոյականի ուսուցում. ինք բնութեամբ անկէ վեր է, ան իր ծառան է, իր իշխանութեան տակ դրուած, ինք վեր կ'ելլէ

Բնութեան այդ վարի սահմաններէն ու իր աստուածանման բնութեամբ ուղղակի կը հաղորդակցի Բնութեան մեծ Արարիչին հետ։ Ան կրնայ իրեն համակրիլ, Ան կրնայ իրեն առաջնորդել, Ան կրնայ իրեն հետ ուղղակի խօսիլ։ Աստուած Բնութիւնը մարդկային էակին ծառայութեան տակ դրած է. ու մարդը ինք իր Աստուծոյն է. ոչ Բնութեան ո՛չ տիեզերքինը։ Ուստի, թէպէտ ճշմարիտ է որ Բնութեան օրէնքներն, ձգողական ահեղ ոյժը, եթերային լուսաբեր ալիքները, օդին թրթռումները բնաւ որևէ բարոյական հակում մը ցոյց չեն տար. թէպէտ ճշմարիտ է որ ոչ արևը, ոչ լուսինը ու ոչ Բնութեան երևոյթներէն որևէ մէկը համակրանք մը ցոյց չտար մարդկային վշտերու կամ ուրախութեանց հանդէպ. բայց անոնց մեծ վարիչը, անհուն Աստուածը, որ բոլոր Բնութեան ետևը կը կենայ, և զոր Բնութիւնը, մասնաւորապէս արդի գիտութեան շնորհիւ, որոշակի մատնանիչ կ'ընէ մեզ, Ան, Ան է որ կը համակրի մարդկութեան. Ան ինքն է որ իր աստուածական ձայնը կը հնչեցնէ մինչև հոգւոյն խորերն ու կը դորդեցնէ զայն. Բնութեան տրուած չէ թափանցել ըստ ինքեան այդ խորունկութեանց. Բնութիւնը պաշտօն ունի ծառայելու այն մարդուն որ այսչափ փոքր կ'երևի անոր քով հարևանցի տեսութեամբ մը։ Նոյնպէս ալ տիեզերքը՝ որ այն-

քան մեծ կ'երևի մարդուն հետ բաղդատելով՝ չկրնար նսեմացնել մարդը, քանզի մարդկային բնութեան մեծութիւնը աւելի է քան տիեզերքինը։ Բնութիւնը անհուն է, անդիմադրելի է և անյեղլի, բայց մարդուն հոգւոյն մէջ կայ բան մը, նման աստուածական բնութեան, որով ան բոլոր նիւթական տիեզերքին վրայ իբր տէր կարգուած է. «Ամէն բան անոր ոտքին տակ դրիր»։

Մարդուն սոյն մեծութիւնը բացատրելու համար միայն մէկ կէտ մը յառաջ բերենք։ Մարդկային միտքն է որ մէկ իմաստով մը որպէս թէ վերստին կը ստեղծէ Բնութիւնը և ամբողջ տիեզերքը։ Միտքն է միայն որ կարող է կարգալ իր առջև բացուած այս լայնածաւալ ու անհուն գիրքը։ Երբ կը նայիք ձեր շուրջը տարածուած գեղեցկութեանց վրայ, կը դիտէք այն ամէն երանգները ու գոյները որոնք կը փայլին երկրի ու երկինքի վրայ, կը զարդարեն լեռները, մարգերը անտառները ու ծաղիկները, երբ կը լսէք այն երգերն որոնք կը հնչեցնեն անտառները, այն երաժշտութիւնը որով կը դուռն հովերը, ալիքները ու յորդահոսան գետը, կամ այն անոյշ մրմունջը որ կը բարձրանայ արծաթ վտակէն և հեղասահ առուակէն, երբ զմայլմամբ կը նայիք ծաղկին փառքին, ամէն վերադարձող փողփողուն արշալոյսի, երեկոյեան մարմրող շքեղութեան ու այն բոլոր

վառքի վերարկուին որով ծածկուած են երկիր, երկինք ու ծով, երբ այս ամենէն կը յափշտակուիք և կը դիւթուիք՝ կը մտածէ՞ք երբեք թէ մարդկային միտքն է որ գրեթէ կը ստեղծէ այս ամէնը: Առանց անոր ասոնք ամէնքը նշանակութիւն պիտի չունենային: Ի՞նչ նշանակութիւն պիտի ունենար հոյակապ թանգարան մը, լի արուեստի գլուխ գործոցներով, կամ գրատուն մը, հարուստ հին ու նոր դարերու բոլոր իմաստութեամբ, ու բոլոր գրականութեանց ամէնէն ընտիր հատորներով եթէ երկրիս վրայ բնաւ մարդկային էակ մը չգտնուէր թանգարանը դիտող կամ գրատունին հատորները կարդացող, անոնք ամէնը կոչա նիւթի բեկորներ պիտի մնային միայն ու ոչ այլ ինչ: Ճիշդ ասոր պէս ալ ի՞նչ պիտի ըլլար բոլոր շքեղ Բնութիւնը, եթէ գոյութիւն չունենար մարդկային միտքը որ կը հասկնայ զանոնք, կ'ըմբռնէ անոնց գեղեցկութիւնը և կը յափշտակուի անով. կը թարգմանէ ու կը մեկնէ զանոնք իրր թէ: Անշունչ նիւթը որ մեր շուրջը սփռուած է, ոչինչ կը հասկնայ անոնցմէ, ոչ ալ ամեն տեսակ տեսակ կենդանիները որոնցմով շրջապատուած ենք, կարող են բան մը հասկնալ այն ամէն դարմանալիքներէն որոնց առջև սակայն իրենց զգայարանքներու, աչքի, ականջի դռները բաց են մերիններուն պէս: Անոնց աչքերն ալ մե-

րինին պէս յօրինուած են, նոյնպէս ալ ականջները. սակայն, աւա՛ղ, ի զուր կը թափուին անոնց վրայ գեղեցկութեան աստուածային հոսանքները. միտք չկայ հոն զանոնք տեսնող կամ լսող: Եւ չէ՞ որ մարդկային միտքն է որ աւելի վեր կը բարձրանայ այս տեսանելի իրերէն, և կ'ընդունի նաև թելադրութիւններ որոնք իր առջև կը պատկերացնեն Աստուծոյ անտեսանելի առատասրտութիւնը և ճոխութիւնը, Անոր անհուն հոգածութիւնը և սէրը, ապագայի բոլոր այն ուրիշ գեղեցկութիւններուն զորս աչք չէ տեսեր ու ականջ չէ լսեր, և զորս Աստուած ի տես պիտի բերէ, նաև այն աստուածային յաւիտենական ներկայութիւնը որուն միայն ստուերներն կամ ցոլացումն են յաւերժական լեռները, անեզր ովկէանը և անջրպետին աստղաճաճանչ սահմանները:

Մարդուս միտքը կու գայ Մարքոնիին անթել հեռագրութիւնը: Գիտէ՞ք ի՞նչ է այն: Մի կարծէք թէ անանկ գործիք մըն է այն, որ իր պատգամը կը զրկէ մէկ տեղէն ուրիշ տեղ մը ուղղակի: Ելեքտրական գործիքը իր գտնուած տեղէն կը զրկէ բոլորակներ նման անոնց որ կը շինուին ջուրին մէջ երբ քար մը նետես անոր մէջ: Այս բոլորակները կ'աճին կ'ընդարձակին շարունակ, և կը տարածուին բովանդակ աշխարհին վրայ, նման ովկիանոսի ալիքներուն: Երբ ասանկ ի-

րենց յառաջխաղացութեան մէջ զարնուին այն կէտին որ առաջուրնէ պատրաստուած ու զգայուն վիճակի մէջ դրուած է ելեքտրականութեան ազդեցութիւնը ընդունելու, այն ատեն այդ կէտն է որ իսկոյն կ'ընդունի հաղորդուած ելեքտրական պատգամը: Ուրիշ ո՛րքան կէտերու կրնան բաղխիլ այդ ալիքներն իրենց յառաջացման ճամբուն վրայ, բայց անոնցմէ ոչ մէկը, որ զգայնացած չէ, երբեք կրնայ որևէ ազդեցութիւն կրել կամ ընդունիլ հաղորդուած պատգամը: Լեցուցէք բոլոր ովկէանները ու մթնոլորտը ելեքտրական այս զարմանալի բոլորակներով. բայց եթէ չկայ տեղ մը, չկայ կէտ մը որ յարմարուած է անոնց, եթէ անոնց համար զգայուն եղած գործիք մը չկայ, մթնոլորտին ու ովկէանին մէջ լեցուած բոլոր ելեքտրական պատգամները ոչ մէկուն կը խօսին. այսպէս Աստուած բոլոր Բնութիւնը լեցուցած է իր աստուածային սիրոյ, բարութեան, գեղեցկութեան ու ներդաշնակութեան պատգամներով: Իրմէ, իբր կեդրոնէ մը, կը հոսին այս նրբին, անհուն ալիքները, բայց անոնք թափուելով մեր շուրջը գտնուող անհամար արարածներուն վրայ, պատգամ մը չեն հաղորդեր անոնց, քանզի անոնք յարմար կամ ընդունակ չեն այս տեսակ ազդեցութիւններ ընդունելու, երկինքի վրայ փայլող հրեղէն գունտը, արևը, իր բոլոր փառաւորութեամբ,

իր բոլոր մեծութեամբ կարող չէ ընաւ ընդունիլ կամ հասկնալ զանոնք: Մարդը, միայն մարդն է որ բոլոր այս շքեղութեանց մէջ կանգնած, երևոյթով փոքրիկ ու տկար արարած մը, վեր կը վերցնէ իր ձեռքը և կ'առնէ այն ջնաշխարհիկ լոյսը որ կը հասէ արևներուն արևէն, Եհովա Աստուծմէ: Կը տեսնէ՞ք այս նորօրինակ մեծութիւնը, կրնա՞ք բաղդատել զայն նիւթական որևէ մեծութեան հետ: Գրէ՞ք կշիռքին մէկ նժարին մէջ այս զարմանալի էութիւնը, պատկերը, շողշողումը տիեզերքի անհուն Արարիչին. դրէ՞ք անոր դէմ միւս նժարին մէջ ինչ փառք, ինչ մեծութիւն որ կրնաք գտնել համայն նիւթեղէն տիեզերքէն և ատոնք ամէնքը պիտի չկրնան երբեք ազդել իսկ այն նժարին վրայ ուր մարդկային էակ մը, փոյթ չէ թէ ամենէն խոնարհն ըլլայ, բազմած կը կենայ փողփողումով մը որ աւելի է քան հազարաւոր արևներունը: “Ինչ կը շահի մարդ եթէ բոլոր աշխարհը վաստկի ու իր անձը կորսնցնէ:”


Բարդեցէք հիմա այս մեծութեան վրայ բարոյական փառքն ալ, այն նկարագրին բարձրութիւնը զոր Ֆրիստոնէութիւնը կը յայտնէ, մարդկային բնութեան այն կարելիութիւնները որոնցմով ան շատ վեր կը բարձրանայ ժամանակի ու զգայարանքի սահմաններէն. և որոնցմով կը միանայ նոյն ինքն Աստուծոյ հետ, և անհունին ու յաւիտենա-

կանին անեզր սահմաններուն հետ, դրէք այս մեծութիւնը միւս մեծութեանց վրայ, և այն ատեն կը գտնուիք ուրիշ տեսակ անհուն մեծութեան մը առջև որ նիւթական անհունութենէն գեր ի վեր կը բարձրանայ, որ կը շփոթեցնէ ու կը շուարեցնէ ամենէն հզօր միտքերն անգամ:

Շէրակոյի համաշխարհական արուեստահանդէսին ներկայ գտնուողներէն մէկը կը պատմէ թէ անոր մէկ ճիւղին մէջ մէկ մասնաւոր վայր մը կար ուր մեծ ամբօխ մը խոնուած կը տեսնուէր գիշեր և ցերեկ, որ ատեն որ շէնքը բաց ըլլար: Մարդ չէր կրնար այդ կէտին մերձենալ խուռն ամբօխին պատճառաւ: Յիշեալ անձը շատ հետաքրքրուելով կրկին ու կրկին փորձ փորձեց մօտենալ տեղին, բայց չէր յաջողեր, մինչև որ օր մը շատ գոժուարութեամբ քիչ մը մօտեցաւ, ու ոտքին մատերուն վրայ կենալով, կրցաւ իմանալ թէ ի՞նչ բանի կը նայէր ամբօխը՝ որուն մէջ շատերը իրեն նման հարկադրեալ էին ոտքի մատերուն ծայրին վրայ կենալ և բազմութեան գլուխներուն վրայէն դիտել: Ի՞նչ կար հոն: Կարծիր թաւշեայ կոն մը որ առանցքի մը վրայ շարունակաբար կը թաւալէր, ու այդ կոնին գագաթին վրայ գետեղուած էր խոշոր շողափայլ ադամանդ մը, որ գրեթէ գին չունէր: Արևի պէս կը վառէր: Անցորդը կ'ըսէ թէ որչափ ալ որ

գոժուարութիւն կրեց զայն տեսնելու համար բազմութեան մէջ, սակայն կ'արժէր տեսնել, գէթ նայուածք մը ձգել Բնութեան և արուեստի այս հրաշակերտին վրայ: Բայց, աւա՛ղ, մարդ նայուածք մը անգամ չի ձգեր յաճախ այն զարմանալի, աննիւթ ադամանդին վրայ որ Աստուծոյ հրաշակերտը և գլուխ գործոցն է, ու որ մարդուս իր մէջն է, անմեռ հողին, որուն գինը Աստուածորդին վճարեց իր արիւնով: Ո՛չ, ո՛չ. բոլոր անհուն տիեզերքը, բոլոր անհամար արևները որ կը վառին անջրպետին մէջ, ո՛չ կրնան փոքրկացնել ու ո՛չ ալ նսեմացնել երկինքներու և յաւիտենականութեան համար սահմանուած այս գոհարը: Բնութեան անողոք ու երկաթ օրէնքներն, որոնց վրայ նայելով յաճախ կ'ըզիւնքնիս ստորնացած կը տեսնենք ու տարակոյաներու և երկրայութեանց մշուշին մէջ կ'ընկլուզանինք, անոնք ալ իրենց բոլոր գոռոզ խստութեան մէջ, չեն կարող իշխել մարդկային աննիւթ բնութեան որուն թագուն և անտեսանելի կարողութիւններն անոնց ամէնէն շատ վեր կը սաւառնին: Յիրաւի մարդկային մարմինը, անոր հրաշալի կազմութիւնը և օրէնքներն ալ վերջին աստիճան զարմանալի են: Ի՞նչ հրաշալիք է արեան շրջանը մեր մարմնոյն մէջ. ի՞նչպէս մարմնոյն բոլոր արիւնը մեր սրտին մէջէն կ'անցնի ամէն երեք վայրկեանը անգամ մը,

և ի՞նչպէս սիրաբ, այդ զարմանալի գործաւ
րանը, ամենայն կանոնաւորութեամբ կը բա-
բախէ մէկ տարուան մէջ 36,000,000 ան-
գամ: Նայեցէ՛ք ձեր մարմնոյն հինգ հարիւր
միլիոններուն, երկու հարիւր յիսուն ոսկորնե-
րուն, իբր ինը միլիոն ջիղերուն և մորթին
ամէն մէկ մատնաչափին վրայ դանուած ե-
րեք հազարէ աւելի ծակտիններուն վրայ. և
լսէ՛ք ինձ, չէ՛ք ընկզմիր հիացումի մէջ ու չէ՛ք
ապշիր: Բայց ո՞հ, ի՞նչ են ասոնք հոգիին
քով. զարմանալիքներուն զարմանալիքն է ան:
Անոր իմացականութիւնը, աննկարագրելի
կերպով հուժկու, անոր գերիշխան կամբը,
անոր յիշողութիւնը, աննիւթ գանձարանը,
անոր խղճմտանքը որ ամէն նիւթական ոյժե-
րէն գեր ի վեր կը կենայ, վայելելու և տա-
ռապելու անսահման կարողութիւններն և ա-
մէնէն վեր անոր անմահութիւնը աշխարհներ,
տիեզերքներ չէ՞ն պարունակեր իրենց մէջ: Ո՛վ
մարդ, որքան ալ որ խոնարհ ու տառապեալ
ըլլաս, գիտցիր քու անչափելի մեծութիւնդ
և արժէքդ: Երկնից լուսաւորները պիտի
մեռնին և դու պիտի դիտես անոնց շիջումը:
Աշխարհ պիտի այրի և դու պիտի նայիս այն
հրկիզման վրայ: Անվերջ դարեր պիտի անց-
նին և դու պիտի դիտես անոնց անցքը:
Պէ՛տք է որ անհոգ գտնուիս ասանկ էութեան
մը յաւիտենական փրկութեանը նկատմամբ:



ՎԵՐ. ԲՐՈՑ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ՎԻՆԷ

ԱՍՏՈՒԾՈՑ ԳՈՐԾԸ

«Ըսին անոր: Ի՞նչ ընենք որ Աս-
տուծոյ գործերը գործենք: Պա-
տասխան տուաւ Յիսուս ու ըսաւ
անոնց, Այս է Աստուծոյ գործը, որ
անոր շրկածին հաւատար:» Յովհ.
2. 28. 29.

Ականատես Յիսուս ֆրիստոսի հրաշք-
ներուն, ի մասնաւորի նկանակները բազ-
մացներու հրաշքին, ժողովուրդը կը կառչի
այս հիանալի անձին հետքերուն. և այս
միևնոյն Յիսուսը, որ սովոր էր ընդ ա-
ռաջ երթալ իր եղբայրներուն, այս անգամ,
անտարակոյս շատ իմաստուն նկատողութիւն-
ներով, կը թուի անոնց փութկոտութենէն
խուսափիլ: Երբ եկան գտան զինքը Տիրե-
րիայի ծովուն միւս կողմը, ուր մեկուսացած
էր, հաւանականաբար, ճողոպրելու համար
անոնց թախանձութենէն, սոյն վշտառիթ
խօսքերով կ'ընդունի զանոնք. «Ճշմարիտ
ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Դուք զիս կը փնտռէք՝
ոչ թէ անոր համար որ հրաշքներ տեսար,
հապա անոր համար որ հացերէն կերաք ու

կշտացաք:” Բայց լոկ վշտացնել չէր զանոնք իր նպատակը, այլ և հրահանգել, և ուստի կը յաւելու, “Գործեցէք ո՛չ թէ կորստական կերակուրին համար, հապա այն կերակուրին համար՝ որ յաւիտենական կեանքին մէջ կը մնայ, զոր Որդին մարդոյ ձեզի պիտի տայ, վասն զի Հայրն Աստուած զԱնիկա կնքեց:”

Այնպէս պիտի կարծէինք թէ սոյն յանդիմանութիւնը, զոր ի սկզբան իսկ Յիսուս կ’ուղղէ իրենց, պիտի վերցնէր ամբօխէն իրենց փափաքը այս խօսակցութիւնը երկաբերու: Այնպէս պիտի կարծէինք թէ իր առաջին խօսքերէն յուսահատած, ա՛լ աւելի յուսահատած մանաւանդ՝ որովհետեւ արդարացի էր այս խստութիւնը, պիտի մտածէին միայն ետ քաշուիլ Յիսուսէն, որմէ գէթ առ ժամն և ո՛չ մէկ մարմնաւոր շնորհք կրնային ակնկալել: Եթէ որնէ մէկը, որուն ներկայացուէինք յարգանքի ու վստահութեան բոլոր ցոյցերով, ընդունէր զմեզ, ինչպէս Յիսուս Հրեաները կ’ընդունի այսօր, ա՛յնքան վիրաւորուած, և թերեւ այնքան գրգռուած պիտի ըլլայինք, որ չը պիտի ուզէինք խօսակցութեան մտնել իր հետ. ո՛չ իսկ իր քով մնալ: Հրեաները կը մնան, և հարցումներ կ’ուղղեն իրեն. կա՛մ այն է որ իր խօսքերուն ծանրութիւնը ա՛ն ազդած է իրենց, և հակառակ իրենց կամքին կը կասեցնէ զիրենք, և կա՛մ կը յուսան, լուրջ հարցման մը միջո-

ցաւ, աւելի նպաստաւոր գաղափար մը տալ իրեն իրենց անձերուն և իրենց շարժառիթի նկատմամբ, և որովհետեւ “բռնեցէ” ըսած էր Յիսուս իրենց, իրենք ալ կը հարցնեն, “Ի՞նչ ընենք որ Աստուծոյ գործերը գործենք:”

Ի՞նչ է այս հարցման իմաստը. եղբարք իմ: Ի՞նչ բանի մասին է որ տեղեկութիւն կը խնդրեն Հրեաները: Աստուծոյ գործերուն վրայ կը խօսին. և անով անտարակոյս կ’իմասնան այն գործերը՝ զորս Աստուած կը սիրէ, զորս Աստուած կը հրամայէ, որք զմեզ հաճելի կ’ընեն Աստուծոյ և նմանող Աստուծոյ: Բայց ի՞նչ է որ կը փափաքին գիտնալ, թէ արդեօք ինչպէս մարդիկ ի վիճակի կ’ըլլան սոյն գործերը կատարելու, կամ թէ արդեօք ի՞նչ են սոյն գործերը: Եթէ իրենց հարցումը առաջին իմաստն ունենար, յոյժ գեղեցիկ հարցում մը պիտի ըլլար այն. ցոյց պիտի տար թէ իրենց մէջ կար գաղափար մը խիստ արդար և զգացում մը խիստ թանկագին: Պիտի ապացուցանէր թէ, ամէն բանէ առաջ, անոնք կը զգան կարօտութիւնը ներքին ոյժի մը, ընդհանուր սկզբունքի մը՝ որ ուզել պիտի տար իրենց ամէն ինչ որ Աստուած կ’ուզէ: Այս հարցումը նշան մը պիտի ըլլար թէ անոնք, իրենց ներկայ վիճակին մէջ, անկարող կը զգան ինքզինքնին այս գործերը կատարելու, մինչև որ չընդունին նոր հոգի մը, նոր միտք մը, նոր կեանք մը: Այս հար-

ցումը ուստի պիտի ըլլար միայն խոնարհ խոստովանութիւն մը իրենց թշուառութեան և իրենց տկարութեան: Բայց իրենց հարցումը չը պարունակեր իր մէջ այս խոստովանութիւնը: Միթէ չե՞նք ճանչնար մենք զիրենք, չե՞նք ճանչնար իրենց գլխաւորներն ու իրենց առաջնորդները: Ընդարձակ անջրպետ մը չը կա՞յ միթէ ընդ մէջ այսպիսի զգացումի մը և այն շահախնդիր շարժառիթին, այն կոշտ շարժառիթին, որ յամառաբար հետապնդել կուտար իրենց Յիսուսի: Եթէ Յիսուս Քրիստոս այս իմաստը տար իրենց հարցման, իր պատասխանէն յայտնի չը պիտի ըլլար այն: Ոչ, ամէն ինչ կը գործակցի ապացուցանել, և հարցման ձևն ալ հակառակ չէ այս մեկնութեան, որ իրենց խորհուրդը այս էր. “Ըսէ մեզ որո՞նք են Աստուծոյ գործերը. որպէս զի կատարենք զանոնք:”

Գիտեցէք արդ, սիրելի ունկնդիրք իմ. թէ անոնք քաջ գիտէին թէ որո՞նք են Աստուծոյ գործերը կամ կրնային գիտնալ, եթէ ուզէին: Մովսէս և մարգարէները յայտնած էին զայն իրենց բաւական պարզութեամբ, բաւական ամբողջութեամբ. չը կար Գրիստոնէական բարոյականի և ոչ մէկ սկզբունքը, որ չգտնուէր Հին Ուխտին գրուածներուն մէջ, գէթ անոնց համար, որ գիտէին կարգալ զանոնք; և Յիսուս Քրիստոս չէ եկած նոր պարտաւորութիւններ սորվեցնելու

մեզ, այլ ամրապնդելու այն պարտականութիւնը. որ զմեզ հիներուն կը կապէ, և տալու մեզ նոր ոյժ մը զանոնք կատարելու համար: Այս Հրեաները ուրեմն տեղեկութիւն կը հարցնէին այնպիսի խնդրոյ մը մասին, որուն ծանօթ էին արդէն, և չէին հարցնել այն բաներուն մասին, զորս դեռ կ'անգիտանային: Իրենք կ'ըսէին, Մենք կըրնանք, բայց չենք գիտեր: Պէտք էր որ ըսէին, Գիտենք, բայց չենք կրնար. կամ, Չենք ուզեր, և կամ, Չենք կրնար ուզել: Քանզի Աստուծոյ օրէնքին հնազանդելու ամբողջ խնդրոյն մէջ կամենալը կարենալ է:

Քանի որ այնպէս կը խորհին, սիրելի եղբարք իմ, յայտնի է թէ բազմաթիւ գործերու մասին կը խօսին և կ'ըսեն Յիսուսի. Սորվեցուր մեզ, որո՞նք են Աստուծոյ գործերը: Այս էր իրենց ժամանակին և իրենց երկրին ոգին: Իրենց, ինչպէս նաև իրենց առաջնորդներուն, Փարիսեցիներուն, համար, բարոյականը կը բաղկանար նուազ կամ առաւել բազմաթիւ գործողութիւններէ և օրինապահութիւններէ, և դժուարութիւնն էր զանոնք բոլորը գիտնալ և ո՛չ մէկը զանց ընելու համար, և ո՛չ իսկ մէկ մանրամասնութիւն մը: Գործեր և միշտ գործեր, այսինքն միշտ այն արտաքին գործողութիւնները, զորս ձեռքը կը կատարէ, և աչքը կը տեսնէ. այս էր իրենց համար բարոյականին ոգին, այս

էր առաքինութիւնը իրենց մէջ ամենէն լաւագոյնին համար: Իրենց մէջ կային շատ քիչեր, որ բարձրագոյն գաղափար մը ունենային բարոյականի մասին, աւելի քիչ՝ որ գիտնային իրենց անկեալ վիճակը, և իրենց անկարողութիւնը Աստուծոյ գործերն կատարելու մինչև որ Աստուծմէ չընդունէին նոր սիրտ մը: Ի՞նչ կ'ըսեմ. թերևս նոյն իսկ քիչեր կային՝ որք ուղղամտութեամբ կ'ընէին մեր բնաբանին հարցումը, ի՞նչ ընենք որ Աստուծոյ գործերը գործենք:

Չստորնացնենք զանոնք և ֆրիստոսէ աւելի խստութեամբ չվարուինք իրենց հետ: Այս ալ բան մ'է արդէն որ տեղեկութիւն կը փնտռէին Աստուծոյ գործերուն մասին, որպէս զի կատարեն զայնս: Ըսուած է այն պատանի իշխանին նկատմամբ, որ ջանացած էր ի մանկութենէ անտի զանոնք ամէնը կատարել թէ Յիսուս «իւրեց շնոր» (Մար. Ժ. 21): Արդէն բան մ'է, կ'ըսենք, հարցուփորձ ընել Աստուծոյ գործերուն մասին: Մեծ բան մ'է բաղդատմամբ անտարբերութեան այն բաղմութեան, որ հոգ չընէր գիտնալ, վասն զի հոգ չընէր կատարել: Մեր Տէրոջ պատասխանը բնաբանին մէջ, կը խոստովանիմ թէ, կ'ուղղէ սխալ գաղափար մը, կ'աղղարարէ Հրեաներուն թէ խաբուած են, այլ սակայն այս պատասխանը յանդիմանութիւն մը չէ, հրա-

հանգութիւն մ'է, դաս մ'է: Չանա՛նք անոր իմաստին թափանցել:

Եղբարք իմ, մեր Տէրոջ խօսքերով կը զինուինք ընդդէմ երկու ներհակ մոլորութեանց: Սուր մ'է այն, որուն հատու սայրն յաջորդաբար կը դարձնենք Հրէից ու Քրիստոնէից դէմ, կամ յաւէտ կարգ մը Հրէից ու կարգ մը Քրիստոնէից դէմ. անոնց դէմ, որք այս երկու եկեղեցիներու մէջ կը չափազանցեն և այսպէս կը թիւրեն այն սկզբունքը, որուն վրայ իրենց եկեղեցին կը կանգնի: Երկու եկեղեցիներ են ասոնք արդարև, բայց չեն երկու կրօնքներ: Մովսիսականութիւնը և Քրիստոնէութիւնը ուրիշ բան չեն, և չեն կրնար ուրիշ բան ըլլալ. եթէ ոչ նոյն ճշմարտութեան երկու տարրերը, նոյն առանցքին երկու բևեռները, նոյն նաւուն յետոյ և առաջոյ կողմերն: Այս եկեղեցիներէն իւրաքանչիւրն ունի իր նշանաբանը: Յուդայի եկեղեցւոյ նշանաբանն է «Ինչ» Քրիստոնէայ եկեղեցւոյ նշանաբանն է հասարակաց այն սխալանքն՝ որուն իւրաքանչիւրն ալ ենթակայ է, անտեսել է և մերժել այն սկզբունքը, որուն չպարտիր իր անունը, առանց որոյ չէ կարող ունենալ ո՛չ ոյժ և ո՛չ կեանք: Հրէից սխալն է ամէն ինչ գործերու վերածել, և մինչև հաւատք չբարձրանալ: Քրիստոնէից սխալն է չտեսնել թէ ճշմարիտ հաւատքը գործ մ'է, և, եթէ գործ մը չէ.

ոչինչ է: Արդ՝ այս երկու սխալներն չեն այն-
քան յատկանիչներն երկու ժամանակամի-
ջոցներու, որոնցմէ մին դեռ կը շարունակէ,
և միւսն ոչ ևս է, որքան երկու դասակարգի
անձեր կամ երկու միտումներ, որք կ'երեւին
ամէն ժամանակի և ամէն տեղի մէջ: Երբ
մեր խօսքն կ'ուղղենք թէ՛ միոյն և թէ՛ միւ-
սին, վստահ ենք որ մեր խօսքերուն մէկ մասն
չերթար անցելոյն վիճին մէջ կորնչիլ, և
միւսն միայն գտնել իր պատշաճութիւնը
ներկային մէջ: Այն երկուքին սխալներն, զորս
մատնանիչ կ'ընենք, այժմէական են, կենդա-
նի են, և անշուշտ երկուքն ալ իրենց ներ-
կայացուցիչներն ունին այս ունկնդիրնե-
րուն մէջ:

Մեզ այնպէս կը թուի թէ մեր Տէրն մէ-
կէ աւելի պատճառ ունէր այսպէս պատաս-
խանելու Հրէից. և կրնանք իր պատասխանը
մէկէ աւելի իմաստով նկատել: Եւ նախ՝
այս իմաստով. եղբարք իմ. «Դուք հետա-
քրքրաբար տեղեկութիւն կը փնտռէք Աստու-
ծոյ գործերուն մասին, զանոնք կատարելու
համար. կը հետապնդէք արդարութեան և
հնազանդութեան. կը թուիք ըսել Աստուծոյ
խօսէ, Տէր, քու ծառաներդ ունկն պիտի
դնեն: Լաւ ուրեմն, Տէրը իր Ղրկածին անձին
մէջն է, ահա նոյն ինքն ձեր առջև, Այն՝ որուն
նկատմամբ Մովսէս ըսած է ձեզ վաղնջուց
օրերուն մէջ. «Քու Տէր Աստուածդ ինձի

պէս մարգարէ մը պիտի հանէ քեզի, անոր
մտիկ ըրէք:» Եւ դուք մտիկ չէք ըներ անոր.
մտիկ չէք ըներ անոր, իբր մարգարէի. միակը
նման ձեր մեծ և առաջին մարգարէին, իբր
Աստուծոյ Մեսիային, իբր ձեր Թագաւորն և
ձեր Փրկիչը. իբր իրականութիւնը պատկերնե-
րուն. իբր լրումը մարգարէութեանց, և իբր
վախճանը օրէնքին: Ի զուր անոր շուրջը կը
խոնուիք, և կը հետեւիք իրեն դէպ ի անապա-
տը: Կը հետեւիք անոր որ յազեցուցած է
զձեզ, թերևս անոր որ մեծ գործեր կատա-
րած է, բայց ո՛չ անոր որ է ճանապարհը,
ճշմարտութիւնը և կեանքը: Կը ճանչնաք զին-
քը թերևս իբր Աստուծոյ մէկ առաքելը. բայց
ո՛չ, գերազանց և անհաղորդելի իմաստով մը,
իբր այն շուրջ Աստուծոյ առաքել է կատարելու
համար իր բոլոր խորհուրդները ձեր և մարգ-
արութեան վրայ: Ան որոյ մասին խօսած է Մով-
սէս, ան որոյ համար ուրախացած է Աբրա-
համ. ան որուն կրած նախատինքներն գուշա-
կած է Եսայի. ան որուն օրն նշանակած է
Դանիէլ. ան եկած է և ահա ձեր առջևն է.
ձեր առջև կը տարածէ իր խօսքերը լի շնոր-
հօք և ճշմարտութեամբ. և դուք չէք տես-
ներ զինքը: Դուք որ այնքան ճարպիկ էք ժա-
մանակին նշաններն ճանչնալու մէջ, դուք որ
այնքան մոլի էք ամէն բանի որ փառք կը կոչ-
ուի, չէք նշմարեր այս ժամանակը և չէք
տեսներ այս փառքը: Բաւական չէ նոյն իսկ որ

չէք ճանչնար զայն՝ զոր Աստուած կըզրկէ ձեզ, այլ նաև չէք սպասեր իսկ անոր՝ որ խոստացուած է ձեզ: Եթէ դար մէկը իր բուն անուամբը աշխարհային փառքի և յաջողութեան խոստումներով, հաճոյքով կ'ընդունէիք զինքը: Բայց չէք ընդունիր զՍ, յն՝ որ կու գայ Աստուծոյ անուամբը, Աստուծոյ հեղինակութեամբը և Աստուծոյ Հոգիովը: Ձեր կարծրացեալ սիրտը անտես կ'ընէ Աստուծոյ Ղրկուածը, և դուք հոգածութիւն ցոյց կու տաք Աստուծոյ գործերուն մասին: Ի՞նչ կեղծաւորութիւն և ի՞նչ կուրութիւն: Աստուծոյ գործերը. — բայց նախ այս բրէք: Բայց փառք տուէք Աստուծոյ ընդունելով զՍ, յն՝ զոր կը զրկէ: Բայց, երբ ձեր գործերով զինքը պատուելու միջոցներն կը խուզարկէք, մի՛ նախ ձեր անհաւատութեամբն անպատուէք զինքը: Ի՞նչպէս պիտի կատարէք Աստուծոյ գործերը, երբ ձեր սրտերուն դուռներն կը փակէք անոր՝ որ Աստուծոյ կողմանէ կը խօսի ձեզ: Բացէք նախ ձեր աչքերը: հաւատացէք Աստուծոյ առաքեալին, հաւատացէք նոյն ինքն Աստուծոյ: Այս է այն գործը զոր ես ձեզ կ'առաջարկեմ՝ իր կողմանէ, այս է այն գործը՝ զոր պարտ է նախ կատարել: միւս գործերն երբեք չպիտի կատարէք ասկէ առաջ:”

կը համարձակինք նաև, սիրեցեալ եղբարք իմ, ուրիշ իմաստ մ'ալ վերագրել մեր Տէրոջ խօսքերուն. “Աստուած խոստացած է

զրկել, դարուց ընթացքին մէջ, ուրիշ մարդարէ մը, միակը՝ նման ձեր առաջին մարդարէին, և որ կրնայ նման ըլլալ անոր միայն այն պայմանաւ՝ որ գերազանց ըլլայ անկէ, եթէ, անոր նման և միևնոյն հիման վրայ պիտի հիմնէ եկեղեցի մը և ժողովուրդ մը: Աստուած ըրած է այս խոստումը, և դուք կը հաւատաք այս խոստումին: Բայց եթէ այսպէս կը հաւատաք, այդու իսկ ընդունած կ'ըլլաք թէ այս նոր մարգարէն պիտի սորվեցնէ ձեզ Աստուծոյ գործերը կատարել: Որովհետև եթէ զայս չսորվեցնէր, ի՞նչ պիտի սորվեցնէր ուրեմն: Բայց ի՞նչպէս պիտի սորվեցնէր զայն ձեզ, եթէ մարգարէն չէ: Ի՞նչպէս բան մը պիտի սորվէիք անկէ, որ ինքզինքը մարգարէ կը հռչակէ, բայց մարդարէ չէ: Ըսէք, ձեր բոլոր մարգարէները սուտ հանելով, թէ այս մարգարէն չպիտի գայ բնաւ: Ըսէք թէ պիտի գայ. բայց թէ այն մարդը՝ որ ձեր առջևն է, այն Յիսուսը, հզոր՝ գործերով և խօսքերով, չէ՞ այն՝ որ պիտի գար. գոցեցէք ձեր աչքերը լոյսին, դուք կարող էք այսպէս չարժիլ: Բայց, վերջապէս, գիտցէք որ այն գործերը, որոց մասին այնքան հոգածու ցոյց կու տաք ինքզինքնիդ, չպիտի ընէք զանոնք երբեք առանց հաւատալու Անոր, զոր Աստուած խոստացած է: Գիտցէք որ, իրմէ դուրս, ոչինչ կրնաք ընել: Գիտցէք որ պէտք է միանալ անոր

հետ, մասնակցիլ անոր Հոգիին, հաւատալ այն ճշմարտութեանց զորս կը քարոզէ. հաւատալ նոյն ինքն այն ճշմարտութեան, որուն ներկայացուցիչն է ինք, Աստուծոյ գործերը կատարելու համար : Սոյն գործերն ձեզմէ առաջ կատարած են անոնք, որ առանց Մեծիան իրենց աչքերովը տեսնելու, տեսած են զայն հաւատքի աչքերով, ընդունած են զինքը յուսով և անոր տիրացած՝ սիրով : Ինչ կերպով որ ալ Ան հաղորդէ մարդոց այս հիանալի կարողութիւնը, ինքն է, և ոչ այլ ոք, որ կը հաղորդէ զայն : Հաւատացէք ուրեմն թէ նա ինքն է որ պիտի դար. և հարցաքննեցէք զինքը. կամ հաւատացէք թէ չէ ան՝ որ խոստացուած էր ձեզ. և մի հարցաքննեցէք զինքը : Ուրացէք ուրեմն կանխաւ այս գալուստը և ամէն ինչ որ պարտի ընկերանալ անոր : Ուրացէք Մեծիան իր գալէն վերջ. բայց մի յուսաք երբեք Աստուծոյ գործերը կատարել, մինչև որ չըսէք բերնով և սրտով. “Օրհնեալ է այն՝ որ Տէրովը անուանովը կու գայ :”

Բայլ առ քայլ կը մօտենանք, եղբարք իմ, Քրիստոսի պատասխանին ամէնէն խստին և ճշմարիտ իմաստին : Արդար է հաւատալ, առանց հասկնալու, թէ Աստուծոյ գործերը կատարելու կարողութիւնը կախումն ունի հաւատքէն անոր վրայ, զոր զրկած է : Բայց մեզ տրուած է հասկնալ զայն, ինչպէս փոր-

ձով գիտնալ տրուած էր անոնց՝ որք Քրիստոսէ առաջ ապրեցան և հաւատքով միացան անոր : Զեռք առնենք դարձեալ բազմութեան հարցումը :

Այս բազմութիւնը գովելի փափաքով մը ոգևորեալ կ'երևի. կը փափաքի Աստուծոյ գործերը կատարել : Ծատ զօրաւոր արտայայտութիւն մը իր համառօտութեան մէջ, Աստուծոյ գործերը, այսինքն այն գործերը, զորս Աստուած կը հրամայէ, և մեր հոգիներուն մէջ են, որ զինքը կը պատուեն, զորս, ուստի կ'ընդունի ան և ինկատ կ'առնէ : Այս է անտարակոյս Հրէից մտածումը : Բայց այս չթափանցեր մինչև խորը. վասն զի չթափանցեր մինչև նոյն իսկ ճշմարիտ հնազանդութեան սկզբունքը և Աստուծոյ ճշմարիտ գործերուն պայմանը : Աստուծոյ որեւէ մէկ գործն նախ և առաջ գործ մ'է, որ առնչութիւն մ'ունի Աստուծոյ հետ : Բոլոր միւս յատկութիւններն կը պարունակուին ասոր մէջ. ամէնքն ալ ասկէց կախումն ունին : Արդ՝ կարելի չէ, առանց անիմաստ բառեր գործածելու, խօսիլ Աստուծոյ հետ մէկ առնչութեան վրայ, որ սէր չըլլայ : Արդարև, եթէ չէք սիրեր զԱստուած, ձեր իր հետ ունեցած առնչութիւնը միայն վախի առնչութիւնն է : Բայց վախը առնչութիւն մը չէ, այլ անոր հակառակը. չմիացներ, այլ կը բաժնէ : Եւ եթէ Աստուած մարդոց կրօնք մը

տալով՝ նպատակ ունէր միացնել զանոնք իր հետ, պէտք է որ, նախ քան զամենայն, այս սիրոյ առնչութիւնը հաստատուի մարդոց և Ասոր մէջ: Եւ այն բոլոր գործերն, զորս մարդիկ կարենան կատարել այս առնչութենէն դուրս, Աստուծոյ գործերը չեն: Անկարելի է որ կատարուին իր ոգիովը. անկարելի է որ պատուեն զինքը, քանի որ սէրը չէ որ դրդած է զանոնք. վախն է, և վախն ալ չպատուեր զինքը: Կարելի չէ որ Աստուած ինկատ առնէ զանոնք. վասն զի ինչ որ ան կ'ուզէ, միակ բանը՝ զոր կրնայ ուզել, մեր սիրան է, և մեր սիրտը անոր մէջ չէ: Վերջապէս, եղական՝ այլ սակայն ճշմարիտ իրողութիւն մը. անկարելի է որ ասոնք ըլլան այն գործերն զորս հրամայած է. վասն զի ինչ որ հրամայած է, չէ այս գործը կատարել աւելի քան ուրիշ մը, այլ ամէն գործ կատարել պատճառին գիտակցութեամբ և մտքուր շարժառիթով: Շարժառիթն է որ առարկան է հրամանին: Առաջին և մեծ հրամանը, օրէնքին բովանդակութիւնը, Հրեային ինչպէս Քրիստոնեային համար, սէրն է: Չը՞ պիտի աւելցնենք նաև, եղբարք իմ, թէ Աստուծոյ գործը, Աստուծոյ արժանի գործը, պէտք է ի հարկէ ըլլայ ազատութեան գործ մը. և քանի որ կայ օրէնք մը, զոր մենք չենք սահմանած մեզ համար, և որ կ'իշխէ մեր վրայ ուզենք կամ ոչ, հրա-

մայուած գործ մը չկրնար միևնոյն ատեն ազատութեան գործ մը ըլլալ առանց միջամտութեան սիրոյ, որ ճիշտը խօսելով, ազատութիւն է հնազանդութեան մէջ: Եզրակացրենք թէ Հրեայք, որոնց հարցումն ընդունեց մեր փրկիչը, իր հաւանութեան աւելի արժանի հարցում մը ուղղած պիտի ըլլային, եթէ փոխանակ ըսելու, «Ի՞նչ ընենք որ Աստուծոյ գործերը գործենք», ըսէին իրեն, «Վարդապետ, ի՞նչ ընենք որ զԱստուած սիրենք?»

Կը յիշէք այն դպիրը, որ օր մը կ'ըսէ Յիսուսի. «Վարդապետ, շիտակ խօսեցար թէ Աստուած մէկ է. և անկէ զատ ուրիշ մը չկայ. և բոլոր սրտէ, ու բոլոր մտքէ, և բոլոր անձէ, ու բոլոր զօրութենէ զանիկա սիրելը, ու ընկերը իր անձին պէս սիրելը՝ ամէն ողջակէզներէ և զոհերէ աւելի է»: (Մար. ԺԲ. 32, 33): Ինչ կը կարգաք այս խօսքերէն վերը. «Եւ Յիսուս տեսնելով որ անիկա խելացութիւնով պատասխան տուաւ, ըսաւ անոր. Աստուծոյ թագաւորութենէն հեռու չես» (Համար 34): Չավեցէք ոյժը՝ զոր ունին Յիսուսի բերանին մէջ այսպիսի բառեր, Իէլոնէ ԵԱՄԼ՝ (Ս.յս աւելի է քան փիլիսոփաներուն բոլոր մաստոյթիւնը): Հէ-է ԵԱՄԼ Աստուծոյ Բնութեան (Ս.յս աւելի է քան թագաւորներուն բոլոր փառքն ու շքեղութիւնը): Այսու աւանդանայնիւ այս մարդուն գերընտիր առա-

ւելութիւնը երկու սահմաններու մէջ ներ-
 փակուած է. եթէ մէկ կողմանէ, աշխարհա-
 յին յիմարութենէն կ'անջատէ ինքզինքն, միւս
 կողմանէ դեռ ստացած չէր «այն թագաւորու-
 թիւնը, որ չկրնար խորտակուիլ»՝ Յիսուս
 Քրիստոս միայն կ'ըսէ իրեն թէ «Եւ-ի չէ անի-
 քայց միշտ մեծ ու փառաւոր վկայութիւն մ'է
 այս, և Յիսուս Քրիստոս ստորնացուցած պի-
 տի ըլլար զայն, եթէ շնորհէր զայն մեր
 բնաբանին Հրեաներուն: Ինչո՞ւ. որովհետև
 խեղացի չէին դպիրին նման. որովհետև կ'ե-
 ընէ թէ անոր նման հասկցած չէին թէ սէրն
 էր օրէնքին լրումը և ճշմարիտ գաղանխը
 Աստուծոյ գործերն գործելու:

Բայց կրնայիք հարցնել ինձ, եղբարք իմ,
 թէ ինչո՞ւ ուրեմն Յիսուս չըսեր նոյն հետայն
 Հրեաներուն, Աստուծոյ գործն զինքը սի-
 բեղն է, փոխանակ ըսելու, Աստուծոյ գործն
 հաւատալն է անոր՝ զոր նա զրկած է: Եղ-
 բարք իմ, կրնար ըսել թէ՛ մին և թէ՛ միւսն.
 Բայց ուրիշ պատեհութիւններով արդարև
 յայտարարած ըլլալով թէ Աստուծոյ գոր-
 ծերն գործելու միջոցն զինքը սիրելն է, այս
 անգամ աւելի հեռուն կ'երթայ. կ'երթայ
 ճշմարտութեան և իր խորհուրդին մինչև
 ծայրը, և իր ունկնդիրներուն կը ծանօթա-
 ցնէ միջոցին միջոցը, ըսել կ'ուզեմ զԱստուած
 սիրելու միջոցը: Արդ՝ այս միջոցն է հաւա-
 տալ անոր, զոր Աստուած զրկած է: Ըսել

Հրէից թէ պէտք է սիրել զԱստուած, ճիշտը
 խօսելով՝ իրենց նոր բան մը սորվեցնել չէր.
 զիրենք զրկել պիտի ըլլար միայն Հին Օրէն-
 քին բացորոշ և վսեմ՝ յայտարարութեանց:
 Եւ պիտի դիտէք որ Յիսուս Քրիստոս ինքնիր-
 մէ չէր որ յիշեց այս գերագոյն պատուէրն,
 այլ քաղեց զայն իր ունկնդիրներուն բերա-
 նէն. և կ'երևի թէ այս կէտին վրայ միայն
 անոնց խոստովանութիւններն կ'ուզէր լսել:
 Երանի՛ արդարև անոնց որք իրենք իրենցմէ,
 և Սուրբ Հոգւոյն գաղտուկ մէկ ներշնչմամբ,
 իր ոտից առջև կը դնէին այս աշխարհ
 և աշխարհի ահաւոր խոստովանութիւնը: Յի-
 սուս կը գովէր անոնց Իւււոյն-Իւււոյն, և կը ծա-
 նուցանէր թէ «Եւ-ի չէին Աստուծոյ Բա-
 րայց հոս զանց առնելով ըստ երևոյթին ճշ-
 մարտութիւն մը, որ պիտի ամբողջովին երևի
 այն պատասխանին մէջ զոր մտադրած է հոս,
 փոխանակ զանոնք սիրոյ զրկելու, զիրենք կը
 զրկէ սիրոյ աղբիւրին, և այս ուշադրաւ նա-
 խադատութեամբ կը պատասխանէ, «Աստուծոյ
 գործն է հաւատալ անոր, զոր նա զրկած
 է»՝ Այս բարձրութեան փոխադրուած՝ հոն
 անվրէպ պիտի գտնեն իրենց հարցման պա-
 տասխանը, վախճանը իրենց անձկութեան,
 սկիզբը կեանքի:

Եւ ո՞վ է այն զոր Աստուած զրկած է:
 Եւ ի՞նչ է հաւատալ անոր: Եւ ի՞նչ յարաբե-
 րութիւն ընդ մէջ այս հաւատքին ու Աստու-

ծոյ սիրոյն: Ի՞նչ յարաբերութիւն: Հաւանականաբար այս յարաբերութիւնը կը վրիպի այս առաջին պարագային մէջ Յիսուսի ունկնդիրներուն մեծագոյն մասին ուշադրութեանէն. բայց չպիտի վրիպի իրենցմէ միշտ, և, անտարակոյս, եղբարք իմ, չէ կրցած վրիպիլ մեզմէ: Ան՝ զոր Աստուած զրկած է, իր Սիրելին է, իր Որդին է, իր մէկ ուրիշ անձն է. նոյն ինքն է մեզ նման անձի մը մէջ. մարդ մ'է կատարելապէս մարդ, Աստուած մ'է կատարելապէս Աստուած: Հաւատալ իրեն, չէ միայն մեր այս ըսածին հաւատալ, այլ և հաւատալ թէ ան զրկուեցաւ մեզ. ան տրուեցաւ մեզ: Հաւատալ է թէ Հօրը սիրոյն գերագոյն առարկան, ան՝ որուն բնութիւնը, կատարելութիւնը և փառքը միայն Որդի անունով կրնանք որակել, անհուն սիրոյ մը մէջ ընդգրկելով ամբողջ մարդկային սեռը, մեր մահկանացու մարմինը զգեցած է, որպէս զի կարենայ ըլլալ դարմանիչն մեր թշուառութեանց, մեր ներկայացուցիչը, մեր երաշխաւորն և մեր բարեխօսը: Վերցուցէք ցաւագին ենթադրութեամբ մը, վերցուցէք զՅիսուս աշխարհէն իր ողորմածութեան կարողութեամբը և իր փրկչի հանգամանքովը, և հետեաբար դրէք վերստին մարդկութիւնը հոն ուր Յիսուս գտաւ զայն, դէմ՝ յանդիման անձանօթ Աստուծոյ մը, Սինայի Աստուծոյն ծածկուած խաւարով մը, զոր մերթ ընդ մերթ փայլակներու աղետաւոր

հուրն միայն կը ծակէ. կամ յանդիման փիլիսոփաներուն այն Աստուծոյն, կարողութիւն առանց անձնաւորութեան, էութիւն անտարբեր, անդունդն գոյացութեանց, սարսափն երևակայութեան ու սրտին, կամ վերջապէս յանդիման երկու փակ դուռներու, որոնցմէ մին դժոխոց դուռն է, և միւսն ալ անէութեան: Այո՛, դրէք մարդկութիւնը, ուր զըտաւ զայն Յիսուս Քրիստոս, և ըսէք այս մարդկութեան. Սիրեցէք զԱստուած, եթէ երբեք կայ Աստուած մը. սիրեցէք զԱստուած եթէ երբեք արդար է. սիրեցէք զԱստուած եթէ երբեք ինքն ալ կը սիրէ զձեզ: Պիտի ըէք որ հաղարաւոր զանազան աղաղակներ կը սլանան այս գողգոթուն սրտերէն: Այո՛, Աստուած զմեզ կը սիրէ, բայց եթէ չսիրէ՞ր զիս...: Այո՛, արդար է Աստուած, բայց եթէ արդար է, ահա ուր է. և ի՞նչպէս սիրել զինքը. և եթէ անարդար է, յարգելի չէ, և ինչպէ՞ս սիրել զինքը: Աստուած գոյութիւն ունի, այս աւելի պայծառ է քան արևուն լոյսը: Աստուած բարի է, քանի որ Աստուած է. բայց եթէ Աստուած է, սուրբ է, ի՞նչ կրնամ եզրակացնել ասկէ. ի՞նչ կրնամ յուսալ անկէ ինձ համար: Ի՞նչ է իր կամքը. ի՞նչ է իր որոշումը. կրնամ՞ սիրել զինքը, որովհետև միայն սիրելի է: Կրնամ՞ սիրել զինքը, եթէ ինքը չսիրեր զիս: Կըրնամ՞ սիրել զայն որ թերևս կ'ատէ զիս. կըր-

նամ սիրել այս անստուգութեան մէջ. և պէտք չէ՞ որ, որպէս զի կարենամ Աստուծոյ պատուիրանքներուն ճամբուն մէջ վազել, ինքը նախ լայնցնէ իմ սիրտս (Սաղ. ՃԺԹ. 32):

Հոս խօսիլ կու տամ, եղբարք իմ, լուրջ մարդոց, և ո՛չ թէ թեթեամիտ մարդոց: Թեթեամիտները թերևս այնպէս երևակայեն թէ կը սիրեն զԱստուած. ըստ իւրեանց կարծեաց, այս պարզ պատճառաւ, որ Աստուած սիրելի է, քանի որ Աստուած է: Բայց մարդկային սեռը, եղբարք իմ, թեթեամիտ չէ այլ լուրջ. և ապացուցած է զայս: Իր կրօնքները, հակառակ այն սկզբունքին զոր ընդունած ենք մենք, չեն կապեր մարդը Աստուծոյ հետ, չեն ներշնչեր և չեն տարածեր սէր. յաւէտ կը տարածեն սարսափն Աստուծոյ անուան, և ըստ բաւականին կը վկայեն թէ, մեր ներկայ անստուգութեան ու չիօթութեան վիճակին մէջ որո՞նք են մեր բնազդները և մեր անխուսափելի հակումը: Կան պատճառներ որ կը ստիպեն այս յանձնապատան մարդիկը տարակուսիլ գոնէ՝ թէ արդեօք բնակա՞ն է սիրել զԱստուած: Բայց թող իրենք իրենց մէջ թափանցեն, թող բուն իրենց խորհուրդներն հարցաքննեն: ԶԱստուած սիրել, կ'ըսեն. բայց գիտե՞ն արդեօք թէ ի՞նչ է զԱստուած սիրել. կ'ըսեն իրենք իրենց թէ Աստուած կ'ուզէ սիրուիլ իբր Աստուած: Սարսափներ կան, անդունդներ կան այս

միակ բառին մէջ: Ամբողջ աշխարհ մը կայ իրենց խորհրդին և ճշմարտութեան ընդ մէջ: Աւելի լուրջ էր, լաւ ևս կը ճանչնար մարդկութեան իրական վիճակը այն հեթանոս փիլիսոփան որ, անտարբերութեամբ կամ ցաւով՝ չեմ գիտեր, կ'աղաղակէր, «Մնկարելի է սիրել զԱստուած»:

Բայց, պիտի առարկեն թերևս, աշխարհս միթէ սիրելի՞ է՞ որ տիրէ մեր սրտին աւելի քան Աստուած: Միթէ աշխարհս աւելի՞ սիրելի է քան Աստուած: Իբր թէ այս ըլլար կարևոր խնդիրը: Միտքը շուտով պիտի յայտնէր իր կարծիքը այս մասին, բայց կամքը նոյնքան շուտով չպիտի հետևէր այն կարծիքին: Միտքը արագ է, խիստ արագ. առաջին ակնարկով կ'ըմբռնէ յաւիտենական ճշմարտութիւնները, բայց մարմինը դանդաղ է և միշտ ետև կը մնայ: Մեր ներկայ կացութեան մէջ, եղբարք իմ, հարկ չէ որ ըսեն մեզ, Անջատեցէք ինքզինքնիդ աշխարհէ, որպէս զի կարող ըլլաք սիրել զԱստուած, այլ կապեցէք ինքզինքնիդ Աստուծոյ, որպէս զի կարող ըլլաք անջատել ինքզինքնիդ աշխարհէն: Աշխարհի հրապոյրը զգացական է միշտ, կ'ըզգանք զայն առանց մեր կամքը գործածելու, զայն չզգալու համար հարկ է գործածել մեր կամքը: Բայց Աստուծոյ հրապոյրը, մեր ներկայ վիճակին մէջ, ինքզինք զգալի կ'ընէ միայն մեր իմացականութեան, և ատկէ աւելի առաջ

չանցնիր : Պէտք է, նախ և առաջ, սիրել զԱստուած . և այս կախում չունի մեզմէ, վասն զի կախում չունի մեզմէ սիրել առարկայ մը, ուր չենք գտներ մեր երջանկութիւնը : Թող Աստուած նախապէս ցոյց տայ ինքզինքն իբր գերագոյն երջանկութիւնը, և ոչ թէ միայն իբր գերագոյն կատարելութիւնը և գերագոյն օրէնքը : Այն ատեն իսկ շատեր չպիտի սիրեն զինքն թերևս : Բայց այսչափ ստոյգ է գոնէ որ, ո՛չ որ պիտի սիրէ զինքը, մինչև որ սոյն հանգամանքով չճանչնայ զինքը : Եւ եթէ ուէ մէկը մարդոց մէջ կարող է սիրելու, պիտի սիրէ զինքն նոյն հետայն կամ երբեք : Անտարակոյս պիտի սիրէ զինքը ան, որ, իր սխալներուն յիշատակէն հալածուած, օրէնքին բեռան տակ ընկճուած, իր կորուստներուն վիշտէն կեղեքուած, անօթի և ծառաւի արդարութեան այսինքն նոյն ինքն Աստուծոյ, կը տեսնէ որ ստուգութեան բոլոր յատկանիշներովն ի յայտ կու գայ ողորմած և ներողամիտ Աստուած մը, Հայր մը և ոչ թէ դատաւոր մը . ի՞նչ կ'ըսեմ, հայր մը — եղբայր մը համակիր, անձնուէր և անձկալից :

Եթէ մարդկային սիրտը իր բնութեամբը անկարող չէ սէր տածելու, սէր պիտի տա՞ծ է այն մարդը, որ անարգութեամբ իբր թէ հանդերձներով փաթաթուած, կը տեսնէ փառաց Աստուածը, որ մինչև իրեն քով կ'իջնէ, և կը փնտռէ զինքը իր նախատինքներուն մէջ,

որ այն մթութեան ու սուգին մէջ, ուր խորասուզած էր իր խիղճը, կը տեսնէ ինքզինքը լուսոյ և երջանկութեան սահմաններուն փոխադրուած, որ իր անձին նկատմամբ կատարուած կը գտնէ մարգարէի մը սա նորանշան խօսքը, «իրենց բոլոր տառապանքներուն մէջ Յաւիտենականին Հոգին ալ կը տառապէր իրենց հետ : Ան որ կը տեսնէ (ո՛վ խորհուրդ, ո՛վ հրաշք) իր Աստուածը, որ իր մօտ կը քայլէ կենաց դժնդակ շաւիղին մէջ, ստանձնելով կամովին այն բեռը՝ որ զինքը կը խորտակէ, Աստուած մը՝ խոնարհած, Աստուած մը՝ արտասուաթոր, Աստուած մը՝ տառապած, Աստուած մը՝ մահամերձ : Այս երկարատև մաքառումը, և եթէ կը համարձակիմ ըսել, Աստուծոյ մը այս տառապանքը սերունդէ սերունդ, մարդկութեան այս ցաւազին ծնունդը երկնից կեանքին մէջ, իրեն յայտնուած էր բովանդակ Հին Ուխտին մէջ, իրեն ցոյց տրուած էին նոյն իսկ Աստուծոյ քայլերն դարերու փոշիին մէջ դրոշմուած և մեր բուն հետքերուն հետ խառնուած . բայց այն հետքին առջև զոր այս Աստուած—մարդը թողած է Գողգոթայի ժայռին վրայ, փչրուած է իր սրտին ժայռը, պատուած է իր իմացականութեան քօղը, և ինչ որ ցայնժամ չէր կրնար մտածել առանց յանդգնութեան, սկսաւ իբր անհրաժեշտ նկատել, այն է թէ, եթէ Աստուած կը սիրէր մարդկութիւնը, պի-

տի սիրէր զայն իբր Աստուած, այսինքն մինչև այս աստիճան և այս եղանակաւ: Ի՞նչ պիտի ընէր այս մարդը, եղբարք իմ: Եթէ երբեք մէկը պիտի սիրէր զԱստուած, ինքը պիտի սիրէ զԱյն, և կամ պիտի սիրէր զինքը անմիջապէս, կամ չպիտի սիրէր երբեք: Ո՞վ կրնայ մտածել ասկէ բարձրագոյն միջոց մը: Ի՞նչ կրնար Աստուած, այո՛, նոյն ինքն Աստուած, ընել ասկէ աւելի: Ի՞նչ կրնար տալ, երբ արդէն ինքզինքը տուած է: Կը մնայ միայն հաւատալ. և երբ հաւատանք, պիտի սիրենք. և որովհետև կը սիրենք, այն գործերն՝ զորս այնուհետև կը կատարենք, Աստուծոյ գործերն պիտի ըլլան:

Ի՞նչ ըսել կ'ուզենք ասով: Երկու բան, եղբարք իմ: Մին՝ թէ այն բոլոր գործերը՝ զորս մարդ պիտի կատարէր առանց այն սիրոյն, պիտի նուիրագործուին այդ սիրով. և միւսը՝ թէ մարդ պիտի կատարէ գործեր՝ զորս երբեք չպիտի կատարէր առանց այս սիրոյն: Քանզի պէտք է խոստովանիլ թէ, թէև ֆրիստոսի արիւնը չէ ստեղծած որևէ բացարձակապէս նոր պարտաւորութիւն մը, թէև ամէն ինչ որ պարտաւորիչ է իր աշխարհ գալէն ի վեր, պարտաւորիչ էր նաև նախ քան իր գալուստը, քանի որ Աստուած ամէն ժամանակ Աստուած էր. ստոյգ է, սակայն և այնպէս, թէ մեր պարտաւորութեանց որոշ զգացումը և անսողութիւնը չէր նոյնը

անկեալ մարդուն մէջ, երբ դեռ Աստուած, եթէ կը համարձակինք այսպէս ըսել, իր Աստուածութեան հանգամանքին վրայ չէր աւելցուցած նաև Մարդկութեան հանգամանքը: Պատուէրը ուրեմն, ինչպէս ըսաւ նոյն ինքն Յիսուս, թէ՛ հին է և թէ՛ նոր. հին՝ իր մէջ, նոր՝ մեր մէջ: Քրիստոնէից բարոյականը աշխարհի մարդոց բարոյականը չէ. այնպէս որ անոնք որ պարզմտութեամբ կ'ընդունին զայն և կը հետևին անոր հաւատարմութեամբ, ընդհանուր մարդկութեան ծոցին մէջ կը կազմեն որոշ ցեղ մը, իբր թէ նոր մարդկութիւն մը: Անոնք որ կը դաւանին զայն, անհասկանալի են անոնց՝ որ չեն դաւանիր զայն: Որքան ալ շատ ուզենք բարձրացընել մարդուս բնական կարողութիւնը, տակաւին կան առաքինութիւններ որը ֆրիստոնէից մէջ միայն գործածական են, և զոհագործութիւններ՝ որոնց ֆրիստոնեաներն միայն կարող են: Ինչո՞ւ. որովհետև իրենց հաւատքին մէջ իսկ, Աստուծոյ այն գործն մէջ, որուն մեր բնաբանը կ'ակնարկէ, կը պարունակուի զոհագործութիւն մը աւելի խորին, աւելի ամբողջական քան բոլոր միւսներն, զոհագործութիւն մը՝ ուր բոլոր միւսներն բովանդակուած են կանխաւ: Ինչո՞ւ դարձեալ որովհետև այն սէրը՝ որ հաւատքէն կը ծնի ամէնէն խորինն է, ամէնէն արդարը, ամէնէն անսպառը, ամէնէն անմահը բոլոր սէրե-

րէն . և այնու իսկ՝ որ ամէն սէր իր սահմաններն իր առարկային բնութեան մէջ կը գտնէ, այն սէրը որ զԱստուած ունի իբր իր առարկան, ի զուր սահմաններ պիտի փնտռէր իր առարկային մէջ, քանի որ այն սահման չունի : Մարդ երբեք հունաւոր առարկայի մը չնուիրեր ինքզինքն առանց վերապահութեան . վասն զի ո՞ր հունաւոր առարկայ կրնայ զմեզ հատուցանել մեզ : Հարկ չէ՞ որ մեզ թողու գտնէ այն փառքը՝ որ արտաքին ծափահարութիւնն է, կամ այն ներքին ծափահարութիւնը, որ փառքն է տակաւին : Բայց ընդ մէջ Աստուծոյ և արարածին՝ որ կը սիրէ զինքը, չը կայ բնաւ վերապահութիւն, որովհետև Աստուած է բովանդակ բարիքը, բովանդակ փառքը և կամ չէ : Եթէ չէ, չպիտի կարենայինք սիրել զինքը : Եթէ է, կրնանք պահել ինքզինքնիս . ոչինչ կայ կորսուելու իր հետ : Ո՞վ կրնայ ուստի արգիլել զմեզ որ տանք իւրեն ամէն ինչ և մենք մեզ տանք ինքզինքնիս : Ըսի ինքզինքնիս, սիրելի ունկնդիրք իմ, որովհետև աւելի ճշմարտապէս մենք իր մէջ ենք քան մեր մէջ, ոչ թէ մենք ենք որ կ'ապրինք այլ Քրիստոս՝ որ կ'ապրի մեր մէջ : Եւ մեր կեանքը, ինչպէս կ'ըսէ Ս. Պօղոս, պահուած է Քրիստոսի հետ Աստուծոյ քով :



ԱՍՏՈՒԾՈՅ ԳՈՐԾԸ

ՄԱՍՆ Բ.

Ըսին անոր, «Ի՞նչ ընենք որ Աստուծոյ գործերը գործենք : Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Այս է Աստուծոյ գործը որ անոր զրկածին հաւատաք :» Յովհ. 2. 28, 29 :

Եղբարք իմ, բաւական խօսեցանք արդէն Հրեաներուն, բաւական՝ այն բազմաթիւ դասակարգի մարդոց . որք կը յամառին գործելու մէջ փնտռել իրենց յոյսին հիմը : Քրիստոնէից դառնանք այժմ, և ցոյց տայէ վերջ թէ փրկութեան ու կեանքի պայմանը միայն հաւատքին մէջ կը գտնուի, ջանանք ապացուցանել թէ այս հաւատքը գործն է : Այս բառը դժուարութիւն մը կը յարուցանէ իսկոյն :

Եւ յորմէ՞ հետէ, պիտի ըսեն մեզ, հասարակ աշխատութիւն մ'է, հաւատալը չ'որ՞ մ'է : Միթէ ամէն ոք չէ՞նք լսեր որ մէկը միւսին

հակառակ կը դրուի, հասարակ և գործել: Մի-
թէ ամէն օր չե՞ն յիշուիր այնպիսի մարդիկ
որք կը հաւատան, բայց չեն գործեր: Եւ երբ
Ս. Պօղոս կը յայտարարէ թէ մարդ հաւատա-
քով կը փրկուի և ոչ թէ գործերով, և երբ
Ս. Յակոբոս կ'ըսէ թէ հաւատք առանց գոր-
ծի մեռած է, այս երկու առաքեալներն ալ
գործ և հաւատք իբր երկու տարբեր բաներ
չե՞ն նկատեր միթէ: Ո՞վ կայ արդարև, ո-
րուն եթէ հարցումներ ուղղենք հաւատքի
ընթացքին մասին, գործողութիւն մը պիտի
անուանէ զայն և ոչ թէ յաւէտ տրամադրու-
թիւն մը, հոգւոյն մէկ վիճակը: Անկամաւոր
վիճակ մը կ'ըսեմ, քանի որ եթէ մեզմէ կա-
խումն ունի քննել կամ չքննել հաւատալէ
առաջ, գործել կամ չգործել հաւատալէ
վերջ, բացարձակապէս մեզմէ կախումն չունի
հաւատալ կամ չհաւատալ: Մէկը յանձն
կ'առնու ապացուցանել ինձ թէ այս ինչ նիւ-
թը դեղն է այս ինչ հիւանդութեան, որով
կը տառապիմ: Իմ ձեռքս է մերժել իմ ու-
շադրութիւնս այս ճշմարտութեան ապացոյց-
ներուն, և այս մերժումը կամքին մէկ գործո-
ղութիւնն է: Իմ ձեռքս է հաւանիլ մտիկ
ընել իրեն, և այս հաւանութիւնս ալ դար-
ձեալ կամքի մէկ գործողութիւնն է, ճշմա-
րիտ գործ մը: Իմ ձեռքս է, վերջապէս,
համոզում մը գոյացնելէս վերջը, գործածել
կամ չգործածել այն դեղը, որուն ազդուու-

թիւնը ապացուցուած է ինձ, և այս անգամ
դարձեալ կը կամիմ և կը գործեմ: Բայց հաւա-
տալ կամ չհաւատալ այն ապացոյցներուն,
որք ինձ կը մատուցուին, այդ բան մ'է, ուր
իմ կամքս արժէք չունի: Այդ իրողութիւն մ'է
և ոչ թէ գործողութիւն մը, և եթէ մարդիկ
երբեմն կ'ըսեն, Չուզեց հաւատալ, ի՞նչ ը-
սել կ'ուզեն, եթէ ոչ թէ, Չկրցաւ հաւա-
տալ, կամ թէ, Չուզեց ունիլն դնել իր բա-
նականութեան և իր խղճին, որք պիտի պար-
տաւորէին զինքը հաւատալ: Ի՞նչպէս ուրեմն
Յիսուս Քրիստոս կրցաւ ընել: Աստուծոյ գոր-
ծըն հաւատալ է, ինչ որ ճիշտ միևնոյնն է:
Հաւատալը գործ մ'է, հաւատալը կամքին
մէկ որոշումն է:

Ահաւասիկ, եղբարք իմ, այն դժուարու-
թիւնն, որուն կը հրաւիրենք զձեզ ձեր լուրջ
ուշադրութիւնն ընծայել: Կրնայինք միակ
պատասխանով մը բաւականանալ, և այս
պատասխանն ալ վճռական պիտի ըլլար: Ե-
թէ հաւատքը գործ մը չըլլար, ի՞նչպէս կա-
րելի պիտի ըլլար հրամայել զայն: Եւ եթէ
հաւատքը հրամայուած է, ի՞նչպէս կարելի է
որ գործ մը չըլլար: Միթէ կը հրամայե՞նք
բան մը, որ, որևէ կերպով կամքէն կախումն
չունի: Բայց այս պատասխանը կարևոր է
լուծութեան մատնելու զանոնք, որ այսպիսի
պատասխանի մը տեղի տուած էին. այսպիսի
միայն: Իրօք չինիչ չէ, և մեր փափաքն է

չինիչ ըլլալ նաև : Ուստի, խնդրոյն աւելի խորը կը թափանցենք, և կ'ըսենք աներկիւղ, մեզ իբր մեկնակէտ առնելով նոյն ինքն Յիսուսի խօսքը : Ոչ, հաւատքը որ դործ մը չէ, չկրնար մեզ վերագրուիլ . ոչ, հաւատքը որ դործ մը չէ, բացարձակապէս անկարող է փրկել զմեզ :

Այս մասին դիմում կ'ընենք ամենուն խղճին : կը հետևինք օրինակին Եբրայեցոց թուղթին հեղինակին որ կ'աղաղակէր (Եբր. Ժ. 4) “Նոխազներուն ու ցուլերուն արիւնը չկրնար մեզ քերը վերցնել :” կը լսէք միթէ որ կը փաստարանէ, որ արտաքին վկայութեան մը կոչում կ'ընէ : Ո՛չ, պարզապէս կը հաստատէ . Անկարելի է, կ'ըսէ . յայտնի ճշմարտութիւն մ'է այս, որ ամէն խղճի խորն դրոշմուած է, և որուն ոչ ոք պիտի համարձակէր հակառակիլ : Եւ մենք ալ իրեն նման կ'ըսենք . Անկարելի է որ ինչ որ արդարութիւն չէ արդարութիւն համարուի : Անկարելի է որ անկամաւոր իրողութիւն մը պայմանն ըլլայ փրկութեան : Անկարելի է որ զուտ և պարզ հաւանութիւնը ապացոյցներու՝ ամենափոքր առնչութիւն մ'ունենայ երկնային երանութեան վայելքին և նոյն ինքն զԱստուած ընդունելուն հետ : Անկարելի է որ Աստուած երբեք ըսած ըլլայ, “Պիտի հաւատաք ինչ կերպով որ ուզէք, ինչ ոգւով որ ուզէք, թէ Յիսուս Քրիստոս այն է զոր ես

զրկած եմ, և այս հաւատքը ձեր յաւիտեան կեանքը պիտի ապահովէ :”

Այս անկարելի է, կ'ըսենք, վասն զի դրուած է, մէկ կողմանէ, թէ մենք հաւատքով արդարացած ենք, և, միւս կողմանէ, թէ առանց սրբութեան ոչ ոք պիտի տեսնէ Տէրը : Արդ, որպէս զի այս երկու յայտարարութիւններն զիրար չը հակասեն, հարկ է որ սրբութիւնը պարունակուի հաւատքին մէջ նոյն կերպով ինչպէս տունկ մը կը պարունակուի իր ծիրին մէջ : Ուրիշ խօսքով, պէտք է որ հաւատքը սրբարար ըլլայ : Բայց ինչպէ՞ս կրնայ սրբարար ըլլալ, եթէ մենք միայն մեր միաբովն ընդունէինք զայն և ո՛չ մեր սրտովը . և եթէ տարբերութիւն չըլլար հաւատալու այն կամ այս եղանակին մէջ, բաւական էր որ հաւատայինք : Հաւատքը, այն ատեն, չպիտի արդարացնէր սրբագործելով, այլ առանց սրբագործման . պիտի արդարացնէր . ինչ որ ալ ըլլար իր առարկան : Երկրին կլորութեան հաւատալն այնքան փրկարար պիտի ըլլար որքան խաչեցեալ Յիսուս Քրիստոսի հաւատալն : Առաջինը չունի արդարև որևէ առնչութիւն սրտին հետ, չդպչիր բնաւ խղճին . շարժման մէջ չընենք մեր բարոյական ոյժերէն և ոչ մին, քնոյ մէջ կը թողու բովանդակ ներքին մարդը : Բայց փոյթ չէ այս, վասն զի, այս դրութեան մէջ, հաւատքին վերացական իրողու-

Թիւնն է և ոչ թէ իր առարկան, որ կը փրկէ զմեզ: Եւ որնիցէ ճշմարտութիւն այս նպատակին պիտի ծառայէր անխտիր: Բայց եթէ հաւատքը միայն սրբազործելով է որ կրնայ փրկել, իր առարկային զօրութեամբն է որ կը փրկէ, և այս առարկան այնչափ կարող է սրբել զմեզ, որչափ որ մենք իրեն տանք, ոչ միայն մեր միտքը, այլ մեր սիրտը, մեր խիղճը, մեր կառքը. մէկ խօսքով, ամէն ինչ որ ազատ է մեր մէջ, եւ ուստի անտարակոյս հաւատքը գործ մ'է:

Պիտի ըսուի հաւանականաբար թէ ֆրիստոնէական հաւատքին առարկան այնպիսի է որ անկարելի է հաւատալ առանց աստիճանաւ մը զգալու այն առարկային յատուկ ներքին զօրութիւնը: Պիտի պատասխանենք. Աւա՛ղ, անկարելի չէ այդ: Անտես չենք ըներ այդ զօրութիւնը, և կը փափաքինք հաւատալ թէ շատերն անոնցմէ, որոնց, առանց ճիշդի և առանց քննութեան, տրուած է հաւատալ, այն վայրկեանէն իսկ նոր կեանքի մը մէջ կը ծնին: Եւ ի՞նչ կը նշանակէ այս, եթէ ոչ թէ այն վայրկեանէն իսկ, հաւատքը գործ մը եղած է իրենց մէջ, այսինքն եղած է ինչ որ մենք կը պնդենք թէ պարտի ըլլալ փրկութեան պտուղն արտադրելու համար: Բայց քանիներ կան, որոնց Յիսուս ֆրիստոսցուցած և ապացուցած է, և որք չեն հաւատացած, վասն զի, իմաստով մը, չեն ուզած

հաւատալ, կամ, լաւ ևս է ըսել, քննել փաստերը և իրողութիւնները, որք պիտի պարտաւորէին զիրենք հաւատալ, գործք հաւատքէն առաջ, կամ գործք նոյն իսկ հաւատքին մէջ, գործք գործողութեան, կամեցողութեան որևէ կէտի մը վրայ. չենք կրնար հաւատքը ազատ կացուցանել այս պայմանէն. չենք կրնար պրծիլ այս հարկէն:

Արրահամի հաւատքը իրեն արդարութիւն համարուեցաւ, կ'ըսենք: Բայց ի՞նչ էր ճշտիւ ինչ որ արդարութիւն համարուեցաւ իրեն: Միթէ հաւատա՞լն էր թէ այն Աստուածը, որ իրեն երեցած էր իր Աստուածութեան անդիմադրելի յատկանիչներովն, Աստուած էր արդարև: Անոր մէջ տակաւին չկար ազատութիւն, և հետևաբար ոչ ալ արդարութիւն: Ուրեմն արդարութիւն պիտի համարիք եւրայեցուոց, իրենց հաւատալն թէ այն մանանան, որ երկինքէն ինկաւ իրենց, թէ ան լուսաւոր ու մթին ամպն, որ իրենց առջևէն կը քալէր, թէ այն ծովը որ իր ալիքները իրենց աջ և ձախ կողմն պատերու պէս կը բարձրացնէր, Աստուծոյ ներկայութիւնը և օգնութիւնը կը հաստատէին: Երկու պարագաներուն մէջ ալ տեսութիւնը հաւատքին հետ շփոթել պիտի ըլլար այն: Ոչ, հաւատքը կը սկսի Արրահամին համար այն վայրկեանէն որ, տեսանելի նշանի մը վրայ, կը հաւատայ անտեսանելին, այն վայրկեանէն որ, Աստուծոյ խօս-

քին վրայ, կ'երթայ ընդ առաջ անձանթին, անստոյգին, ի՞նչ կ'ըսեմ, անկարելին, վասն զի ի՞նչ կար աւելի անկարելի քան իր որդին զոհագործել: Մարդ չը հաւատար առանց կանխաւ տեսած ըլլալու, բայց հաւատալ ապա առանց տեսնելու, վասն զի տեսած ենք անգամ մը, Աստուծոյ խօսքը հակադրել ամէնէն դժնդակ երևոյթներուն, ապահով քայլով մը քայլել զիշերուն մէջ, հաստատուն ոտք մը դնել դատարկութեան մէջ, այս, եղբարք իմ, վիճակ մ'է կամ գործ, գործէլ է թէ պարզապէս հաւատալ: Այսպէս հաւատալը չէ՞ մի որ հնազանդիլ է: Այո՛, հաւատքը խղճին ու կամքին ներքին հնազանդութիւնն է: Հաւատքն ուրեմն, Աբրահամին մէջ գործ մ'էր, և իբր այն՝ կարելի եղաւ արդարութիւն համարիլ զայն իրեն:

Տեղի տալ այնպիսի ապացոյցներու և այնպիսի հեղինակութեանց, որոնց, եթէ ուղէինք իսկ, անկարելի պիտի ըլլար դիմադրել, այս չէ այնքան հաւատալ որքան տեսնել. այս ստիպուիլ է ճանչնալ, Աբրահամի նման, Աստուծոյ ձայնը տեսիլքին մէջ, կամ, երբայեցոյց նման, Աստուծոյ ներկայութիւնը ամպին մէջ: Ինչ որ այս պարագային մէջ կրնայ մեր կամքին վերագրուիլ, միայն նային է, եթէ արդարեւ նայած ենք, բայց տեսնելն չէ: Հաւատքը կը սկսի հոն միայն, ուր կամքը կը սկսի, ուր հոգին դեր մ'ունի կատա-

րելու: ուր, վերջապէս, գործողութիւն մը կայ: Հաւատքը գործ մ'է ուրեմն, և կամ ոչինչ է: Արդ՝ ամէն ոք կը հասկնայ թէ հաւատքը, եթէ այսպիսի է իր բնութիւնը, կրնայ մեզ վերագրուիլ. բայց ոչ որ կը հասկընայ թէ պարզ վիճակ մը, ինչ անուն ալ որ տանք անոր, կրնայ երբեք արդարութիւն կոչուիլ կամ անարդարութիւն:

Եւ թող չըսեն մեզ թէ խնդիրն հասկնալու վրայ չէ: Այս առածը կրնայ պատշաճիլ այլուր, բայց ոչ հոս: Մենք կը պնդենք թէ խնդիրը հասկնալուն վրայ է, և այս մէկն է այն բաներէն, որոնց չենք կարող հաւատալ, եթէ չենք կարող հասկնալ: Կը խոստովանիմ թէ եթէ կրօնքը միայն հասկանալի բաներէ բաղկանար, ճշմարիտ կրօնքը չպիտի ըլլար: Բայց կրօնք չպիտի ըլլար, եթէ միայն անհասկանալի բաներէ բաղկացած ըլլար: Վասն զի կրօնքը առաքինութիւն մ'է կամ ոչ, կրօնքը պարտաւորութիւն մ'է կամ ոչ, Արդ՝ ո՛ւր է առաքինութիւնը առանց խղճի, ո՛ւր է պարտաւորութիւնը առանց խորհուրդի: Թող ուրիշ ամէն ինչ կրօնքի մէջ անհասկանալի ըլլայ. կ'ընդունիմ զայն. բայց այս գոնէ չկրնար ըլլալ. Բարին չէ բարի, եթէ ես կարող չեմ ճանչնալ զայն իբր բարի. ոչ ալ չարը չար է, եթէ կարող չեմ ճանչնալ զայն իբր չար: Վերցուցէք զայն, և կրօնքին անունն իսկ կ'անհետանայ, միայն ճակատագր-

րականութեան անունը կը մնայ : կրօնքը պարտի կապել զիս Աստուծոյ հետ, ճշմարիտ է այս . բայց իմ խիղճովս, իմ խղճիս հաճութեամբը : Ուրիշ ամէն ինչ որ Աստուծոյ կը կապէ զիս ուրիշ կերպով, կրօնք չէ . եթէ ոչ՝ կենդանին իր բնազդին անձնատուր, ծառը՝ որ հովին առջև կը կքի, աստղը՝ որ երկնից մէջ կը թաւալի, կրօնք պիտի ունենային ինձ նման, կրօնքի ընդունակ էակներ պիտի ըլլային : Եթէ կայ կրօնքին մէջ բան մը, զոր պարտիմ հասկնալ, այդ անշուշտ պարտաւորութիւնն է, որ գլուխն է բոլոր պարտաւորութեանց, որոյ ծնունդն են բոլոր պարտաւորութիւններն :

Ոչ միայն չեմ դժգոհիր որ իմ բնաբանիս մէջ հաւատքը կը ներկայացուի իբր գործ, այլ և կ'ուրախանամ : Պիտի յայտարարեմ իբր սկզբունք մը թէ որպէս զի հաւատքը անոր վրայ զոր Աստուած մեզ զրկած է, մեզ արդարութիւն համարուի, պէտք է որ գործ մը ըլլայ, կամ կարենայ գործ մը ըլլալ, և հետեւաբար պիտի փնտռեմ ամէն ինչ որ կը պարունակէ կամբին պատկանող :

Եւ նախ նկատելով հաւատքը իր սկզբնաւորութենէն առաջ, ընդունինք թէ արդէն գործ մ'է և բարի գործ մը՝ քննել հաւատալիք մը, որ մեզ կ'առաջարկուի, որ մեզ կ'առաջարկուի յարգանքի արժանի անձանց կողմանէ, որ մեր հոգւոյն և Աստուծոյ կը

վերաբերի, այսինքն այն բաներուն՝ որ ամենէն մեծն են մարդուն մէջ, և որ ամենէն մեծն են մարդէն վեր, որ վերջապէս, մեր գերագոյն շահն ունի իրեն նպատակ . բսել կ'ուզեմ մեր առնչութիւնները Աստուծոյ և մեր յաւիտենական վիճակին հետ : Այն որ այս պարագային մէջ կը մերժէ քննել, գործ մը կը կատարէ, և այս գործը չար է : Այն որ կարող է քննել, գործ մը կը կատարէ նմանապէս, և այս բարի գործ մ'է : Դեռ չհաւատար, և արդէն գործ մը կատարած է . գործը կանխած է հաւատքը :

Աւելի յառաջ երթանք : Ոչ ևս անհաւատ մէկն է, մէկը՝ որ կը տարակուսի, այլ մէկը՝ որ կը հաւատայ : Կ'ընդունի թէ ճշմարիտ է (և մենք չենք հարցներ թէ ի՞նչպէս հասած է այս եզրակացութեան) թէ Աստուած աշխարհ զրկած է իր Որդին փրկելու համար մեղաւորները : Այո, կը խոստովանիմ որ, կրնար մտքի և գլուխի հաւատք մը ըլլալ : Կրնայ ըլլալ որ այս մարդը կամ զրոյցներէ և կամ ապացոյցներէ ազդուած ընդունած է այս վարդապետութիւնը, ինչպէս պիտի ընդունէր անոր բոլորովին ներհակը, առանց նկատողութեան և առանց շահագրգռութեան իր պարունակութեան մասին, և նոյն իմաստիւ, որով ընդունած է անկասկած թէ երկիրս կըլոր է և արևուն շուրջը կը դառնայ : Ահա ասիկ վիճակ մը՝ որ դժուարին կը թուի ըմբռնել, և

որ գրեթէ անկարելի է ենթադրել մարդու մը մէջ, զոր իր հոգւոյն լուրջ հոգածութիւնը մղած ըլլայ քննելու այս մեծ խնդիրը : Վասն զի, եթէ իր քննասիրութիւնը լուրջ էր, ինչպէս լուրջ չպիտի ըլլար նաև իր հաւատքը : Բայց վերջապէս այս փիճակը կարելի է, և մենք կը հանդիպինք անոր, և չեն պակասիր մարդիկ՝ որք կամ կատարելապէս անտարբեր են իրենց դաւանած կրօնքին նկարագրին ու պարունակութեան մասին, և կամ հաճութեամբ կ'ընդգրկեն փրկութեան վարդապետութիւնը, իբր վարդապետութիւն մը որ վերջապէս հաճելի է և դիւր : Եթէ կան մարդիկ որ այս եղանակաւ կը հաւատան (տա՛ր Աստուած որ պարզ ենթադրութիւն մ'ըլլար այս), իրենց հաւատքը չունի աւելի բարոյական արժանիք, քան հաւատքը այն մարդուն՝ որ կ'ընդունի թէ կ'ընդունի, և չընդունի արեւուն բոլորաիքը : Եւ որովհետև մարդկային խիղճը բացարձակապէս չընդունի թէ առանց որևէ բարոյական արժանիքի հաւատք մը կարենայ փրկութեան պայմանն ըլլալ, այս երկու կարգի մարդիկը, փրկութեան տեսակէտէն, նոյն գիծին վրայ են և նոյն գիրքին մէջ. և աւելի այլանդակ չծուր ըսել թէ մէկը պիտի փրկուի հաւատալով այն աստղաբաշխական ճշմարտութեան՝ զոր յիշեցինք, քան պնդել թէ պիտի փրկուի, իր տրամաբանութեան բոլոր ոյժովն, Ա-

ւետարանին ճշմարտութեան և Յիսուս Քրիստոսի գալստեան հաւատալով : Այս հաւատքներէն երկուքին ալ արժէքը նոյնն է, և եթէ երկրորդը առաւելութիւն մ'ունի առաջինին վրայ, այն է թերևս որ իր առարկան աւելի անըմբռնելի է : Եւ որքան մարդիկ կը տեսնենք որք հաւատքին արժանիքը կը դնեն հաւատալուն մէջ այն բաներուն, որոնց դժուարին է հաւատալ. այնպէս որ մարդս այնքան աւելի հաւատք կ'ունենայ, և հետեւաբար փրկութեան այնքան աւելի իրաւունք, որքան աւելի անհաւատալի բաներու հաւատայ :

Բայց եթէ կան մարդիկ, որք այս կերպով կը հաւատան, կան նաև այնպիսիք, որք միևնոյն բանին կը հաւատան, բայց տարբեր կերպով : Անոնց համար հաւատալն շնորհքով փրկութեան, հաւանիլ է շնորհքով փրկուելու, թէ՛ այս հաւանութիւնը ընկերանայ բուն հաւատքին, թէ՛ անոր հետեւի, և կամ կանխէ զայն : Ինչ որ ստոյգ է, այն է թէ այս հաւատքը, եթէ սրտի ու կամքի հաւանութիւնը չմիանայ անոր, պարզ վստահութիւն մ'է, և ոչ հաւատք : Ինչ որ ստոյգ է, այն է թէ այս հաւանութիւնն է էականը, հաւատքին գլխաւոր կէտը. այնպէս որ եթէ մէկը, որ զուրկ ըլլար Յիսուս Քրիստոսի ծանօթութենէն, և զգար փրկութեան պէտքը, խնդրէր զայն, և իբր թէ ի դիպաց ընդունէր զայն, ճշմարիտ հաւատքին պայմանին մէջ պիտի ըլլար և անոր օգուտը

վայելէր : Սրտին տրամադրութիւնը ընդունելու զՅիսուս Քրիստոս , որ անձանօթ է , ճշմարիտ հաւատքի մը բոլոր յատկանիշն ու բոլոր արժանիքը պիտի ունենար , որովհետեւ գործ մ'է :

Գործ մ'է անտարակոյս . բայց որովհետեւ գործ մ'է , Աստուծոյ գործն է : Ի՞նչ կը պարունակէ արդարեւ այդպիսի հաւատք մը : Եղբարք իմ , եթէ ինչ որ կը պարունակէ իբր Աստուծոյ գործն չընեն զայն , որեւէ մարդկային գործ չպիտի կրնայ երբեք այս անուան արժանանալ : Արդարեւ , ինչ որ պէտք է միանայ բոլոր միւս գործերուն զանոնք Աստուծոյ գործն ընելու համար , նոյն իսկ հիմը կը կազմեն անոր : Խորհրդաւոր աղ մը կայ , առանց որոյ ամէն գործ կ'ապականի : Լա՛ւ . այն գործը՝ որուն նկատմամբ կը խօսինք , ճիշտ այս խորհրդաւոր աղն է : Ի՞նչ է որ կ'ապականէ մեր բոլոր գործը — Հպարտութիւնը և անձնական արդարութիւնը : Հպարտութիւնը՝ որ կը համոզէ զմեզ թէ մեր անձնական ոյժերը բաւական են մեր վրայ դրուած պարտաւորութեան համար : Անձնական արդարութիւնը՝ որ մեզ կը վերագրէ անոր արժանիքը , ու կը յափշտակէ զայն Աստուծմէ : Հպարտութիւնը և անձնական արդարութիւնը , որ կ'արդելուն զմեզ հաւատալ թէ մենք Աստուծոյ կը կարօտինք և Աստուծմէ կախում ունինք , իւրաքանչիւր մարդ իր Աստուածը կ'ընեն , և անոր խորան մը կը կանգնեն բուն իսկ

իր սրտին մէջ : Ահաւասիկ ամէն մարդու գաղանձածուկ անաստուածութիւնը , երբ դեռ Աստուծոյ շնորհքը չէ բացած իր աչքերը : Ահաւասիկ այն անաստուածութիւնը , որ բոլոր մեր գործերուն կը խառնուի և նոյն իսկ մեր կրօնական գործերուն : Ահաւասիկ անաստուածութիւնը շատ մը կարծեցեալ քրիստոնեաներու . այնու նուազ քրիստոնեայ թերևս քան շատ մը հեթանոսներ : Արդ , դարձեալ , ի՞նչ կը պարունակէ , ի՞նչ կ'ենթադրեն հաւատքը Անոր վրայ , զոր Աստուած զրկած է , եթէ ոչ՝ կատարելապէս հրաժարիլ մեր պահանջկոտութիւններէն , խոստովանիլ մեր միտքը և մեր դատապարտութեան վիճակը . խոստովանիլ մեր անկարողութիւնը մենք զմեզ փրկելու . մէկ կողմ թողուլ մեր արժանաւորութիւնը , կատարելապէս յանձնել ինքզինքնիս մեր փրկելութեան ճշմարիտ Հեղինակին . մէկ խօսքով , զնեւ զԱստուած իր տեղը , և զմեզ՝ մեր տեղը , զԱստուած՝ գահուն վրայ , և զմեզ՝ փոշիին մէջ : Այսպէս հաւատալն գործ մը չէ՞ միթէ . կատարել չէ՞ գործ մը , գործերուն առաջինը և ամենէն անհրաժեշտը , գործ՝ որ աղբիւրն է բոլոր միւս գործերուն : Եւ իրաւունք չունէի՞նք պնդելու թէ , եթէ գործ մ'է , այդու իսկ Աստուծոյ գործն է :

Ոչ միայն գործ մ'է , այլ և աշխատալից գործ մը , տքնութիւն մը : Երկու պարագաներ ենթադրեցէք , ենթադրեցէք թէ հողին

այսպէս մերկացուի հաւատալէն առաջ, կամ ինքն մերկանայ հաւատալէն վերջ, փոյթ չէ: Երկու պարագային մէջ ալ հարկ էր որ այս մերկացումը, այս կամաւոր անէացումը տեղի ունենար, և երկու պարագային մէջ ալ կա՛րէին մէկ գործն է: Մերկանալը այսպէս բոլոր անձնական արդարութենէ, և բոլոր անձնավստահութենէ, և ինքզինքը մեղաւոր ու կորսուած խոստովանիլ, այնքան դժուարին որքան անհրաժեշտ գործ մ'է: Յաճախ երկայն ու արիւնահեղ ճակատամարտ մը կը նշանակէ մարմնոյն համար, և յաղթութիւնը այնքան դժուարին է, և կը ստացուի այնպիսի միջոցներով, որ մեզ այնչափ օտար են, և կը կատարուի այնչափ խորհրդաւոր եղանակաւ մը, որ զայն շահողներէն ոչ մէկը կայ, որ պատրաստ չըլլայ յայտարարելու թէ հաւատքը իրեն համար Աստուծոյ գործն է բառին բովանդակ իմաստովն: Աստուած էր որ կը գործէր իր մէջ և իրմով:

Այսպէս է որ, եղբարք իմ, կրնանք ըսել և կրնանք հասկնալ թէ հաւատքը հրամայուած ըլլայ իբր գործ մը, և ներկայացուած իբր պարտաւորութիւն մը, և, կը խոստովանիմ, պարտաւորութեանց ամենէն դժուարինը: Մէկը, առանց ըստ բաւականին խորհրդածելու, պիտի ըսէ թերևս. ինչո՞ւ ուրեմն ամենէն դժուարը ի սկզբան իսկ: Բայց պիտի պատասխանենք. ի՞նչպէս կրնար ըլ-

լալ որ ամենէն դժուարը ի սկզբան չըլլար: Ո՞րն է ճշմարտապէս լուրջ այն գործը, որուն առաջին քայլերը ամենէն դժուարինը չըլլան: Բայց ինչո՞ւ սկզբնաւորութեան մը վրայ կը խօսինք հոս, իբր թէ իրօք բան մ'ըլլար անկէ անդին, իբր թէ այս գործը միակ գործը չըլլար, իբր թէ բոլոր միւսներն ասոր պարզ հետևանքներն կամ կիրառութիւնները չըլլային, իբր թէ ուրիշ որեւէ մէկը կրնար կատարուիլ ասկէ անկախ, իբր թէ իւրաքանչիւրը, այս հիմնական գործէն անջատուած, այս գործին չափ դժուարին և անկարելի չըլլար, իբր թէ իւրաքանչիւր մասնաւոր գործ, Աստուծոյ այս գործը չպարունակէր իր մէջ, իբր թէ Աստուծոյ այս գործը, որոյ մասին կը խօսի Յիսուս Քրիստոս, ի հարկէ ներկայ չըլլար Աստուծոյ ամէն ճշմարիտ գործի մէջ: Վասն զի երկուքն մին ճշմարիտ է. կա՛մ ձեր գործերը կը կատարուին հպարտութեան և անձնական արդարութեան ոգիով մը, և կ'ընդունիմ թէ ասոնք նուազ դժուարին են քան զայն՝ զոր իմ բնաբանս կ'առաջարկէ ձեզ. բայց դուք ալ ձեր կողմանէ պարտիք ընդունիլ թէ ասոնք Աստուծոյ գործերը չեն: Կա՛մ Աստուծոյ գործերն են. և այն ատեն կը պարունակեն այն մեծ գործը՝ որոյ մասին կը խօսի մեր բնաբանը. ըսել կ'ուզեմ ամբողջական մերկացումը, բնական մարդուն ամբողջական

մերկացումը, բնական մարդուն ամբողջական լքումը. և եթէ զայն կը պարունակեն, ինչպէս կրնանք ըսել թէ նուազ դժուարին են: Նոյն իսկ այս գործն է տարբեր ձևերով, տարբեր կիրառութիւններով: Իրաւամբ ըսած է Քրիստոս. մէկ գործ մը միայն կայ, եթէ բանը քննելու ըլլանք. այն է ի սրտէ հաւատալ Անոր՝ զոր Աստուած զրկած է:

Ըսենք, եղբարք իմ, թէ առաջին գործը որ կը պարունակուի ճշմարիտ հաւատքի մը մէջ, ներքին մերկացումն է, և Աստուծոյ արդարութիւնը և Աստուծոյ զօրութիւնը կամ մովին դնել մեր արդարութեան ու զօրութեան տեղ: Վասն զի չենք կրնար լրջօրէն զՅիսուս Քրիստոս զգենուլ առանց ինքզինքնիս մեր անձէն մերկանալու: Բայց հաւատքին մէջ չկա՞յ անկէ աւելի բան մը: Հաւատքը կ'ընդգրկէ զՅիսուս Քրիստոս ամբողջովին: Արդ Քրիստոս է միանգամայն ամենէն բացարձակ շնորհքը և ամենէն կատարեալ օրէնքը, այնպէս որ իրեն հաւատալ ընդգրկել է միանգամայն շնորհք մը և օրէնք մը: Եւ ի՞նչ անունով, եթէ ոչ հաւատքի անունով պիտի կոչենք այն վստահութիւնը, որով Քրիստոնեան կ'ընդունի իր Փրկչին օրէնքը, ինչ որ ալ ըլլայ անոր դժուարութիւնը, ինչ որ ալ ըլլան անոր վտանգները, և միայն որովհետև իր Փրկչին օրէնքն է: Կ'ընդունի այն պատուէրները որոց դէմ

մարմինը կ'ընդվզի: Կը հպատակի այն զոհութեանց, որոնց սահմանը չտեսներ բնաւ. կանխաւ կը սկսի մաքառումները, որ մասն կը կազմեն իր դաւանութեան. կը դիմագրաւէ այն դժուարութեանց, որոնց տակ ընկճուած էր մինչև այն ատեն. թէև հիմա իր անձնական տկարութեան մասին ունի աւելի ուժգին և աւելի խորին զգացում մը քան երբեք: Կա՞յ, կը հարցնենք, իր ընդունած որևիցէ վարդապետութեան մէջ աւելի խորհրդաւոր բան մը քան այս կերպիւ իւրիք դերբնական հնազանդութիւնը: Կա՞յ շնորհքին մէջ բան մը աւելի մթին քան օրէնքը. ըսել կ'ուզեմ այն օրէնքը ինչպէս ինքը զայն կը հասկնայ և կ'ընդունի այնուհետև: Ո՞ր են այն ուժերը՝ զորս կրնայ գործածել. ո՞ր են այն միջոցները՝ որոնցմէ կրնայ օգտուիլ: Ի՞նչ հրաշայի կամուրջ պիտի ձգուի պարտաւորութեան և անոր գործադրութեան միջև, չտեսներ բնաւ, այլ կը յուսայ: Արդ՝ եթէ “հաւատքը,” ինչպէս ըսուած է եբրայեցւոց թուղթին մէջ, “յուսացուած բաներուն հաստատութիւնը ու չերեցած բաներուն ապացոյցն է,” այն վստահութիւնը, զոր կը զգայ իր երաշխաւորին մասին, հաւատք մը չէ՞ միթէ: Ինչո՞ւ կը խօսիմ յոյսի վրայ. յուսալէ իսկ առաջ, իր որոշումը տուած է. յաղթութեան հաւատալէն առաջ, կը հաւատայ պարտաւոր

րութեան . կ'ընդգրկէ զայն գոց աչքերով . պարտաւորութեան մէջ լաւ ևս կը ճանչնայ իր բնական կոչումը , որ է իր անձին դէմ մաքառիլ և իր անձը զոհագործել : Բայց այսպէս հաւատալն ի՞նչ է եթէ ոչ կամեանալ : ի՞նչ է ուրեմն այսպիսի հաւատք մը , եթէ ոչ գործ մը բառին բովանդակ իմաստովն . և գործ մը՝ որ ուրիշներէն կը տարբերի այնու միայն որ սրտին գաղտնածածուկ խորութեան մէջ կը կատարուի , և Աստուած է միայն իր ականատեսը :

Բայց հաւատքը՝ կ'ըսեն , Աստուծոյ գործ է , և մենք մարդուն գործը կ'ընենք զայն . շնորհք մ'է , և արժանաւորութիւն մը կ'ընենք մենք զայն , և այսպէս կը յարձակինք Աւետարանին էական ու հիմնական յատկութեան վրայ : ի՞նչ ըսել է այս : Յորմէ՞ հետէ է որ , Աւետարանական վարդապետութեան մէջ գործ և արժանաւորութիւն բառերն հոմանիշ եղած են : Եւ յորմէ՞ հետէ է որ , մարդուն գործեր կատարել յանձնարարելն արժանաւորութիւն ստանալ յանձնարարել է : Չպիտի կարենայինք ուրեմն որևէ պարտաւորութեան վրայ պնդել , որևէ զոհողութիւն պահանջել առանց իր պատուանդանին վրայ բարձրացնելու անձնական արդարութեան կուռքը , զոր Աւետարանը կ'արհամարհէ , և զոր Յիսուս Քրիստոս եկաւ կործանել : Հետևութիւնը ահարկու է , այլ ան-

խուսափելի : Եթէ հաւատքին գործ անունը տալով մնաս հասուցած ըլլանք փրկութեան ճրիարաշխութեան վարդապետութեան , բոլոր միւս գործերն , բոլոր Քրիստոնէական բարոյականը նոյն միասը կը հասցնեն անոր : Եթէ հաւատքին մէջ կամքին միջամտել տալն՝ ըսել է թէ մարդ կրնայ ինքնիրեն բան մ'ընել , ամէն անոնք որք բարոյականի բոլոր գործերն կը ներկայացնեն իբր կամաւոր գործողութիւններ , ըսած պիտի ըլլային թէ մարդկարող է ամենայնի : Եթէ , ընդ հակառակն , անոնք կըրցած են բարոյականի մասին առ հասարակ այսպէս խօսիլ , առանց այնքան ծանր մեղադրանքի մը ենթարկելու ինքզինքնին , մենք ևս ենթարկած չենք ըլլար ինքզինքնիս այսպիսի մեղադրանքի մը : Եւ այն վերապահումը՝ զոր կը կցեն իրենց կոչումին մարդկային կամքին օրէնքին գործադրութեան համար , մենք ալ նոյնքան իրաւամբ կը կցենք զայն մեր հրաւերին զոր կ'ուղղենք առ մարդիկ , հաւատալ Անոր , զոր Աստուած զրկած է : Վասն զի և թէ Քրիստոնեաներուն « Աշխատեցէք » ըսելէն վերջ՝ կը յաւելուն , « Աստուած է որ ձեր մէջ կը ներգործէ կամենալը ու ընելը , » մենք ալ մեր կողմանէ , երբ կ'ըսենք անհաւատներուն « Հաւատացէք , » կը յաւելունք . Ոչ ոք կրնայ առանց Սուրբ Հոգւոյն Տէր կոչել Յիսուս Քրիստոսը : Աստուած է որ մեզ կը

հրամայէ, և Աստուած է որ կու տայ մեզ հաւատալ:

Բայց մենք կը ջնջենք, կ'ըսեն դարձեալ, խորին և նուիրական խտրութիւններ: Մենք իրարու կը խառնենք այնպիսի տարրեր, զորս Աւետարանը անջատած է խնամով: Անկարգութիւն և շփոթութիւն կը մտցնենք այն գեղեցիկ տնտեսութեան մէջ Աւետարանին, որ մէկ կողմը դնելով հաւատք, և միւս կողմը՝ գործերը, գծած է այնպիսի սահմաններ զորս ո՛չ մէկու մը կը պատկանի ջնջել: Եղբարք իմ, եթէ ջնջած ըլլայի՛նք զայնս, խոստովանեցէք թէ մեր բնաբանին խօսքերն պիտի կարենային մեզ իբր չքմեղանք ծառայել: Ո՞վ պիտի կարենար զարմանալ որ անգամ մը գոնէ մէկը գործ անունը տուած է հաւատքին, թէ մեր Տէրը յայտնապէս այնպէս կոչած է զայն: Բայց ոչ ոչինչ ջնջած ենք մենք: Խտրութիւնը կը մնայ: Այս խտրութիւնը հակադրութեան մը արժէքը ունի չափով մը. բայց բառի մը կապուած չէ: Նոյն իսկ եթէ հաւատքը գործ մ'ըլլար, նուազ որոշ չպիտի ըլլար առանց անոր յղացուած և կատարուած գործերէն: Թող գո՛րծ կոչեն զայն, որչափ որ կ'ուզեն, տակաւին հաւատք պիտի ըլլայ, տակաւին պիտի ըլլայ գործերուն պայմանը, գործերուն սկզբնաւորութիւնը, գործերուն ամէնէն դժուարինը: Տակաւին պիտի ըլլայ նեղ դուռը ուրկէ պէտք է անց-

նիլ, պայմանը՝ զոր պէտք է կատարել. յաղթութիւնը՝ զոր պէտք է տանիլ, լուծը՝ որուն տակ պէտք է մտնել Աստուծոյ գործերն կատարել կարենալէ առաջ. և եթէ կ'ընդունինք այս ամէնը, խտրութիւնը կը մնայ դեռ և ճշմարտութիւնը փրկուած է:

Գրիստոնէական կեանքը մի է և անբաժանելի իր գոյութեան և իր ընթացքին մէջ, և այն միայն որ կրնայ գետ մը բաժնել իր ակէն և ցոյց տալ մեզ թէ ո՛ւր ակը կը վերջանայ, ո՛ւր գետը կը սկսի, կրնայ նաև բաժնել հաւատքը կեանքէ, ուստի կը բղխի. և ցոյց տալ մեզ թէ ո՛ւր հաւատքը վերջ կը գտնէ ո՛ւր կը սկսի գործը: Թող գետը տարածուի, կամ խոր յատակ մը պեղէ իրեն համար, թող հոսէ հեղիկ, և կամ ջրվէժներէն ոստոսէ, թող ովկէանն հասնի ամենէն ուղղակի ճամբով և կամ հազարաւոր պտոյտներով, թող միևնոյն յատակին մէջ ամփոփուի կամ բազմաթիւ ջրանցքներու մէջ թափէ իր առատ ջուրերն. չէ՞ մի որ միշտ, իր ակէն հեռի կամ մօտ, նոյն գետն է, նոյն ջուրերն են: Հոգևոր կեանքն ալ գետ մ'է, ուր շարժումը, զանգուածը, ուղղութիւնը, ափերը կրնան տարբերիլ, ամէն ինչ՝ ի բաց առեալ նոյն ինքն գետն: Այս ջուրը՝ որ յաւիտենական կեանքի մէջ կը ժայթքէ, կրնայ անունը փոխել իր ընթացքին մէջ, ինչպէս գետեր յաճախ կը փոխեն իրենց անունը. ա-

պաշխարութիւն է, դարձ է, սրբագործութիւն է, բոլոր այս անունները կը նշանակեն տեղեր կամ վայրկեաններ միևնոյն իրողութեան: Սրբագործութիւնը ապաշխարութեան մէջ է արդէն: Սրբագործութիւնը դարձ մ'է որ կը շարունակուի, դարձը՝ սրբագործութիւն մը որ կը սկսի, և հաւատքը, ինչպէս բացատրեցինք զայն, կը պարունակէ, թէև իսկոյն ի յայտ չը բերեր, քրիստոնէական կեանքին բոլոր տարրերն: Գետն ամբողջ իր ակին մէջ չէ՞ միթէ: Ան որ ակը կը տեսնէ, տեսած չըլլար գետը: Նոյնպէս կեանքն ամբողջ հաւատքին մէջ է, և ան որ հաւատքը տեսաւ, կեանքը տեսած եղաւ: Հաւատքը անշատ գործ մը չէ, ամբողջ գործն է, Աստուծոյ ամբողջ գործն: Մէկը որ խողկաղին մը կը բռնէ, չը կրնար ըսել թէ կաղնի մը կը բռնէ իր ձեռքին մէջ: Վասն զի այս խողկաղինը ինքն ըստ ինքեան է ամէն ինչ որ պէտք է ըլլալ կաղնի մը փոխուելու համար:

Մէկ կողմ թողունք պատճառաբանութիւններն ու պատկերներն և Աւետարանը բանանք: Պէտք է բացարձակապէս սուտ հանել զայն պնդելու համար թէ հաւատքն ամբողջովին Աստուծոյ գործը չէ, և չճաննալու համար որ, եթէ արդարութիւն կը համարուի, անոր համար է որ նոյն ինքն արդարութիւն է: Չէ՞ք ըսեր թէ հաւատքը առանց գործերու մեռած է: Չէ՞ք ըսեր թէ առանց

սրբութեան ոչ ոք պիտի տեսնէ Տէրը: Չէ՞ք ըսեր թէ իւրաքանչիւր ոք պիտի պատժուի կամ պիտի վարձատրուի այն բարիին կամ չարին համեմատ զորս կատարած է, երբ դեռ մարմնոյն մէջ էր: Լաւ, ուրեմն բացատրեցէք մեզ նաև պարարկ եզը՝ որ անառակ որդւոյն համար կը ղենուի, և հրեշտակներուն ուրախութիւնը՝ որ աւելի մեծ է մեղաւորի մը համար որ կ'ապաշխարէ, քան իննսուն և ինը արդարներուն համար, որք երբէք մոլորած չեն: Եւ ի զուր է պատասխանել թէ իրենց դարձէ վերջ գործեր կատարած կրնան ըլլալ: Միւսները միթէ դադրած են նաև գործեր կատարելէ: Միւսները գործեր չէին կատարեր երկար ժամանակէ ի վեր: Ինչո՞ւ ուրեմն մետասաներորդ ժամուն աշխատաւորը առաջին ժամու աշխատաւորին հաւասարնկատուեցաւ: Ինչո՞ւ արդարները որ երկար կեանք մը վարած են, չունին աւելի երջանկութիւն յուսալու քան այն արդարները, որ նուազ տարիներ ապրած ըլլալով՝ նոյն եռանդն ունենալով հանդերձ, նուազ գործ կատարած են: Ինչո՞ւ, եթէ ոչ որովհետև հաւատքն բովանդակ գործն է, որուն զարգացումը և յայտնութիւնն են միայն մասնաւոր գործերը: Ինչո՞ւ, եթէ ոչ որովհետև փրկութեան պայմանն է ինչ որ մենք է՞, և ոչ թէ ինչ որ մենք չէ՞: Եթէ այն պատեհութիւնները և ժամանակը, զոր Աստ-

ուած կու տայ մեզ գործելու համար . իրենց մասնաւոր նպատակ ունին ընէլ զմեզ ինչ որ պարտինք ըլլաւ : Ո՛հ, ո՞րքան կարեւոր է այս դասը , քանի որ վերջին դասն է զոր տուաւ Յիսուս , և զայն տալու համար ալ իր շար- շարանաց վսեմ ժամը ընտրեց : Խաչին վրայ է . իր մաքուր հոգին Աստուծոյ աւանդելու վայրկեանին՝ որ ըսաւ իր աջ կողմը խաչուած աւազակին (Ղու. ԻԳ. 43) «Գուն այսօր իմ հետս դրախտին մէջ պիտի ըլլաս» : Եւ աւա- զակ մ'էր այս մարդը : Եւ դուք ըսիք , եղբարք իմ , թէ առանց սրբութեան ոչ ոք պիտի տեսնէ Տէրը . ըսիք թէ ամէն ոք պի- տի ընդունի Աստուծմէ իր գործած բարիին ու չարին համեմատ : Բայց կ'ըսէք թէ կը հաւատար , քանի որ կ'ըսէ «Յիշէ զիս երբ քու թագաւորութիւնովդ դաս», և իր հա- ւատքը իրեն արդարութիւն համարուեցաւ : Բայց դուք էիք նաև որ ըսիք թէ հաւատքը առանց գործի մեռած է . և ի՞նչ գործեր կատարած էր այս մարդը . անշուշտ սատանա- յին գործերը : Յիսուս Քրիստոս օր մը կ'ըսէր բազմութեան . Շատ մը բարի գործեր կա- տարեցի ձեր մէջ . որո՞ն համար է որ զիս կը քարկոծէք : Եւ մենք կը փորձուինք հար- ցնել Փրկչին , Այն մարդը շատ մը չար գոր- ծեր կատարած է , որո՞ն համար է , Տէր , որ երկինքը կու տաս իրեն : Ա՛հ , եղբարք իմ , իրողութիւնն այս է որ մէկ վայրկեանը

ամբողջ կեանքի մը արժէքը կրնայ ունենալ . և հոգւոյն մէկ շարժումը կրնայ շատ մը բա- րի գործերու տեղը բռնել : Յիսուս Քրիստոս որ այս մարդուն սիրտը կը կարդայ , հոն կը տեսնէ այն բոլոր բարի գործերը . զորս պի- տի կատարէր եթէ իրեն տրուած ըլլար ապ- ըրի . և այս գործերը կը վերագրէ իրեն , իբր թէ կատարած ըլլար զայնս : Եթէ այն մար- դը չէ կատարած ամէն ինչ որ պիտի ուզէր կո- տրել . ինքն է իր հաւատքովը , և այն վայր- կեանէն իսկ , ամէն ինչ որ պարտի ըլլաւ : Ե- թէ գործերն չէ կատարած , կատարած է գործերուն գործը , որ է հաւատալ Անոր զոր Աստուած զրկած է :

«Յիշէ զիս երբ քու թագաւորութիւնովդ դաս :» Այս աղաչանքը երկու գաղափարներ կը պարունակէ . Պէտք ունիմ Փրկիչի մը , ո՛վ Յիսուս . դուն եղիր իմ փրկիչս : Այս խօս- քերուն երկրորդը ըսելու համար պէտք է դրապէս հաւատալ Քրիստոսի . պէտք է գիտնալ թէ եկած է , կամ գիտնալ թէ պի- տի գայ : Երանի կ'ըսենք այս առթիւ անոնց որ տեսած են և հաւատացած : Բայց միայն ըսելու համար , Փրկիչի մը պէտք ունիմ , և նոյն իսկ ըսելու համար , իմ տառապանքս այնքան մեծ է որ կարող չեմ կրել զայն , Տէր , իջեցուր քու բարկութիւնդ ինձ նկատ- մամբ , որ մեղաւոր մ'եմ , և , եթէ կրնաս ներել , ներէ : Մէկ խօսքով , եղբարք իմ ,

զգալու համար իր յանցանքներն, ողբալու համար անոնց վրայ, իր նեղութեանց խորութենէն առ Աստուած աղաղակելու համար, այս ներքին հիւանդութեան իբր դարման մերժելու համար նախապաշարման բոլոր վտանգաւոր դեղերն ու խարուսիկ ամօքիչները, ընդգրկելու համար, եթէ մեզ մատուցուի, Աստուծոյ ներողութիւնը իբր միակ ապաստանը, պէտք է ի հարկէ ծանօթ ըլլալ խոստումին, լսած ըլլալ Յիսուս Քրիստոսի անունը: Այդ չպիտի ըլլար մեր կարծիքը, եղբարք իմ: Մեսիային կարապետը, ապաշխարութեան մարդարէն Յովհաննէս Մկրտիչ, բաղդատելով իր պաշտօնը Քրիստոսի պաշտօնին հետ, ինքզինքն «չորսի» զի յօշ կը կոչէ, իբր թէ ըսել ուզէր թէ ինքն կանխաւ զրկուած է ձայն մը տալու այն զգացմանց. որք ամէն ժամանակ կը գտնուին աշխարհին վրայ, և որք իրենք իրենցմով կը կազմուին բնական մարդուն մէջ Գերագոյն Միջնորդին գալուստէն կամ նոյն իսկ անոր կանխագուշակութենէն առաջ:

Արդ՝ այս զգացումները որ աշխարհէ են, թէ և սակաւաթիւ մարդոց մէջ յայտնուին, և թէ և Յիսուս Քրիստոսի որոշ ծանօթութիւնը միակ միջոցն ըլլայ զանոնք արթնցնելու մեծագոյն մասին մէջ, այս զգացումներն անոնք են, որոց մասին խօսեցանք: Մենք զանոնք համարձակ կը վերագրենք շնորհքին

Աստուածային Հոգւոյն աղբեցութեան, որ միշտ փչած է ուր և կամեցած է, և երբէք չէ կաշկանդած ինքզինքը: Կը հաւատանք միայն թէ ամէն ատեն և ամէն ուրեք եղած են անկամաւոր վկաներ մեծ ճշմարտութեան, որ հիմն է բոլոր Աւետարանական ճշմարտութեանց, այսինքն համողումը մեր սկզբնական անկման և մեր անկարողութեան կանգնելու առանց նոյն ինքն Աստուծոյ միջամտութեան: Այն հոգիներն, ուր այս ճշմարտութիւնը լոյս տեսած է, երբ դեռ Աստուածային միջնորդութեան մեծ ճշմարտութիւնը յայտնուած չէր իրենց, այն հոգիները որ, որչափ որ կրնային, հաւատացած են դեռ չտեսած, ի՞նչ դիրք կու տաք անոնց՝ հանդէպ այն հոգիներուն որք, ճանչնալով զՅիսուս Քրիստոս, կը հաւատան անոր տառական և կրաւորական հաւատքով մը, ոչ թէ ազատ հաւանութեամբ, այլ ստրուկ հաւատքով մը, և որք, վերջապէս, չեն երթար անոր ընդ առաջ, չեն ընդգրկեր զինքը և ինքզինքնին չեն պսակեր անոր արժանաւորութեամբը. անոր շնորհքովը, անոր պաշտպանութեամբն ըստ ամենայնի: Որո՞նք. առաջինները թէ երկրորդները լաւ ևս կը կատարեն ճշմարիտ հաւատքի պայմանները: Որո՞նց հաւատքն է որ աւելի արդարութիւն պիտի համարուի: Անոնց՝ որոնց հաւատքը ամբողջ է այլ մեռած. կամ անոնց՝ որոնց հաւատքը թերի է

այլ կենդանի : Անոնց՝ որոնց հաւատքը գործ մ'է . կամ անոնց՝ որոնց հաւատքը գործ մը չէ : Անոնց՝ որ չեն ճանչցած փրկիչը , այլ փափաքած են անոր . կամ անոնց՝ որ կը ճանչնան զինքը բայց չեն փափաքիր իրեն կամ չեն գնահատեր զինքը բնաւ : Անոնց՝ որ փրկիչի մը կը հաւատան . կամ անոնց՝ որ փրկիչի մը կարօտութեան կը հաւատան : Ձեր խիղճը , եղբարք իմ , պիտի վճռէ զայս :

Ա՛հ , եթէ ֆրիստոսէ շատ առաջ ապրած են այսպիսի մարդիկ , և , եթէ այսօր ֆրիստոնէութեան սահմաններէն դուրս կը գտնուին այնպիսիք տակաւին , եթէ կան այնպիսիք՝ զորս փրկիչի մը տարտամ զրոյցը դուրս բերած է իրենց անտառներէն , և , հազարաւոր վտանգներու մէջ , այս անծանօթ փրկչին պատգամաւորներուն ընդ առաջ առաջնորդած , եթէ ֆրիստոնեայ միսիոնարք գտած են քաւութեան , ողորմածութեան Աստուծոյ հետ հաշտութեան այն ազնիւ կարօտութիւնը արդէն արթնցած , արդէն ժայթքելու պատրաստ թշուառ վայրենիներու մէջ , որոնց մարդ անունը տալ վարանած ենք ընդ երկար , ի՞նչ պիտի խորհինք , եղբարք իմ , այն խուռներամ մարդոց մասին , որք ծնած են արտաքին Եկեղեցւոյ մէջ , որոնց աչքերուն առջև յստակօրէն նկարուած էր ֆրիստոս , և որք բոլորովին օտար այն խանդին , որով նուազ նպաստաւորեալներ առանց ճանչ-

նալու կ'ընդգրկեն զինքը , անոնք կ'արհամարհեն զայն , կը վանեն , կը նախատեն , և այն ապիրատ Հրէից նման կ'աղաղակեն , « Վերցուր , վերցուր , խաչը հանէ . մենք կայսրէն զատ ուրիշ թագաւոր չունինք : Մենք չունինք ուրիշ թագաւոր ի բաց առեալ այս հպարտ եօր , այս խրոխտ կեսարը , այս անգութ բռնաւորը որ աշխարհի փոշիին և մեզաց տիղմին մէջ մինչև յաւիտենականութեան կը տանի զմեզ ընդ քարը : »

Ո՞վ է որ քննելու վրայ կը խօսի : Մենք չենք ուզեր քննել . վասն զի չենք ուզեր հաւատալ : Ա՛հ , աւելի երանելի են անոնք որ իրենց խոնարհութեան և իրենց անձկութեան մէջ կը փափաքին հաւատալ , բայց չեն կրնար անոնք՝ որ արդարութեան անհանդուրժելի ծարաւէն կը հալածուին . անոնք՝ որ կը զգան թէ ամէն բանէ զրկուելով հանդերձ ամէն բան ունեցած պիտի ըլլային , եթէ զԱստուած ունենային . անոնք՝ որ ամէն օր իրենց արժանաւորութիւնը կը մերկանան , առանց սակայն կարենալու դարձեալ հագուել . վասն զի ան , որով պէտք էր հագուել , չէ յայտնուած տակաւին իրենց , վասն զի որևէ արդեւք մը , ներսէն կամ դուրսէն , մինչև հիմա արգելած է զիրենք Յիսուս ֆրիստոսի հաւատալէ : Պիտի հաւատան օր մը . Աստուած թերի չպիտի թողու գործ մը՝ որուն լաւագոյն մասը կատարուած է արդէն

անոնց մէջ: Բայց այս ցաւագին փորձութիւնը կրնայ տակաւին երկարաձգիլ. պէտք է որ Եկեղեցւոյ աղօթքը գործակցի անոնց, մաքառի անոնց համար: Պէտք է որ տաճարներու ծոցէն և խուցերու գաղտուկ անկիւններէն անոնք որ իրենցմէ առաջ ազատուած են, աղաղակեն առ Մեծ Ազատարարն «կը հաւատան, Տէր, կը հաւատան. օգնէ իրենց թերահաւատութեան»:



ՎԵՐ. ՄԱՆԱՍԷ Կ. ՓԱՓԱԶԵԱՆ



ՎՇՏԱՅ ՄԷՋ ՈՒԲԱԽՈՒԹԻՒՆ

«Եղբայրներ, բողոքովին ուրախութեան արժանի բան սեպեցէք, երբ կերպ կերպ փորձանքներու մէջ կ'իյնաք. . . որ կատարեալ և ամբողջ ըլլաք:» Յակ. Ա. 2-4:

Նախնի ֆրիստոնեաները արդեօք կազմուածքով մենէ տարբեր մարդիկ էին: Միսէ և արիւնէ շինուած մարդը ի՞նչպէս կրնայ ուրախութեան արժանի բան սեպել երբ կերպ կերպ փորձանքներու մէջ կ'իյնայ: Ի՞նչպէս կարելի է փորձանքէն ուրախութիւն հանել, տառապանքէն՝ մխիթարութիւն, աղքատութենէն՝ զօրութիւն: Ահա ճիշտ այս բանը ընել կը պատուիրէ մեզի Յակոբոս, «Աստուծոյ և Տէր Յիսուս ֆրիստոսի ծառան»: «Եղբայրներ,» կ'ըսէ, «բողոքովին ուրախութեան արժանի բան սեպեցէք երբ կերպ կերպ փորձանքներու մէջ կ'իյնաք, գիտնալով որ ձեր հաւատքին փորձառութիւնը համբերութիւն կը գործէ: Բայց համբերութիւնը կատարեալ գործ թող ունենայ, որպէս զի կատարեալ և ամբողջ ըլլաք, և բանի մը պակասութիւն չունենաք»:

Նոր կտակարանի մատենագրաց մէջ Յա-
կոբոս ամէնէն յտակ, ամէնէն պարզ և ա-
մէնէն նուազ խորհրդաւոր գրողն է: Իր
գրածը սխալ հասկնալու վտանգ չկայ: Իր
ոճին պարզութեանը մէջ գրեթէ ցնցող բան
մը կայ: Կեանքի նկատմամբ անոր տեսու-
թիւնը որքան պարզ այնքան զարմանալի է:
Մեր բնաբանին գլխոյն մէջ անիկա կը խօսի
հաւատացեալներուն ժողովին մէջ պարագա-
ներու և բարիքներու անհաւասարութեանը
վրայ, և իր վարդապետութիւնը սա պարզ
և կարուկ ոճով կը բացատրէ. «Խոնարհ եղ-
բայրը իր բարձրութեանը վրայ թող պար-
ծենայ, և ան որ հարուստ է, իր խոնարհու-
թեանը վրայ»: Ինչպէս հիմա՝ այն ատեն ալ
Քրիստոնէական հասարակութեանց մէջ ամէն
կարգի և վիճակի մարդիկ կային, և հարկաւ
բաղդի ստէպ յեղաշրջումը հասարակ երևոյթ-
մէր: Յակոբոս առաքեալը կը վարդապետէ
որ աղքատ եղբայր մը պարտի ուրախանալ
երբ բաղդի մէկ բարեղէպ դարձուածով կը
հարստանայ և կը բարձրանայ, և հարուստ
եղբայր մը պարտի ուրախանալ երբ Նա-
խախնամութեան մէկ անեղ հարուածը զինքը
աղքատ վիճակի կը խոնարհեցնէ: Աղքատը
պարտի ուրախանալ երբ կը հարստանայ,
հարուստն ալ ոչ նուազ ուրախութիւն պար-
տի ունենալ երբ կ'աղքատանայ: Գիտենք թէ
առաջինը շատ դիւրին է. բայց երկրորդը

ի՞նչպէս կարելի է: Մարդ բնականաբար կը
ցնծայ երբ Աստուած վերջ կու տայ իր աղ-
քատութեանը, և իր պարկեշտ և ժիր աշ-
խատութիւնները կը վարձատրէ բարիքներով
ու յաջողութեամբ. բայց ի՞նչպէս կրնայ ու-
րախանալ երբ անակնկալ աղէտ մը կ'առնէ
կը տանի այն բոլոր բաները որ իր բնակա-
րանը ու սիրտը գեղեցկութեամբ ու երջան-
կութեամբ լեցուցած էին: Առաքեալը կը
պնդէ որ կրնայ ուրախանալ: «Բոլորովին ու-
րախութեան արժանի բան սեպեցէք», կ'ըսէ,
«երբ կերպ կերպ փորձանքներու մէջ կ'իյ-
նաք»: Ուրախացիր, երբ վայելած նիւթական
բարիքներէդ զուրկ մնաս, կամ երբ հիւան-
դութիւնը քեզ անկողինի կաշկանդէ և
կեանքը դժուար բեռ մը ընէ, կամ երբ ծանր
դժբաղդութիւն մը ընդհատէ երջանիկ գոր-
ծունէութիւնդ և ապագան սև յուսահատու-
թեան քօղով ծածկէ աչքերէդ, կամ երբ
մահը իր ցուրտ մականը դնէ անձի մը ճա-
կատին վրայ որուն կեանքը նոյն իսկ քու
կեանքիդ մէկ մասն էր և առ որ տաժած
սէրդ առօրեայ մխիթարութիւնդ և ուրա-
խութիւնդ էր: Եւ աւելի զարմանալին, մեղի
կը պատուիրուի ուրախանալ ոչ թէ հակա-
ռակ այն փորձանքներու և նեղութեանց,
հապա բուն իսկ անոնց համար: Ուրախացիր
բուն իսկ սա պատճառով որ աղքատացած
ես. ուրախացիր, վասն զի առողջութիւնդ

կորսուած է. ուրախացիր, որովհետև առաջադրութեանցդ և յոյսերուդ մէջ յուսախաբ եղած ես. ուրախացիր սաստիկ նեղութեան ու վշտի մէջ ինկած ըլլալուդ համար. — ասո՛ւ սրբազան առաքեալին վարդապետութիւնը :

Սակայն ասիկա կարելի՞ քան մ'է : Մեր պատասխանը կախում ունի բոլորովին ուրախութեան տեսակէն : Եթէ ուրախութիւն ըսելով պիտի հասկցուի հոգիին այն բերկրութիւնը որ յառաջ կու գայ մարդուն զգայական ճաշակներուն և բաղձանքներուն գոհացումէն, Առաքեալին վարդապետութիւնը թէ՛ անբանաւոր է թէ՛ անկարելի : Եթէ հիւանդին պիտի ըսենք «Մի հեծեր», յուսահատին՝ «Մի ցախր», վշտացեալին՝ «Մի լար», անշուշտ սխալ ըմբռնած ենք մարդկային բնութեան կազմութիւնը նաև մեր Աստուածային վարդապետին ոգին : Տէր Յիսուս Քրիստոս ինքը՝ գերազանց աստիճանով «վշտաց տէր և ցաւոց տեղեակ» անձ մ'էր : Ղաղարոսի գերեզմանին քով լացաւ անիկա : Երուսաղէմի համար ողբաց ինչպէս գորովագութ մայր մը կ'ողբայ իր ապստամբ որդիին համար. և Գեթսեմանի պարտէզին մէջ, երբ մահը իր առջև կը կանգնէր իբրև անխուսափելի իրողութիւն, անիկա «սաստիկ նեղութեան մէջ ըլլալով՝ աւելի ջերմեռանդութեամբ կ'աղօթէր, և իր քրտինքը արիւնի մեծ կաթիլներ

րու պէս էր որ գետինը կը թափուէր :» Եթէ Որդւոյ Մարդոյ փորձառութիւնը այսպէս եղաւ, մենք, աղկաղկ և մեղաւոր մարդիկս, ի՞նչպէս կրնանք կեանքի դառն յեղաշրջումներուն դիմագրաւել առանց ծանր և յուսաբեկ սրտի : Նախախնամութեան մէկ տխրառիթ և անհասկնալի անօրինութեամբը իր ստացուածքը, առողջութիւնը և երջանկութիւնը կորսնցուցած մարդուն պատուիրել որ այնպէս գործէ ու ապրի որպէս թէ այդ տեսակ դժբաղդութիւններ իրեն պատահած չըլլային, մահուան շուքին ձորին մէջէն քալող մարդը յորդորել որ այնպէս և այնչափ ուրախանայ որպէս և որչափ կը ցնծար այն օրը երբ իր գլուխը ուրախութեան իւղով օծուած և իր բաժակը խիստ լեցուն էր. — պարզ անտեղութիւն է ասիկա :

Ուրեմն ի՞նչ է Առաքեալին յանձնարարած ուրախութիւնը : Անիկա բարձրագոյն և հոգևոր ուրախութիւն մ'է, եղբայրներ, որ մարդուն արտաքին վիճակին և պարագաներուն հետ կապակցութիւն չունի : Ներքին խաղաղութիւն մ'է որ կը գոյանայ երբ Աստուծոյ հետ ճշմարիտ յարաբերութեան մէջ կը մտնենք և բոլոր մտքերը Քրիստոսի հնազանդութեանը գերի կ'ընենք : Այն անդորրութիւնն և հանդարտութիւնն է որ սրտին մէջ կը տիրէ երբոր աշխարհի անցաւոր երեւոյթներէն վեր ելլելով կը մտածենք Աստու-

ծոյ թագաւորութեանը յաւիտենական իրականութեանցը վրայ : Հոգիին մէկ վիճակն է որ կեանքի բոլոր ելևէջներուն մէջ Աստուծոյ ձայնը կը ճանչնայ . ձայն մը՝ որ զինքը կը հրաւիրէ դէպ ի հոգիին կեանքը որուն մէջ կայ «արդարութիւն և խաղաղութիւն և խընդութիւն Հոգւով Սրբով :» Երանութեան վիճակ մ'է որ կրնայ տոկալ բաղդի բոլոր ձախողութեանց — աղքատութեան , յուսաբեկութեան , հիւանդութեան և մահուան :

Յայտնապէս այս ուրախութիւնը աւելի բարձր և աւելի մնայուն իրականութիւն մ'է քան սրտի զուարթութիւնը որ զգայական ճաշակները և բաղձանքները յագեցնելէն կը դոյանայ : Երկրաւոր ուրախութիւնը , որուն սովորաբար կը բաղձանք , բոլորովին մարմինին վիճակէն կախեալ բան մ'է : Առողջութեան և յաջողութեան հետ կու գայ , և հիւանդութեան ու աղքատութեան հետ կ'երթայ : Ընդհակառակն երկնային ուրախութիւնը՝ որ նեղութեամբ ու տառապանքով կը ստացուի , կախում ունի հոգիին կեանքէն : Անիկա կը մնայ՝ արտաքին մարդը որքան ալ ուրախ ըլլայ կամ անմխիթար ըլլայ . կը մնայ որքան ատեն որ մեր հոգին ֆրիստոսի մէջ հաւատքով կը կենայ : Արդարեւ , նեղութիւնը որքան մեծ և խոր ըլլայ , այնքան ճոխ ու մաքուր կ'ըլլայ Հոգւով Սրբով եղած սոյն ուրախութիւնը :

Երկրաւոր ուրախութեան և հոգւոր ուրախութեան միջև սոյն տարբերութիւնը սրքան գեղեցիկ և ազգու կերպով ի յայտ կու գայ մահուան անկողինն մէջ : Եթէ անցած կեանքը՝ նիւթական վայելքներ և երջանկութիւն ձեռք բերելու մասին անընդհատ ջանք մ'եղած է , սրքան յաջող կամ՝ անյաջող եղած ըլլայ այդ ջանքը , պարապ բան է մահուան անկողինէն ուրիշ ձայնի սպասել բայց միայն յուսահատութեան և յուսախաբութեան խոր հեծութիւն մը : Եւ ինչո՞ւ այդպէս չըլլայ : Եթէ երկրաւոր և կորստական բաներու համար ապրած ես , այն ժամուն երբ հիւանդութիւնը և մահը անանցանելի անդունդ մը կը բանայ քու հոգիիդ և քու ստացուածքիդ մէջտեղ , ի՞նչ ուրախութիւն կրնաս ակնկալել աշխարհի բաները այսչափ վայելած ըլլալուդ յիշողութենէն : Ժամանակաւ երիտասարդ , առողջ և երջանիկ էիր . բայց ասիկա մտաբերելը քեզի ի՞նչ օգուտ ունի հիմա որ մահուան մօտեցած ես : Շատ տարբեր է , սակայն , միւս հիւանդին վիճակը որ վիշտէն ուրախութիւն հանելու գաղտնիքը սորված է : Անիկա ալ կը տառապի և կը հեծէ , այսու ամենայնիւ ամէնէն չարաչար տանջանքներու յատուկ ուրախութիւն կը գտնէ , քանզի աշխարհի կերպ կերպ փորձանքները իր մէջ ստեղծած են կեանք մը երանութեամբ լեցուն որ հոգիին

յարակից պիտի մնայ յաւիտեան : Երջանկութիւն կամ ապերջանկութիւն , առողջութիւն կամ հիւանդութիւն , հարստութիւն կամ աղքատութիւն , ամէնքն ալ անցած են . բայց հոգևոր էութիւնը , զոր թէ՛ երջանկութիւն թէ՛ ապերջանկութիւն , թէ՛ առողջութիւն թէ՛ հիւանդութիւն , թէ՛ հարստութիւն թէ՛ աղքատութիւն անոր մէջ ստեղծած են , անիկա անվթար կը մնայ : Այդ ներքին կեանքը երեսին վրայ կը ժպտի , աչքերուն մէջ կը փայլի , լեզուովը կը խօսի . և երբ սիրտը բաբախելէն և կուրծքը ուռելէն դադարին , հոգին իր թեւերուն վրայ կը տանի այն էակին առջևը որ կենաց ու մահուան Տէրն է :

Ուրեմն այս ուրախութիւնը աշխարհի ներդութեանց նկատմամբ անտարբերութիւն կամ անփութութիւն ըսել չէ : Կարելի չէ կեանքի ծանր ձախողութիւններէն հոգևոր ուրախութիւն հանել՝ լոկ զգայարանները փակելով մեր փորձանքներուն և նեղութեանց . դէմ : Ուղենք կամ չուղենք , տեսնենք կամ չտեսնենք , կեանքը մութ կողմ մը ունի : Կեանքը Յիսուսի թաղման տեղին կը նմանի — պարտէզ մը որուն մէջ գերեզման կայ : Յերեկ և գիշեր , ամառ և ձմեռ , յոյս և յուսաբեկութիւն , ուրախութիւն և ցաւ իրարու կը յաջորդեն ամէնէն երջանիկ նաև ամէնէն ապերջանիկ մարդուն կեանքին մէջ , և ան-

տեղի փիլիսոփայութիւն է այնպէս գործել և ապրիլ որպէս թէ լոյս և ուրախութիւն և յոյս են միայն կեանքի դրական իրականութիւնները , և թէ մթութիւն , յուսախաբութիւն և ցաւ լոկ ցնորք և երազ են : Աւելորդ է հարցնել թէ իրական ուրախութիւն կամ միսթարութիւն կրնա՞յ կենալ մեր կերպ կերպ փորձանքներուն դէմ աչք գոցելու մէջ . կը բաւէ գիտնալ թէ արդէն անկարելի է զանոնք անտեսել : Կարելի՞ է զանոնք վտարել մեր առօրեայ փորձառութեան սահմաններէն : Ահա ներկայ են ու կը մնան մնայուն մէկ մասը մեր կեանքին : Ամէն կողմէ մեր վրայ կը խուժեն անողորմարար . կու գան ազգարարութեամբ կամ առանց ազգարարութեան , ակնկալեալ ժամանակ կամ անակնկալ , ատենին կամ ատենէ դուրս , մէկ մէկ կամ խմբովին : Կարո՞ղ ենք գիտակցութեան շրջանակէն արտաքսել զանոնք : Եթէ մինչև անգամ կարող ըլլայինք , ճշմարիտ ուրախութիւն չպիտի գտնէինք : Այնքան ծաղրելի անյաջողութիւն մը պիտի ըլլար ասիկա որքան ջայլամին իմաստութիւնը որ իր մարմինը որսորդին նետէն պահպանելու համար գլուխը աւազին մէջ կը թաղէ :

Առաքեալին յիշած ուրախութիւնը չկայանար նաև անյոյս կերպով փորձանքներուն յանձնուելու մէջ : Երբ մարդ մը անձնատուր կ'ըլլայ անխուսափելի ազէտի մը , որ իր ա-

ւերները դորձած ըմբոսցած է, աւելի ուրախութիւն չունենար քան շղթայակապ ոճադորձը որ դահիճին ակամայ անձնատուր կ'ըլլայ: Առաքինութիւն չկայ անկարողութեան մէջ: Ենթադրենք թէ Նախախնամական դառն այցելութեամբ մը խիստ փորձի ենթարկուած ես: Բնութեանդ բոլոր փայլուն կարողութիւնները ի հանդէս կը բերես, համակիր բարեկամներու մխիթարական յորդորները կը լսես, կը կշռես բազմաթիւ բարիքները և վայելքները որ դեռ քովդ կը մնան, և կ'երեւակայես թէ ուրիշ և աւելի գէշ դժբաղդութիւններ կրնային պատահիլ եթէ այդ մասնաւոր ցաւը վրադ եկած չըլլար: Սակայն երբ մարդկային սոյն բոլոր հնարքները և դարմանները վերջապէս անկարող կ'ըլլան սրտէն հանել կամ մեղմացնել վիշտը, այսինքն՝ երբ ցաւը կատարուած իրողութիւն մը կ'ըլլայ որ ո՛չ տրամաբանութեամբ և ո՛չ ժպիտով կրնայ հեռացուիլ, յայնժամ անոր կը համակերպիս ըսելով «Աստուծոյ կամքն է եղեր. պէտք է կրեմ»:» Ճշմարիտ ուրախութիւն կրնայ կենալ այս տեսակ համակերպումի մէջ: Ո՛չ ամենեւին: Ակամայ անձնատուր ըլլալ է ասիկա: Բարոյական պարտութիւն է: Անկարութիւն է: Յուսահատութիւն է:

Քրիստոնէական ուրախութիւնը՝ զոր ամէն ատեն և ամէն պարագայի մէջ պարտինք ու-

նենալ, կը ստացուի ո՛չ անտեսելով մեր կերպ կերպ փորձանքները և ո՛չ անկարութեամբ համակերպելով անոնց, հապա կամաւ մեր խորհուրդներուն և կեանքին մէջ ընդունելով զանոնք որպէս զի մեր մէջը դորձեն իբրև ներքին մարդուն շինութեան համար Աստուծոմէ սահմանուած միջոցներ: Արդ, ուրախութիւնն ի՞նչպէս յառաջ կու գայ երբ մարդինքզինքը կ'ենթարկէ վշտալի ճախորդութեան վարժութեան: Կը պատասխանենք թէ ուրախութիւնը չկայանար բուն իսկ դժբաղդութեան մէջ, այլ սա համոզումին մէջ թէ ամէն դժբաղդութիւն մեր կեանքը Յիսուս Քրիստոսի կեանքին այլակերպող շնորհաց միջոց մ'է: Երբ մարդ մը կը սորվի զգալ թէ իր փորձանքները Աստուծոմէ տնօրինուած փորձեր են, թէ իր նեղութիւնները ու վիշտերը աննպատակ դիպումներ չեն, հապա մանաւանդ Նախախնամական շնորհքներ որոնցմով Աստուած իր սրտին մէջ մտնել կ'ուզէ, յայնժամ կրնայ բոլորովին ուրախութեան արժանի բան սեպել զանոնք, ի՞նչ ալ ըլլայ Աստուծոյ այցելութեան եղանակը: Ասիկա լոկ նուրբ իմաստասիրութիւն մը չէ, կեղծ լաւատեսութիւն մը չէ, հապա մեր առօրեայ կեանքին ճշմարիտ մեկնութիւնն է: Արդէն կեանքին մութ կողմը նշանակութիւն չունի եթէ անոր պաշտօնը ներքին մարդը «կատարեալ ու ամբողջ» ընել, հոգիին փրկու-

Թիւնը գործել չէ : Կը կարծենք թէ ասիկա է Առաքեալին միտքը :

Թերևս այս խորին ճշմարտութիւնը կրնանք աւելի պարզ տեսնել ուրիշ տեսակէտէ մը դիտելով : Աստուծոյ մեր հետ բոլոր յարաբերութեանց նպատակն է կատարելագործել մեր բարոյական և հոգևոր բնութիւնը, մեր մէջը ստեղծել “կատարեալ ու ամբողջ” մարդկութիւն մը : Բարոյական վերածնութեան սոյն գործողութեան գիտական անունն է “Նկարագրի կազմութիւն,” կրօնական անունը՝ Փրկութիւն : Մարդկային կեանքի վախճանը հոգևոր փրկութիւնն է : Մեր բոլոր ելևէջները, ուրախութիւն և ցաւ, յոյս և յուսահատութիւն, աւուղջութիւն կամ հիւանդութիւն, պարզապէս տարբեր եղանակներ են որով Աստուած մեզի մօտ կու գայ, այո, մեր մէջը կու գայ, որպէս զի կարենայ իւր սուրբ ներկայութեամբը կատարելագործել ու ամբողջացնել մեր ներքին կեանքը : Գերազանցապէս ճշմարիտ է ասիկա մեր կերպ կերպ փորձանքներուն համար, որոնց ամէն մէկը մեր հաւատքին “փորձառութիւնն” — փորձն — է, որ “համբերութիւն կը գործէ,” որպէս զի “կատարեալ ու ամբողջ” ըլլանք : Ինչ որ մեզի տխուր կ'երևի ներկայ կեանքին մէջ, Աստուծոյ այն բոլոր այցելութիւնները որոնք մեզի անթափանցելի գաղտնիք կը մնան և տրտմութեամբ ու տխրութեամբ կը համակեն

սիրտը, պարզապէս շնորհաց միջոցներ են մեզ աշխարհէն փրկելով մեր Աստուծոյն և Փրկչին բերելու համար, ինչպէս որ նոյն իսկ մեր Քահանայապետը տառապանաց միջոցով կատարեալ եղաւ : Վշտին պաշտօնն է մեր սիրտը Աստուծոյ մօտեցնել, և Աստուծոյ սիրտը մեզի :

Երբ որ ամէնօրեայ կեանքի վրայ կը խորհինք, այս ճշմարտութիւնը իրական գոյնով ի յայտ կու գայ : Չէ՞ որ շատ անգամ մեր խնամքին յանձնուած հոգիները դժուար փորձերու կ'ենթարկենք զանոնք կեանքին զանազան պարտականութեանց յարմարցնելու դիտաւորութեամբը : Օրինակի համար առ տղու մը կրթութեան գործը : Ո՞րքան քիչ ուղղամտութիւն և սրբութիւն կ'սպասենք այն մարդէն որ փափկութեան և ճոխութեան մթնոլորտին մէջ սնած ըլլալով ուրիշ ձեռքերու հաւաքած բաները կ'ըլլելու համար կ'ապրի : Ի՞նչ է տարբերութիւնը այն երկու մարդերու, որոնց մէկը ծննդեան պարագաներու բերմամբ իր բառարանէն հանած է հոգ և անձկութիւն բառերը, բայց մէկայլը Տարսունացի Պօղոսի նման սովորած է “չքաւորութիւն քաշել,” “չատը ունենալը,” որ “ամէն բանի մէջ ամէն կերպով” աղէկ սովորած է “թէ՛ կշտանալը, թէ՛ անօթենալը, թէ՛ շատ ունենալը և թէ՛ պակասութիւն քաշելը :” Վարժութիւն, կրթութիւն : Ճշմարիտ է. և ահա

Աստուծոյ նպատակը այդ կրթութիւնը մեզի տալ է: Աստուած մեզ կը կրթէ գոյութեան այնպիսի շրջանի մը համար ուր կարենանք իրեն ծառայել աւելի հաւատարմութեամբ և յօժարութեամբ, և մեր վրայ կը բերէ ամէն ազդեցութիւն, ամէն փորձառութիւն, ամէն վարժութիւն, որ մեր հոգևոր կեանքին ամբողջացմանը համար հարկաւոր են: Առողջութեան պէտք ունիս Աստուծոյ գործօն ծառայութիւն մատուցանելով “կատարեալ ու ամբողջ” ըլլալու համար. ուրեմն առողջութիւն կու տայ քեզ. իսկ հակառակ պարագային մէջ հիւանդութեան անկողինին պիտի դատապարտուիս: Եթէ ցնծութեան պէտք ունիս՝ բարձրագոյն բնութիւնդ իր կատարելութեամբը ի յայտ բերելու համար, գլուխդ պիտի օժէ ուրախութեան իւզով և բաժակդ խիստ լեցուն պիտի ըլլայ. բայց եթէ վշտաց վարժութիւնը հարկաւոր է քեզ նուազ անձնասէր և աւելի քրիստոսանման ընելու համար, նուազ հողեղէն և աւելի հոգևոր շինելու համար, յայնժամ նոյն երկնաւոր Հօր ձեռքը նեղութեամբ ու տառապանքով այցելութիւն պիտի ընէ քեզի որ վրկութեանդ Առաջնորդին նման գուն ալ կարենաս կատարեալ ըլլալ վշտի ու նեղութեան միջոցով:

Կեանքի նկատմամբ ճշմարիտ տեսութիւնը ասիկա չէ՞ արդեօք, ապա թէ ոչ աւելի բանաւոր բացատրութիւն մը կա՞յ մեր երկրա-

ւոր կեանքին դժուարին պարտականութեանց և դառն յուսախարութեանց համար: Ինչո՞ւ համար “կնոյմէ ծնած մարդը կարճ կեանք ունի, ու թշուառութեամբ լեցուն է”: “Ինչո՞ւ համար ունայնութեան ամիսներ ինծի բաժին տրուած են, ու թշուառութեան գիշերներ ինծի համար որոշուած են:” “Ինչո՞ւ համար թշուառութեան մէջ եղողին լոյս, ու դառնահոգիներուն լոյս տրուի:” Ուրեմն ճշմարիտ չէ՞, գերազանցապէս ճշմարիտ, թէ Աստուած իր զաւակաց համար ո՛չ թէ երջանկութիւն կը փնտռէ հապա բարութիւն, ո՛չ թէ հանգստութիւն հապա խաղաղութիւն, ո՛չ թէ բարօրութիւն հապա ճշմարտութիւն: “Ո՞հա դուն ճշմարտութիւն կ'ուզես երիկամունդներու մէջ,” կ'ըսէ Սաղմոսերգուն: Անշուշտ այնպէս է. և եթէ երջանկութիւն և հանգստութիւն և բարօրութիւն արդելք ըլլան բարութեան և ճշմարտութեան, պարտին կըտրուիլ և վերցուիլ: “Դուրսի մարդը կ'ապականի, սակայն մեր ներսի մարդը օրէ օր կը նորոգուի . . . ինչու որ երեցած բաները ժամանակաւոր են, բայց չերեցածները՝ յաւիտենական”:

Այսու ամենայնիւ կրնայ հարցուիլ թէ խիստ փորձի ենթարկուած մարդուն մէջ ուրախութիւնը ի՞նչպէս կրնայ գոյանալ: Փորձանքները և նեղութիւնները կրնան բարոյական կրթութեան համար ըլլալ, և սակայն

մարդ ինչպէս կրնայ բոլորովին ուրախութեան արժանի բան սեպել երբ այս կերպ կերպ փորձանքներուն մէջ կ'իյնայ: Կարելի՞ է որ անիկա դժուար հրահանգութեան մը միջոցին ուրախանայ: Այո՛, կարելի է, սակայն ուրախութիւնը փորձանքին մէջ չկայանար, տառապանքին մէջ չկայանար, հապա սա ներքին համոզումին մէջ թէ փորձանքը և տառապանքը իբրև շնորհաբեր պատգամ կուգան ամէն շնորհաց Հօրմէն, և թէ զանոնք խոնարհաբար սրտին մէջ հիւրընկալելով Աստուծոյ կամքը կը կատարուի մեր մէջ “ինչպէս որ երկինքը” և Աստուծոյ կեանքը մեր հոգիին մէջ կը հոսի մեր կեանքը կատարելագործելու և սրբացնելու համար: Ինչ գերազանց գոհունակութիւն, ինչ անսահման ուրախութիւն կ'զգայ մարդ երբ գիտէ թէ առողջութեան և հիւանդութեան, առատութեան և չքաւորութեան, ուրախութեան և վշտի մէջ Աստուած սիրտը կը բաղխէ և կ'ուզէ հոգիին մէջ մտնել զանիկա լեցնելու համար իր սուրբ կեանքով և ներքին մարդը կատարելագործելու և սրբելու համար իր մրածին Որդիին պատկերին համեմատ: Տառապանքը կրնա՞յ բարւոյքել մեզ. տառապանքը ընդունելի է, ուրեմն, և նեղութիւնը ուրախառիթ: Առաքեալը ասիկա փորձառութեամբ գիտէր: “Ամէն կողմանէ վշտացած ենք, կ'ըսէ, բայց նեղը ինկած չենք, կա-

բօտեալ ենք, բայց յուսահատ չենք. հալածուած ենք, բայց երեսէ ձգուած չենք. վար ձգուած ենք, բայց կորսուած չենք. ամէն ատեն Յիսուսի մահը մեր մարմիններուն մէջ կը կրենք, որ Յիսուսի կեանքն ալ մեր մարմիններուն մէջ յայտնուի:”

Այս ճշմարտութիւնը սրտին ո՞րքան գողտրիկ և ազդեցիկ կու գայ կսկիծի ժամուն: Այսպիսի ատեն, և ամէնքս ալ այսպիսի փորձառութիւններէ պիտի անցնինք երբ բարեկամութիւն և համակրութիւն չեն կրնար մեղմացնել վիշտը, երբ հոգին կ'ուզէ մանաւանդ թաղուիլ իր ահաւոր մենութեանը մէջ քան թէ խառնուիլ աղմկայից աշխարհին հաճոյքներուն, այսպիսի ժամանակներ ո՞րպիսի բնազդմամբ և ուրախութեամբ կը դիմենք յաւիտենական կենաց աւետարանին, լսելու թէ ինչ կ'ըսէ “Աստուծոյ և Տէր Յիսուս Քրիստոսի ծառան:” “Եղբայրներ, բոլորովին ուրախութեան արժանի բան սեպեցէք, երբ կերպ կերպ փորձանքներու մէջ կ'իյնաք:” Այսինքն՝ ուրախացէք երբ փորձուիք, ուրախացէք երբ յուսախաբ ըլլաք, ուրախացէք երբ վշտանաք: Եւ ինչո՞ւ համար: “Վասն զի ձեր հաւատքին փորձառութիւնը համբերութիւն կը դործէ . . . որ կատարեալ ու ամբողջ ըլլաք,” կամ ինչպէս ուրիշ առաքեալ մը կ'ըսէ, “Ինչու որ մեր վայրկենական թեթեւ նեղութիւնը առաւել քան զառաւել

փառաց յաւիտենական գերազանցութիւն կը գործէ մեզի:”

Ո՛րքան դիւրին է ըսել ասիկա, բայց ո՛րքան դժուար է զգալ, և աւելի դժուար զանիկա կատարել: Դժուար է անձնատուր ըլլալ, դժուար է վարժութիւնը, դժուար է պարտականութիւնը, դժուար է կեանքը: Այսու հանդերձ վշտաց մէջ ուրախութիւն զգալը իրական փորձառութիւն մ'է: Մեր կեանքին մէջ անշուշտ ունեցած ենք ժամանակներ երբ ծանր դժուարութիւն մը մեզի սորվեցուցած է “ճանչնալ զանիկա և անոր յարութեանը զօրութիւնը, և անոր չարչարանքներուն հաղորդ ըլլալը,” ժամանակներ երբ վերէն ձայն մը մեզ հրամայեց կանգ առնել պանծալի ընթացքի մը մէջ և յառաժ նայիլ այն բաներուն “որ աչք չէ տեսեր և ականջ չէ լսեր ու մարդու սրտին մէջ չէ ինկեր:” Արդարև յաւիտենականութեան սահմաններուն այնքան մօտ չե՞նք որ երբեմն մեր ականջին հասնին հրեշտակաց շրթունքներէն թռած շշուկները: Մտաց տեսութիւնը արդիող քօղը երբեմն այնպէս չը վերցուիր որ հողին կարող կ'ըլլայ նոր երկինքը ու նոր երկիրը նշմարել: Արդէն անոր երանաւէտ եզերքներուն վրայ կը կանգնինք: Արդէն կը լսենք յաղթական երգոց ձայնը: Եւ երբ այս տաժանելի կեանքը անցնի, երբ փորձանքներու և տառապանքներու այս շար-

քը վերջանայ, մեր բոլոր բեռները վար պիտի դնենք, և երազային վայրկենի մը մէջ մահուան մութ ձորէն պիտի անցնինք դէպ այն երկիրը ուր “չարերը մարդ տանջելէ կը դադարին և ուժէ ինկածները կը հանգըստանան:”

“Եղբայրներ, բոլորովին ուրախութեան արժանի բան սեպեցէք, երբ կերպ կերպ փորձանքներու մէջ կ'իյնաք:” “Ինչու որ երևցած բաները ժամանակաւոր են, բայց չերևցածները՝ յաւիտենական:”



ՎԵՐԻ ԳԱԻՄԷ ԱՊԼԱՅԱՏԵԱՆ

Մ Ղ Ե Ղ

«Ասանկ չեն ամբարիշտները, հապա մղեղի պէս զոր հովը կը ցրուէ:»
Սաղ. Ա. 4:

Աստուած չարերը շատ բաներու նմանցուցեր է. «խոտ»ի (Ես. ԾԱ. 12), և «չնչաւոր»ի (Յուդ. 19): Ասանկ շատ բառեր ունի անդեղ շանդարձ մարդոց համար, որոնք իրեն չեն ապաւինիր: Սակայն հիմա մեր մտածումը դարձնենք մեր բնաբանը եղող «մղեղ» բառին: Չարէն զգուշացողը Աստուծոյ օրէնքին հաւնողը ու գիշեր և ցորեկ անոր վրայ մտածողը կը նմանցնէ ծառի մը որ ջուրի ճամբաներուն վրայ տնկուած է արմատաւոր, հաստաբուն, ժամանակին պտուղ բերող զարդարուն, և ամէն բանի մէջ յաջողակ. ասոր հանդէպ ամբարիշտը կը մնայ իբր «մղեղ», յարդի ամենամանր փշրտուքը փոշիանման: Ի՛նչ անհուն տարբերութիւն, աչքի զարնողը

ակնյայտնի շատ պարզ ու որոշ՝ Աստուծոյ աչքին և անոր ճշմարիտ ժողովուրդին աչքին: Ուստի կ'արժէ կշիռի առնել ու տեսնել թէ ո՛վ է այս մղեղը. ես գրո՞ղս, դու կարդացո՞ղդ կամ ո՞վ, մենք վճիռը ունէ մէկուն վրայ տալու կարող չենք. յիշենք յատկութիւնները ու թող ամէն մարդ ինքնիրեն խորհի:

1. Ան չէ ան մղեղը որ ամէն չարէ կը զգուշանայ, Աստուծոյ օրէնքը կը սիրէ, իր ժամանակին պտուղը բերող տերևալից զարդարուն ծառի պէս է, արմատաւոր բարեպաշտ է, ամէն բանի մէջ յաջողակ է, ասանկին վրայ թէև յարձակին ծովեր և փոթորիկներ՝ հաստատուն կը մնայ, իր քրիստոնէական դիրքը կը պահէ ու պտուղն ալ կու տայ ի զարմանս ամէնուն, ան ալ ճիշտ իր նեղութեանը մէջ, ցաւերուն մէջ, ինչպէս Յիսուս խաչին վրայէն կը փրկէ աւաղակը, և գերեզմանէն՝ շատ սուրբ ննջեցեալները, Պօղոս և Շիղա բանտին մէջ, բանտապետը, ևն.: Աստուծոյ ամէն զաւակները այսպէս են՝ երբ խաղաղ են, յաջողութիւններ ունին, ամէն կողմէ կը գնահատուին, չեն ուռենար և իրենց պտուղէն ու զարդէն մերկանար երբ կը քննադատուին, կը հալածուին ոչ միայն դուրսէն այլ ներսէն և իրենցներէն, չեն յուսահատիր ու պողպարեղութենէ ետ կենար, ասանկներուն համար է որ ամէն բաները

բարիի դործակից կ'ըլլան : Ոչ, ասանկները մղեղ չեն, յարդ ալ չեն :

2. Մղեղի մէկ յատկանիշն է իր մանրութիւնը, աչքի չզարնելը . երբ կալը կը հօսեն՝ մղեղին միլիոնաւորներն են որ մէկտեղ դաւրով ճերմակութիւն մը կը շինեն ու աչքի կ'երևին, իսկ երբ զատես զանոնք իրարմէ՝ ամէնն ալ աննշան կը դառնան ալ չեն երևիր . երկրագործները լաւ գիտեն՝ զայս : Անոր քրիստոնէութիւնը, բարեպաշտութիւնը, հոգեւորութիւնը չերևիր, ուրիշները չեն կրնար տեսնել զայն Աստուծոյ տունը բարի դործոց մէջ, չտեսնուիր իր զինչութիւնը . առևտուրի մէջ ի՛նչ է անանկը՝ դիտող աչքերը թող ըսեն, նոյն իսկ երեցած բարեպաշտութեան մէջ ի՛նչքան իրականութիւն կայ ոտքէն մինչև գլուխը . երբ կը դիտուի խոշոր ի՛նչ կ'երևի անոր վրայ . կ'աղօթէ բայց անով չյայտնուիր . կ'երգէ բայց ոչինչ կ'երևի . կը հաղորդուի նորէն աչքի չզարնեք, բարեգործած ատենը իսկ տալը, աշխատած ատեն նորէն գոյութիւնը յայտնի չընեք . թերևս մարդիկ տեսնեն և խաբուին, սակայն Աստուած և ինք մղեղ եղողը չխաբուիր . Աստուծոյ աչքին մղեղ է, և ինք իր աչքին ալ այնպէս է ինք իր համոզման մէջ, իր համարման մէջ այնպէս է . թէ իր բոլոր ըրածին մէջ ցցուցածին մէջ մղեղի չափ իրակա նութիւն կայ կամ չկայ իսկ : Կանանչ ծառը

ո՛ւր, մղեղը ո՛ւր . ո՛վ չկրնար տեսնել ու ճանչնալ . երեսին վրայ նկարագիր չփայլիր, աչքերուն մէջ գութ, թացութիւն չերևիր, ոչ ալ բոլոր երևոյթին մէջ, որու քով կենայ, աննշմարելի կը դառնայ . գուցէ հասակը բարձր է, լեցուն, գէր, անունը մեծ, սակայն ներքին մարդը, ճշմարիտը, Աստուծոյ հետ կապակցութիւնը անյայտ է մղեղի մը պէս : Մղեղ մը երբ ինքնիրեն առանձին ինկած է, ճրագով թէ արևի լոյսով փնտռես՝ չես կրնար գտնել . նոյնպէս է աս, պարապ տեղը կը փնտռես զայն ժողովի մէջ, հանգանակութեան ատեն, հոգևոր գործի մէջ ևն . կ'երևի իբր թէ, սակայն իսկութիւն չկայ, իր տուածին մէջ սէր չերևիր, աղօթքին մէջ ճշմարտութիւն, բարեպաշտութեանը մէջ սիրտ չկայ, և ինք գիտէ որ չկայ . սոսկալին հոս է որ ինք գիտէ թէ մղեղ է, բայց կանանչ ծառի երևոյթ կ'առնէ՝ անձը և ուրիշները խաբել ջանալով :

3. Ո՞վ է “մղեղ,” ան ալ է որ ծանրութիւն չունի . մղեղը յարդէն ալ աւելի թեթեւ է : Կալին հոսուած ատենը հովը ցորենը յարդէն կը զատէ, անկէ անդին քշելով, իսկ մղեղը խիստ շատ աւելի անդին կը տանի, անանկ որ ցորենին շուրջն ալ չիկրնար կենալ, հեռու աւելի հեռու է, ամէն բարեպաշտական գործերէ և վայրերէ՝ ա՛խ, ո՛րքան շատ անգամ աչքերնիս այսինչին կամ այնինչին

ճամբան է մնացեր՝ ժողովի մէջ զանոնք տեսնելու, և երբ կը տեսնուին, շուտ դուրս ելլողներէն են, քանզի թեթև են, կը քշուին քարոզին կարծեցեալ երկայնութենէն և կամ ազդու չըլլալէն, ևն.։ Ասանկները ծանրութիւն չունին, ուէ փորձութիւն կրնայ զիրենք իրենց տեղէն շարժել, ինչպէս որ առաջ ըսինք, նայէ մղեղի մը, եթէ կրնաս ձեռքդ առ դիր ափիդ մէջ դիտէ, պիտի տեսնես որ միայն շնչելովդ տեղէն կը շարժի, հապա եթէ վրան փչես ուսիդ կ'երթայ կ'իյնայ։ Ծանր քրիստոնեան, տեղը կեցողը և անշարժը և հիմ ունեցողը ահա ան է պտուղ բերող ծառը արմատաւորը և ամէն բանի մէջ յաջողակը։ Երբ շահը կ'երևի, սուտ խօսելով ձեռք ձգելը ճարպիկութիւն կը սեպէ, խարդախելու գործին մէջ խաբելու վարպետն է, բնաւ չի դիմանար աս փորձութեան. երբ մէկը իրեն քիչ մը դպի, բարկութիւնը կը վերցնէ զինք շատ հեռուները կը նետէ, տունը զաւակները, եկեղեցին, ժողովուրդը, ինչե՛ր կը քաշեն իր ԲԵՆԻԳՆԻՆԵՆ. տակալու բնաւ կարողութիւնը չունի, ապացոյց իր մղեղ—ամբարիշտ ըլլալուն, և սակայն ի՛նչ օգուտ, տակաւին կը կարծէ թէ ինք Աստուծոյ զաւակ է։ Երբ խնդիրը ակտիվ կու գայ, երբէք չդիմանար, կը խմէ ուղածին չափ այլևայլ սուտ փաստեր բերելով, ինքզինք արդարացնել կը ջանայ, իր մղեղ ըլլալուն փաստ կը բերէ. վա՛յ վա՛յ։ Երբ

պատուամոլութիւնը ճարակ կ'ունենայ՝ կը թռի. երբ վրէժխնդրութիւնը պատեհութիւն կը գտնէ՝ կը ցնցուի, ևն., ևն., ամէն բանի մէջ թեթև հովերէ, ամէն հովերէ կը քշուի։

4. Մղեղը միութիւն չունի, քանզի կ'ըսէ թէ “հովը կը ցրուէ”։ Հոգևոր ո՛ր գործի հրաւիրես չի խառնուիր, երևոյթը մէջն է բայց ոչ իսկութիւնը, բարեպաշտութեան ամէն գործին մէջ սրտի բաժին չունի, “Հա,” կ'ըսէ ու գլուխ չի հաներ, եկեղեցւոյ տոմարներուն նայէ. խոստումներ ամէն տարի, սակայն կատարել չկայ, զի մղեղ է. միանալ, շիտակին, ճշմարիտին հետ շաղուիլ, հնար չէ, բնութեանը մէջ չկայ, երբեմն եկեղեցին աչառութիւն կ'ընէ, կամ տգիտաբար կ'ընտրէ ասանկները որ գործի գլուխ դնէ, բայց ի՛նչ սխալ քայլ. մղեղը ցորենին հետ չի կրնար կենալ. այս ու այն պատճառ բռնելով շուտ մը ետ կը քաշուի ու հեռի կ'ապրի զի մղեղ է, ուէ որոշման, ուէ ուխտի, ուէ բարի դիրքի մէջ կշիռ չունի, ԳՆՆԵՆ ԵՆ ԻՆՆԵՆ չի ծծեր, “կշիռքով կշռուեցաւ ու պակաս գտնուեցաւ” զի մղեղ էր։ Հոգևոր միութիւնը ծանրութիւն ունի. հոգևորը, “Հոգւոյն սրբոյ միութեամբ” միացած է իր հոգեկիցներուն և Արարչին հետ։ Իսկ ան չի փակիր, ուր դնես կը զատուի, նոյն իսկ շահի մէջ, նորէն ուէ միջոցով կը զատուի ու զատ կ'ապրի։ Ոչ, կը կորսուի։

5. Ասանկը արժէք չունի. մղեղին արժէքը ի՞նչ է: Յարդը կրակով կ'այրեն շատ տեղ, գնող չգանուելուն, ո՛ւր կը մնայ մղեղը: Ամբարշտին արժէքը ըսիք, տեսնենք ի՞նչ է. ո՛ւր որ փնտռես, որո՛ւ որ հարցնես, կը տեսնես որ հրապարակին վրայ արժէք չունի. մէկը անոր վրայ յարգ չի դնել թէև ըսեն Պրն., Պատ., Վեր., աղա, Էֆէնտի, տակաւին չըթուշքի խօսք է. ըսողը չի գնահատեր, արժէք չունի. կարելի է խաբուին ոմանք. փորձելով պիտի տեսնեն որ մղեղ է եղեր. մէկը կուտ մը ցորեն չկայ: Ա՛հ, ինչ սոսկալի պատիժ աս աշխարհի մէջ. ո՛ր հրապարակը ելլես, ուր որ երևիս, ուրիշը թէ դուն ինքզինքդ ծախել ուզես, գին տուող չկայ՝ առնողը կը զզջայ, ծախել կ'ուզէ գնող չկայ: Տէրը ազատէ, մարդուս դժոխքը հոս կը շինէ աս. հրապարակի վրայ ըլլայ մէկը ու չը գնահատուի և անոր համար մղեղ է ըսուի, ողջ ողջ գերեզմանը իջնել լաւագոյն է: Տէրը օգնութեան հասնի:

6. Մղեղը դիրք չունի. փնտռէ, ո՛ւր կըրնաս գտնել. հիմա այս արտն է վաղը ո՛ւր: Հովը ուր ուղէ հոն կը տանի. ագահութիւնը ուղած տեղը կը տանի. նոյնպէս է ոևէ չար բան. կրնայ տանիլ ամբարիշտ մղեղը իր ուղած տեղը: Եկեղեցւոյ մէջ դիրք չունի, պաշտօնի մէջ չունի, հաւատքի մէջ չունի, այսօր քրիստոնեայ, վաղը ոչ, այսօր Քրիստոսի Աստուածութիւնը կը դաւանի, վաղը կ'ուրանայ. այսօր վարժապետ, վաղը քարոզիչ, միւս օր պատկերահան, ևն., հովը ուր որ տանի. զի դիրք չունի. իր դիրքը զինք ուրախութեամբ թող կուտայ և ինք իր դիրքը: Արմատ չունի, չուզեր ունենալ. ո՛հ «մղեղ»՝ Դաւիթ, ո՛ւր դտար այս տարրը, այս բառը, արդեօք կա՞ն էիր. հոսուած ատեն տեսար ու խորհեցար. փառք քեզի Տէր, որ ներշնչեցիր քու ծառագ. մեզի օգտակար ըրէ:

8. Վախճան, լաւ վախճան չունի մղեղը. ո՛վ կրնայ աս տարրին անանկ վախճան մը ցոյց տալ որ ցանկալի ըլլայ: Ամբարիշտը սակայն ցանկալի ներկայ չունի, թէև ունեցողի պէս կ'երևի, իսկ վախճանը շատ ահարկու է. յարդը չմարելու կրակը որ կը ճըգուի, իսկ մղեղը, ո՛ւր պիտի մնայ, մեղաւորաց մրուրը. հոս բաղդատութիւնը կը դադրի. մղեղը ամբարիշտէն կը զատուի, իսկ ամբարիշտը իր ահարկու վախճանը կը հասնի զոր երևակայելն անգամ սոսկալի է: Բայց դառնանք ուրիշ կարգ մը խորհրդածութեանց որ ծագում կ'առնէ նորէն ճիշտ մեր բնաբան մղեղ բառէն: Եւ 1. Մղեղը ցորենի հասկէն շինուած կամ ծագում առած է, գուցէ ցողունէն. երբ կայը կը բերուի ու կը ծծուի սովորաբար հասկին ցողունը յարգ կ'ըլլայ. սակայն բնական է որ մղեղ ըլլալու աստիճան մանրուի երբեմն, ուստի ցորենի հասկը կամ

ցորենը իր վրայ կրող ցողունը մղեղ եղած է: Յորենին ծառայութիւն ընելէն ետքը, կրեց իր վրայ զայն. սնունդը, հիւթը ջամբեց անոր, միջոցը եղաւ կանգուն մնալուն և սնուցմանը ու ինք մղեղ դարձաւ. բնութեան մէջ ասկէ մնաս մը չկայ, իսկ բարոյական աշխարհի մէջ մեծ նշանակութիւն ունի աս: Ծառայես ճշմարտութեան, անմահ հոգւոյ, աղքատին, տղէտին, հիւանդին, զայն գլխուդ վրայ առնես, բարձր բռնես, անոր սիւն ըլլաս, ապրեցնես, արժէքին ծառայես ու դու անպիտան դառնաս մղեղ ըլլաս, մանր ու աննշան թեթև ու անարժէք անդիրք ու վախճանը սոսկալի, կ'աղաչեմ, Դաւիթ, ըսէ աս ի՞նչպէս հասկցար: Սոսկալի, շատ սոսկալի կ'զգար առաքեալն ալ որ "ուրիշներուն քարոզելէն ետքը, ինքը խոտելի գտնուի": Տէրը ինձի ալ ողորմի. կ'աղղէ, ո՞հ ջիղերուս կ'աղղէ աս ճշմարտութիւնը. կ'աղաչեմ համայն ընթերցողներէն որ ինձի համար աղօթեն որ անանկներէն չըլլամ:

2. Մղեղը ցորենին բոյսին, ցողունին վրայ ալ ու ձախ կողմը տարածուող ու կախուող տերևներէն կ'ըլլայ անշուշտ նաև այն տերևները որ իրենց լայնութեամբը, սիրուն, երկայնութեամբը ու կանանչութեամբը զարդ էին արտին, բոյսին, իսկ հիմա մղեղ: Ո՞րքան շատերը կան հիմա, որ նոյնպէս զարդն են մարդկութեան, քրիստոնէու-

թեան: Նա աչք կը գրաւէ ու կը շլացնէ, գեղեցիկ, խիստ գեղեցիկ է իր դրից մէջ. գուցէ ժողովրդական բանաստեղծ մըն է, գուցէ մեծ տղթոր մըն է, գուցէ բրոֆէսոր մըն է, կամ աստուածաբան մըն է, և կամ պերճախօս քարոզիչ մըն է, կարելի է հարուստ մըն է, լաւ մարդավար մըն է և կամ գրագէտ մը, ևն., կը ծառայէ ցորենին խնամութեամբը՝ մօտը և գեղեցկութեամբ կը զարդարէ զայն, և դիշերուայ վրայ թառած մարգարտանման ցողը իրմէ վեր եղող հասկին կը հաղորդէ, բայց աւա՞ղ, ժամանակը լրացաւ բաժանման ատենը եկաւ, մէկը ցորեն, միւսը մղե՛ղ. ու բոլորը մղեղ ցողունէն գոնէ քիչ մը յարդ կ'ելլէ, իսկ տերևէն ուրիշ ի՞նչ, եթէ ոչ միայն մղեղ: Ո՞վ Դաւիթ, իրաւ որ մարդարէ ես եղեր: Սիրելիներ, մարդկութեան զարդը կազմող պատուականներ, ի՞նչ պիտի ըլլայ ձեր վիճակը, երբ միայն տերև, միայն գեղեցկութիւն մըն է, որուն վախճանը աս է, անկէ աւելի չըլլար: Այնքան մօտ ըլլալ ցորենին, այնքան աչք շլացնել ու ետքը անարգ անարժէք մղե՛ղ: Աչք գոցելը օգուտ չունի, զրոյը Գաւմէն է ըսելով թթուիլը օգուտ չունի. քաւ լիցի որ ես գրած ըլլամ, այլ Աստուծոյ Հոգին է Դաւիթին միջոցով:

3. Աւելին կայ, մղեղը կը շինուի նաև, ցորենի ծոց և տուն եղած կեղևէն, և կ'ըսեն երկրագործները թէ, "Աւելի ասկէ կ'ել-

լէ մղեղը?՝ Որքա՛ն շատ սոսկալի, ցորենին
 այնքան մօտ, ցորենը իր ծոցը գրկող ու
 պահող սակայն ետքը, ո՛հ, ետքը, մէկը ո՛ւր,
 միւսը ո՛ւր, ծնողք, թերևս ցորեն էր որ
 կրեցիք ձեր գրկացը մէջ, և նոյն իսկ ձեր
 ծոցը, ուսուցիչներ, վարժուհիներ, քանի
 պատուական հատիկները ցորենին, նոյն իսկ
 ծնողաց պէս, ձեր ծոցին մէջ պահեցիք ձեր
 աշակերտները: Վարդիչներս, եկեղեցիները ու
 ժողովուրդները մեր գրկացը մէջ առինք ու ժուռ
 եկանք: Շատ որբեր անհատից ծոցին մէջ հիմա
 կ'ապրին, ասոնք անոնց կեղև ու պաշտպան
 եղած են, ևն. ևն. բայց ետքը ի՞նչ պիտի ըլ-
 լանք. ի՞նչ պիտի ըլլանք մենք ծնողքներս երբ
 մեր ծոցինը ցորեն, ու մենք ծոց եղածներս մղեղ
 ըլլանք. ի՞նչ պիտի ըլլանք այնպէս եղած քա-
 ղողիչներս և խնամատարներս ևն. ո՛րքան սոս-
 կալի երբ տեսներք մեր զաւակները փրկուած,
 մեր որբերը երկինք, մեր աշակերտները կամ
 ժողովուրդները աջ կողմը կայնած ու մենք ձա-
 խը: Լեարդս կը խոցէ սա ճշմարտութիւնը, քա-
 նի վրան կը մտածեմ ու կը գրեմ, մեր միջով
 մեր ծոցը ցորեն շինուի ու մենք մղեղ ըլլանք,
 կը տարուի՞ աս, մինչև իսկ երբ երևակա-
 յենք: Ո՛հ, աւելի սոսկալին կայ, որ է մեր
 4. խորհրդածութիւնը, թէ ցորենը, ծոց ե-
 ղած կեղևը, փայլ տուող տերևը և ցողունը,
 միևնոյն ցորենէ՛ն է բուսեր, եղեր. ահար-
 կո՛ւ ճշմարտութիւն, սակայն ճշմարտութիւն,

ցանուած ցորենին արդիւնքը չէ՞ ցողունը,
 տերևը, կեղևը: Ո՛ւսկից յառաջ կու գան
 ասոնք որ մղեղը կը կազմեն. միևնոյն ցորե-
 նէն չե՞ն: Բնութեան գործը այնպէս կը բերէ.
 ուստի այդ տեսակ մղեղը անմեղադրելի է.
 իսկ մենք, ո՛հ, մենք, ի՞նչ կրնանք ըսել, մի-
 ևնոյն ցորենի կուտը, ճշմարտութիւնը, միև-
 նոյն Աստուածը, միևնոյն Քրիստոսը ի՞նչպէս
 կրնայ ըլլալ. մեղի այնքան մօտ և մեր խնամ-
 քը վայելողը ցորեն շինէ ու մեզ յարդ ասոր
 պատասխանը կայ քիչ մը ետքը. սակայն
 այժմ երևակայէ զարհուրելի կսկծանքը՝ երբ
 միևնոյն Յիսուսը որ հողի տակ իյնալով բու-
 սաւ՝ ոմանք անկէ ցորեն եղան ելան, ոմանք
 և ցաւալի է ըսել՝ շատերը մղեղ. ընդունի՛նք
 թէ մերժենք, ճշմարտութիւն է աս. Պօղոս
 ինքը կ'ըսէ «Ոմանց մահուան հօտ դէպ ի
 մահ և ոմանց կենաց հօտ դէպ ի կեանք:»
 Առաքեալներէն տասնըմէկը ցորեն կը շինուին
 իսկ մէկը մղեղ: Տէրը ողորմի, շատ սոսկալի է
 աս որ մինչ կարելիութիւն կայ ցորեն ըլլա-
 լու, մղեղ ըլլանք:

5. Միևնոյն խնամքը վայելելով հանդերձ
 մին մղեղ միւսը ցորեն կ'ըլլայ. անձրևը նոյն,
 արևը նոյն, հովը նոյն, հողը նոյն, խնամքը
 նոյն: Յուդան կրնա՞ր ըսել թէ ինձի Պետ-
 րոսի պէս խնամք չտարիր. կամ Անանիան,
 Սափիրան կրնայի՞ն ըսել թէ միևնոյն արևը
 չձագեցաւ մեր վրայ և կամ միևնոյն անձրևը

չվայելեցինք . ոչ երբեք . որքան ներգործութիւն մէկին , որքան զորութիւն անհատի մը , որքան սէր , որքան շնորհք եղաւ փրկեալի , նոյնը եղաւ կորուսեալի , այս անուրանալի է . թէ՛ բնութենէն թէ՛ հոգեղէն աշխարհէն կ'ապացուցուի :

Եւ գուցէ կարելի է և իրաւ ալ է որ կորսուածին վրայ աւելի հոգ տարաւ , աւելի արտասուք անոր համար , աւելի տքնութիւն անոր համար , աւելի ծախք անոր համար , այսու ամենայնիւ մղեղ եղաւ ոչ թէ ցորեն . ինչո՞ւ . պատճառը ըսեմ . կատարեալ համոզմամբ կ'ըսեմ թէ՛ ամբարիշտ-մղեղը ինք այնպէս ուղեց . ցաւալի է այս սակայն իրական է . ամէն կորսուած և այնքան բարձրութիւններէ կորսուածը , կորուստին պատճառը նոյն ինքն է : ա . փրկութեան հասնելու ինչ շնորհաց միջոց որ տրուած էր ինք սրտանց չգործածեց . խորհելով իսկ գործեց իր մղեղ ըլլալիք վիճակը . ինքիրեն ըսաւ “Եթէ քրիստոնեայ ըլլամ , իրաւ հոգևոր ըլլամ , չեմ կրնար ապրուստ ճարել . առանց սուտի գործ չգործուիր . պատիւս կը կոտորի եթէ ջերմ և անկեղծ քրիստոնեայ ըլլամ , վայելքներէ կը զրկուիմ : Ուստի շնորհաց ամէն միջոց որ թէև չմերժեց , սակայն օրինաւոր չգործածեց որ զինք ցորեն չինէ . ինք կամեցաւ ու ցողուն եղաւ կամ տերև կամ կեղև ծոց . ինք ուղեց աչքի երևցածը ըլլալ՝ ան եղաւ . ինք

չուզեց որ ցորեն ըլլայ ու չեղաւ : Հարևանցի քարոզ լսեց , Սուրբ Գիրք կարդաց , աղօթեց , մինչև իսկ եկեղեցւոյ անդամ եղաւ առանց իրականին ձգտելու . քարոզչութիւնը նոյնպէս ըրաւ . բարեսիրութիւնը նոյնպէս՝ հաւատքը նոյնպէս թոյլ բռնեց և իր ուղածը ճիշտ ուղածը եղաւ . կրօնական ուէ բանին մէջ սիրտ չգրաւ , անոր համար չեղաւ . թէև հակառակ կողմէն ալ Աստուած ամէն ինչ որ ըրաւ ի սրտէ կ'ընէր որ փրկէ , բայց սա չկամեցաւ :

բ . Ըսի ու կրկնեմ . մղեղը ուղեց ըլլալ ինչ որ եղաւ արտաքինը , ուղեց ան եղաւ երևցածը և ան եղաւ ժամանակաւորը և ան եղաւ . մարդ ինչ որ կ'ուզէ այնպէս կ'ըլլայ . հիմա ամէնքս այնպէս ենք ինչպէս որ կ'ուզենք . պաղ ենք՝ մեր ուղածն է . անհոգ ենք՝ մեր ուղածն է . օգտակարութենէ ինկած ենք՝ մեր ուղածն է . կը թուի թէ չենք հաւնիր ան վիճակին և կ'աղօթենք որ փրկուինք . սակայն առնենք վերլուծենք մեր աղօթքը , քանի՞ կուտ իրականութիւն պիտի գտնենք անոր մէջ . կ'ըսուի թէ սուրբ Օգոստինոս իր առջի վիճակին մէջ կ'աղօթէր որ փրկուի իր մեղքերէն , սակայն ինքիրեն կը խորհէր “Չըլլայ իրաւ փրկուիմ :” Մեծ հոգևոր արթնութեան մը ատեն՝ հետաքրքիր սարկաւազ մը կ'այցելէ հոն հեռի տեղէ մը . տեղացի սարկաւազը ճաշի կը հրաւիրէ զայն . երկուքն մին կը հարցնէ միւսին թէ “Ի՞նչպէս կ'ըլլայ որ

դուն Սուրբ Հոգիով լեցուած ես ու ես չեմ.” կը պատասխանէ միւսը թէ “եւս Աստուած խարած չեմ. ուզած եմ” առնելու մտօք, ուզած եմ և առած եմ:” Միւսը կերակուրը ձգելով ծունկի վրայ կու գայ և այսպէս կ’ըսէ. “Ով Աստուած, մինչև հիմա քեզ խարած եմ. խնդրած եմ բայց առնել ուզած չեմ. հիմա կ’աղաչեմ տուր ինձի Սուրբ Հոգիդ, լեցուր զիս անով. իրօք առնել կ’ուզեմ.” և կը լեցուի կ’առնէ իր ուզածը զի իրօք ուզեց. սիրելիներս, մեր աղօթքներուն շատը այնպէս չե՞ն արգեօք. սուտ, սուտ, սուտ:

գ. Ի՞նչպէս մէկը կրնայ ըլլալ ցորեն երբ ինք չուզեր, երբ իբր միջոց անոր համար ամէն տրուածները սրտանց չգործածեր և մանաւանդ կը մերժէ, կը հակառակի, կ’ոտնակոխէ, կը քննադատէ, ևն. . փրկութիւնը սղփաթի պէս չէ որ բռնի տղուն բերանը լեցընես և նոյն արդիւնքը բերէ՝ ինչպէս եթէ կամաւ առնէր. ուստի հիմա քանի որ մեր ձեռքը միջոց ունինք, թէև հիմա մղեղ եղած ալ ըլլանք, ճարր ունինք. գիմենք սիրելի ամենակալ Փրկչին որ իր փրկարար Աստուածային զօրութիւնը գործածէ մեր վրայ, մեր կամեցողութեանը վրայ որ հաճինք, որ սիրենք, որ ամէն շնորհաց միջոց գործածենք, ու բոլոր սրտով, որ մեզ ցորեն չինէ քանի որ ժամանակ կայ, ինչպէս Չարէսը, աւազակը, ևն. : կարող է Տէրը և

յօժար, կը հրաւիրէ մեզ, տակաւին կ’ստիպէ մեզ: Մղեղ ըլլալէ դադարինք ու պատուական ցորեն ըլլանք ու նմանինք բաղդատութեան առաջնոյն, այն ծառին, որ ջուրի ճամբաներուն վրայ տնկուած է, ժամանակին պտուղը կու տայ, տերևները չթափիր և ինչ որ ընէ կը յաջողի. միայն ինչ որ ընենք սրտանց ընենք. ըլլալուն դաղտնիքը հոն է Հոգւով Սրբով. հոս կայ բոյս մը, որթատունկ մը որ եթէ մղեղ—ամբարիշտը մէջը պատուաստուի ամէն կերպով կը փոխուի, կը դադրի մղեղ ըլլալէ, կ’ըլլայ պաղարբեր ճիւղ մը երկնային հաստարուն և խորարմատ որթին վրայ, ու կը սկսի ամէն կերպով փոխուիլ ու բարեպաշտի վիճակը ունենալ. ուստի ինչպէս որ “Հոգին և Հարսը կ’ըսեն, եկուր, ան որ կը լսէ թող ըսէ, եկուր. ան որ ծարաւ է թող գայ. ու ան որ կ’ուզէ՝ իրաւ կ’ուզէ, կենաց ջուրէն ձրի խմէ. նոյնպէս ալ անարժանս կը հրաւիրեմ երթանք Փրկչին սրտանց դիմենք, վրան իյնանք որ հոն փոխուինք, միայն թէ սրտանց՝ սրտանց ուզենք փոփոխութիւնը:



ՎԵՐ. ՏՈԳ. Շ. Ս. ՊԱՐՆԸՍ

ՊԱՀՈՒԱԾ ԿԵԱՆՔԸ

«Ձեր կեանքը պահուած է Աստուծոյ քով, Քրիստոսի հետ:» Կող. Գ. 3:

Երկիրն ու տիեզերքը արժէքաւոր ընողը կեանքն է: Աշխարհ կրնար ամէնէն նկարագրել և ամէնէն հոյակապ տեսարանը պարզել: Զրկէժներ կրնային գտնուիլ նիակարայէ և վիքթորիայէ աւելի սխրալի, լեռներ՝ Ալպեաններէն և Հիմալայայէ աւելի բարձր ու վսեմ: Դիւթիչ լիճեր կրնային գտնուիլ յակինթներով, զմրուխտներով և ադամանդներով փայլող բլուրներէ շրջապատուած: Երկինք կրնար զարդարուիլ համաստեղութիւններով Որիոնէ աւելի գեղեցիկ, փայլել հիւսիսայեաններով աւելի փառփուն քան զոր երբեք տեսած է Սրճային գաւառներու ուղևոր մը, և ծիածաններով աւելի փառաւոր քան զոր երբեք տեսած է մարդ այն օրէն ի վեր, երբ Աստուած առաջին անգամ իր խոստման աղեղը դրաւ ամպերուն վրայ: Եւ սակայն այս ամէնը բան մը պիտի չարժէին առանց կեանքի: Կեանքն է որ նշանակութիւն կու տայ ամէնուն: Վերցոր

կեանքը, և ահա ոչինչ կը մնայ ողբալու, եթէ բոլոր բարեկազմ տիեզերքը լուծուի և ընդհանրական քաոս տիրէ: Ողբն «Կ'ըլլայ», վասն զի ողբը խորհուրդ ու զգացում կ'ենթադրէ, և ասոնք կենսաւորներու միայն կը վերաբերին:

Այսու ամենայնիւ կեանքը «պահուած», թաքուն, բան է: Հատորներ գրուած են սահարցին վրայ թէ արդեօք ուրիշ աշխարհներու վրայ բնակիչ կա՞յ: Բայց ըսուածները ինծի շատ գոհացուցիչ չեն թուիր բնաւ: Թերևս կարելի է ապացուցանել թէ մարդկային կազմով էակներ չեն կարող ապրիլ ուրիշ մոլորակներու վրայ: Սակայն երբ արարչագործ ճարտարութիւնը այնքան ճապուկ կը տեսնենք, եթէ ներելի է այս բացատրութիւնը գործածել, որ կենսաւորներէ ոմանց հնարաւոր կ'ընէ օդին մէջ ապրիլ, ոմանց՝ ծովու մակերեսէն շատ վար, ոմանց՝ Այրեցեալ Գօտիի ջերմութեան մէջ և ոմանց՝ Բևեռային գաւառներու սառին և ձիւներուն մէջ հանգիստ բարգաւաճիլ, միթէ Աստուծոյ կարողութիւնը յանիրաւի չե՞ք սահմանափակեր ենթադրելով թէ անկարող է էակներ ստեղծել մերինէն տարբեր աշխարհներու մէջ ապրելու համար: Սակայն ենթադրելով իսկ թէ մեր պայմաններուն նման պայմաններ հարկ են կեանքի համար, անբանաւոր չէ խորհիլ թէ հարիւր միլիոն արևներուն իւ-

րաքանչիւրը, զոր հեռադիտակը մեզի կը յայտնէ լուսանկարչական տախտակի օգնութեամբ, գէթ մէկ մտորակ ունի ուր այդ պայմանները կը գտնուին: Եւ եթէ այդ աշխարհները բնակիչ ունին, տիեզերքի կեանքին ստուար մասը պահուած է մեզմէ: Կեանքով զեղուն հարիւր միլիոն աշխարհներ, և սակայն, ամէնուն ալ, բացի մէկէն, կեանքը այնքան կատարելագէտ մեզմէ պահուած որ ապացոյց մը չունինք անոր գոյութեան մասին:

Բայց ասկէ աւելի զարմանալի բան մը կայ: Կենդանի Աստուածը, որ իր ներկայութեամբ կը լեցնէ տիեզերքը և որով կ'ապրինք մենք, պահուած է մեզմէ: Անոր գոյութիւնը ի յախտենից է: Ան ինքզինք Մովսէսի յայտնեց իբրև Որ Էն, իբրև այն որ պէտք է մնայ, թէև ուրիշ ամէն բան կորնչի: Ան հաստատեց իր խոստումները “Ես կենդանի եմ” երդումով, տիեզերքի հիմնական իրողութեամբ, որ հիմն է ամէն ուրիշ իրողութեան: Յիսուս կոչեց զայն “Կենդանի Հայր”: Այսու հանգերձ թէև մեր բարձրագոյն բնութեան զարգացման համար գիտնալու ամէնէն կարևոր իրողութիւնը սա է թէ Աստուած կենդանի է, անոր կեանքը պահուած է մեզմէ: “Մէկը երբեք զԱստուած տեսած չէ”: Պողոս անգամ, որ յայտարարեց, և իրաւամբ, թէ մարդիկ անպատասխանի են զԱստուած չճանչնալնուն համար, ըսաւ թէ ան

“ստեղծուածներովը կ'իմացուի”: Իր գործերը կը տեսնենք, և անոնք մեզի տեղեկութիւն կու տան իր վրայ, բայց զինք չենք տեսներ:

Սակայն ուրիշ զարմանալի բան մը կայ և սա է թէ բուն մեր կեանքերը պահուած են: Ուրիշներու աչքերուն տակ կ'ապրինք, բայց մեր ճշմարիտ կեանքը չեն տեսներ անոնք: Արտաքին կեանք կայ և ներքին կեանք կայ: Կեանք մը շարժման, գործի և խօսքի, և կեանք մը խորհրդի, զգացման և նպատակի: Ոչխատանոց մը կ'երթանք և գործաւորներէն մին կը գիտենք ժամերով: Կը տեսնենք անոր գործիքներուն մէն մի ճարտար գործածումը և կը գիտենք անոր ձեռաց պտուղը մինչ կատարելութեան կը դիմէ: Սակայն նոյն բանը այնքան յաճախ շինած է որ ձեռքերը գրեթէ մեքենաբար կը գործեն և չենք կրնար տեսնել անոր խորհուրդները, անոր մտքին առջևէն անցնող պատկերները, անոր սիրտը լեցնող բաղձանքները: Հեղինակի մը ուսումնասենեակը կ'երթանք, ուսերուն վրայէն կը նայինք մինչ կը գրէ ան — հարկաւ միայն երևակայութեամբ պիտի ընէինք այսպիսի բան մը — և կ'ըսենք թէ անա վերջապէս կը տեսնենք մարդու մը ճշմարիտ կեանքը: Գիտենք ինչ որ կը խորհի և ինչ որ կը զգայ ան: Սակայն գիտենք իրօք: Կրնանք ըսել թէ ան կը գրէ ինչ որ իսկապէս կ'ընդունի ինք, կամ թէ ինչ որ

կը խորհի՝ հաճելի պիտի ըլլայ՝ անոր ընթերցողներուն : Կրնա՞նք ըսել թէ ո՞րչափ կը զգայ այն զգացումները զորոնք կ'արտայայտէ : Կրնա՞նք գիտնալ շարժառիթները որոնք գրելու կը մղեն զինք : Ուրիշներու շատ բան կրնանք յայտնել մեր ներքին կեանքին վրայ, եթէ ուզենք : Սակայն բուն կեանքը չեն կարող տեսնել : Դիցուք թէ մէկը գոհարատուփ մը ունի, որ բնաւ ուրիշներու քով բացուած չէ և ուրիշներ չունին բանալի մը որով բանան զայն : Մարդը անոնց շատ բան կ'ըսէ տուփին պարունակութեան վրայ և անոնք կրնան վստահիլ անոր ճշմարտախօսութեան, բայց պարունակութիւնը չեն տեսներ բնաւ : Մեզի կը թուի թէ մեր բարեկամներէն ոմանց նկատմամբ տուփը գրեթէ թափանցիկ է : Կը թուի թէ անոնց բուն սիրտը կը կարգանք իրենց գգուանքին, նայուածքին և խօսքերուն մէջ : այսու ամենայնիւ կեանքը պահուած է : Ոչ մէկ չափահաս անձ կարող է հասկնալ պզտիկ տղու մը միտքը : Չենք կարող բաւական որոշ կերպով յիշել բուն մեր մանկական մտածումները՝ և զգացումները, և մայր մը իսկ չկրնար լիովին ճանչնալ իր մանկիկը : Ի՞նչ գրաւիչ գիրք պիտի ըլլայ այն, եթէ մէկը կարենար իրականապէս դիտել մանկան մը հոգին և արձանագրել ճիշտ այն խորհուրդները և զգացումները զորոնք գտնէր հոն :

Ճշմարիտ է ուրեմն թէ մեր խորագոյն և կարևորագոյն կեանքը պահուած է : Եւ այս էրողութիւնը քանի մը կարևոր հետեւանքներ ունի :

Կը պաշտպանէ մեր բարոյական ազատութիւնը : Երիտասարդ մը անձնուրաց ծառայութեան կեանքի մը փափաք կը զգայ : Սղինս ասպարէզի մը պատեհութիւն կը տեսնէ, և բարի ամէն ինչ որ կայ իր մէջ՝ կը շարժէ զինք ընդգրկել այդ պատեհութիւնը : Սակայն կը տեսնէ գոհարութիւնները և յանձնառելի զոհողութիւններն ալ, և իր բնութեան միւս կողմը կայ որ զինք ետ կը մղէ և հակամէտ կ'ընէ մերժել այն գաղափարը : Բարեկամներ ունի, որոնք քիչ համակրութիւն ունին իր ազնիւ տենչին համար և, եթէ գիտնան իր խորհուրդները, պիտի աշխատին տարհամոզել զինք որ չառնէ վերոյիշեալ քայլը : Սակայն կարող է իր խորհուրդն իրեն պահել, կշռել խնդիրը, ամէն կողմով քննել զայն և իր որոշումը տալ : Եթէ վստահելի բարեկամ մը ունի, կրնայ խորհուրդ հարցնել անոր : Սակայն իրեն կ'իյնայ այդ բանը որոշել : Իր կեանքը, տաղնապի այս ժամուն իսկ, պահուած է, ի բաց առեալ որչափ բան որ ինք ընտրէ յայտնել : Եւ բարի որոշումներու ծննդեան և աճման համար վերին աստիճան կարևոր է որ կեանքը պահուած ըլլայ : Սերմը հողին տակ կը բող-

բոջի և քիչ մը աճելէն և ուժովնայէն ետքն է որ գեանէն վեր կը ցցուի, որով կրնանք տեսնել զայն: Նմանապէս բարի որոշումները մեր սրտին գաղանի հողին մէջ կը բուսնին: Ճշմարիտ է թէ չար նպատակներ ալ կրնան արմատ արձակել հոն: Սակայն, ինչ վտանգ ալ ըլլայ, մեր բարոյական ազատութիւնը, անկաշկանդ ընտրութեան կարողութիւնը, ազնուագոյն կարողութիւնը որով Աստուած օժտած է մեզ, պաշտպանուելու է:

Խորհեցէք այն հետեանքներուն վրայ որոնք պիտի պատահէին ոմանց, եթէ ներքին կեանքը պահուած չըլլար: Անգութ տէր մը կրնայ սանձել իր ծառային գործերը և խօսքերը, բայց չկրնար սանձել անոր ներքին կեանքը: Սակայն եթէ կարենար կարգալ անոր խորհուրդները և զգացումները և սաստիկ պատժի սպառնալիքով չթողուլ որ տածէ զանոնք, սարսափելի բան պիտի ըլլար այդ: Տարսոնացի Պողոս այրեր ու կիներ պատժեց և զանոնք բանտը դրաւ, և յետոյ իր կարգին ծեծ ու բանտարկութիւն կրեց: Հալածիչներ կրնային զմարդիկ արգելել Քրիստոսի հրապարակային երկրպագութեան մասնակցելէ և թերևս անոր անունը տայէ: Բայց չէին կրնար զանոնք արգելել անոր վրայ խորհելէ կամ զայն սիրելէ: Խորհուրդները և սէրը մասն էին պահուած կեանքին, որու վրայ չունէին տեղեկութիւն: Հիմա այդպիսի

հարածանք չկայ, կամ շատ քիչ է: Բայց եթէ կեանքը պահուած չըլլար, սրբան յաճախ իշխանութիւն, սպառնալիք, երգիծանք ու աղաչանք իբրև միջոց պիտի գործածուէին բարոյական ազատութիւն ջնջելու կամ անոր գործածման արգելք ըլլալու: Մարդիկ, եթէ գիտնային թէ ո՞ր կողմ կ'ընթանան մեր սէրերը, յաճախ պիտի ուզէին բանալիներն առնել և ուրիշ կողմ դարձնել անոնց բնութացքը, ինչպէս ելեկտրական հոսանքը թելէ մը ուրիշ մը կը դարձուի:

Մեր կեանքերուն պահուած ըլլալուն ուրիշ մէկ հետեանքը սա է որ ընտանեկան կեանքը և ընկերային կեանքը աւելի հանգրստաւէտ կ'ըլլան: Արդարև առանց ասոր դրեթէ անկարելի պիտի ըլլային անոնք: Ինչպէս երեկոյին, երբ ճրագ կը վառուի, վաթ կ'իջեցնենք վարագոյրները, որպէս զի հետաքրքիր աչքեր չկրնան դիտել մեր տուները, նոյնպէս Աստուած իր ողորմութեամբ վար իջեցուցած է վարագոյրները իւրաքանչիւրիս կեանքին վրայ: Գիտենք առ հասարակ թէ ամէն մարդիկ կը փորձուին: Սակայն եթէ գիտնայինք թէ ուրիշներ կը կարգան բոլոր մեր ներքին փորձութիւնները, թէ և դիմադրենք ու յաղթենք ալ անոնց, ժամանակներ պիտի ըլլային երբ հազիւ պիտի կրնայինք անոնց առջև վեր առնել մեր գլուխները: Մարդկային առնչութիւններու սերտագոյնե-

բուն մէջ երբեմն կը պակսի այն սէրը որ ընկերանալու էր անոնց, սակայն պարտականութիւնները կը կատարուին հաւատարմօրէն: Մայր մը չկրնար աւելի զօրաւոր սէր չտածել զաւակներէն մէկուն քան ուրիշի մը համար: Սակայն խղճմտօրէն, անկողմնակալութեամբ կը վարուի երկուքին հետ ալ: Եթէ նուազ սիրուած զաւակը կարենար կարգալանոր սիրտը, ինչ դառնութեան պատճառ պիտի ըլլար այդ: Եթէ բարեկամներ կարենային կարգալ բարեկամներու բոլոր խորհուրդները և զգացումները, գրեթէ անխուսափելի պիտի ըլլար իրարմէ պաղիլ: Փեղկերուն ալ պատառումը որոնց ետին ծածկուած են մեր կեանքերը՝ նոյնչափ աղետաբեր պիտի ըլլար ընկերային յարաբերութիւններուն, որչափ մեծ աւազանի մը թումբին պայթումը աղետաբեր կ'ըլլայ վարի հովտին մէջ գտնուող գիւղերուն կամ քաղաքներուն: Եւ այս այսպէս կ'ըլլայ, ոչ թէ վասն զի մարդիկ միշտ կեղծաւոր են, կամ իրենց սէրը անկեղծ չէ, այլ վասն զի մեր ներկայ կեանքին պայմաններուն մէջ լաւագոյն է որ կեանքը պահուած ըլլայ: Եւ որքան վեր ելլենք զարգացման և քաղաքակրթութեան ասնդուխտի վրայ, այնքան անհրաժեշտ կը դառնայ այս: Վայրենիներն ու անկիրթները մէկտեղ կը բնակին առանձնութեան քիչ պէտք զգալով:

Կեանքին պահուած ըլլալուն ուրիշ մէկ հետեւանքն է պատասխանատուութեան յաւելում: Մեր բարոյական ազատութիւնը կը պաշտպանուի, և ուրիշներ չեն կրնար մեր ներքին կեանքին մէջ մտնել: Երբեմն քաղաքին մէջ լայն ու բարձր տախտակորմներ կը տեսնենք, որոնց ետին նոր շէնք մը կը կառուցուի: Մենք մեր կեանքերը այդպիսի ծածկոցի ետեւ կը շինենք և առանձին կը շինենք: Ինչպէս ճարտարապետը նոր տան մը համար թելադրութիւններ կ'ընդունի ուրիշ շէնքերէ, նոյնպէս մենք ուրիշներու օրինակէն ու խրատէն կ'ազդուինք այն ձևին մէջ զոր մեր կեանքերուն կու տանք: Մէկ մասնատաղձին որով կը շինենք՝ անոնց գաղափարները և փորձառութիւնը կը հայթայթեն, մէկ մասն ալ բուն մեր ընտելաններէն կը հանենք: Ծնողներու կամ վստահելի ուսուցիչ կամ բարեկամի մը ազդեցութիւնը գրեթէ վճռական կրնայ ըլլալ մեր կեանքերը ձևակերպելու մասին, սակայն շինողները մենք ենք: Աստուածային օգնութիւն կրնանք ունենալ և արդարև առանց ասոր չենք յաջողիր: Բայց այդ օգնութիւնը կը կայանայ մեզի զօրութիւն և առաջնորդութիւն ընծայելու մէջ: Ներշնչեալ պատուէրն է «Չերանձերուն փրկութիւնը գործեցէք»: Մենք կը շինենք մեր կեանքերը: Պատասխանատուութիւնը մերն է, և չկայ ուրիշ մէկը ու

րու վրայ կարենանք նետել զայն: Ի՞նչ տեսակ կեանք կը շինենք արդեօք: Մաքո՞ւր կեանք է: Լ՞ուրջ կեանք է: Աճեցո՞ւն կեանք է: Անշահախնդի՞ր կեանք է: Այնպիսի՞ կեանք մը, որու մէն մի յարկը և մէն մի սենեակը աստուածսիրութեամբ ու ընկերսիրութեամբ կ'արտափայլի: Գիտէ՞ք թէ նկարիչը երբեմն իր անունը կը գրէ իր գծած նկարին մէկ անկիւնը: Շէնքեր ալ տեսած ենք ճարտարապետին անունը կրող: Մեր անունները նմանապէս պիտի ըլլան մեր կեանքերուն վրայ, վասն զի մենք ենք շինողները: Եթէ վար առնուին ծածկոցները, որոնց ետին պահուած են անոնք, մեզի պիտի գայ ամօթը կամ փառքը որու արժանի են անոնք, քանզի համայն աշխարհ պիտի գիտնայ թէ մեզի կը պատկանէր զանոնք շինելու պատասխանատուութիւնը:

Կարևոր խնդիր է թէ ո՛ւր պահուած են մեր կեանքերը, այսինքն թէ ի՞նչ խորհուրդներու և տենչերու հետ կ'անցնի մեր պահուած կեանքը: Պօղոս առաքեալ Կօղոսացիներուն կը գրէ թէ իրենց կեանքը «պահուած է Աստուծոյ քով՝ Քրիստոսի հետ»: Խորհրդաւոր խօսք է այս, որու նշանակութիւնը ինքնայայտ չէ և սակայն կը հաղորդէ խորին ճշմարտութիւն մը և կը նշանակէ զլիսաւորապէս երկու բան: Մին է թէ պահուած կեանքը Քրիստոսի ընկերակցութեան մէջ

կ'անցնի: Ինձի ծանօթ է բարի կին մը, որու ամուսինը Ատլանտեան ովկիանոսի շոգենաու մը նաւապետն է: Երեք շաբաթն անգամ մը միայն տուն կը գտնուի, և կարճ միջոցի մը համար միայն: Քայց անոր բացակայութեան միջոցին կնոջ պահուած կեանքը, իր խորհուրդներու և զգացումներու կեանքը աւելի անոր հետ կ'անցնի քան՝ ունէ մէկուն հետ այն անձերէն զորոնք կը տեսնէ ամէն օր ի բաց առեալ այն երկու պզտիկները՝ որոնց վրայ իրենց հօրը պատկերը կը տեսնէ: Եւ միթէ շատերուս համար ալ ճշմարիտ չէ՞ թէ բացակայ սիրելիներ ունինք, որոնք մեր խորհուրդներուն և սիրոյն մեծ մասին առարկայ են: Ահա Քրիստոս է այսպիսի բարեկամ մը՝ Քրիստոնէին համար: Զինք չենք տեսներ, բնաւ չտեսանք, բայց մեր խորհուրդները և մեր սէրը անոր կը նուիրուին: Աւելին կայ, կ'զգանք թէ մօտ է ան և թէ իր ընկերակցութիւնը այնքան իրական է որքան տեսանելի բարեկամներու ընկերակցութիւնը: Կարելի՞ է այս: Այո, և պէտք է որ ամէն ճշմարիտ ազօթող չափով մը զգայ զայս: Քանզի աղօթքը նշանակութիւն չունի, եթէ ոչ որ ներկայ է մեր աղաչանքները ըսելու համար: Եւ կան մարդիկ, որոնց համար Քրիստոսի ընկերակցութիւնը յոյժ իրական է և ամէնօրեայ հրճուանք: Անոնք կրնան ըսել, «Ո՞վ ունիմ ես երկինքին մէջ. երկրի վրայ ալ

քեզմէ ուրիշը չեմ ուզեր:” Անոնց համար առնապատին մէջ փակուած մնալ և լոկ ֆրիստոսի անտեսանելի ընկերակցութիւնը վայելել նուազ դժբախտութիւն է քան բոլոր իրենց երկրաւոր սիրելիներէն շրջապատուիլ և սակայն ֆրիստոսի հետ հաղորդութենէ զուրկ մնալ: Հոգիի այս վիճակը հոգևոր տեսողութեան յաղթանակն է: Եւ ^{հոգևոր} ^{ֆրիստոսի} է, տեսողութիւն հոգիի և ոչ թէ անձնախարութիւն: Այսպիսի մարդիկ “երևցած բաներուն չեն նայիր,” այսինքն չեն նայիր գլխաւորապէս, “հապա չերեցածներուն:” Չերեցածները բաներ, իրողութիւններ են երևցածներուն չափ և շատ աւելի կարևոր: Անոնք “որպէս թէ Անտեսանելին կը տեսնեն:” Անտեսանելի էակ մը կայ աւելի փառաւոր ու աւելի մօտ մեզի քան բոլոր մարդիկը զորոնք կը տեսնենք մենք: Վերջերս կարգացինք լուղակի նոր սարուածի մը վրայ, զոր կրողը կրնայ առաջուրնէ աւելի խորերը իջնել և աւելի հանգիստ ուսումնասիրել ծովու յատակի բաները: Աւելի զօրաւոր հեռադիտակներ կը շինուին, որոնք աւելի բան կը յայտնեն մեզի տիեզերքի սքանչելիքներուն վրայ: Բայց ասոնցմէ աւելի աղէկ է և աւելի գործնական յարգ ունի հոգևոր աւելի զօրաւոր տեսողութիւնը, որով մեր կեանքերը կը պահենք Աստուծոյ քով ֆրիստոսի հետ:

Պօղոսի խօսքերուն միւս նշանակութիւնը


սա է թէ մենք ֆրիստոսի օգնութեամբ կ'ապրինք: Հեռուէն զօրութիւն բերելու դաղափարին հետզհետէ կ'ընտանենանք: Թեւեր կ'առնեն Նիակարայի զօրութիւնը և կը տանին հեռաւոր քաղաքներու գործարանները: Մենք Աստուծոյ աթոռէն զօրութիւն կը բերենք որպէս զի մեր պահուած կեանքերը գեղեցիկ բաներու փոխարկենք: Եւ գժուարութիւնը հեռաւորութեան մէջ չկայանար, վասն զի ֆրիստոսի հոգևոր ներկայութիւնը հեռաւոր բան մը չէ, այլ հաւատքի և իղծի չգոյութեան մէջ: Երբ Եղեկիա թագաւորը ուզեց Գեհոնի ազրիւրներուն շուրջ Երուսաղէմ բերել, հեռաւորութիւնը քիչ էր, մի միայն 300 եարտա: Բայց մէջտեղը կար ապառաժ մը, որու մէջէն ճամբայ բանալ հարկ էր: Նմանապէս մենք ճամբայ բանալու ենք աշխարհասիրութեան և անհաւատութեան ապառաժներուն մէջէն, որպէս զի ֆրիստոսի զօրութիւնը բերենք մեր պահուած կեանքերուն մէջ: Եթէ զայս ընենք, զօրութիւնն անշուշտ պիտի գայ:

Ո՛ւր պահուած է մեր կեանքը: Կ'ըսուի թէ մարդն իր ընկերակիցներէն կը ճանչցուի և շատ ճշմարտութիւն կայ այս առածին մէջ: Ա՛լ աւելի պիտի ճանչնայինք զայն, եթէ գիտնայինք թէ ո՛ւր կ'անցնի անոր պահուած կեանքը:

Եւ միտք պահենք թէ մեր կեանքերը միշտ

պահուած պիտի չըլլան : Չկայ ծածուկ բան մը որ չյայտնուի : Ամէն սրտերու գաղտնիքները պիտի յայտնուին : Վարագոյրները և տակտակորմները վար պիտի առնուին մեր կեանքերէն : Ամէն սենեակ բայ պիտի թողուի, և բոլոր աշխարհ ազատ պիտի ըլլայ դիտելու : Այնպէս շինեմք որ պատրաստ ըլլանք այս գննութեան :

Եւ կայ Մէկը, որմէ հիմա իսկ ծածուկ չեն անոնք : Երանի՛ թէ միշտ կարենայինք միտք բերել սա խորհուրդը, «Ո՛վ Աստուած, դուն կը տեսնես զիս :» Եթէ մեր կեանքերը ծուռ են, աւելի աղէկ է որ բոլոր աշխարհ տեսնէ զանոնք, բայց Անոր աչքերէն ծածուկ մնան : Սակայն կարելի չէ այս : Եթէ ուղիղ են, հոգ չէ՛ եթէ ուրիշներէ ծածուկ մնան, վասն զի Ան կը տեսնէ և «Քու Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս հատուցում պիտի ընէ :»



ՏՈԳ. Պ. Տ. ՈՒԷՍԹՔՕԹ

ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐԶԱՍԻ

ՄԻԻԹԱՐԻՉԸ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

«Ձեզի տակաւին շատ բաներ ունիմ ըսելու, բայց հիմա չէք կրնար տանիլ, իսկ երբ ինք ճշմարտութեան Հոգին գայ, ամէն ճշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզի, վասն զի ոչ թէ ինքիմէ պիտի խօսի, հապա ինչ որ լսէ՝ զայն պիտի խօսի ու զախրքները ձեզի պիտի պատմէ : Անիկա զիս պիտի փառաւորէ, վասն զի իմինէս պիտի առնէ ու ձեզի պատմէ : Այն ամէն բաները զորոնք Հայրը ունի՛ իմա են . անոր համար ձեզի ըսի թէ իմինէս պիտի առնէ ու ձեզի պատմէ :» Յովհ. Ժ. Գ. 12—15 :

Տէրը նկարագրած է Սուրբ Հոգիին, Միսիթարիչին, աշխարհի վերաբերութիւն ունեցող պաշտօնը . թէ ինչպէս ան աշակերտներուն փաստը պիտի պաշտպանէ դառն հակառակութեան դէմ, թէ ինչպէս անոնց սորվեցուցածները պիտի ջատագովէ կրօնական

դաղափարի առաջնորդներուն դատապարտութեան դէմ, թէ ինչպէս պիտի դատապարտէ այն մարդիկը որոնք սխալ ըմբռնումներ ունին մեղքի և արդարութեան և դատաստանի նկատմամբ, թէ ինչպէս պիտի ներկայացնէ ֆրիստոսի անձը և ֆրիստոսի գործը հոգեկան կեանքի հիմը և արդիւնքը դատելու իբր միակ և բաւական չափը: Հիմա կը շարունակէ խօսիլ Անոր պաշտօնին երկրորդ մասին վրայ: Մաս մը ունի կատարելութեղեցիին նկատմամբ՝ ինչպէս նաև աշխարհին նկատմամբ: Ոչ թէ միայն մոլորութիւնները մէկդի պիտի ընէ, այլ ճշմարտութիւնը պիտի կանգնէ: Առաջ պիտի տանի և կատարէ ինչ որ ֆրիստոս սկսած է: Պիտի յայտնէ ինչ որ ֆրիստոս է, թէ՛ անցեալին և թէ՛ ապագային մէջ: Մարդիկը պիտի առաջնորդէ կատարելապէս տիրանալու այն բանին որ արդէն իրենցն է: Պիտի ճանչցնէ Որդին իր ամբողջ մեծափառութիւնովը: Հաւատացեալներուն պիտի տայ գործելու կենդանութիւն, Աստուծոյ վրայով այն գիտութիւնը որ իրենց համար հնարաւոր է:

Ասոնք են գլխաւոր խորհուրդները զորս պիտի քննենք այս քարոզին մէջ: Ֆրիստոսի երկրաւոր գործին հանգամանքները անկաբելի ըրին իրեն մանրամասնօրէն հաղորդելու այն պատգամը զոր բերաւ և որ ինք Ան էր, նախատեսելու Աւետարանի ծանր յառաջդի-

մութեան հետեանքները. ինքզինք ներկայացնելու իր Աստուածութեան լեցունութիւնովը՝ որպէս զի մարդիկ զինք ընդունէին: Ինչ որ ինք չէր կրնար ընել Հոգիին գործն էր կատարել:

“Չեղի տակաւին,” կ'ըսէ ֆրիստոս, “չատբաներ ունիմ բսելու, բայց հիմա չէք կրնար տանիլ” (Յովհ. ԺԶ. 12): Հիմա աշակերտները չունէին այն լոյսը որ ծագեցաւ Յարութենէն և փայլեցաւ Պենտեկոստէի կատարեալ օրուան մէջ: Չէին կրնար հասկնալ, չէին կրնար ողջունել վարդապետութիւնը ընդհանրական եկեղեցիի մը՝ ազատ Մովսիսական օրէնքին և տեղական երկրպագութեան սեղմումներէն: Արդարև ան բովանդակուած էր իրենց ընդունածին մէջ, բայց այնպէս՝ ինչպէս ծառը կը պարունակուի սերմին մէջ: Ֆրիստոս ինչպէս առաջ ըսած էր (հմր. 15), ամէն բան անոնց ճանչցուցած էր, սակայն աստիճանական բացատրութեան պէտք կար այդ ընդհանուր հրահանգութիւնը կեանքի յարմարցնելու: Անոր համար իւրաքանչիւր ապագայ դաս արդէն պարզ էր. բայց անոնք զորս կըթած էր՝ դեռ անյարմար էին կրելու աւելի ընդարձակ գիտութեան բեռը: Աշխարհի սահմանած չարչարանքներուն վրայ խօսած էր: Սակայն այս չէր ամէնը: Ներքին փորձութիւններ կան, անկումներ, անհետացումներ, որոնց աւելի դժուար է տո-

կալ քան թէ արտաքին հալածանքի։ Առաքեալները ասոնց ալ յաղթելու էին։ Քիչ մը ատեն, ինչպէս կրնանք տեսնել Նոր կտակաւորանի պատմութեան մէջ, անկատարութիւն, տարտամութիւն, տագնապ տիրեց։ «Իսկ» կը շարունակէ Տէրը, «երբ ինք ճշմարտութեան Հոգին գայ, ամէն ճշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզի,» (Յովհ. Ժ. 9. 13)։ ոչ թէ տարտամ «ճշմարտութեան» մը, այլ «ամէն ճշմարտութեան»։ Ան որ կը բացատրէ ճշմարտութիւնը պիտի առաջնորդէ ձեզի կատարելապէս հասկնալու և համակրելու այն բացարձակ ճշմարտութեան որ ես եմ։ Ան պիտի առաջնորդէ ձեզի ճշմարտութեան—բառերուն բուն ձևը այսպէս կը թելադրէ— իր բոլոր մասերով, իր բոլոր զանազանութիւնով և տեսակներով։ Եւ զայս պիտի ընէ ինձի հետ ունեցած կատարեալ հաղորդակցութեան միջոցաւ. «վասն զի ոչ թէ ինքիրմէ պիտի խօսի, հապա ինչ որ լսէ՝ զայն պիտի խօսի,» (Յովհ. Ժ. 9. 13)։ Եւ տեսնելով մօտեզող մեծ փոփոխութիւնները, պիտի կարողացնէ ձեզ կատարելու այն գործը զոր ձեզի կը յանձնեմ։ «Գալիքները ձեզի պիտի պատմէ» (Հմբ. 13)։ Ոչ թէ սոսկ այս կամ այն դէպքը, այլ «գալիքները» ամբողջ ապագայ կարգադրութիւնները, որոնք մինչև իսկ հիմա արդէն պատրաստուած են և կատարման ընթացքին մէջ են, ձևը և եղա-

նակը նոր ընկերութեան որ Իսրայէլի տեղը պիտի գրաւէ իբր Աստուածային ներկայութեան մարմնացումը։

«Ամէն ճշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզի» (Յովհ. Ժ. 9. 13)։ Երկու բաներ մեր ուշադրութիւնը կը գրաւեն երբ այս խօսքերուն վրայ կը խորհինք։ Սուրբ Հոգին կ'առաջնորդէ մէկէն ճշմարտութիւնը փարձեալ, ճշմարտութիւնը ամբողջ մըն է և ոչ թէ հասակոտոր իրողութիւններու տարտամ հաւաքածոյ մը։ Յաճախ կը փորձուինք մոռնալ երկու կէտերն ալ։ Կը փորձուինք խորհիլ թէ ճշմարտութիւնը միայն ընդունելու բան մըն է, և ոչ թէ փնտռելու և հետամտելու բան մը։ Կը փորձուինք խորհիլ թէ հակառակութիւն, անհամաձայնութիւն, վէճ կրնան գտնուիլ ճշմարտութեան տարբեր շրջանակներու միջև։

Սակայն մինչև իսկ երկնային բաներու մէջ մարդը անգործ չէ, Հոգին կ'առաջնորդէ, բայց մարդ պէտք է հետևի, յոգնելով, աշխատելով, հաւանաբար խորտուբորտ ճամբաներէ։ Լուսաւորուելու, ուղղուելու, զօրանալու խոստում ունի. սակայն պէտք է ըյսը գործածէ, պէտք է ստանայ, պէտք է անդադար ջանայ։ Եթէ հանդարտ կենայ, առաջնորդութիւնը անօգուտ է։ Նոր վայրերու պէտք է մօտենալ և յաղթահարել։ Հոգին ասոնց առաջ ցուցուցած էր ճամբան և

տակաւին կը ցուցնէ: Ճամբան ֆրիստոս է և վախճանը ֆրիստոս: Անոր միջոցաւ, եթէ այսպէս կրնամ ըսել, Անոր կ'երթանք: Այս խորհուրդը կը կարողացընէ մեզ հասկնալու թէ ինչպէս ճշմարտութիւնը մէկ է, թէ ինչպէս բոլոր ճշմարտութիւնը այն նպատակն է որուն Հոգին կ'առաջնորդէ հաւատացեալները: Չյայտներ այնպիսի բան մը որ մարդուն կարողութիւններուն սահմանին մէջ է, այլ նոր նշանակութիւն և նոր զօրութիւն կու տայ բոլոր այն բաներուն զորս դարէ դար մենք մեզի կրնանք սորվիլ: Կը մատակարարէ զայն որով մեր ջանքին ցիրուցան արդիւնքները մէկ կ'ըլլան: Ճիշտ ինչպէս մարդ որոշ միութիւն մը կու տայ իր դիտած այլեայլ առարկաներուն, և աստիճանաբար անցուն պայծառութեամբ կը տեսնէ օրէնքները որոնք զանոնք կը միացնեն, այսպէս Հոգիին հրահանգութիւնովը իրեն և իր պզտիկ գրութիւններուն համար կը գտնէ վերջնական միութիւն մը: Անոր մէջ որ կատարեալ Աստուած և կատարեալ մարդ է. մինչ Հոգին կը ցուցնէ իւրաքանչիւր նոր ստացուած անցաւոր դիտութեան յարաբերութիւնը յաւիտենականին հետ:

Բոլոր ճշմարտութեան առաջնորդելու խոստումը անտարակոյս մասնաւորաբար առաջին աշակերտներուն ուղղուած էր, և խոստումին կատարումը իրենց կատարած գործին մէջ տեսան: Աստուծոյ արքայութեան ընդարձակ

ծրագիրները պատրաստեցին, ընդունեցին և արձանագրեցին յաջորդական յայտնութիւնները և հետեւեցան անոնց որոնցմով անոր սահմանները տարածուեցան մարդկութեան ծայրագոյն եզրերը. տեսան մարդոց մէջ հաստատուած նոր ներկայութիւն մը Երուսաղէմի մէջ պահուած և յարգուածէն աւելի փառաւոր և աւելի տեւական: Այս բոլոր նկատումներով խօսքերը յարմարութիւն ունին անոնց և անոնց գործին, անոնց և անոնց դրածներուն, անոնց գործին նախախնամական վկայութեան, որ բոլորովին եղական է: Անոնք մեզի կը ցուցնեն թէ միայն Աստուածաշունչին պէտք է նայինք մեր հաւատքին էական սկզբունքներուն համար: Սակայն տակաւին նաև կը յարմարին ամէն դարու: Նշանակուած արքայութիւնը տակաւին կատարելապէս գրաւուած չէ. անոր սահմանին մէջ գտնուող վայրերուն ամէնը երկնային Տէրոջը հարկատու եղած չեն. ֆրիստոնէական ընկերակցութիւնը դեռ բաժնուած և կազմաւորուած է:

Ուրեմն մեզի համար պատգամ մը կայ խոստումին մէջ որ այս իմաստով ցարդ միայն մասամբ կատարուած է: Եւ պէտք է Սուրբ Գիրքերուն դառնանք զայն լսելու: Նորէն և նորէն կեդրոնացեալ տեսողութեամբ պէտք է նայինք առաքելական կեանքի և զաղախարի արձանագրութիւններուն, որպէս

զի զգանք ընդհանրականութիւնը այն ճշմարտութեան զոր կը ջանանք մեր ուզածին պէս ամփոփել. որպէս զի զգանք թէ երկնային ձայները ինչպէս շատ տարբեր եկան քան ինչ որ լսողները կ'ականկալէին. որպէս զի զգանք թէ ի'նչ փորձութիւններու, անուցուած յոյսերու ի'նչ քանդումներու, ի'նչ դատաստաններու միջոցաւ հիմնուած է այն Եկեղեցին որուն մէջ կ'ապրինք : Այս է Քրիստոնեաներու պարտականութիւնը ամէն ատեն, և մեր պարտականութիւնը : Մեզի համար հարկ չէ ցուցնել ուէ՛ ճամբայ որուն մէջ հիմա քալելու կանչուած ենք, երկինքէն ուէ՛ ձայն մը զատել որ հիմա մեր ականջներուն կը հնչէ, ցուցնել ուէ՛ հանգամանք աւելի ազնիւ Քրիստոնէութեան մը որ հիմա յայտնենք : Չեմ կարծեր թէ դժուար պիտի ըլլար այդպէս ընել : Սակայն ինչ որ կը պահանջուի այն է թէ ճանչնանք Սուրբ Հոգին, գործով և ոչ թէ դաւանանքով, իբր Մէկը որ դեռ ստուգիւ կ'առաջնորդէ, կը խօսի, ինքզինք կը յայտնէ : Եթէ հաւատանք թէ Անիկա հոգիներու հետ կը հաղորդակցի և խօսքերու մէջ սահմանափակուած չէ, իր կամքը աւելի զգալի պիտի ըլլայ : Աւետարանը Քրիստոս է, և կատարեալ է Անոր մէջ, սակայն Աւետարանին նոր փորձառութիւններու պատշաճեցումը առաջ կ'երթայ մինչև ժամանակին վախճանը :

Հոգիին գործը, ինչպէս առաջ տեսանք, Քրիստոսի յայտնութիւնն է. Քրիստոսի ոչ թէ միայն “եկած,” բայց նաև “գալիք :” Եւ հոս է ճշմարտութեան փորձը : “Անիկա զիս պիտի փառաւորէ,” կ'ըսէ Քրիստոս, “վասն զի իմինէս պիտի առնէ ու ձեզի պատմէ” (Յովհ. Ժ. 9. 14) : Քրիստոսը աւելի լաւ ճանչցրնել Անոր փառքը ծաւալել է : Եւ մինչ մեզ տիրեցնելու խիստ շատ բան կայ երբեք որ կը նայինք Քրիստոնէական դարերուն, սակայն, կարծեմ, կրնանք խոստովանիլ թէ Եկեղեցին շարժող այլևայլ ցնցումներուն միջոցաւ, Քրիստոս միշտ աւելի լիովին յայտնուած է դարէ դար : Մէյմը մէկ ուղղութեան մէջ և մէյմը ուրիշի մէջ, լոյս սփռուած է Անոր Անձին վրայ : Նախ Անոր ճշմարիտ Աստուածութեան գաղափարը կազմուած էր, և յետոյ Անոր կատարեալ մարդկութեան գաղափարը : Վերջը դառն տաղնապի և չարչարանքի ժամանակ մարդկային բնութեան աւելի քաղցր հանգամանքները նուիրագործութեան, և վերջապէս միացան Փրկչի մը պատկերին մէջ : Փորձութեան խրաքանչիւր վայրկեանին Հոգին Քրիստոսինէն առաւ և զայն մարդոց յայտարարեց : Նոր հրահանգութիւնը անփստահութեան և ընդդիմութեան պատահեցաւ, և յետոյ աշխարհի կեանքին մէջ մտաւ :

Այս իմաստով անցեալը կրկնութիւն է :

Մինչև իսկ մեր մէջ, ինչպէս կը կարծեմ, Հոգին Քրիստոսինէն կ'առնէ բաժնուած Եկեղեցիին յայտարարելու զայն: Կրնայ ըլլալ թէ մինչև հիմա Անոր գործունէութիւնը խիստ անձուկ կերպով սահմանաւորած ենք մեր խորհերու կերպերովը, կրնայ ըլլալ թէ յարմար ժամանակը եկած է երբ մեզի թոյլտուութիւն պիտի ըլլայ տեսնել Անոր փառքին նոր յայտնութիւնները: Գոնէ, կ'երևի թէ կ'առաջնորդուինք հասկնալու թէ Քրիստոսի մարդկութիւնը կը բովանդակէ բոլոր այն բաները որոնք կը վերաբերին ամէն անհատի կատարելութեան թէ, մեր տարրերութիւնները այնքան մեծ խոչընդոտներ չեն միութեան իբր պայման անոր աւելի վերջի կատարելութեան, և թէ Ան կը սպասէ օրհնել և ընդունիլ ոչ միայն այս ծառայութիւնը կամ այդ, այլ ամէնուն նպաստել կու տայ, մինչև իսկ մեր աչքերուն առջև, յարմար չափով իր խորհուրդին կատարման:

Թերևս հիմա քիչ յառաջդիմած ենք այս ճշմարտութիւնը իրապէս ճանչնալու մասին, սակայն այս ճշմարտութիւնը կատարելապէս հասկնալ մեր կեանքերուն անդորրութեան և խաղաղութեան համար անհրաժեշտ է: Վասն զի մեր դարուն մէջ կեանքերը հետզհետէ բոլորովին ձգտեալ աղեղի պէս են. որովհետև այլևայլ նպատակներ կատարել ջանալու ստիպուած ենք, այս հոգեկան

անդորր և խաղաղ վիճակը վնասուելու են: Թակայ է: Եւ եթէ յաճախ դժուար է ինչ որ մեզմէ է, և ուստի վաղանցիկ, զանազանել անկէ որ Աստուծմէ է, Քրիստոսի վրայ լռիկ խոկում, Անոր Անձին, և գործերուն և խօսքերուն վրայ, պիտի հայթայթէ այն փորձը որուն կը կարօտինք: Չկայ բան մը որ կարենայ Անոր ներկայութեան լոյսը ընծայել զոր չպահանջեր Ան: Ոչ մէկ բան որ Անորը չէ կրնայ մնալ:

Մեզի համար Ան աստուածայինին չափն է, և Հոգին Անոր թարգմանն է: “Այն ամէն բաները զորոնք հայրը ունի՝ իմն են, անոր համար ձեզի ըսի թէ իմինէս պիտի առնէ ու ձեզի պատմէ” (Յովհ. Ժ. 2. 15): Անկարելի է մեզի համար այսպիսի խօսքերու խորութիւնը չափել. անկարելի է մեզի համար հասկնալ բաւական թէ ի՞նչ է մէկ ճշմարիտ մարդու մը համար տիրանալ բոլոր Աստուծոյ վերաբերեալ բաներուն: Եւ սակայն խօսքերը կը ծառայեն մեր հաւատքին ամէնէն խորին վարդապետութիւնը կեանքի հետ իրական յարաբերութեան բերելու: Կը ցուցնեն թէ ի՞նչպէս Սուրբ Երրորդութեան վարդապետութիւնը կարելի կ'ընէ Աստուծոյ մասին իրական տեղեկութիւն, Աստուծոյ հետ իրական հաղորդակցութիւն ունենալ: Որդին իր մարդկային կեանքովը Հօրը վրա-

յով կատարեալ յայտնութիւն տուաւ մարդոց: Հոգին գարերու ընթացքին մէջ այդ յայտնութիւնը շատ մասերով ընկերութեան և հաւատացեալին կը բերէ: Որդին Աստուծոյ պատկերն է, տեսանելի պատկեր մը, եթէ կարելի է այսպէս ըսել, մարդեղութիւնովը. և Հոգին կը կարողացնէ ֆրիստոնեան այդ պատկերը իր հոգիին մէջ առնելու իբր փոխող զօրութիւն մը: Որդին Հօրը փառքը յայտնեց, Հոգին Որդւոյն փառքը կը յայտնէ. և «Մենք ամէնա բաց երեսով Տէրոջը փառքը որպէս թէ հայելիի մէջ տեսնելով, նոյն պատկերին կը նորոգուինք փառաց ի փառս:» Բ կոր. Գ. 18:

Խիտտ և գիտական լեզուն պարզ կ'ըլլայ երբ այս կերպով նկատենք հոգեկան կեանքի ընթացքը: Մեր հաւատքը Աստուծոյ, Հօրը, Որդւոյն, և Սուրբ Հոգիին վրայ կը կազմէ օսկեղէն սանդուղը երկրէն դէպ երկինք. այսպէս կը հասկնանք թէ երկուքին միջև հաղորդակցութիւն կրնայ պահուիլ. այսպէս կը հասկնանք թէ մարդ ճշմարիտ գաղափար մը կրնայ ստանալ Աստուծոյ բնութեան և կամքին նկատմամբ. այսպէս կը հասկնանք թէ ինչպէս Հայրը իրեն կը քաջէ բոլոր անոնք որոնք կ'ընդունին իր պատկերին դրոշմը:

Եղբայրներս, այսպիսի խորհուրդներ կը խոնարհեցնեն մեզ մեր տկարութեան զգա-

ցումովը, մինչ կը ցուցնեն մեզի թէ ինչ բաներու կրնանք հասնիլ: Կը խոնարհեցնեն մեզ որպէս զի աւելի զօրանանք մեր անձերը մոռնալով: Եւ եթէ ասոնք առաջին տեսութեամբ սովորական պարտականութիւններու ճամբէն հեռու կ'երևին. կարծեմ թէ այնպիսի հարցումներու կը պատահին զորս ամէնս ալ կը լսենք, և զորս չենք կրնար լուեցնել ուէ անդու դործունէութեամբ: Միայն այն ատեն երբ վստահ ենք թէ աստուածային ծրագիր մը կը կատարուի մեր վրայով, թէ այդ ծրագիրը կամաց կամաց աշխարհի առջև կը պարզուի, որ մենք կը կանչուինք մեր դերը կատարելու զայն առաջ տանելու մէջ. միայն այն ատենն է երբ մեր սրտերուն մէջ վստահութիւն ունինք թէ կրնանք նայիլ տգիտութեան և ցաւի և մեղքի սոսկալի տեսարաններուն վրայ որոնք կը ազեղցնեն աշխարհը, և սակայն կրնանք մեր կեանքերը իբր խեղճ նուէր մը մեր սիրելի Հօր նուիրել:

Եւ ասոնք են դասերը Գրիստոսի խօսքերուն զորս հիմա լսեցինք: Անգամ մը ևս կ'ըսեն անոնք մեզի թէ հիմա Հոգիին գործը կատարուած է, և հոս, և մեզի համար. թէ

Ան մեզ կ'առաջնորդէ ամէն ճշմարտութեան. Ան կը փառաւորէ զՔրիստոս.

Ան մեզի կը յայտարարէ նոր խորհուրդներ Որդւոյ Մարդոյ անհուն գանձէն:

Ուստի հետևինք Սնոր երբ կ'առաջնորդէ մեզի. ցոլացնենք այն լոյսը որ կը սփռէ մեր ճամբուն վրայ. ընենք մեր հաւատքը, ինչպէս կը թելագրէ մեզ, մեր ամբողջ էութեան շարժիչ ոյժը :



ՎԵՐ. Գ. ՄԱՐՏԻՐՈՍ ՇՄԱԻՈՆԵԱՆ



Խարբերո՞ւ Ս.ե.Գ. Հայոց Երեցներուն և Բարոյններուն Խօսուածք

«Տէրովը գործը նենգութեամբ կատարողը անիծեալ ըլլայ.» Երեմ. ԽԸ. 10:

Իմ պաշտօնակիցներս և մեղսակիցներս, ինծի հարկ չերեար որ առ այժմ՝ երկայն քննութիւններ ընենք աս պատգամին ի՛նչ պարագայի տակ խօսուելուն վրայ, հերիք կը սեպեմ որ գիտնանք թէ՛ Աստուած իր օրէնքներովը և մարգարէներու ձեռքով յայտնած իր մասնաւոր պատգամներովը, և կամ նախախնամական տնօրէնութեամբ, ազգեր կամ անհատներ իւր անայլայլելի կամքին գործադրութեան պաշտօնեայ կը կարգէ և այն պաշտօնեաները որոնք որ Աստուծմէ իրենց յանձնեալ գործը իր պահանջմանը պէս չեն կատարեր, սոսկալի անէծքի տակ կը ձգէ նմանապէս Բանն Աստուած Աւետարանի պաշտօնեաներուն յանձնած գործ մը ունի և մեր

բնարանին սպառնալիքը անոնց համար ալ
ահաւելի և միանգամայն օգտակար խօսք մըն
է. և ասկէ օգուտ քաղելու համար՝ պիտի
լանամ հետեւեալ երեք հարցումներուն պա-
տասխանելու :

Ա. Տերմը բորձը, ի՞նչ է :

Բ. Նենգո-Ռեմբէ կարողը, ո՞վ է :

Գ. Անկոնալու, ի՞նչ ըսել է :

Տերմը բորձը, ի՞նչ է :

Տէր Եհովան աս աշխարհիս վրայ Գործ —
մեծ ու երևելի գործ ունի :

Ինքք մեղաւորին մեռնիլը չուզեր, կ'ուզէ
որ ամէնքը դարձի դան ու ապաշխարեն.
կ'ուզէ որ իր Միածին Որդւոյն հաւատան, և
անով մեղքէն ու մեղքին հետեւութենէն ա-
զատելով՝ երկինքին փառքն ու ուրախու-
թիւնները վայելեն : Կ'ուզէ որ իր Հօգին ու-
նենան, որ անով ամէն կերպ չարութենէ
փախչին, ու երկիրս երկինքին նմանի : Բայց
խեղճ մարդկութիւնը ազիտութեամբ կը մեր-
ժէ աս փառաւոր հրաւերը, մտիկ չընէր աս
քաղցր ձայնին. մէկդի կ'ընէ իրեն երկնցած
աս բարի ու ողորմած բաղուկը. և իր սրտին
խարէութեանը մտիկ ընելով, իր կամակորու-
թեամբը, մեղքին մէջ յարատեւելով՝ յաւի-

տենական կորստեան կ'երթայ : Մեր բարե-
րար Հայրը երկայնամիտ կ'ըլլայ, թէպէտ իր
սրբազան ձայնին մտիկ չեն ըներ, այսու ա-
մենայնիւ կը շարունակէ իր ողորմութիւննե-
րը : Նահապետ նահապետի ետեւէ, պատ-
գամաբեր պատգամաբերի ետեւէ, մարգարէ
մարգարէի ետեւէ կը զրկէ՝ մտիկ չեն ըներ
անոնց : Իր Միածին Որդին ծառայի կերպա-
րանք կ'առնէ, խիստ հեղութեամբ և խոնար-
հութեամբ կը մօտենայ անոնց ու կը խօսի,
խօսքով ու գործքով կը խրատէ. անոնց բարի
օրինակ կ'ըլլայ, դառն և անարգ մահուամբ
կը մեռնի, երկնից դուռը կը բանայ, իր ծա-
ռաները ամէն կողմ կը զրկէ որ խեղճ մե-
ղաւորները հրաւիրեն. շատերը աս ալ կը
մերժեն : Մարդուն ազատակամութեանը չի
դպչիր, և միանգամայն անոր կորուստը չու-
զեր. աշխարհիս սկիզբէն մինչև այսօր ասանկ
կ'ընէ : Ոմանք իրեն խօսքին մտիկ կ'ընեն ու
կը հնազանդին. շատերը կը մերժեն զինքը :
Ինքն իր երկայնամտութեամբը մինչև այսօր
մարդոց փրկութիւնը կը փնտռէ. բայց մար-
դիկ տգիտութեամբ կը մերժեն : Ստանան
սկիզբէն անոր աս բարերար կամացը դէմ կը
դնէ. կը ջանայ որ մեղքը և աշխարհը սիրելի
ցուցնէ մարդոց. իր բոլոր զօրութեամբը
կ'աշխատի, ու կը հակառակի և կը պատե-
րազմի Տէր Եհովային դէմ : Մարդիկ ասոր
կը տեղեկանան. ոմանք Սատուծոյ կողմը

կ'անցնին, խաչին դրօշակը կը վերցունեն. ու մանք Սատանային յարելով և ծառայելով՝ Սատուծոյ դէմ զէնք կը վերցնեն: Աս գործը և պատերազմը աշխարհիս սկիզբէն մինչև այսօր կը շարունակուի:

Երբ մեզք կար, աս պատերազմը կար. հիմա մեզք կայ, աս պատերազմը կայ: Աստուած կը կամենայ որ Սատանան յաղթուի. իրեն հետևողներուն կը յայտնէ իր կամքը, և զանոնք իրեն գործակից ու միջոց կ'ընէ աս գործը կատարելու և գլուխ հանելու: Աս մեծ ու փառաւոր գործը կը գործեն բոլոր անոնք՝ որք իր Սուրբ Հոգիովը նորոգուած են, ու Քրիստոսի դրօշակը վերցուցած են: Քրիստոնեաները աս փառաւոր պայքարը կ'ընեն իրենց բոլոր սրտովն ու զօրութեամբբլնկերութիւններ կը կազմեն, Եղբայրութիւններ կը հաստատեն, մէկզմէկու ներդրութիւն կը կրեն, ստակներ կը վատնեն, աշխատանք՝ յոգնութիւն՝ տքնութիւն և կեանք չեն խնայեր աս փառաւոր գործը տեսնելու համար — մարդիկ Սատուծոյ դարձնելու համար: Ասոնք թիւով քիչ են մինչև այսօր. քիչ են անոնք՝ որք հաւատարմութեամբ իրենց ստացուածքն ու կեանքը դրեր են աս փառաւոր գործը տեսնելու համար: Քիչ են անոնք՝ որ կենդանի հաւատքով ու բոլոր զօրութեամբ կ'աշխատին. որ կը հաւատան ու գիտեն թէ՛ աս գործը մեծ է, թէ՛ ասիկա

յաւիտենականութեան մէջ մեծամեծ վարձքեր ունի: Քիչ են անոնք՝ որ գիտեն թէ աս գործը Աստուած և իր բոլոր հրեշտակները կը նկատեն: Քիչ են անոնք՝ որ գիտեն թէ աս փառաւոր պատերազմին մէջ իրենց Սատանային տուած բոլոր հարուածները կը համրուին Ամենասուրբ Երրորդութենէն և սուրբ հրեշտակներէն:

Նենգութեամբ կարողը, ո՞վ է:

1. Անոնք՝ որ աս գործին վախճանը չեն նկատեր: Ասանկները Տէրօջը գործը արհեստ մը սեպելով անոր մէջը կ'աշխատին: Կը մտածեն թէ՛ “մարդ մը անգործ կեանք անցընելու չէ՛. ամէն մարդ արհեստ մը կ'ընարէ իրեն համար ու կ'ընէ. ես ալ ասիկա կ'ընեմ, մանաւանդ ապրուստը դիւրին կը հոգացուի, աշխատանքը ծանր չէ՛, ուրեմն աս արհեստը ընտրել խելացութիւն է:” Աս նենգութիւն է քանզի արհեստին ինչ ըլլալը հասկցած չէ՛ ընողը. խարդախութիւն է որ մէկը իր չը գիտցած գործին մանէ, գիտցողի պէս, ու վարձք առնէ:

2. Անոնք՝ որ թէև գիտեն աս գործին ինչ ըլլալը ու վախճանը, բայց սրտանց չեն աշխատիր: Ասանկները իրենց բոլոր ըրածները թուլութեամբ և անհոգութեամբ կ'ընեն: Չեւք կը զարնեն գործին, մէջը կը գտնուին, գոր-

ծող կ'երևնան, բայց այնչափ անտարբեր են որ կը սեպեն թէ՛ ըլլայ ալ կ'ըլլայ ու չըլլայ ալ կ'ըլլայ: Ասոնք ի վաղուց հետէ առած մը ունին. “Մէն+ կոռ էն+, ապրեցնող չէն+” Այսինչ օրը՝ այսինչ բանը մեղք է չըսի՞նք. ինչո՞ւ կը գործեն, թող չգործեն. էս ի՞նչ կրնամ ընել”։ Ժամանակին ու ժամանակէ դուրս չեն աշխատիր. անձնական գործ շատ ունին — առտուն ու շ կ'ելլեն՝ իրիկունը կանուխ կը պառկին:

3. Ասոնք՝ որ աս գործը կ'ընեն իրենց շահուն համար: Տէրը կ'ուզէ որ աս գործը գործողները ի վրաս իւրեանց անձին գործեն, ամէն բանի մէջ վրաս ընեն. ան իրենց ըրած վրասովն է որ գործը աղէկ կը տեսնուի: Ասոնք որ շահի համար կ'ընեն՝ Տէրոջը ուզածին պէս չեն ըներ, ու նենգաւոր են, անանկ կը ցուցնեն աշխարհին թէ՛ ի վրաս կ'աշխատին, քանի որ մտքերնին շահիլ է. “ըրտերը ֆննողը խաբել կ'ուզեն, ինքզինքնին կը խաբեն: Ասոնք մեղաւորները Աստուծոյ դարձնելու գործը մեծ բանի տեղ չեն դներ և զո՛վ որ տեսնան՝ միայն բան մը շահիլ կը խորհին անկէ, երբոր մեղսակից մը կ'ելլէ առջևնին, փոխանակ անոր անմահ հոգիին վրայ խորհելու և օգնելու՝ անոր քսակին վրայ կը խորհին և իրեն հետ աշխարհիս վրայօք կը խօսին. իրենց փիճակէն գանգատներ կ'ընեն որ մարդուն միտքը ձգեն թէ՛ իրենց բան

մը տալու է: Ասանկները աշառութիւն կ'ընեն. հարուստներուն պակասութիւնը բան մը չերևնար իրենց աչքին. ոսկին, ինչպէս որ ընդհանրապէս մեծատուններուն աչքերը կը կուրցնէ որ մահկանացութիւննին և մեղքերնին չը տեսնան, անանկ ալ՝ աս խեղճերուն աչքերը կը թմրեցնէ որ հարուստները աղէկ ու բարի երևնան իրենց. անոնց տուները կը յաճախեն. զիրենք կը գովեն, անտես կ'ընեն խեղճ աղքատները, ամէն դատի մէջ կամ յանցաւոր կը հանեն աղքատը կամ անոր իրաւունքը երևան հանելու փոյթ չեն ըներ. և որ աւելի սոսկալին է անոր հետ առնչութիւն չընելով անոր պղտիկ յանցանքը իրենց սրբակեաց խիղճը կը շանթահարէ. ասանկով գործին Տէրոջը ուզածին հակառակը կը գործեն ու հետևապէս նենգութիւն կ'ընեն. որ կ'ըսէ, “իրաւունքը փնտռեցէք, զրկուածին ուղղութիւն ըրէք. որբին դատաստանը տեսէք, ու որբւարիին դատը պաշտպանեցէք”։ Ասանկները յաճախ կը գըտնուին մարմնաւոր և քաղաքական գործերու մէջ. դատ ունեցողներուն բարեկամ են, ու դատը լնցուցածներուն թշնամի. զինքը տեսնողը իր քաղաքական գործերը միտք կը բերէ. մէկը աղէկ ու միւսը գէշ կը խորհի իր վրան. միտքերնին չի դար թէ՛ ասիկա Աստուծոյ մարդն է — իր այգիին մէջ գործող մշակ մըն է, և ինչո՞ւ, քանզի գործին

նշանները չտեսնուիր իր վրան : Այգիին Տէրը կ'ուզէ որ բոլոր իր մշակները անանկ նշաններ ունենան՝ որ զիրենք տեսնողը միտք բերէ Ան որ մշակին Տէրն է : Անոնք որ աս գործը մոռնալով՝ իրենց շահին կը ծառայեն՝ նենգութեամբ գործող են, քանզի առած վարձքերնին ատ գործը տեսնելու համար է, և ո՛չ թէ՛ իրենց գործը : Ասանկներուն կերած հացը գողութեան հաց է ու բոլոր վայելածնին սատանային վարձքն է որ կու տայ իր հրապուրանացը մտիկ ընող մշակներուն : Իրաւունք ունի՞ իր այգիին մէջ գործող մշակը՝ ուրիշէն վարձք առնելու . թէ որ առնէ՞ ի՞նչ անուն կու տաք ատ մշակին . անշուշտ «նենգաւոր, գող, անհաւատարիմ և չար» :

4. Անոնք՝ որ աս գործը կ'ընեն պատիւ վաստակելու համար : Հպարտ և պատուամոլ մարդիկ ամէն միջոց ի գործ կը դնեն իրենց փափաքները յագեցնելու համար . ոմանք ալ աս գործը միջոց կ'ընեն, բայց գործին Տէրոջը պատգամը կ'ըսէ «Արդ՝ թէ՛ ուտէք՝ թէ՛ խմէք՝ և թէ ինչ գործ որ ընէք . ամէն բան Աստուծոյ փառքին համար ըրէք» . միայն իր պատիւին և փառացը համար աշխատող պաշտօնեան, նենգաւոր է : Ասանկները Աստուծոյ և կրօնքին վրայ բարձր կերպով կը խօսին . և միշտ կը ցուցնեն թէ՛ ատոնք իրենցն են : Կան մշակներ որ իրենց Աստուածը ու կրօնքը կը մեծցնեն որպէս զի իրենք անոնցմով մեծ

երևան ու չէ թէ միտքերնին բուն իսկ զանոնք մեծցնել է : Ինծի կը թուի թէ՛ Պետրոսին սխալմունքը կամ լաւ ևս է ըսել մեղքը՝ աս էր . որուն համար մեր Տէրը ըսաւ . «Ետիս գնա, սատանայ, ինչու որ դուն գայթակղութիւն ես ինծի, քանզի չէ՛ թէ Աստուծոյ բաները կը խորհիս, հապամարդոց :» Ասոնք ալ նենգաւոր են ու խորամանկ . նենգաւոր, քանզի երևոյթնին շատ շիտակ կ'երևնայ, բայց իրօք գործին մէջը չեն . գործը չէ՛ որ կը հոգան՝ հապա ինքզինքնին : Ասանկ պաշտօնեաները շատ կը գովեն իրենց պաշտօնը, որ իրօք ալ գովելի է, որ ատով ինքզինքնին մեծ ցուցնել կ'ուզեն և ոչ թէ իրօք պաշտօնը գովել կ'ուզեն : Իրենց պաշտօնին մէջ ունեցած նեղութիւննին յաճախ կը յիշեն, և միշտ կը խօսին թէ՛ աս բոլոր նեղութիւնները կը կրենք Աստուծոյ սիրոյն համար, կամ զԱստուած սիրելնուս համար : Շատ մը կրօնական բաներ կը գովեն ինքզինքնին գովելու համար . կը պարծենան իրենց խորունկ գիտնական ըլլալնուն վրայ . քանզի անանկ կը ցուցնեն իբր թէ Աստուծոյ գործը կը գործեն, քանի որ իրենք իրենց գործը կը գործեն, և ասանկով նենգաւոր կ'ըլլան : Ասոնք տեսեր ու լսեր են թէ՛ աս գործը գործողները մեծ՝ երևելի ու պատուաւոր մարդիկ սեպուած են աշխարհիս մէջ, օրինակի համար Պօղոս առաքեալ և ի-

րեն պէսները, ու կը յուսան թէ՛ իրենք ալ անոնց պատուոյն պէս պատիւ պիտի ունենան. բայց կը մոռնան խեղճերը թէ՛ անոնք ժիր մշակներ էին. Աստուծոյ գործը կը գործէին, և գործին մէջ ա՛յնչափ ժիր ու աչքը բաց և հաւատարիմ էին՝ որ ինքզինքնին բուրովին մուգեր էին. ինչ որ իրենց շահ էր՝ ա՛ն ամէնը վնաս սեպեր էին. իրենք իրենց պատիւը մուգեր էին, ինքզինքնին աշխարհիս անարգները սեպած էին. անոր համար Աստուած իր ամենաբարի նախախնամութեամբը մեծցուց և փառաւորեց հոս և հոգեղինաց աշխարհին մէջ: Բայց նենգութեամբ գործողը՝ որ ինքզինքը պատուել ու փառաւորել ուզողն է, անոնց ունեցած փառքն ու պատիւը չպիտի ունենայ, անոնց առած վարձքը չպիտի առնէ. քանզի անոնց պէս չգործեր, հապա անոնց հակառակը: Աստուած է միայն՝ որ զինքը փառաւորողները և իր գործը սիրով ու ջերմեռանդութեամբ գործողները կը փառաւորէ և պատիւի կը հասցնէ: Բայց ինքզինքը փառաւորել ուզողը՝ Աստուծոյ փառքէն կը զրկուի. քանզի նենգութիւն կ'ընէ: Եւ Աստուած ալ անանկ տնօրիններ է, որ փառք ու պատիւ բոլորած բաները՝ զիրենք փնտռողներէն կը փախչին. ու զիրենք չփնտռող հեղերուն և խոնարհներուն քով կ'երթան ու վրանին կը հանդիսն: Անկեղծ ու հաւատարիմ մշակը կամ

զինուորը պէտք է որ արթուն ըլլայ. աչքը բաց, շարունակ նայի թէ՛ ի՛նչ կայ ընելու, ի՛նչ պարագայի տակ է. գործը ի՛նչպէս է: Իր գործը տեսնելու կողմանէ բոլորովին աչք ու ականջ կտրելու է: Ուրիշներն ի՛նչպէս գործեցին. յաջողութիւն ինտո՛ր գտան. հիմա ի՛նչ խորհուրդ կայ գործին վրայ. խեղացի մարդիկ ի՛նչ ընթացք կը բռնեն աս գործին մէջը. ի՛նչ ընեմ որ ես ալ յաջողիմ — գործին բնութիւնը, իր զօրութիւնը և իր զօրութեան աղբիւրը կը նկատէ: Զօրապետին հրամանին զգուշութեամբ կը նայի, կը տքնի որ չըլլայ թէ՛ զօրապետէն հրաման մը ելած ատենը ինքը քնացած գտնուի:

Հոգևոր գործին ու պատերազմին մէջը հիմա շատ արթնութիւն պէտք է. քանզի թէև մեր պարտաւորութեանց նկատմամբ մեզի համար հարկ եղած հրամանները Աւետարանին մէջը գրուած են, բայց նոր նոր պարտաւորութիւններ ալ կ'ելլեն առջևնիս Աստուծոյ ամենիմաստ նախախնամութեամբը: Թէ որ արթուն ու զգաստ չըլլանք, հրամանները չենք լսեր. կը յաղթուինք, գործը ետ կը մնայ, պսակը չենք առներ:

Պատերազմի մէջ եղող զինուորը պէտք է որ մոռնայ ինքզինքը. հրաման ելած ատենը անմիջապէս վազելու է. նայելու չէ բնաւ թէ՛ ատ հրամանը իրեն անձնական նեղութիւն ու ցաւ պիտի բերէ՞ արդեօք: Թէ որ մշակը

իր գործին մէջ բժականութեամբ իրեն ա-
խորժելի պարագաները փնտռէ՝ գործը ետ
կը մնայ: Օրինակի համար մշակը շուքէն կ'ա-
խորժի, կ'ուզէ որ շուք տեղը գործէ, քան-
զի իրեն դիւրին կ'ըլլայ և քանի որ շուքը
իր հետը չկրնայ պարտցունել եթէ ինքը
երթայ ու շուք տեղուանք նստի, գործին
մեծ մասը տեղը պիտի մնայ. ասանկ ալ հո-
գևոր գործերնուս մէջը մեզի նեղութիւն
չատ կը պատահի, անախորժ բաներ շատ կը
պատահին, թէ որ ատ պարագային տակը
չգործենք, կարելի է ալ բնաւ գործելու ար-
տօնութիւն չունենանք, մեզի անախորժ ե-
րեցած մարդոցը թէ որ չխօսինք ու չքարո-
զենք, հաւանականաբար մինչև որ մեզի ա-
խորժելի երեցածները ծնանին, մենք մեռած
ու գերեզմանը դրուած պիտի գտնուինք:
Ձգուշութեամբ ճիշտ հրամանը կատարել
նայելու է. կ'ուզէ թող ատ հրամանը կա-
տարելը մեր աչքը՝ օտքը և թևը մլատող
բան մը ըլլայ. բնաւ մլատը նկատելու չէ:
Հրամանին հնազանդիլը թէ որ մեր շահին ու
պատիւին ալ դպի, այսու ամենայնիւ հնա-
զանդելու և անմիջապէս ի գործ դնելու ենք:
Թէ որ երկրագործը փուշէ վախնայ, չկրնար
իր գործը հաւատարմութեամբ կատարել:

Մարդ մը իր ուշադրութիւնը միայն մէկ
բանի մը կրնայ տալ, կամ ինք իր անձին և
կամ իր Աստուծոյն. կամ մարդս ինքզինքը

պատուելու է և կամ իր Աստուածը: Հաւա-
տարիմ և աննեղ մշակը՝ իր բոլոր ուշադրու-
թիւնը Տէրոջը գործին կու տայ. բայց իր
անձին ու աշխարհին վեր ի վերոյ կը նայի:
Կամ աւելի աղէկ կ'ըլլայ որ ըսեմ, ինք իր
անձը այնչափ կը նկատէ որչափ որ գործին
հարկաւոր է: Բայց ան որ իր բոլոր ուշադրու-
թիւնը իր անձին կու տայ, ու գործն ալ կը
հոգայ իր անձին համար՝ նենգութեամբ գոր-
ծող է, ու գործ չի կրնար տեսնալ: Նենգու-
թեամբ գործողը հարկաւ վեր ի վերոյ կը
նայի գործին, Տէրոջը խօսքին հակառակ կու
գայ որ կ'ըսէ. «Թէ որ մէկը իմ ետեւս գալ
կ'ուզէ, թող իր անձը ուրանայ: Ով որ իր
խաչը չը վերցընէր՝ ու իմ ետեւս գար,
չկրնար իմ աշակերտս ըլլալ: Մարդ մը չկրնար
երկու տէրոջ ծառայութիւն ընել. ինչու որ
կամ մէկը պիտի ատէ՝ և միւսը սիրէ. կամ
մէկը պիտի մեծարէ և միւսը արհամարհէ. չէք
կրնար ծառայել Աստուծոյ ու մամոնայի: Ուս-
տի անոնք որ սրտանց իրենց անձին ու աշխար-
հին կը ծառայեն, ու առ երևոյթս Աստու-
ծոյ կը ծառայեն, անոնք են նենգութեամբ
գործողները. և անոնք են որ անիծեալ են:

Անձե՛ւ՛ւ Ե՛ւրոպ, ի՞նչ ըսել է:

Անձե՛ւ՛ւ Ե՛ւրոպ ըսողը Աստուած է և Անոր բո-
լոր հրամանները «Ասաց և եղև» են: Անանկ

որ կրնանք ըսել թէ՛ Տէրոջը Այգիին մէջ նենգութեամբ գործողը անիծեալ է, և պիտի ըլլայ: Անիծեալ ըլլայ չարիքի հանդիպի—նեղութեան հանդիպի ըսել է: Նենգաւոր գործողը ինչ չարիքի կը հանդիպի:

1. Խղճմտանքի խայթով կը տանջուի, և պիտի տանջուի: Բարերարն Աստուած անանկ տնօրիններ է, որ աննենգ գործողներուն խիղճերը շատ հանդարտ ու հանգիստ կ'ըլլան. ամէն պարագայի տակ հանգիստ է խիղճերնին. Աստուծոյ երեսին քաղցր լոյսը կը տեսնան. անով աս ցաւոց ձորը կը քաղցրանայ իրենց. ասոր դառնութիւնները կ'անցնին, ցաւերը կը թեթեւնան, վիշտերը կը մեղմանան: Ասիկա ան մեծ ու փառաւոր վարձքին ճաշակն է, որ հաւատարիմ գործողը հոս կը վայելէ: Բայց նենգաւորն իր խղճին ահարկու նեղութիւնը շարունակ կը կրէ: Իր կերած խմած և ուրախացած ատենը խիղճը կ'ըսէ Նենգաւոր ես: Ուրիշներէն գովուած ատենը՝ երեսը կը խնդայ, բայց ներսէն խիղճն իր սիրտը կը ծակէ և դառն ցաւերով կը լեցնէ: Շահած ատենը խիղճը ներսէն կը պօռայ՝ Ար քողովի ես. ասոր հաշիւը պիտի որսս: Նենգաւոր գործողին խիղճը անմարելի կրակի պէս ամէն պարագայի տակ կ'այրէ կը մաշէ և կը խորովէ զինքը. մանաւանդ մանաւանդ հիւսանդութեանց և մահերու լուր առած ատենը. ու արթնութեանց ատեն: Նենգաւոր գործողը

ի պաշտօնէ ստիպեալ կը քարոզէ որ մարդիկ արթնան. շատ անգամ՝ չի պատահիր, բայց կրնայ ըլլայ, որ իր ժողովուրդը Աստուծոյ Հոգին խնդրեն, ու Հոգին ալ իրօք գործէ հոն, ան ատենը ինք առաւել ևս կը տանջուի և կ'այրի ու կը մաշի իր խղճովը: Աս անէծքը ահարկու անէծք մըն է, քանզի մարդուս մէջն է. ո՛ւր որ երթայ՝ ան ալ հետը կ'երթայ. և ո՛ւր որ գտնուի՝ ան ալ հետը կը գտնուի. իրմէ զատուելու ճար չկայ: Աս ահարկու անէծք մըն է, քանզի մարդուս մէջն է ու ներսէն կ'այրէ. անոր վէրքն ու հարուածները խիստ խորունկն են: Աս անէծքը հոգիին փակած է, մահուան ատենը փոխանակ անկէ զատուելու՝ իր ձայնը աւելի կը բարձրացնէ. իր կիզիչ և տոչորող զօրութիւնը կը կրկնապատկուի և կ'եռապատկուի: Կան անէծքներ որ մինչև գերեզման կ'երթան մարդուս հետը ու հոն իրմէ կը զատուին, աս անանկ չէ. գերեզմանէն ետքն ալ հոգիին հետն է ու մէջն է. քանի որ հոգին կայ՝ աս ալ կայ. ասոր տեղութեան չափը ահարկու յաւիտենակա նութիւնն է. իր ձայնին բարձրանալն ու տանջող զօրութեան աւելնալն ալ բոլոր յաւիտենականութեան մէջ պիտի ըլլայ. հազարաւոր ու միլիոնաւոր դարեր պիտի անցնին ու աս անէծքը չպիտի անցնի, և չանցնելէն զկնի՝ իր կիզիչ զօրութիւնը կ'աւելնայ երթալով կ'աւելնայ ու կ'աւելնայ: Ա՛հ, ահարկու

անէծք. քու վրադ խորհիլը ու խօսիլը անգամ նեղութիւն է, հապա դուն ի՞նչ ես, և ի՞նչ պիտի ըլլաս: Ո՛վ Տէր, մեզ բոլոր հոս գտնուողներս ազատէ աս ահարկու անէծքը յառաջ բերող նենգութենէն:

2. Շատ անգամ հոս կը խայտառակուին նենգաւոր գործողները: Երբեմն ասոնք կը շատնան, ու յանկարծ Աստուծոյ մէկ ընտիր և հաւատարիմ մշակը երևան կ'ելլէ, ու Աստուծմէ ճշմարիտ լոյս առնելով և ուրիշներուն հաղորդելով խեղճ նենգաւոր գործողները կը խայտառակուին: Երբեմն աս բանը կը յայտնուի նենգաւորին մեռնելէն ետքը. ու բանը հասկցողները կը սկսին նախատել անոնց (նենգաւորներուն) գերեզմաններն ու յիշատակները: Թէ որ մէկը աս անէծքին վրայ վեր ի վերոյ նայի՝ շատ բան չի տեսնար. բայց թէ որ քիչ մը խորհի վրան, պիտի տեսնայ թէ՛ աս ահարկու բան մըն է: Ասոր վրայ խորհեցէ՛ք, ահարկու բան չէ՞, թէ որ մէկը ուրիշներուն անանկ հասկցնէ թէ՛ ինքը հաւատարիմ գործող մըն է. իր գործելուն համար անոնցմէ ուտէ ու խմէ, և ետքը յանկարծ հասկնան թէ՛ ինքը ուրիշ բան չէ, հապա միայն խարդախ ու կեղծաւոր ու նենգաւոր դող մը, ու ըստ այնմ՝ նային իրեն և իր գերեզմանը ու յիշատակը նախատեն ու անարգեն: Բան մը չկայ ծածուկ որ պիտի չյայտնուի, նենգաւորին նենգութիւնը հոս

ալ պիտի յայտնուի հաւանականաբար և յաւիտենականութեան մէջն ալ անշուշտ. հոն անշուշտ պիտի յայտնուի. քանզի գրուած է թէ՛ բոլոր ծածուկ բաները պիտի յայտնուին ու հաշիւի առնուին: Մտադրութիւննիս դարձընենք ասոր: Տէր Աստուած դատաստանի օր մը որոշեր է, ա՛ն օրը բոլոր ազգերը ու ազինքները մէկտեղ պիտի ժողվէ. Ադամէն սկսելով մինչև վերջին մարդը հոն պիտի գտնուին. բոլոր սուրբ հրեշտակները և հրեշտակապետները հոն պիտի գտնուին. հոն պիտի ըլլան բոլոր բարոյական էակները — բոլոր բարին ու չարը զանազանողները. բոլոր անոնք՝ որք զիտեն թէ ի՞նչ է պատիւ և ի՞նչ է անպատուութիւն: Ան բոլոր հանդիսականներուն առջևը խեղճ նենգաւորին նենգութիւնը երևան պիտի ելլէ. բոլոր հանդիսականները պիտի հասկնան. ու անոնց մէջը փառք ու պատիւ ունեցող հաւատարիմ գործողները՝ մարդս ու սուրբ հրեշտակները նախատական աչքով մը պիտի նային նենգաւորին վրայ. աս ահարկու անէծք չէ՞: Ո՛րչափ աւելի ահարկու անէծք է, որ նենգութենէ գարշող սուրբ ու արդար Դատաւորը պիտի ըսէ. Երթա՛յք յինէն անիծեալք. Մէկդի գացէ՛ք ինծմէ անիծեալներ, ալ իմ երեսս չպիտի տեսնաք, գացէ՛ք՝ ալ իմ հետս բան մը չունիք ինչպէս որ չունէիք ալ. դուք որ իմ գործս նենգութեամբ գործեցիք, զիս

նախատեցիք, բնաւ չխորհեցաք որ իմ ամենատես աչբերս ձեր բոլոր բրածները կը տեսնեն, ու համարձակեցաք ինծի պէս մէկը նախատելու ու անարգելու: Գացէք յաւիտենական նախատանաց և անարգանաց. իմ ձեզի տուած պատիժս իմ մեծութեանս համեմատ պիտի ըլլայ, քանի որ ես կենդանի եմ՝ դուք ալ կենդանի պիտի ըլլաք ու պիտի տանջուիք, եւ ատ տանջանքը իրաւացի է, քանզի դուք համարձակեցաք ինծի պէս Աստուած մը — մեծ ու փառաւորեալ Աստուած մը անարգելու. Գացէ՛ք, հասկցէք թէ զԱստուած խարողները ինքզինքնին կը խաբեն, ու անոր ցաւը յաւիտեանս պիտի կրեն: Դուք որ լսեր ու քարողեր ալ էիք թէ՛ կենդանի Աստուծոյ ձեռքը իյնալը սոսկալի բան է, ու հաւտացած չէիք, և անհաւատութեամբ նենգութիւն ըրիք, հիմա անձամբ փորձը առէք թէ՛ իրօք սոսկալի և ահուելի բան է կենդանի Աստուծոյ ձեռքը իյնալը: Դուք ձեր մարդ—ստորին էակ մը ըլլալով իմ խօսքիս հաւատարմութիւն չընելով, թէ ինծի յանձնուելիզ աղէկ է, ու ձեր անձերուն աղէկ երեցած բաները փնտռելով՝ զիս ու իմ խօսքերս ոտքերնուդ տակը առիք: Այսօր ես ալ աս բոլոր բարոյական էակներուն իմ սրբութիւնս ու փառքս և զօրութիւնս ցուցնելու համար՝ ձեզ ոտքիս տակը կ'առնեմ, ու իմ Աստուածային ահարկու զօ-

րութեամբս՝ ձեզ կրակով ու ծծումբով վառած լիճը կը ձգեմ, որ հոն յաւիտենական անյուսութեան և շօշափելի խաւարին ու անվախճան տանջանացը մէջ հասկնաք թէ՛ զԱստուած անարգելուն ու նախատելուն և իր գործը նենգութեամբ գործելուն ցաւն ու պատիժը ի՞նչ է:

Մէ՛հ, իմ խելքս չհասնիր, իմ լեզուս չկրնար պատմել թէ՛ զԱստուած նախատել ի՞նչ մեծ բան է ու անոր պատիժը ի՞նչ մեծ ու ահարկու է: Բայց սառագութեամբ գիտեմ թէ՛ նենգութեամբ գործողը ատ պատիժին պիտի հանդիպի: Ո՛վ Տէր, մեզ ամէնքս ան մեծ ու ահարկու պատիժը բերող նենգութենէն պահէ:

Գացէք, դուք որ առ երևոյթս իմս կ'երևնայիք և սրտով ու դիտաւորութեամբ հաւասար էիք գողերուն, շուներուն և մարդասպաններուն. գացէք անոնց ընկեր եղիք, յաւիտենական ընկեր — անոնց հետ մէկտեղ կրեցէք զԱստուած նախատողներուն ցաւն ու տանջանքը: Ո՛հ, իմ եղբայրներս, մենք թէ որ նենգութեամբ գործենք, ի՞նչ երեսով պիտի բնակինք յաւիտեանս ան գողերուն, շուներուն և մարդասպաններուն հետ, որ հիմա փարիսեցութեամբ անոնց հետ խօսիլ անգամ չենք ուզեր, որ չըլլայ թէ մեզ ալ անոնցմէ դիտնան: Մենք, որ հիմա կ'անարգենք ու կը նախատենք զանոնք, զգուանօք ու դարչե-

լով կը խօսինք հետերնին, ի՞նչ ամօթալի բան պիտի ըլլայ անոնց հետ զոյգ և անոնցմէ աւելի անարգ սեպուելով՝ իրենք ըլլան մեր յաւիտենական ընկերները. միատեղ մնանք յաւիտեան, միատեղ կրենք յաւիտենական սոսկալի տանջանքները. միևնոյն յաւիտենական բաժինը ունենանք անմարելի կրակը և անմահ որդերը, աս ի՞նչ ահարկու անէծք է։ Ո՛վ Տէր, մեզ բոլոր հոս գտնուողներս հեռու պահէ աս ահարկու անէծքը բերող նենգութենէն։ Աս աղօթքը մեր կենաց բոլոր օրերուն մէջ ընելու ենք. մեզի խիստ հարկաւոր աղօթք մըն է. քանզի մենք ամէնքս որ հոս ենք՝ մշակի երևոյթը ունինք — ինքզինքնիս այգիին մէջ գործող հրատարակեր ենք. թէ՛ Աստուծոյ և թէ՛ մարդոց ցուցուցեր ենք թէ մենք Տէրոջը գործը գործողներ ենք։ Ի՞նչ ընենք որ աս աղօթքնիս լսուի, պատասխանուի և մենք ազատինք աս ահաբեկի անէծքէն։ Ամենահաւատարիմ գործողին նայինք, մեր Տէր Յիսուս Քրիստոսին. Քրիստոսին շաւիղներուն հետեւինք. դուք ասոր ինչ նշանակելը գիտէք կը յուսամ, բայց ազէկ կ'ըլլայ որ հոս յիշենք թէ՛ հաւատարիմ գործողը ի՞նչ նկատմամբ Անոր նայելու է։

1. «Չեզմէ ամէն մէկը նոյն միտքը թող ունենայ, որ Քրիստոս Յիսուսի մէջն էր. որ Աստուծոյ կերպարանքը ունենալով, յափշտակութիւն մը չսեպեց Աստուծոյ հաւասար ըլ-

լալը. հապա անձը ունայնացուց ծառայի կերպարանք առնելով՝ մարդոց նման ըլլալով. և կերպարանքովը մարդու պէս գտնուելով, ինքզինքը խոնարհեցուց՝ մինչև մահուան հնազանդ եղաւ, ու ան ալ խաչին մահուանը։» Երբոր Ամենահաւատարիմ գործողը այգիին պիտի մանար, գործը պիտի սկսէր, ծառայի կերպարանք առաւ. ինքզինքը խոնարհեցուց, մահուան հնազանդ եղաւ։ Ո՛վ որ կ'ուզէ հաւատարիմ գտնուիլ՝ ասանկ ընելու է. ուրիշ ճամբայ չկայ։ Իրմէ աւելի խելացի չենք, որ իրմէ ազէկ կերպ գտնենք աս գործը սկսելու, յառաջ տանելու, հաւատարիմ գտնուելու և փառաց պսակն առնելու։ Խոնարհեցէք ուրեմն, իմ սիրելի եղբայրներս, Չեր փառքը ու պատիւը մոռցէք, ընաւ գերեզմանէն ասդին ատոր խուրհուրդ մի տաք։ Չեր և ձեր զաւկներուն մեծնայն ու փառաւորուիլը մոռցէք։ Չեր անձերը ունայնացուցէք ու ձեր ժողովուրդին մէջ սպասաւորի պէս երեցէք։ Անոնց ոտքերը լուացէք, ինչպէս որ Տէրը իր աշակերտներուն ըրաւ։ Աղքատները նկատեցէք, անոնց Աւետարան քարոզեցէք. գալիք հարստութիւնները յիշեցուցէք անոնց ու յոյս տուէք։ Սգաւորներուն և հիւանդներուն քովը յաճախեցէք. անոնց արցունքներուն հետը ձեր արցունքն ալ խառնեցէք։ Աս փառաւոր գործին համար որչափ որ շատ անարգուիք ու նախատուիք, այնչափ շատ ձեր Տէրոջը պիտի

նմանիք ու յաջողութիւն գտնէք: Խոնարհեցէք տղաքներուն և անարգ սեպուածներուն հետը առնչութիւն ընելու. թող ըլլայ որ ատ ընելնուդ համար անարգուիք ու նախատուիք: Փառք՝ պատիւ ու հարստութիւն ըսուած բաները մեծամեծ ծանրութիւններ են աս գործիս մէջ հաւատարիմ գործողներուն. աս ծանրութիւնները ձեզմէ մէկդի թոթափեցէք որ դիւրութեամբ գործէք:

2. “Եւ աս միջոցիս աշակերտները իրեն կ'ազաչէին ու կ'ըսէին. Ռաբբի՛ հա՛ց կեր: Անիկա ըսաւ անոնց. Ես կերակուր ունիմ ուտելու՝ որ դուք չէք գիտեր: Ուստի աշակերտները կ'ըսէին իրարու. Արդեօք մէկը ատոր ուտելու բան մը բերա՞ւ: Յիսուս ըսաւ անոնց. Իմ կերակուրս ան է՝ որ ես զիս զրկողին կամբը ընեմ, և անոր ԳՈՐԾԸ կատարեմ:”

Ահա Ամենահաւատարիմ գործողը, ահա մեր առաջնորդը, ըսեցէք ի՛նչ կ'ըսէ. Իմ կերակուրս ան է՝ որ ես զիս զրկողին կամբը ընեմ և անոր գործը կատարեմ: Ասանկ ըրաւ ինքը, կը պահանջէ բոլոր գործողներէն որ ասանկ ընեն: Յայտնի է, որ աս միջոցիս ինքը մէկ անարգ Սամարացի կնիկ մը՝ իր մեղաւոր ըլլալուն և Աստուծոյ դառնալու պէտք ունենալուն համար կը համողէր. աս էր ան գործը՝ որ ինք իր կերակուր ուտելէն աւելի վեր ու հարկի կը սեպէր: Ասկէ կրնանք սորվել թէ՛ մենք ալ հարկ է որ աս գործը ա-

նանկ ժրաջանութեամբ գործենք՝ որ հացերնիս ետ ձգենք. մենք ալ ասանկ գործենք: Գործեցէ՛ք, իմ սիրելի եղբայրներս, գործեցէք ժամանակին և ժամանակէ դուրս: Բոլոր աշխարհային ու կորստական գործերը երկրորդական ու ոչինչ սեպեցէք. անոնք ամէնը կ'անցնին ու դերեզմանէն ետքը կը մոռցուին: Ամէնէն անարգ և չնչին սեպուած մարդուն անմահ հոգին հոգացէք. անոնց դարձին համար իրիկունը ուշ պառկեցէք և առտուն կանուխ արթնցէք. թող ձեր բոլոր աղօթքները ու խորհրդածութիւնները գործին վրայ ու համար ըլլան: Տէրօջը գործէն աւելի հարկի գործ չունիք. և ջանք ըրէք՝ որ չունենաք ալ: Երբոր պատեհութիւն ունիք խեղճ մեղաւորի մը՝ իր մեղաւոր ըլլալը հասկցնելու և զինքը ֆրիստոսի ուղղելու, չըլլայ որ աս փառաւոր պատեհութիւնը կորսնցնէք ձեր անձնական գործերուն կամ պիտոյքներուն համար: Ժրաջանութեամբ գործեցէք, որ նենդաւոր չգտնուիք:

3. “Երբոր Գագաթ ըսուած տեղը դացին, հոն խաչը հանեցին զանիկայ, և ան չարագործներն ալ մէկը աջ կողմէն՝ ու մէկալը ձախ կողմէն խաչեցին: Եւ ըսաւ Յիսուս. Հա՛յր՝ թողութիւն տուր ասոնց, ինչու որ չեն գիտեր ի՛նչ կ'ընեն”: Ահա Ամենահաւատարիմ Գործողը ուրիշ պարագայի մը տակ,

բարձր ձայնով խաչին վրայ կ'աղերսէ, Հայր՝
 Թողութիւն տուր ատոնց, անոնց՝ որ զինքը
 աւազակներուն կարգը դասեր էին, ու անարգ
 և սոսկալի խաչին վրայ գամեր էին, անոնց՝
 որ առանց իրաւունքի զինքը սոսկալի և դառն
 տանջանքներուն մատներ էին, անոնց համար
 Թողութիւն կը խնդրէ իր Հօրմէն: Ո՛չ կը
 կանչէ, և ոչ կ'աղաղակէ, ոչ կը վիճի և ոչ
 կը կռուի, դառնուկի պէս լուռ կը կենայ
 անիրաւ դատաւորին առջևը, որ մեղի սոր-
 վեցնէ թէ՛ ինտո՛ր վարուելու ենք մեղի անի-
 րաւութիւն ընողներուն հետը. և թէ ինտո՛ր
 մինչև մեր վերջին շունչը գործելու ենք: Աս
 ձայնը լսենք, սիրելի եղբայրներս, ու անյի-
 շաչար ըլլանք. ո՛չ վիճինք և ո՛չ կռուինք.
 ուրիշները մեղի ինչ կ'ընեն Թող ընեն՝ ինք-
 զինքնիս արդարութեամբ դատողին յանձնենք.
 և դառնուկներու պէս լուռ կենանք: Թէ որ
 հաւատարիմ գործողին չարչարանացը կցորդ-
 ըլլանք, իր փառացն ալ հաղորդ պիտի ըլլանք:
 Եւ իր քաղցր ձայնը պիտի լսենք, «Ապրի՛ս
 բարի ու հաւատարիմ ծառայ. մտի՛ր քու
 Տէրօջդ ուրախութեանը մէջ». քու ուրախու-
 թիւնդ ու երջանկութիւնդ՝ իմ մեծութեանս
 համեմատ պիտի ըլլայ անեզր՝ անչափ և
 մշտնջենաւոր ուրախութեան և երջանկութեան
 անցիր: Վայելէ փառք՝ պստիւ ու երջանկու-
 թիւն, իմ եղբայրս, և ժառանգակիցս. իմ

ժառանգակիցս պիտի ըսէ մեղի փառաց
 Տէրը:

Թէ որ ասանկ ընենք, Երանի՛ մեղի.
 Երանի՛ մեղի, քանդի աս օրհնեալ ձայնը
 պիտի լսենք: Բայց թէ որ չընենք, Վա՛յ,
 Վա՛յ, Վա՛յ մեղի. յաւիտենական ու մշտնջե-
 նաւոր Վա՛յ:

1867 Յունիս 5



ԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԻԼԻՓՍ ՊՐՈՒՔՍ



ԶԱՏԿԻ ՔԱՐՈՉ

«Ու իր աջ ձեռքը իմ վրաս դրաւ ու ըսաւ ինձի, Մի վախճար. ես եմ Առաջինը ու Վերջինը. և ես կենդանի եմ, ու ես ան եմ որ մեռայ, և անա կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից. և ես ունիմ մահուան ու դժոխքին բանալիները:» Յայտ. Ա. 17, 18:

Այսօրուան համար միայն մէկ նիւթ մը կայ: Այս առաւօտ երբ գերեզմանը բացուեցաւ և Յիսուս Քրիստոս յարեաւ, իր յարութիւնը մեզի համար ունեցած բոլոր նշանակութիւնով պէտք է մեր խորհուրդները դրաւէ: Ինքնաբերաբար բոլոր մարդոց միտքերը այդ կողմը կը դառնան: Կարծեմ շատ մարդիկ որոնք չեն կրնար շտատամսիլ եթէ իրենց հարցնէք թէ արդեօք իրապէս կը հաւատա՞ն Քրիստոսի մեռելներէն յարութիւն առնելուն պատմական իրողութեան, և մարդիկ որոնց ամբողջ խորհելակերպը նիւթական

է, այնպիսի ոյժերով կապուած զորս աչքը և ձեռքը կրնայ չափել, տակաւին վեհութեան զգացում մը կ'ունենան, անձանօթ հոգեկան հնարաւորութեան ոսանում մը երբ Զատիկի առաւօտը կը ծագի երկրի վրայ: Բան մըն է որով մահկանացու մարդիկ կարող եղած են նոյն իսկ անմահութիւն մը երեւկայել, և հաճութիւն գտնել իրարու պատմելու մէջ թէ մեռած և թաղուած բոլոր միլիոններուն մէջէն գէթ մէկը գերեզմանէն ելած և երկրի վրայ նորէն ապրած է: Վստահ եմ թէ կուրաբար հաւատացող շատ մարդիկ, որոնք քիչ բան կրնան ըսել թէ յարութիւնը իրօք ի՞նչ կը նշանակէ, այս առաւօտ իրականապէս հասկցած են անոր նշանակութիւնը ազատութեան և յայտնութեան կեանքի ընդարձակութեան և Աստուծոյ կենդանութեան զգացումովը զորս զգացած չէին թերևս, անցեալ Զատիկի օրէն ի վեր: Զատիկը նշանաւոր է ասոր համար որ կարծես ամէնէն սխրալի խորհուրդները կ'առնէ և Քրիստոսի ընտանի անձնաւորութեան միջոցաւ մարդոց ըմբռնելի և սիրելի կ'ընծայէ: «Քրիստոս յարեաւ:» «Քրիստոս յարեաւ,» կ'ըսեն մարդիկ իրարու: «Յարեաւ:» Գիտէ՞ք ի՞նչ կը նշանակէ այդ: Աշխարհին միակ անյաղթելի ոյժը յաղթուած: Մարդուն միակ անխուսափելի ճակատագիրը ջնջուած: Մահը ճաշակուած և յետոյ մէկդի

գրուած, նման գաւաթի մը զոր շրթունքները չեն խմեր : Բնական օրէնքներու ամէնէն անողոքելին, ինչպէս կը կոչենք զանոնք, բուրորովին փշրուած : Կեանքը և աստուածութիւնը գերազանցութիւն կը պահանջեն : Ասոնք սխրալի խորհուրդներ են : Եւ սակայն այսօր մեր հոգիները կ'ընդունին զանոնք : Նոյն իսկ տղաքներ այս սխրալի խորհուրդները իրենց պարզ միտքերուն մէջ ընդունած են : Անոնք մեզի իրական եղած են անձնական փորձառութեան միջոցաւ ֆրիստոսի զոր կը սիրենք, և կը թարգմանուին մեր բնազդումներուն և մեր պէտքերուն գուշակութիւններուն միջոցաւ : Անոնց համար է որոնք գատարկ գերեզմանին ճամբան գացած են Յիսուսի համար սիրով լեցուն որ իր յարութեան մեծ ճամարտութիւնը յայտնուած է, և իրենց ամէնէն ճամարիտ բաղձանքները գեղեցիկ և պարզ եղած են : Ճիշտ ինչպէս որ այս ծաղիկները Բնութեան անհուն և խորհրդաւոր ոյժերը ընդունած, և զանոնք տեսանելի գեղեցկութեան այս յստակ ձևերուն վերածած են, այնպէս ալ Զատիկը, տարուան ծաղիկը, կեանքի և անմահութեան անչափելի ճամարտութիւնները կ'առնէ և կը ներկայայնէ գեղեցկութիւնով մը զոր ամէնս ալ կրնանք տեսնել և սիրել :

Զատիկի բնաբանիս համար ընտրած եմ տեղեկութիւնը զոր ֆրիստոս կու տայ իր մա-

սին իր յարութենէն և համբարձումէն վերջ : Աւետարանները ուշագրութեամբ ընթերցողներուն յայտնի է թէ աչակերաները իրենց յարուցեալ Տէրոջ համար իրենց զգացած բոլոր ուրախութիւնով հանդերձ տարօրինակ շփոթութեան և վարանման մէջ էին իրենց Անոր հետ գտնուած բոլոր ժամանակը : Կը սիրէին զԱյն ճիշտ այնքան որքան կը սիրէին միշտ, սակայն չէին կրնար ըմբռնել զԱյն այնպէս ինչպէս կրնային երբ իրենց հետ կը պտըտէր և կը խօսէր, և իրենք առաջին անգամ կը սորվէին Անոր բնութեան և սիրոյն վրայով : Իր յարութենէն վերջ խոյս կու տայ անոնցմէ : Իրենց սրտերը իրենց ներսիդին կը առնորէին Անոր ընկերակցութեան մէջ, սակայն Ան գնաց և եկաւ զարմանալի, խորհրդաւոր կերպերով : Կը խոկային Անոր խորհրդաւոր և իմաստուն խօսքերուն վրայ, և շարունակ կարծես կը ջանային լիովին հասկընալ թէ իրօք ի՞նչ էր իրենց այն Տէրը որ մեռելներէն յարութիւն առած էր : Յայտնապէս անիկա աւելի բան մըն էր քան ինչ որ անոնք կը խորհէին անոր վրայով երբ Գալիլեայի մէջ անոր կը հետևէին : Եւ բոլոր ֆրիստոսեայ աշխարհը, անկէ ի վեր, արձագանգ տուած է անոնց սիրալիր հետաքրքրութեան, և փափաքած է ալ աւելի բան գիտնալ մահուան յաղթականին և աշխարհի Փրկչին վրայով : Ազէկ է մեզի համար որ

ունինք Յայտնութեան գիրքին մէջ այս համարը, ուր Գրիստոս կը խօսի և ինքզինք կը յայտնէ : “Եւ ես կենդանի եմ, ու ես ան եմ որ մեռայ, և ահա կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից. և ես ունիմ մահուան ու դժոխքին բանալիները” (Յայտ Ս. 18) : Զանաք յարուցեալ Տէրոջ այդ վսեմ ինքնանկարագրութեան նշանակութիւնը հասկնալ : Ուրեմն տեսէք թէ Քրիստոս ի՛նչ կ’ըսէ իր վրայով : Նախ, “Ես կենդանի եմ” (Յայտ. Ս. 18) : Ս.յդ “կենդանի” բառը անընդհատ յաւերժական կեանք ցուցնող բառ մըն է : Կը նկարագրէ յաւիտենական գոյութիւնը որ ոչ սկիզբ ունի և ոչ վախճան . որ, իր սրբութեան և կատարելութեան մէջ նկատուելով ոչ ներկայ ունի և ոչ անցեալ, այլ մէկ յաւիտենական և անխզելի ներկայ մը, մէկ յաւիտենական հիմա մը : Ան “Ես եմ” ըսելով Մովսէսի խօսող Եհովան է : Ան որ “կենդանի” է կ’ապրի . Ան որուն կեանքը կեանքն է, ինքնին կատարեալ, և որ իր մէջ կը պարունակէ բոլոր միւս կեանքերը : Սիրելի բարեկամներս, եթէ բան մը մեզի զգացուցած է թէ մեր մարդկային կեանքը ո՛րքան անկատար է, կարծեմ մեզի համար ստանալու աւելի մեծ գիտութիւն չկայ քան այն թէ կեանքը մէկու մը որ կը սիրէ մեզ ինչպէս Քրիստոս կը սիրէ մեզ՝ յաւիտենական կեանք մըն է, յաւիտենականութեան տևողութեամբ և անփոփո-

խականութեամբ : Տեսէք թէ ի՛նչպէս մենք կը փոխուինք, թէ ի՛նչպէս ծրագրներ կը պատրաստենք և կը կատարենք զանոնք, կամ զանոնք մէկդի կ’ընենք, թէ ի՛նչպէս մեր ասպարէզին մէկ աստիճանէն միւսը կ’անցնինք, թէ ի՛նչպէս անցեալը, ներկան և ապագան միշտ կը շփոթեցնեն մեր էութիւնը, թէ ի՛նչպէս մենք կը մեռնինք և ուրիշներ կու գան մեր տեղը վազելու փոփոխութեան նոյն առեղծուածին և շփոթութեան մէջէն ուրկէ մենք վազած ենք : Երբեմն ի՛նչպէս մեր գլուխները և մեր սրտերը կը ցաւին այս ամէնուն համար : “Ս.յս ապրի՞լ է,” կը բացազանչենք : “Ս.յս սոսկ կեանքի դպչիլ է : Ապրի՞լ է :” Միշտի մը հարիւրաւոր մղոններ երկայն եղող գետի մը մակերեսին դպչելուն նման չե՞ այս : Անոր թևը միայն թեթևօրէն կը դպչի գետին վրայ մէկ կէտի մը անոր երկար ընթացքին մէջ, և մանրերկրորդ մը կը վրդովէ զայն, և յետոյ նորէն կ’երթայ, և այդ է անոր ամէն ըրածը : Եւ այդ է կեանքի հետ մեր ունեցած բոլոր յարաբերութիւնը : Ս.յս ապրի՞լ է : Եւ յետոյ այս ձայնը որ կու գայ Քրիստոսէ, “Ես կենդանի եմ” (Յայտ. Ս. 18) անընդհատ յաւիտենական կեանք կը յայտարարէ : Ընդարձակ երկար կեանք մը կայ որ վաղանցիկ չէ : Ուրեմն երբ գիտենք թէ ճիշտ ի՛նչպէս տղոց կեանքերը կը հաստատուին իրենց հօր կեանքին

վրայ որ արդարև յաւիտենական կը թուի իրենց․ ճիշտ ինչպէս եկող և գացող, ծլոզ և թափող տերևները իրենց պատճառը և տևողութիւնը կը գտնեն երկար անփոփոխ կեանքին մէջ ծառին՝ որուն վրայ իրենք կ'աճին․ նմանապէս մեր կեանքերը իրենց տեղը կը գտնեն ֆրիստոսի այս երկար, անփոփոխ կեանքին մէջ, և իրենց յարափոփոխ անցեալներուն և ապագաներուն վրդովումը կը կորսուի Անոր էութեան յաւերժական ներկային մէջ։ Յաւիտենական Աստուծոյ մը գաղափարն է որ իրօք հաստատութիւն կու տայ մարդոց անկատար կեանքերուն, աշխարհի անկատար պատմութեան, Քրիստոս մը որ կենդանի է՝ կը փրկէ և իր յաւիտենականութեան մէջ կ'ընդունի իր աշակերտներուն խղուած, անցաւոր կեանքերը և գործերը։

Այդ է առաջին բանը ուրեմն։ Այս ֆրիստոսը կենդանի է։ Սակայն այնուհետև շարունակեցէք։ Տեսէք թէ ինչ զարմանալի բան մը կը յաջորդէ անոր։ «Եւ ես կենդանի եմ, ու ես ան եմ որ մեռայ» (Յայտ. Ա. 18)։ Հիմա չէ որ կը սկսինք զիտնալ թէ ո՛րքան հրաշալի է այս։ Յիշեցէք յաւիտենապէս ապրողը բոլոր կեանքերու բուն կեանքը։ Եւ սակայն այդ կեանքերու կեանքին մահ եկած է, իբր դրուագ մը, իբր միջադէպ մը։ Հիմա չեմ խօսիր անչափելի դրդումին, անհուն սիրոյն վրայ որ պատճառ եղաւ այնքան զարմանալի

բանի մը, ինչպէս Անմահ Էակին մահուան յանձնառու ըլլալուն։ Միայն ասոր վրայ կը խօսիմ թէ երբ մահը եկաւ իրեն կեանքի վախճանը ըլլալ չէր թուեր, այլ միայն կեանքի մէջ դէպք մը։ Անոր էութիւնը չվերջացոց, այլ միայն փորձառութիւն մըն էր որու այդ էութիւնը ենթարկուեցաւ։ Այդ հոգեկան էութիւնը որ յաւիտեան կը շարունակուէր, որուն վրայ մարդոց կարճ էութիւնները տևողութեամբ զօրացած էին, հիմա եկաւ և յանձնուեցաւ անոր որու մարդիկ շարունակ կը յանձնուէին։ Եւ ահա, փոխանակ ըլլալու ինչ որ մարդիկ վախցան թէ պիտի ըլլար, ինչ որ մարդիկ հազիւ կը համարձակէին յուսալ թէ չէր, կեանքի մարիլը, միայն կեանքի պարագաներուն փոխուիլը ըլլալ կ'երևէր, առանց ուէ իրական զօրութեան կեանքի բուն սկզբունքին վրայ․ ոչ թէ աւելի զօրութիւն քան այն ինչ որ ամպը ունի արևուն վրայ զոր կը մթազնէ․ կամ այն որ ովկիանոսը ունի օդի պղպշակին վրայ զոր գրկաչափներով խորունկը կը թաղէ, սակայն որուն ծածանող բնութիւնը չկրնար ջնջել, ոչ ալ կրնայ արգելել զայն դէպ առաջ նկրտելէ և անգամ մը հասնելէ զայն ծածկող ջրային կոյտին մակերեսը։ Այդ էր ֆրիստոսի մահուան սքանչելիքը։ Երբ անոր կը մօտենար ինք դողաց։ Իր բոլոր արարածներուն փորձառութիւնն էր, սակայն ինք երբեք զգացած չէր զայն, իր մարդ-

կութեան, իր վրան առած մարմինին ահաւոր
թուեցաւ : Գեթսեմանին կը վկայէ թէ որքան
ահաւոր թուեցաւ : Բայց մեր սիրոյն համար
անկէ անցաւ : Եւ երբ մահուան մէջէն յայտ-
նուեցաւ անոր բնութիւնը յայտարարեց :
«Կեանքի փորձառութիւն մըն է, ոչ թէ
կեանքի վախճանը : Կեանքը անոր մէջէն
կ'անցնի և անվնաս դուրս կ'ելլէ : Ինծի նա-
յեցէք : Եւ ես կենդանի եմ, ու ես ան եմ
որ մեռայ :»

Սակայն այս չէ ամէնը : Գեռ նկարագրու-
թիւնը կը շարունակուի և կը բացատրուի :
«Ես կենդանի եմ, ու ես ան եմ որ մեռայ,»
կ'ըսէ Քրիստոս, «և ահա կենդանի եմ, յա-
ւիտեանս յաւիտենից» (Յայտ. Ա. 18) : Այս
գոյութիւնը մահուանէ վերջ մասնաւոր և
տարբեր է : Սոսկ վերհաստատում մը չէ ա-
նոր որ արդէն պարունակուած էր իր վսեմ
խօսքին մէջ, «Ես կենդանի եմ» (Յայտ. Ա.
18) : Աւելցուած բան մըն է : Վստահութիւն
մըն է թէ շարունակուած կեանքին մէջ, որ
անգամ մը մահուան փորձէն անցած է, նոր
բան մը կայ, ուրիշ համակրութիւն մը, միակ
համակրութիւնը որ առաջ կը պակսէր իրեն
իր եղբայրներուն նկատմամբ որոնց ճակա-
տագիրն է մեռնիլ, և այսպէս անոնց օգնու-
թիւն մը որ ուրիշ կերպով չէր կրնար ըն-
ծայել, նոյն իսկ իր կատարեալ սիրոյն մէջ :
Այս նոր կեանքը, կեանքը որ մահուան յաղ-

թած է զայն ճաշակելով, որ ինքզինք ճոխա-
ցուցած առաջ անձանօթ համակրութեամբ
մը մարդոց նկատմամբ որոնց կեանքերը միշտ
կը ձկտին և վերջապէս ամէնն ալ կ'երթան
գերեզմանին խաւարին մէջ, այս կեանքը յա-
ւիտեան կ'երկնայ : Անվախճան է : Յորքան
ապրող և մեռնող մարդիկ կան, այնչափ
ժամանակ անոնց վրայ և անոնց բոլորաբը
պիտի ըլլայ Քրիստոս, Աստուածամարդը,
որ կ'ապրի, և մեռաւ, և յաւիտեանս կեն-
դանի է :

Եւ հիմա խորհեցէք թէ Փրկչին այդ վսեմ
անձնանկարագրութիւնը ի՞նչ կը նշանակէ և
ի՞նչ է մեզի համար : Ի՞նչ բանի կը կարօտինք
մենք մարդիկս : Մ՛հ, ամէնէն երջանիկ և ա-
մէնէն գոհ կեանքերը մեր մէջ նշոյլներ ու-
նեցած են դէպ ի խորերը իրենց դժգոհու-
թեան, և ամէնէն անձկալիցը և եռանդունը,
և հիւանդը և տառապեալը բոլոր ժամանակը
իրենց խորին կարօտութիւններուն գիտակից
կ'ապրին : Մենք հոս խեղճ կորսուած՝ անտէր
բաներ ենք երկրի վրայ, հոս մեր գոյու-
թեան բեկորներովը, հոս մեր ծագման առեղ-
ժուածովը և մեր հոս գտնուելուն նպատա-
կին հազիւ կէս մը վերահասու եղած, և
խաւար, քաջայայտ, անխուսափելի մեր ամէ-
նուն առջև հեռուանց կ'երևնայ մահուան
հզօր պատը : Անոր նեղ դռնէն միլիոնաւոր
ապրողներու ամէն մէկը անցած է : Մեզմէ

ամէն մէկը դէպ այդ նոյն դուռը կ'երթայ : Իւրաքանչիւր մանրերկրորդ քայլ մըն է որ մեզ քիչ մը աւելի կը մօտեցնէ : Եւ ան դի՞ն : Անոնցմէ որոնց հոն մտնելը տեսնուած է ոչ մէկը վերադարձած է պատմելու մեզի թէ ի՞նչ կայ անդին , ըսելու մեզի թէ արդեօք իրապէս այնպիսի անդին մը կայ ինչ պէս մեր յամառ , անբնական կեանքը կ'ենթադրէ և կը յուսայ հակառակ բոլոր խաւարին : Այս է մարդուն կեանքը : Խորհեցէք անդամ մը անոր վրայ : Ու յետոյ , երբ կը նստիք կը խորհիք անոր անկատարութեան , անոր մահուան ստուգութեան , ապագայի մը տարակոյտին վրայ , թող այս ձայնը ձեզի դայ , իրր ծանօթ անձնաւորութեան մը ձայնը , և քաղցր և զօրաւոր սիրով . “Եւ ես կենդանի եմ , ու ես ան եմ որ մեռայ , և ահա կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից” (Յայտ. Ա. 18) : “Ես կենդանի եմ :” Եւ յանկարծ ձեր անկատար կեանքը իր տեղը կը գտնէ կեանքի յաւիտենականութեան մէջ որ միացած է Անոր էութեամբ : “Ես ան եմ որ մեռայ” (Հմբ. 18) : Եւ յանկարծ մահը կեանքի ահարկու վախճանէն կը փոխուի , կեանքի ամէնէն խորհրդաւոր սակայն ոչ ևս ահարկու փորձառութեան : “Կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից” (Հմբ. 18) : Եւ ոչ միայն գերեզմանէն անդին ապագայ մը կայ , այլ հոն կը բնակի Մէկը որ

մեզի հետ կը խօսի , որ հոն դնաց այն ճամբէն ուրկէ մենք պէտք է երթանք , որ կը տեսնէ մեզ և կրնայ օգնել մեզի երբ մենք կը յառաջանանք , և պիտի ընդունի մեզ երբ հոն հասնինք : Ամէն բան փոխուած չէ : Դժգոհութեան , յուսահատութեան , անձնասիրութեան , հետասիրութեան դեկերը ի՞նչ պէս ցիրուցան կ'ըլլան յարուցեալ և յաւիտենական Քրիստոսի իրապէս լուծած այդ ձայնին առջև : Իր գերեզմանին դրան առջև կը կայնի և կը խօսի , և այս խաւար ձեկերը որոնք մարդոց հոգիները շղթայած և գործունէութիւնները կաշկանդած են , իրենց երեաներուն վրայ կ'իյնան , Հռոմայեցի զինուորներուն նման , որոնք առաւօտեան դարչարչալոյսին տեսան զի՞նքը որ Արիմաթացիին գերեզմանէն դուրս կ'ելլէր , և սոսկումով դողդղացին , և հասկցան թէ իրենց օրը լմնցած էր , և թէ բանտարկեալը զոր մեռած կը կարծէին , արդարև՝ այնքան զօրաւոր էր որ իրենք չէին կրնար պահել զանիկա : Աստուած տար որ կարենայի ձեզի այդ ձայնը լսել ալ այս Զատիկի առաւօտուն :

Եւ սակայն ամբողջ մնացուցած չենք մեր Տէրոջ ինքզինք նկարագրելը , թէև առաջնորդուած ենք մասամբ գուշակելու թէ ըսելու ի՞նչ ունի դեռ : Մինչև հիմա միայն Քրիստոսի յարութեան վրայով խօսած ենք : Խօսած չենք իր աշակերտներուն յարութեան

վրայով զոր ստոյգ և որոշ կ'ընէ իր յարու-
թիւնով: Սակայն տեսէք ի՞նչպէս կը շարունա-
կէ. «Եւ ես կենդանի եմ, ու ես ան եմ որ
մեռայ, և ահա կենդանի եմ յաւիտեանս
յաւիտենից, և ես ունիմ մահուան ու դժոխ-
քին բանալիները» (Յայտ. Ա. 18): Տարտա-
րոս անշուշտ կը նշանակէ Սանդարամետ,
այդ անտեսանելի տեղը, մեռնող հոգիներու
այդ վայրը զոր մեր հաւատոյ հանգանակը կը
դաւանի: Քրիստոս ուրեմն, մահուան փորձա-
ռութիւնը կրելով, մահուան բանալիները ու-
նի անոր նշանակութիւնը պարզելու, և անոր
մէջէն առաջնորդելու անոնց որոնք իրեն նման
պիտի մեռնին: Որովհետեւ մեռաւ, անոր հա-
մար մահուան բանալիները ունի: Չե՞նք կըր-
նար հասկնալ զայդ: Չե՞նք գիտեր թէ ի՞նչ-
պէս մեծ փորձառութեան մը մէջէն անցնող
հոգի մը այդ փորձառութեան բանալիները
կը բռնէ, որպէս զի երբ տեսնէ ուրիշ մը որ
անոր կու գայ ճիշտ այնքան տղիտաբար և
երկչոտութեամբ ինչպէս ինք եկած էր, կարե-
նայ վաղել դէպ այս նորեկը և դուռը բա-
նալ անոր համար, ցուցնել անոր թէ այս
փորձառութեան մէջ մտնելու ամէնէն աղէկ
կողմը ո՞րն է, առաջնորդել անոր մտթ
անցքերուն մէջէն ուր չէր կրնար դիւրաւ իր
ճամբան գտնել, և վերջապէս անդի լոյսին
չքերութեան մէջ բերել զայն: Կը փորձուիմ
կենալ և վայրկեան մը ասոր վրայ ձեզի հետ

խորհիլ, անցողաբար, վասն զի այս է ինչ որ
մարդոց կեանքերը ամէնէն սերտիւ և ամէնէն
կենսական կերպով իրարու կը կապէ: Են-
թադրենք թէ վիշտով լեցուն կեանք մը ան-
ցուցած էք: Կամ, ենթադրենք թէ ձեր
կեանքին մէջ մեծ վիշտ մը ունեցած էք:
Սոսկ ենթադրութիւն մը չէ այս: Չեր երես-
ները կը նայիմ և գիտեմ թէ ո՞րքան ճշմարիտ
է այս ձեզմէ շատերուն և շատերուն համար,
իմ ժողովուրդս: Լաւ, դուք տառապած էք,
և ձեր տառապանքին մէջէն լոյսին հասած
էք: Եւ երբ հոն կայնած ետ կը նայիք, ո՞վ
է որ կու գայ ճամբան ի վեր ուր կը յիշէք
թէ տարիներ առաջ քալած էք, երբ տղայ
էիք, ճամբան որ ձեր տառապանքին առաջ-
նորդեց ձեզ: Կը նայիք, և ահա ուրիշ զուարթ
և անհոգ սիրտ մը երգելով կու գայ ձեր ե-
կած ճամբէն: Գիտէք թէ այդ ճամբան ուր կը
տանի, սակայն ան դեռ նշմարած չէ փորձու թիւ-
նը որ կը դողէ զայն: Յանկարծ այդ փորձու թիւ-
նը կը տեսնէ և կ'ահաբեկի: Սոսկումով կանդ
կ'առնէ: Կը դողդղայ: Վաղելու պատրաստ է:
«Հայր, ազատէ զիս ասկէ», կը լսէք թէ կ'աղա-
ղակէ: Ի՞նչ կրնաք ընել անոր համար: Եթէ
իմաստուն և յօժար էք, կ'երթաք և կը դիմա-
ւորէք զայն, և անոր կը կարկանդէք, համա-
կրական գործով մը կամ խօսքով մը, ձեր
փորձառութեան բանալին: «Չեզի ցուցնեմ»,
կ'ըսէք, «ոչ թէ որովհետեւ ձեզմէ մեծ կամ

ձեզմէ աղէկ եմ, այլ միայն որովհետեւ Հայ-
 րը աւաջ զիս առաջնորդեց հոն: Յուցնեմ
 ձեզի այդ վիշտին երթալու, անոր մէջէն
 անցնելու և անկէ դուրս ելլելու ճամբան,
 այն վիշտը ուրկէ չէք կրնար խուսափիլ: Անոր
 մէջ մտնել կատարեալ հպատակութեամբ, անոր
 մէջէն անցնիլ լուին հնազանդութեամբ, անկէ
 դուրս ելլել մաքրուած կիրքերու և կատարեալ
 սիրոյ կեանքին մտնելու համար:» Բանալին կը
 տեսնէ ձեր ձեռքին մէջ: Փորձառութիւնը կը
 տեսնէ ձեր դէմքին վրայ, և ուստի կը վստահի
 ձեզի: Ո՛րքան անօգուտ է եղբօր մը երթալ
 առանց բանալիի, առանց փորձառութիւնը ու-
 նենալու այն բանին որուն պիտի հանդիպի:
 Մեզի շնորհակալութիւն կը յայտնէ և մէկդի կը
 դառնայ: Ո՞վ ենք մենք որ անոր առաջնոր-
 դենք: Այսպէս է փորձութեան մասին: Այսպէս է
 զզջումի մասին: Անոնք որոնք փորձառութիւնը
 ունեցած և յաղթած են, ի-
 րենց բանալիներով կը կայնին կեանքի մեծ
 պատահարներուն դռնակները բանալու իրենց
 եղբայրներուն: Փորձառութեան հրաշալի ազ-
 դեցութիւնը: Եւ տեսէք թէ ո՛րքան գեղե-
 ցիկ և ազնուացուցիչ կ'ընէ այս մեր վիշտերը
 և փորձութիւնները: Վիշտի ամէն հարուած
 որ լոյս և ուրախութիւն կ'արտադրէ, Աստուած
 ձեր ձեռքը կը դնէ այդ վիշտին բանալին,
 բանալու զայն բոլոր թշուառ հոգիներուն որ
 կը տեսնէք թէ կը մօտենան անոր, բոլոր ձեր

ապագայ կենաց միջոցին: Ազնիւ բան մըն է
 բանալին առնել և գործածել զայն: Երկրի
 վրայ աւելի ազնիւ կեանքեր չկան քան այն
 մարդոց և կիներու կեանքերը, որոնք շատ
 տեսակ փորձառութիւններու մէջէն անցած
 են, և որոնք հիմա կը պտըտին հանդարտ և
 երջանիկ և լուրջ դէմքերով, իրենց բանալի-
 ները բռնած, ոմանք ոսկեղէն և ոմանք եր-
 կաթեայ, և իրենց ուրախութիւնը կը գտնեն
 այս փորձառութիւններուն դուռերը աւելի
 անփորձ հոգիներու բանալու մէջ, և զանոնք
 հմտութիւնով և յուսով և վստահութեամբ
 լեցուն այն դուռներուն զրկելու մէջ: Կար-
 ծեմ ամէնա ալ աղօթելու ենք որ այսպիսի
 կեանքերու մէջ զարգանանք մինչ տարիքով
 կը մեծնանք, և ալ աւելի կեանքի փորձա-
 ռութիւններուն մէջէն կ'անցնինք:

Եւ արդ ճիշտ աս է ինչ որ Յիսուս կ'ընէ
 մեզի համար իր յարութիւնովը: Մահուան
 և դժոխքի բանալիները ունենալով, մեզի
 կու գայ մինչ մահուան կը մօտենանք, և ա-
 նոր երկու կողմի դուռերը կը բանայ, և կը
 թողու որ անոր մէջէն նայինք, և մեզի ան-
 մահութիւն կը ցուցնէ: Ոչ թէ միայն Ան
 յաւիտեան կ'ապրի, այլ մենք ևս պիտի ապ-
 րինք. մեզի համար ևս մահը վախճան մը
 չպիտի ըլլայ, այլ փորձառութիւն մը, և
 անկէ անդին մեզի համար, ճիշտ ինչպէս

Անոր համար, անմահութիւն կը պարզուի : Որովհետեւ Ան կ'ապրի, մենք ևս պիտի ապրինք :

Եւ արդ պիտի ջանանք իրարու ըսել թէ ի՛նչ է անմահ ըլլալ, և զայն գիտնալ : Ի՛նչ է մահը կործանած տեսնել այնպէս որ կեանք պարզուի անկէ անդին, նոյն կեանքը ինչպէս այս, որ կը պարզուի, կ'ընդարձակի, սակայն էապէս նոյնն է յաւիտեան : Ճիշտ ինչպէս Անոր որ միշտ կ'ապրի այն կեանքը զոր յաւիտեան կ'ապրի նոյնն է Գողգոթայի վրայ մահուանէն վերջ, թէև բանի մը թափանցած, նոր գիտութիւնով մը, և նոր փորձառութիւնով մը, զոր առաջ չունէր : Այս է անշուշտ ինչ որ Զատիկի առաւօտուս կ'ուզեմ ըսել բոլոր այս մարդոց և կիներուն որոնք գորովանօք և կարօտով կը խորհին իրենց մեռելներուն վրայ, թերևս սոսկումով կը խորհին այսօր իրենց մահուան վրայ : Սակայն, ո՛րքան կը ջանամ, կ'ուրախանամ արդարև թէ օրուան յաւիտենական կապակցութիւններուն մէջ ձեզի խօսելու այնքան շատ բան կայ որ գիտեմ թէ պիտի թերանամ խօսելու : Սակայն փորձեմ :

Եւ ամէնէն առաջ կը խորհիմ մեր ամէնէն սաստիկ և տառապեցնող փորձութիւններուն շատերէն ազատելու անհուն և ազնիւ ազատութեան վրայ որ կու գայ մարդու մը որուն վարագոյրը վերցուած է և քօղը երկուքի

ճեղքուած : Երևակայեմ մարդ մը որ այս աշխարհէն անդին չտեսներ : Ինքզինքս խոնարհեցնեմ, և գոցեմ, մինչև որ կեանքիս բոլոր դադափարը կը դադրի և կ'ընդհատի գերեզմանին քով : Հոս պիտի աշխատիմ, մինչև ե՞րբ : Թերևս մինչև վաղը առաւօտ, թերևս մինչև ասկէ յիսուն տարի վերջ : Ի՛նչ փոյթ : Անշուշտ վայրկեանի մը համար, և յետոյ ամէն բան պիտի լմննայ : Ինչ որ կ'ընեմ ոչ թէ միայն սկսելու եմ, այլ լմնցնելու եմ հոս և հիմա : Բոլոր իղձերս, այդ խորին, խորին փափաքները որոնք հոգիիս մէջ են որովհետև ես մարդ մըն եմ, բան մը կատարելու փափաքը, հաճեցնելու փափաքը, ինքզինքս յայտնելու և պարզելու փափաքը, ամէնն ալ աղէկ փափաքներ, ամէնն ալ իմ մարդկութեանս մասերը, ամէնն ալ պէտք է դոհացուն վարագոյրին իջնելէն առաջ, եթէ ոչ երբեք չեն կրնար դոհացում գտնել, վասն զի այդ վարագոյրին իջնելը ամէնուն վախճանն է : Ի՛նչ երկչոտ եղայ : Ե՛րբան խեղճ, վեհերոտ, սահմանաւոր, անցաւոր բան մը : Պէտք չէ ձեռնարկեմ այնքան մեծ բանի մը զոր չեմ կրնար լմնցնել արևուն մարը մտնելէն առաջ : Պէտք չէ փափաքիմ բանի մը զոր այս կեանքը չկրնար ընծայել : Եթէ կ'ուզեմ հաճեցնել, զո՞վ պիտի հաճեցնեմ : Միայն իմ բոլորտիքս գտնուող այս կձկուած և ջլատուած և թերի դատու

զութիւն ունեցող մարդիկը, որոնց առջև ինքզինքս պէտք է նուաստացնեմ անոնցմէ պատիւ ստանալու համար: Եթէ կ'ուզեմ ինքզինքս ճանչցնել, պէտք է հիմակուան եղած այս անկատար անձս առնեմ, և վերցընեմ և այդ անձը ճանչցնեմ, վասն զի «հիմա կամ երբեք» է, քանի որ վախճանը կրնայ յանկարծ գալ: Ո՛րքան ծանծաղ, խռովեալ, անհամբեր. ի՞նչ գերի մը կ'ըլլամ: Ո՛ւր է իմ անկախութիւնս: Աշխարհը ի՞նչ պէս զիս նուաստացուցած է և վրաս կը կոխտտէ, զիս ներկային փոշիին և տիղմին մէջ կը կոխտտէ, որովհետև չեմ գիտեր ապագայ աշխարհ մը որուն մէջ կարենամ ինքզինքս վերցնել և փախչիլ: Եւ արդ իմ քովս բոլոր ժամանակը ուրիշ մարդ մը կայ, և անոր և իմ միջև եղած տարբերութիւնը այս է թէ ան անմահութեան կը հաւատայ: Կերպով մը յարութեան ճշմարտութեան վերահասու եղած է: Անոր համար մահը ընդհարում մը, գաղար մը, խորունկ խորհրդաւոր փոփոխութիւն մըն է, սակայն ոչ կեանքի վախճանը: Գիտեմ թէ մարդիկ կրնան պնդել թէ ատոր կը հաւատան, և սակայն շունչերու պէս ապրիլ: Մարդիկ կրնան պնդել թէ ատոր կը հաւատան, և սակայն գերիներ և երկչոտներ ըլլալ: Բայց այս մարդը իրօք կը հաւատայ. և տեսէք ի՞նչ կ'ընէ այն անոր համար: Տեսէք թէ ո՞րքան ազատ կ'ընէ զայն: Ի՞նչպէս

կը փշրէ անոր բռնակալութիւնը: Կրնայ ձեռնարկել ինքնազարգացման գործերու, կամ ճշմարտութեան տարածման, ինչ որ Մաթուսաղայի մը երկրաւոր կեանքին համար կատարելու շատ ընդարձակ գործ մըն է, և սակայն հանդարտօրէն կը ժպտի և կ'աշխատի երբ մարդիկ կ'ըսեն թէ պիտի մեռնի իր գործը լմնալէն առաջ: Մեռնի՞: Քանդակագործը հարիւր անգամ շի՞ պիտի քնանայ իր այսօրուան սկսած արձանը լմնցնելէն առաջ, և հարիւր անգամ աւելի արթննայ, իր գործին համար պատրաստ, հարիւր նոր առաւօտներու միջոցաւ իր գործին բերելով զօրութիւնը և տեսիլները որոնք իրեն եկած են իր մրավին մէջ: Կրնայ հաճեցնելու փափաքիլ, և սակայն կրնայ կատարելապէս համբերել մինչ կը սպասէ «Ապրիս» (Մատ. ԻԵ. 21) մը որ իր ականջներուն պիտի հասնի Աստուածային շրթունքներէն երբ այս աշխարհը և անոր վայելչութիւնը անցնի: Կրնայ ինքզինք ցուցնելու փափաքիլ, և սակայն մոթի մէջ գոհ կ'ապրի, վստահ ըլլալով թէ օր մը, ի՞նչ փոյթ թէ ե՛րբ անոր որ յաւիտենականութեան մէջ կ'ապրի, Աստուած պիտի կանչէ զայն, և պիտի հրամայէ մարդոց որ անոր մէջ տեսնեն սիրոյ և շնորհքի գործը: Կրնա՞ք այդպիսի մարդու մը անկախութիւնը պատկերացնել: Իմ փորձութիւններս ի՞նչ են անոր համար: Ի՞նչպէս այն փորձութիւններ

ըուն վրայէն հեռատեսութեամբ կ'անցնի այնպիսի մարդու մը նման որ հաստատ քայլերով և հեռատեսութեամբ կը քայլէ և երբեք չտեսներ ճամբուն վրայի խիճը որուն ետև սողոսկող միջատ մը արգիլուած և խափանուած է: Երբեմն, երբ մէկը օտար երկրի մը մէջ կը ճամբորդէ, կը պատահի որ մէկ երկու օր կամ մէկ երկու շաբաթ կը կենայ պղտիկ գիւղի մը մէջ, ուր ամէն բան տեղական է, որ քիչ հաղորդակցութիւն ունի արտաքին աշխարհին հետ, ուր ժողովուրդը կը ծնի և կը մեծնայ, և կը ծերանայ և կը մեռնի առանց իրենց լեռներուն մէջի պղտիկ բոյնէն բաժնուիլ խորհելու: Ճամբորդը քիչ մը տեսն անոնց տեղական կեանքին կը մասնակցի, անոնց սահմանումին մէջ կը փակուի: Սակայն բոլոր ժամանակը անոնցմէ աւելի ազատ է. ճնշուած չէ ոչինչ կանոններէն և չնչին աստիճաններէն որոնք կ'իշխեն անոնց վրայ: Ան աւելի ընդարձակ աշխարհի մը վրայ տեղեկութիւն ունի և անոր կը վերաբերի: Ազատ է ճանաչումովը լեռներէն անդին եղող աշխարհին, ուրկէ եկած է և ուր պիտի վերադառնայ նորէն: Եւ այսպէս երբ մարդ մը, անմահութեան զօրաւոր համոզումով, իրօք ինքզինք օտարական մը և պանդուխտ մը կը համարի այն բազմութեան մէջ, որոնք ասկէ զատ ուրիշ աշխարհ չեն գիտեր, ուրեմն ազատ է անոնց մէջ. ազատ աշխարհային դժնդակ

վիճակներէ որոնք կը կաշկանդեն զանոնք. անոնց երկչոտ և անարգ ըլլալու փորձութիւններէն ազատ: Մահուան պատը ուրկէ անդին երբեք չեն նայիր, անոր համար միայն լեռ մըն է որուն վրայէն կարելի է անցնիլ, որուն գագաթէն պիտի տեսնէ յաւիտենականութիւնը, որուն ինք կը վերաբերի: Այս է ազատութիւնը ամէնէն աղէկ մանկութեան և ամէնէն աղէկ ծերութեան, կեանքի այս երկու եղբրուն, որոնց մէջ անմահութեան զգացումը ամէնէն իրական և ամէնէն ճշմարիտ է:

Ո՛րքան աղէկ պիտի ըլլար մեզի համար եթէ այս պայծառ Զատիկի օրը կարենար ցուցնել մեզի անմահութիւնը և այսպէս մեզմէ մէկ քանիները ազատ արձակէր: Կան բաներ զորս կը վախնաք ընել, շիտակ խօսք մը զոր կը վախնաք խօսիլ, չար ունակութիւն մը զոր կը վախնաք ձգել, ինքնազարգացում մը որուն կը վախնաք ձեռնարկել, պղտիկ արկածախնդրութիւնով մը օգտակար ըլլալու ձեռնարկ մը ուրկէ կը քաշուիք տկար վախով մը թէ մարդիկ ի՛նչ պիտի ըսեն այդ մասին, պղտիկ աշխարհէն վախնալով: Անմիջապէս այդ վախէն պիտի ազատուէիք եթէ իրական համարէիք ձեր անմահութիւնը և ձեր յաւիտենական կեանքին ընդարձակ աշխարհին մէջտեղը կայնէիք, ինչպէս մշուշը որ խիտ և խոնաւ կը տատանի ձորերուն մէջ կը փառատի և կը կորսուի բլրադադաթներուն վրայի

ազատ մթնորոտին հասնիլ ճգնելուն պէս : Վազանցիկ արհամարհանքը կամ քննադատութիւնը թէև վշտացնէ այն մարդը որ յաւելտեան պիտի ապրի, ի՞նչպէս կրնայ զայն սարսափեցնել : Ան ազատ է : Անիկա Աստուծոյ որդիներուն փառաւոր ազատութեան մէջ մտած է :

Եւ ուստի, նորէն պարտականութեան ամբողջ դիրքը բարձրացած է անմահութեան խորհուրդովը և դիտութիւնովը : Պարտականութիւնը անհուն զօրութիւն մըն է և գործելու համար անհուն աշխարհի մը կը կարօտի : Չեմ ուրանար զայս, Աստուած չընէ : Կը սիրեմ դիտել պարտականութեան զօրութիւնը որ կը գործէ մարդու մը մէջ որ անկարող է հաւատալու թէ իր ապրած կեանքը միջատի մը կեանքէն աւելի է : Յամառ ստոյիկեան բան մըն է այս, սակայն կայ բան մը որ մեզի սիրել կու տայ զայն սիրով մը որ ալ աւելի գորովալի է որովհետև այնքան մեղամազձիկ է հաստատ որոշումին մէջ որ կ'ըսէ, «Չեմ համարձակիր խորհիլ թէ պիտի ապրիմ այս կեանքին վերջանալէն ետքը, և կրնայ յաջորդ շունչովս վերջանալ, սակայն և այնպէս, ո՛րքան մութ և անօգուտ ալ թուի, չպիտի ընեմ բան մը զոր խիղճս սխալ կը կոչէ, և պիտի ընեմ ինչ որ խիղճս կ'ըսէ թէ շիտակ է, ցորքան հոս երկրի վրայ եմ :» Գեղեցիկ բան մը ունի այդ, սակայն ո՛րքան

տխուր և մութ է : Այս որոշումը հազուադիւր հոգիներու համար է : Ո՞վ երբեք կ'երազէ թէ ամբողջ սերունդը կրնար ապրիլ սկսիլ այդքան խիստ խոժոռ պարտականութեան գրգիռով մը : Սակայն հիմա Քրիստոս թող դայ այդ քաջ մարդուն մահուան և դժօխքի բանալիները բռնած : Ո՛հ, քաջ մարդ, այնքան մի սիրէք ձեր քաջութիւնը որ ապագայի վրայ տեղեկութիւն չունեցող խիստ ստոյիկեան պարտականութեան վրայ պնդէք, երբ Ան ձեր առջև կը պարզէ հոգեկան ապագան որ իրօք ամէն պարտաճանաչ գործի կը վերաբերի, և կը ցուցնէ ձեզի աշխարհ մը ուր այս դժուարին սերմերը, զորս կը ցանէք հիմա, իրենց պտուղը պիտի արտադրեն : Ինձի կ'երևի թէ այս օրը զօրաւոր և զուարթ որոշումներու օր մըն է, վասն զի օր մըն է երբ, հոգեկան աշխարհին մեր առջև պարզուելովը, ամէնս ալ կրնանք տեսնել պարտականութեան ճակատագիրը, թէ ինչպէս ժամանակ մը ամէն աղէկ սովորութիւն պիտի յաղթէ և ամէն բարի գործ իր թագը պիտի կրէ : Եկէք, առէք ձեր այդ գործը ուրուն համար առաջ կը վարանէիք, և կը քաշուէիք և բոլորտիքը կը պտըտէիք, և այս Չատկի օրը զայն վերցուցէք և ըրէք : Ան ձեր պարտականութիւնն է : Այն բանը որ ուրիշ օրեր դժնդակ և պաղ կը հնչէ, այսօր պէտք է տար և ազդու հնչէ : Վասն զի այսօր

կրնանք տեսնել թէ պարտականութիւնը կ'արժէ: Պարտականութիւնը միակ բանն է երկրի վրայ որ այնքան էական է որ կրնայ մահուան ենթարկուիլ և վառքի հասնիլ: Պարտականութիւնը միակ սերմն է որ այնպիսի կեանք ունի իր մէջ որ կրնայ մնալ ցորքան Աստուած կը մնայ մահուան մոմեա ձեռքին մէջ, և սակայն պատրաստ է ո՛նէ վայրկեան նոր աճման սկսիլ նոր հողին մէջ ուր Անիկա պիտի դնէ զայն: Ուստի ամէնս նուիրենք մեր Զատիկի օրը աներկիւղ ստանձնելու նոր պարտականութիւն մը զոր գիտենք թէ պէտք է կատարենք: Այսպէս մեր անձերը նոր շղթայով մը յաւիտենականութեան կը կապենք, յաւիտենականութեանը Անոր “որ այն ուրախութեանը համար որ իր առջև կեցած էր, խաչը յանձն առաւ, ամօթը արհամարհեց, ու Աստուծոյ աթոռին աջ կողմը նստաւ:” Եբր. ԺԲ. 2:

Կ'ուզէի խօսիլ զարձեւալ անմահութեան զօրութեան միջոցաւ բարեկամութեան և մեր իրարու հետ ունեցած բոլոր ամէնէն աղէկ յարաբերութիւններուն ստացած նոր կեանքին վրայով: Սակայն ասոր կամ ուրիշ բանի վրայ պէտք չէ շատ խօսիմ: Անմահութեան վրայ խօսիլը կեանքի վրայ խօսելու պէս է: Բան մը չկայ որ անմահութիւնը չօշափէ: Կարծեմ երկու բաները որոնք ուրիշ բոլոր բաներէ աւելի ստիպած են մարդիկ ամէն

դարու մէջ անմահութեան հաւատալու, առանց ո՛նէ յայտնութեան, որչափ որ դիտենք, բաց ի անկէ որ մարդկային սրտին վրայ գրուած է, աշխարհին խզուած կեանքերը և խզուած բարեկամութիւնները եղած են: Մարդիկ չէին կրնար հաւատալ թէ այս երիտասարդ կեանքը որ այսքան յանկարծ կ'ընդհատի, յաւիտենապէս վերջացած է: Այդ կեանքը կը թելադրէ իր տեղութիւնը: Եւ երբ իրենց համակրութիւնը կ'աւելնար տարիներով փառաւոր և ճշմարիտ հոգիի մը նկատմամբ, և երբ հասկնալու նոր անհուն անեզր կողմեր կը նշմարէին անոր մէջ, անկարելի էր իրենց համար անոր դադաղին քով կայնիլ և խորհիլ թէ ամէն բան լմնցած է: Ինքնաբերաբար բարեկամութիւնը դերեղմանէն անդին յաղթանակեց: Սէրը մահուանէ շատ աւելի զօրաւոր էր: Եւ սակայն, ինչ սոսկալի կասկածներ: Թերևս ասկէ անդին չկայ: Թերևս ամէն բան լմնցած է: Մինչև որ իր բոլոր տարակոյսներով դերեղմանին դրան առջև կայնած հոգիին եկաւ Ան որ կենդանի է և մեռաւ ինչպէս եկաւ Մարթայի, և մահուան բանալին բռնած, ըսաւ սա վսեմ վերջին վճռական խօսքերը, “Քու եղբայրդ յարութիւն պիտի առնէ” (Յովհ. ԺԱ. 23): Մարդոց հոգիները խայտացին այդ խօսքին համար, որովհետև կ'ուզէին ասոր հաւատալ, և չէին համարձակած բոլորովին հա-

ւատալ մինչև որ Անիկա ցուցուց անոնց թէ ճշմարիտ էր: Եւ արդ եթէ Անոր կը հաւատանք, այդ խօսքին կը հաւատանք, և մահը իրօք մեզի համար փոխուած է, և մեռելները իրօք կենդանի են կենդանի Քրիստոսի վստահութիւնովը: Պատուական կապակցութիւն մըն է, կապակցութիւն մը որուն խորհրդաւոր գեղեցկութիւնը շարունակ ա՛լ աւելի կը սորվինք, թէ Քրիստոսի նկատմամբ մեր ունեցած հոգեկան փորձառութիւնը որքան խորին ըլլայ, այնքան աւելի մեր հոգեկան կեանքը իրապէս Անոր կեանքէն կախում կ'ունենայ իբր իր փրկիչը և տեական բարեկամը, այնքան աւելի իրական կու գայ մեզի անչէ՛ջ կեանքը անոնց որոնք մեզմէ բաժնուած են Անոր հետ ըլլալու համար: Այդ վայրկեաններուն երբ Քրիստոս ամէնէն իրականն է ինձի, երբ Ան կ'ապրի իմ փափաքներուս կեդրոնին մէջ և ես խորապէս կ'ապաւինիմ Անոր օգնութեան, այդ վայրկեաններուն ամէնէն աւելի վստահ եմ թէ մեռնողները կորսուած չեն, թէ անոնք զորս առած է այս Քրիստոսը որուն ես կը վստահիմ, ան կը պահէ զանոնք: Ո՛րքան աւելի Ան կ'ապրի ինձի համար այնքան աւելի անոնք կ'ապրին: Կ'ուզեմ ձեզի զգացնել այսօր կենդանի Քրիստոսի այս զօրութիւնը: Անցեալ Զատիկէն ի վեր ուրիշ տարի մը գացած է մեզմէ և իր մեռելները իրեն հետ տարած: Ձեր ընտանիքներէն

և այս ժողովուրդէն անոնք գացած են: Ձեր սիրտերը կը հասկնան զանոնք մինչ ես կը խօսիմ: Պզտիկ տղեկը և յոգնած ծերունին: Քաջ և յուսալից տղաքները և աղջիկները որոնք իրենց յոյսը և խրախոյսը և իրենց սրտերուն թռիչքը ուրիշ աշխարհներ կը տանէին, և իրենց ետև կը ձգեն յիշատակներ զրոնց մէջ գեղեցկութիւնը և պատուականութիւնը և պերճանքը կը պայքարին տրտմութեան հետ մինչև որ չենք կրնար զանոնք իրարմէ բաժնել կամ ըսել թէ ո՛րն է ամէնէն մեծը: Դեռատի մայրը իր զաւակները ձգած է: Ամուսինը կինը ձգած է: Կինը մութ ճամբէն գացած է ամուսինէն առաջ: Չուարթ և արեգակնափայլ բարեկամը՝ զոր շատերը կը ճանչնային, և զոր բոլոր ճանչցողները կը սիրէին իր քաղցր սրտին և յօժար բարեսիրութեան և զուարթ բնաւորութեան և համբերատար հոգիին և յարատև անձնուրացութեան և անկեղծ հաւատքին համար: Բոլոր ասոնք մեզմէ գացած են Աստուծոյ աշխարհը: Երբ զայս կը գրէի, մեր ժողովուրդին տոմարը բացի, և ցանկը նայեցայ, և արդարև երկար ցանկ մըն էր: Ծերը և երիտասարդը, իրենց մահերը իրարու քով նշանակուած էին գերեզմանաասան մը մէջի խառն գերեզմաններուն նման: Երիտասարդներէն աւելի ծերեր կային, և սակայն երիտասարդներն ալ սակաւաթիւ չէին: Բայց

երբ կարգացի և Զատկի օրուան վրայ մտածեցի, չէի կրնար խորհիլ թէ անոնք դացած էին: Առաջին Զատկի օրը գերեզմանները բացուեցան, և մեռելները դուրս ելան և սուրբ քաղաքը մտան, և շատերէն տեսնուեցան: Եթէ մեր սրտին քաղաքը սուրբ է կենդանի Քրիստոսի մը ներկայութեամբ, այն ատեն սիրելի մեռելները մեզի պիտի դան և պիտի գիտնանք թէ անոնք մեռած չեն այլ կենդանի, և պիտի օրհնենք զԱնիկա որ անոնց Փրկիչը եղած է, և պիտի ուրախանանք այն գործին համար զոր անոնք կ'ընեն Անոր համար Անոր կատարեալ աշխարհին մէջ, և ցնծութեամբ պիտի դիմենք դէպ ի մեր փրկութիւնը, չվախնալով մինչև իսկ գերեզմանէն, որովհետև անոր քով կը կայնի Ան զոր կը ճանչնանք և կը սիրենք, և որ մահուան և դժոխքին բանալիները ունի:

Կենդանի Քրիստոս մը, սիրելի բարեկամներ, հին, միշտ նոր, միշտ օրհնեալ Զատկի ճշմարտութիւնը: Ան կ'ապրի. Ան մեռած էր. Ան կենդանի է յաւիտեան: Ո՛հ, երանի թէ ամէն մեռած և ձեական բան վտարուի մեր դաւանութենէն, մեր կեանքէն, մեր սրտէն այսօր: Ան կենդանի է: Կը հաւատա՞ք ասոր: Ինչո՞ւ համար տխուր ես, ով սգաւոր. ինչո՞ւ կը վարանիս, ով գործող. ինչո՞ւ մահուանէ կը վախնաս, ով մարդ: Ո՛հ, եթէ միայն կարենայինք մեր գլուխները վերցնել

և Անոր հետ ապրիլ. ապրիլ նոր կեանքեր, բարձր կեանքեր, յոյսի և սիրոյ և սրբութեան կեանքեր, որոնց համար մահը ոչինչ պիտի ըլլայ այլ միայն վերջին ամպին փարափը, և կեանքին իր կատարման հասնիլը: Երանի՛ թէ Աստուած մեզի այսպիսի օրհնութիւններ շնորհէր այս Զատկի օրուան մէջ:



ՎԵՐ. ԱՐՍԷՆ Պ. ՇՄԱԻՈՆԵԱՆ



«Ուստի բոլոր Իսրայէլի տունը ճշմարտապէս թող գիտնա՛յ, որ Աստուած անիկա Տէր ալ ըրաւ Օծեալ ալ, ան Յիսուսը որ դուք խաչեցիք Դոր. Բ. 36:

Այս խօսքովը Պետրոս կը փակէ Քրիստոնէութեան առաջին պաշտպանողական ճառը: Ամբողջ աշխարհ իր ներկայացուցիչները զըրկած էր այդ ճառին, թէ՛ Հրեաներ և թէ՛ նորահաւատներ, «Պարթևք և Մարք և Եղամացիք, և անոնք որ կը բնակին Միջագետի մէջ, և Հրէաստանի և Կապադովկիայի մէջ, Պոնտոսի և Ասիայի մէջ, Փոփուգիայի և Պամփիլիայի մէջ, Եգիպտոսի մէջ, և Կիւրենէի մօտ Լիբէացոց կողմերուն մէջ, նաև Հուլիմայեցի պանդուխտներ:» Աստուծոյ Նախախնամութիւնը այս ամէնը Երուսաղէմ ժողոված էր այդ օրը, և Աստուծոյ Սուրբ Հոգին ներշնչեց Պետրոսը որ պարզէ իր քարոզիչը Աւետարանը և պաշտպանէ այն նոր Եկեղե-

ցին զոր հիմնելու պաշտօն ընդունած էր իր վարդապետէն: Եւ Պետրոս իր բոլոր խօսածը այս մէկ համարին մէջ կ'ամփոփէ, «Ուստի բոլոր Իսրայէլի տունը թող ճշմարտապէս գիտնայ որ Աստուած Անիկա Տէր ալ ըրաւ Օծեալ ալ, ան Յիսուսը որ դուք խաչեցիք:» Եւ աս ամփոփումին մէջ ալ բառ մը կայ Էական որ ամէն բան կը պարունակէ — Յիսուս: Այո, երբ աշխարհ համայն ոտք ելաւ պահանջելու որ Պետրոս և իր ընկերները ըսեն միանգամ՝ ընդ միշտ թէ ինչ է իրենց սորվեցուցած նոր վարդապետութիւնը, թէ ինչ նոր դրութիւն նոր օրէնք ունին հաստատելիք և ինչի՞ վրայ կը հիմնեն իրենց սորվեցուցածը, անոնք, Հոգւով Սրբով լեցուած ոտքի ելան և այս պատասխանը տուին — Յիսուս:

Կարևոր է յիշել այս իրողութիւնը: Եկեղեցին, առաջին Առաքելական եկեղեցին մի միայն Յիսուս Քրիստոսի վրայ հիմնուած է: Այս տասներկու առաքեալները գործի ձեռնարկեցին առանց կանոնաւոր կազմակերպութեան, առանց խնամով դժուած ծրագրի, առանց կանոնադրութեան, առանց պայմանագրի, առանց դրաւոր վարդապետական դրութեան, առանց դրամագրիսու: Այս բաները որոնք մենք այնքան կենսական պայմաններ կը համարինք եկեղեցւոյ մը կազմակերպութեան և վարչութեան համար, չկային

ընաւ ա՛յն օրը երբ Քրիստոսի եկեղեցին պաշտօնապէս ինքզինքը հիմնեալ հոշակեց ընդհանուր աշխարհին : Տասներկու պարզ անկեղծ մարդիկ կային որոնք Տէրը ճանչցած էին մօտէն և անոր ընկերացած էին այն երեք տարուան միջոցին երբ անիկա ժողովուրդին հետ կ'ապրէր և կը գործէր . այն տասներկուքէն մին ինկած էր , իր տեղը երթալու , անոր տեղը ուրիշ մը ընտրեցին , և այս տասներկու հոգին այսօր կ'ելլեն ամբողջ աշխարհին դէմ և կը հոշակեն թէ աշխարհը մաքրելու , պայծառացնելու , երջանիկ և սուրբ ընելու զօրութիւնը իրենց ձեռքն է , և թէ իրենք հրաման ունին այն օրէն իսկ այդ զօրութիւնը գործածելու , աշխարհը կերպարանափոխ ընելու , և երբ իրենց կը հարցուի թէ ի՞նչ բանի մէջ կը կայանայ այդ զօրութիւնը , թէ ի՞նչ կաղմակերպեալ ոյժ , ի՞նչ գրութիւն , ի՞նչ փիլիսոփայութիւն , ի՞նչ բանակներ ունին իրենց հրամանին ներքեւ որով կ'ակնկալեն մարդկային իրերը կերպարանափոխ ընել , ի՞նչ զօրութիւն երկինքէն որով կրնան նշաններ և հրաշքներ գործել , անոնք պատասխան կու տան և կ'ըսեն — Յիսուս Քրիստոս :

Գիտենք և կ'ուզենք որ դուք ալ գիտնաք ճշմարտապէս այն թէ Աստուած անիկա Տէր ալ ըրաւ Օծեալ ալ , այն Յիսուսը որ դուք խաչեցիք :

Ոմանք ծաղր կ'ընեն զանոնք և կ'ըսեն , Ասոնք նոր գինիով լեցուեր են , այնպէս չէ սակայն , օրուան երրորդ ժամն է , նոր դարագլխու մը վայրկեանը հնչած է և այս մարդիկը ժամավաճառ ըլլալու տրամադիր չեն , ոչ ալ գինովնալու , տեսիլներով օրօրուելու հակամէտ :

Պաշտօն մը ունին անոնք և իրենց պաշտօնին կարևորութեանը գիտակից են , պաշտօն մը յանձնուած է անոնց Տէրովը կողմէն , մասնաւոր գործի մը կատարման համար առաքեալներ կարգուած են , հրաւիրուած են վկաներ կանգնիլ Երուսաղէմի մէջ և բոլոր Հրէաստանի և Սամարիայի մէջ և մինչև երկրի ծայրերը :

Իրա՛ւ ծրագիր մը մատուցուած չէր իրենց , ոչ ալ մասնաւոր կաղմակերպութեան մը անդամ կարգուած էին . Քրիստոսի պատուէրը առած էին , անոր յիշատակովը սրտերին լեցուած էր , կեանքի մը ականատես եղած էին և հանգիստ պիտի չունենային մինչև որ աշխարհի մէկ ծայրէն միւսը հոշակէին այդ կեանքին պատմութիւնը : Անիկա այնպէս տնօրինած էր , երբ լերան վրայ իւր վերջին հրաժեշտը տուաւ իր աշակերտներուն և պատուիրեց որ երթան ու բոլոր աշխարհ Աւետարանը քարոզեն այնպէս ըսած էր , “Դուք իմ վկաներս պիտի ըլլաք Երուսաղէմի մէջ և բոլոր Հրէաստանի

և Սամարիայի մէջ և մինչև երկրի ծայրերը”
 Եւ աս ըսելով իր ձեռքերը վերցուց անոնց
 վրայ և օրհնեց զանոնք և անոնցմէ առնուե-
 ցաւ և ամպ մը զանիկա անոնցմէ առաւ : Ի-
 րենց Տէրը և Վարդապետը ոչ ևս էր և իր
 սկսած գործը ահա անոնց յանձնելով համ-
 բարձեր էր իր Հօրը փառացը աջ կողմը բազ-
 մելու, և աշակերտները շուրջերնին նայելով
 կրնային տեսնել լեռան ստորտը Երուսաղէմը
 և անդին Հրէաստանը և Սամարիան և անկէ
 անդին հեռաւորութեան մէջին մէջ թաղուած
 ամբողջ աշխարհը մարդկային մեղքով ծան-
 րաբեռնեալ : Եւ այդ մեղաւոր, անտարբեր,
 ընդարձակ աշխարհը կերպարանափոխ ընել
 էր իրենց պարտաւորութիւնը : Տէրոջը պատ-
 ուէրն էր որ այս փոքրիկ խումբը այդ ահա-
 գին աշխարհին հասնի, մեղաց այդ բեռը
 վերցնելու և այդ խաւարը փարատելու սկսի :
 Աստուծոյ թաղաւորութեան դալուստը հոչա-
 կէ : Եւ ի՞նչպէս, ի՞նչ նորօրինակ միջոցնե-
 րով, ի՞նչ նոր մեթոտով, որպիսի՞ կազմակեր-
 պութեամբ մը, ի՞նչ նոր վարդապետութեան
 զօրութեամբը, ոչինչ : Ասոնց և ոչ մէկը ժա-
 ռանգած էին աշակերտները իրենց Տէրոջմէն :
 Անիկա երբ աշխարհէս առնուեցաւ, իր հե-
 տկորդները բնաւ բան մը չունէին ձեռքերնին
 որ յուցնէին և ըսէին ասիկա Տէրը մեզի թո-
 ղուց : Եւ Աստուած այնպէս տնօրինած էր .
 Աստուած կամեցաւ որ Աւետարանին քարո-

ղիչները կազմակերպութեան մը գերիները
 չըլլան, օրէնք մը չպաշտեն, հապա ֆրիստոսը
 և միմիայն ֆրիստոսը քարոզեն : “Ի՞նչ կու-
 տաս Տէր, որ անով աշխարհը քեզի համար
 շահինք” ըսին թերևս աշակերտները, և Յիսու-
 սի պատասխանը գիտէք — “Ի՞նչ վկաներս պի-
 տի ըլլաք,” և “Ե՞ս ձեզի հետ եմ մինչև աշ-
 խարհիս վերջը :”

Անիկա այսքանը բաւական սեպեց . անի-
 կա իր գործը կատարեալ նկատեց երբ իւր
 հեղութեամբը և խոնարհութեամբը, իր ան-
 կեղծութեամբը, սրբութեամբը և սիրովը աշ-
 խարհէն քանի մը հոգի շահեցաւ, ներգործեց
 անոնց մաքերուն վրայ ներշնչելով անոնց հո-
 դևոր խորհուրդներ, և քանի մը կեանք կա-
 ղապարեց իր կեանքին նմանցունելու : Եւ
 եթէ Ա՛, Տէրը և Իշխանը, այսքանը բաւական
 կը սեպէ, աշակերտները իբր անօր ծառաներ
 անօր եկեղեցին կը հիմնեն աներկիւղ ասկէ
 աւելին չսպասելով : Կարդացէք ուշադրու-
 թեամբ Պետրոսին խօսքերը և պիտի տեսնաք
 որ սխալած չեմ երբ կ’ըսեմ թէ ամբողջ քա-
 րոյը կրնայ խտացուիլ և ամփոփուիլ մէկ
 բառի մը մէջ — Յիսուս : Պարզ և դիւրա-
 հասկնալի կերպով կը պատմէ — Եւ Սբ. Գրքէն
 վկայութիւններով կը հաստատէ պատմածը —
 թէ Յիսուս Նազովրեցին ապրած էր իրենց
 մէջ, բարիք գործելու շրջած էր, խաչուած,
 թաղուած և երրորդ օրը յարութիւն առած

էր: Ասկէ անդին ուրիշ բան մը չըսեր և չուղեր ըսել: Ինչ որ Սբ. Պօղոս կորնթացոց կ'ըսէ, նոյնը կըսէ Սբ. Պետրոս Հրեաներուն և նորահաւատներուն, կրեացիներուն և Արաբացիներուն — Միտքս չդրի ձեր մէջը ուրիշ բան մը գիտնալ, բայց միայն Յիսուս Քրիստոսը և ան խաչը ելած:

Եւ այդ բաւ էր կորնթոսի, այդ բաւ է աշխարհին — Յիսուս Քրիստոս:

Անոր վրայ հիմնուեցաւ եկեղեցին, անով կանգուն կը մնայ: Եւ այսօր ալ մենք բնիկ պէտք ունեն եկեղեցին Քրիստոսի: Օրէնքի և կազմակերպութեան կը կարօտինք, իմաստուն գործունէութեան և ուղիղ դաւանանքի, և պաշտամունքի մէջ պատշաճութեան և երկիրդածութեան կը կարօտինք, բայց այս ամենէն աւելի, անհունապէս աւելի պէտք ունինք Քրիստոսի:

Երբեմն այնպէս կը թուի ինծի թէ եթէ Յիսուս մեր եկեղեցիներէն միոյն մէջ մանէր, օտարի մը պէս պիտի մնար մեր մէջը. այնքան հեռացած ենք անոր ոգիէն:

Լուսերի օրերէն ի վեր մարդիկ կը սիրեն պնդել թէ իրենց եկեղեցին իր օրէնքներովը, կառավարութեան եղանակովը, հաւատոյ դաւանանքովը, Նոր կտակարանի, նախնի առաքելական եկեղեցւոյն վրայ ձևուած է: Քանի քանի հատորներ գրուած են այս բաները ապացուցանելու համար:

Կարծեմ կարևոր է յիշել թէ առաքելական եկեղեցին հիմնուեցաւ ոչ մէկ ձևի, աւարտողութեան, կազմակերպութեան վրայ, թէ Քրիստոնէութիւնը այս բաներէն կախում չունի, թէ աշխարհը ասոնցմով չէ որ կը փրկուի:

Ասոնք կարևոր բաներ են անտարակոյս, և պարտինք հաստատապէս բռնել և պահել այս ամէնը, և սակայն չմոռնանք բնաւ թէ ասոնցմէ և ոչ մին, ոչ իսկ ամէնը միասին կրնան ինքնին եկեղեցի մը կազմել. էականը, այն որուն վրայ հիմնուեցաւ առաքելական եկեղեցին, առանց որուն ոչ մէկ եկեղեցի կրնայ գոյութիւն ունենալ, նոյնն է երէկ, այսօր և յաւիտեան — Յիսուս Քրիստոս:

Գրութեան մը կատարելութիւնը չէ որ աշխարհը պիտի փրկէ, այլ անձի մը զօրութիւնը:

Կեանքի մը ազդեցութիւնը, կեանքի մը որուն յիշատակն իսկ կը բաւէ սրտերը բոցավառելու և կեանք և աշխոյժ ներշնչելու մարդոց, այն Հոգիին զօրութիւնը որով Քրիստոս մարդկութիւնը լեցուց, այն բուռն սէրը որով մեզ սիրեց և որով մենք կրնանք սիրել զայն — ասոնք են փրկութեան միակ յոյսը:

Եկեղեցիին ներքին կեանքը պէտք չէ որ արտաքին տնօրինութիւններէ կախեալ ըլլայ, այլ յաւէտ արտաքին տնօրինութիւնները պէտք է առաջ գան ներքին կեանքէն: Ամենէն կատարեալ կերպով կազմակերպուած եկեղեցին չէ որ ամենէն աւելի ընդունելի է

Աստուծոյ, այլ այն ուր ամէնէն աւելի ֆրիստոսի ողին կը սիրէ:

Քրիստոս եկաւ ոչ թէ Աւետարան քարոզելու հապա Աւետարանը ըլլալու: Անիկա չըսաւ թէ ես ճշմարտութիւնը կը սորվեցնեմ եւ ճամբան կը ցուցնեմ, հապա “Ես եմ ճամբան եւ ճշմարտութիւնը եւ կեանքը:” Ոչ թէ անոնք որ անոր ըսածները լսեցին, Հօրը վրայ տեղեկութիւններ առին, հապա անոնք որ զայն տեսան, Հայրը տեսան:

Մեր կրօնին մէջ ամէն բան կը կեդրոնանայ ֆրիստոսի անձին վրայ, Անոր կեանքը, Անոր մահը, Անոր յարութիւնը: Եւ ֆրիստոսի վրայ մեր ունեցած սէրը միայն կը հայթայթէ այն զօրութիւնը որով ֆրիստոնէութեան պահանջները կատարելու կարող կ'ըլլանք:


Անիկա ամէն բան սիրոյ ներշնչմանը կը թողու: “Այս ըրէք իմ սիրոյս համար”, կ'ըսէ եւ ահա անօթիները կը կերակրուին, մերկերը կը հագուեցուին, օտարականները ներս կ'առնուին, հիւանդները եւ նեղեալները խնամքի եւ գուրգուրանաց կ'արժանանան:

Օրէնք եւ կարգ ու կանոն, ուղղափառ աստուածաբանութիւն եւ կատարեալ կազմակերպութիւն, երկինքի բաղձանքը կամ դժոխոց վախը չեն որ ճշմարիտ ֆրիստոնեաներ կը հասցնեն: Սէրը միայն կարող է այդ հրաշքը գործել: “Թէ որ զիս կը սիրէք իմ

պատուիրանքներս պահեցէք,” կ'ըսէ. այն որ զայն կը սիրէ անոր պատուիրանքները պահած կ'ըլլայ: Սերտ սիրով, անսպառ սիրով զայն սիրողները խաւարէն լոյսի, մահէն կեանքի կը փոխուին:

Քրիստոս է մեր կրօնին սկիզբը եւ վախճանը, Ալֆան եւ Օմէղան, Ամէնը: Անոր մէջ պէտք է գտնենք մեր Աստուածաբանութիւնը, մեր բարոյականը, մեր օրէնքը, կարգը եւ կանոնը, մեր ներշնչութիւնը, մեր շարժիչ զօրութիւնը եւ նպատակակէտը:

Քրիստոնէութեան ճշմարիտ սահմանը ուրեմն այն է որ Պենտեկոստէին օրը տրուեցաւ ակնկառուոյց աշխարհին. “Թող ամէն մարդ գիտնայ ճշմարտապէս որ Աստուած Անիկա Տէր ալ ըրաւ Օծեալ ալ ան Յիսուսը որ մարդիկ խաչեցին:” Աշխարհ մը կայ որ պէտք է փրկուի մեղքէն ու մահէն, եւ մենք, Աստուծոյ Ս. եկեղեցին, եթէ կ'ուզենք այդ փրկութեան գործին նպաստել, տանք աշխարհին ամէն բանէ առաջ եւ ամէնէն աւելի այն որուն սէրը մեզ Աստուծոյ որդիներ կ'ընէ: Այն մեզ սիրելով երկինքէն երկիր խոնարհեցաւ, մենք զայն սիրելով երկրէն երկինք պիտի բարձրանանք. ինչու որ անիկա էր որ ըսաւ, “Ես ալ երբոր երկրէն բարձրանամ ամէնն ալ ինձի պիտի քաշեմ:”



ՎԵՐ. ՏՈԳ. Ը. ԶԷՅՄՈՐԸՍ

Պարտիզակի Բարձր. Վարժարանի Ընթացատարներուն ուղեւ

«Ու գիրքերը բացուեցան» Յայտ. Ի. 12:

Իւրաքանչիւր մարդ պատասխանատուութեան գիտակցութիւն մը ունի: Մենք գիտենք որ օժտուած ենք կարողութիւններով՝ մասնաւոր և օգտակար նպատակի մը ծառայելու համար. և մեր իմացողութիւնը մեզի կը սորվեցնէ որ օր մը գերագոյն Հեղինակութեան առջև կայնած պիտի ստիպուինք անոր հաշիւ տալ, որով յայտնի պիտի ըլլայ թէ մեր կենաց ընթացքը համապատասխանած է մեզ Ստեղծողին կամքին թէ ոչ:

Երբոր պատեհութիւններ կը շնորհուին մեզի օգտակար ըլլալու, բարիք գործելու և մեզի տրուած տաղանդները զարգացնելու համար՝ մեր բարոյական բնութիւնը կը հարկադրէ մեզ անպատճառ օգուտ քաղել այդ պատեհութիւններէն, և տանջանք կը սպառնայ եթէ անհոգ և զանցառու գտնուինք: Մեր փորձառութիւնը մեզի կը սորվեցնէ թէ՛

“Ս,յն պայքարին մէջ արձակում չկայ:” Ամէն մէկ մարդու գիրքը կ’որոշուի այն իմաստութեան համեմատ որով անիկա կ’ուսումնասիրէ իր կարողութիւնները, կը գնահատէ իր վայելած շնորհքները և զանոնք հաւատարմաբար կը ծառայեցնէ Աստուծոյ կամքին:

Ուս կառավարութիւնը տարիներ առաջ որդեգրեց աշխարհավարութիւն մը որ հակառակ էր ճշմարիտ իմաստութեան և միջազգային բարոյականի: Անիկա հակառակ բարեկամ պետութիւններու ու մանաւանդ հակառակ ճարտնի բողոքներուն՝ յառաջ տարաւ իր խորհուրդը, և իր աշխարհավարութիւնը յաջողցնելու համար՝ ընտրեց երևելի կուսակալ մը ու երկրին ամէնէն համբաւաւոր զօրապետները. անոնց տրամադրութեան տակ դրաւ ահագին բանակ մը չինայելով հպատակներու կեանքին և ոչ ալ պետական գանձին: Բայց այդ մեծ և յանդուգն ձեռնարկին ու պատրաստութեան մէջ կը գտնուէին տկարութեան և պարտութեան սերմերը: Նախ՝ զի կառավարութիւնը չզգալով արդարադատ Աստուծոյ մը առջև իր պատասխանատուութիւնը, ելաւ անիրաւութիւն գործելու ուրիշ տկար սեպուած ազգի մը. ու երկրորդ՝ զի անոնք որոնց յանձնուեցաւ այդ անխիղճ աշխարհավարութեան գործադրութիւնը՝ պարտազանց գտնուեցան, և փոխանակ իրենց յանձնուած գանձե-

ըը հաւատարմաբար գործածելու՝ բանակը լաւ վիճակի մը մէջ դնելու համար, իւրացողին անոնցմէ ահագին գումարներ, և անհոգ գտնուեցան այդ մեծ գործին առջև, այնպէս որ շատ անգամ զօրքերը օրերով անօթի կը մնային ու պատերազմի դաշտը կը հանուէին իրենց ձեռքը առանց գործածելի դէնք ունենալու։ Եւ պատերազմի դաշտին վրայ “Դատաստանի աթոռները դրուեցան,” “Գիրքերը բացուեցան” և յանձին ճափոնական յաղթապանձ բանակին՝ Աստուածային վճիռը արձակուեցաւ անհաւատարմութեան և պարտազանցութեան դէմ։

Այս աշխարհի մէջ, դժբաղդաբար, միշտ արդարին դատը չէ որ կը յաջողի։ Անիրաւութիւնը կը բարձրացնէ իր գլուխը ու արդարին դատը պաշտպանող մը չի գտնուիր։ Այս իրողութեան պատճառը երկուք է։ Առաջին՝ մեր ժամանակը այս աշխարհի մէջ չի դոցեր մեր կեանքին ամբողջ շրջանը, և բնականաբար մեր այս թերի շրջանին մէջ վարած կեանքին վարձատրութիւնները անհաւասար կ'ըլլան։ Երկրորդ՝ վեհ գործ մը կրնայ տկար կերպով կատարուած ըլլալ։ Գործին վեհութիւնը յաջողութեան երաշխաւորութիւն չէ։ մարդ ստիպուած է այդ գործին յաջողութիւնը ապահովող միջոցներ ձեռք առնել։

Քրիստոնէութիւնն իսկ շատ յամրաբայլ յառաջ կ'ընթանայ. և ինչո՞ւ։ Քրիստոսի

յայտնած ճշմարտութեան, անոր սիրոյ հոգիին և հրապուրիչ սկզբունքներուն մէջ թերի կողմ մը չի գտնուիր։ Բայց սա իրողութիւն մըն է որ անկէ ո՛չ մենք կ'օգտուինք ըստ արժանւոյն և ո՛չ ալ աշխարհ պէտք եղած օգուտը կը քաղէ։ Պարտաճանաչ չենք. երեսի ամօթով կ'ընենք մեր խոստովանութիւնները և դարձեալ կը շարունակենք մեր կիսամեռ վիճակը։

Իորայեւացիք իրենց բարոյական և հոգևոր յետադիմութեանը մէջ կարող չեղան կայնիլ փղշտացիներուն առջև, և լուր դրկեցին քահանայապետին ու բերել տունին Ուխտին Տապանակը. Ուխտին Տապանակը՝ որով Յորդանանու ջուրերը ձեղքուեցան, Երկրովի պարիսպները ինկան և մեծամեծ հրաշքներ գործուեցան, երբ անիկա կ'ընկերանար ժողովուրդին կենդանի հաւատքին և կորովի բարոյականին։ Իսկ երբ փղշտացիք իմացան թէ Ուխտին Տապանակը բերուած է, սկսան զիրար յորդորել ըսելով, “Ուժովցէ՛ք և կտրիճ եղէք. եթէ ոչ ո՞վ պիտի ազատէ մեզ այդ զօրաւոր Աստուծոյն ձեռքէն. չըլլայ որ մենք անոնց ծառայ ըլլանք. կտրիճ եղէ՛ք և պատերազմեցէ՛ք։” Բայց Իորայեւացիք իրենց վատասերումին մէջ չկրցան օգտուիլ Տապանակին ներկայութենէն, և մեծ պարտութիւն մը կրեցին։ Քու գործը, որքան ալ վեհ ըլլայ, փոխան օրհնութեան անէճք

պիտի բերէ քեզի, եթէ անոր հանդէպ քու անձնական պարտականութիւնդ ճանչնալու մէջ թերի գտնուիս : Փղշտացիք յաջողեցան, որովհետեւ թէև խաւարի մէջ էին և չաստուածներու կը ծառայէին, բայց իրենց ընդունած լոյսին համեմատ հաւատարիմ էին :

Պետրոս առաքեալ կ'ըսէ թէ Գատաստանը մեզմէ կը սկսի . և Յիսուս նոյն բանը կը շեշտէ երբ կ'ըսէ թէ Որու որ շատ տրուեցաւ, անկէ շատ պիտի պահանջուի :

Մոռնալու չենք որ Աստուած մեզմէ ոչ միայն հաւատարիմ աշխատութիւն կը պահանջէ, այլ նաև արթուն միտք և արթուն խիղճ, որպէս զի իմաստուն ընտրութիւն ընենք մեր կեանքի նպատակին համար : Հաւատարիմ աշխատողներ կան որոնք պարապ տեղը ճիգ կը թափեն քանզի սխալ ուղղութիւն մը բռնած են . մեծ աշխատութիւն կու տան այնպիսի բանի մը որ արժէք չունի . “Ծակոտ գուփեր կը շինեն որոնք չեն կրնար շուր պահել :” Աշխատելու ենք բարձր նպատակի մը համար . բայց ոչ միայն բարձր նպատակի մը, այլ՝ ամէնէն բարձր նպատակին համար : Ճարտարապետը մեծ աշխատութիւն կու տայ փայտեայ շէնք մը կառուցանելու համար . հաւասար հաւատարմութիւնով կը հսկէ մինչ մարմարիոնէ պալատ մը կը շինուի : Երկու պարագաներուն մէջ ալ ճարտարապետը հաւատարիմ կը գտնուի, բայց

մէկ շէնքին համար միայն 50 տարուան համբաւ կը վայելէ իսկ միւսին համար 500 տարուան համբաւ :

Աստուած թանկագին նիւթեր կը յանձնէ մեզի իրբև բարոյական էակներու, և կը պատուիրէ մեզի շինել ոչ թէ խրճիթներ որոնց կեանքը կարճ է, այլ՝ պալատներ որոնք կրնան ծառայել իրբև մշտնջենական բնակարաններ :

Իբրև մղում հաւատարմութեան՝ Աստուած օժտած է մեր բնութիւնը պատասխանատուութեան գիտակցութեամբ, և իր Սուրբ Գիրքին մէջ շեշտած է թէ օր մը հաշիւ պիտի տանք իրեն : Գատաստանի աստուծոնքը պիտի դրուին, ու գիրքերը պիտի բացուին : Մեր կեանքին արդիւնքը, մեր առօրեայ գործերը և այն ամէն շնորհները զորս կը վայելենք՝ արձանագրուած պիտի գտնենք վերոյիշեալ գիրքերուն մէջ, Ասիկա շատ անգամ անհաւատալի կը թուի մեզի, և շատ անգամ ինքզինքնիս կը մխիթարենք սա խորհրդով թէ մոռացումներ պիտի ըլլան, և թէ մեզմէ խիստ հաշիւ չպիտի պահանջուի : Սակայն ինքզինքնիս խաբելու չենք . վասն զի այս արձանագրութիւնները այնպիսի տեղ մը կը գտնուին, և այնպիսի կերպով դրուած են որ Աստուծոյ մեզի տուած բնութիւնով՝ անցեալին հետ մեր դէմ առ դէմ գալը անխուսափելի է :

Գիրքին առաջին էջը որու կրնանք դիմել Սատուծոյ գիտակցութիւնն է : Ասիկա ցնցող ու արդարեւ յոյժ ահաւոր խորհուրդ մըն է թէ մեր մարդկային կեանքին արձանագրութիւնը — մեր բարի բաներն ու չար բաները և մեր նկարագրին վերջնական ձևը — Սատուծոյ սրտին վրայ կը դրոշմուի : Մեր հոգիներուն մէջ անցած դարձածին անտարբեր նկատելու չենք զՍատուած : Գիտութիւնը մեզի կ'ըսէ թէ եթէ մատդ շարժես, մթնոլորտին մէջ յառաջ կը բերես պիւրներ որոնք շարունակ կը յառաջանան մշտնջենական շրջանակ մը կաղմելով : Այսպէս ալ Սատուծոյ մեծ բնութիւնը իր յաւիտենական էութեան մէջ կ'ընդունի և կ'ամբարէ մարդկային հոգւոյն ամէն մէկ շարժումը :

Սատուած հայր է . մենք իր նմանութիւնը կը կրենք : Սատուածային էութեան և մարդկային անհատական հոգիներու միջև համակրական յարաբերութիւն մը կայ, որ բացատրուած է հայերէն և արաբերէն բառերով : Ուրեմն ո՞րն է լաւագոյն տեղը ուր կրնանք փնտուել մարդկային հոգիին արձանագրութիւնը : Մայր մը զաւակ մը ծնած է, անոր համար նեղութիւններ կրած է, զանիկա սիրած և մեծցուցած է, բուն իր կեանքէն մաս մը տուած է անոր : Ինչ որ է, ինչ որ կ'ընէ այդ զաւակը՝ չի կրնար անտարբերութեամբ դիտուիլ իր մօրմէն : Երբ այն վշտա-

նայ, մայրն ալ կը վշտանայ . երբ զաւակը ուրախ է, մայրն ալ կ'ուրախանայ . երբ զաւակը կը մեղանչէ, մայրը կ'ամչնայ . երբ զաւակը կը գործէ ազնուօրէն, մօրը հոգին կը բերկրի, մայրը կը փառաւորուի : Մօրը բովանդակ բնութիւնը զգայուն է զաւակին ամէն մէկ գործին : Բացէ՛ք այդ մօրը սիրտը և ահա՛ իբր գիրքի մը էջերէն պիտի կարդաք տպաւորութիւնը այն ամօթին զոր զաւակին մեղքը պատճառած է անոր, և տպաւորութիւնը այն վէրքերուն՝ զոր զաւակին քաղցրութեան և ճշմարտութեան հակառակ խօսքերը թողած են . կամ, ընդհակառակը, պիտի կարդաք հոն զաւակին փրկութեան, ու աղնիւ մաքառումով ձեռք բերուած պանծալի նկարագրին պատճառած ուրախութիւնը : Այո՛, վայրկեանէ վայրկեան Սատուծոյ սիրազեղուն բայց արդար հոգիին վրայ կը թողունք մեր դրոշմը : Եւ այն օրուան մէջ Սատուած պիտի բանայ իր սրտին գիրքը, ու այն ատեն տիեզերքը պիտի հասկնայ թէ մարդ իրեն համար ի՛նչպիսի արձանագրութիւն մը ըրած է յաւիտենական արդարութեան և սիրոյն վրայ :

Այս գիրքին երկրորդ էջը մարդուն նկարագիրն է : Հետաքրքրական փորձ մը կատարուած է . հարիւրաւոր քաջ կշռող պողպատէ ահագին ձող մը կը կախեն նուրբ բայց զօրաւոր պողպատ թելէ մը : Ձողը բացարձակ հաւա-

սարակչուութեան մէջ է. անշարժ է: Յետոյ կ'առնեն կտոր մը սունկ, որ թերևս 5 արամ կը կշռէ, ու մետաքսէ խիստ թեթև թելով մը զանիկա պողպատէ մեծ ձողին քով կը կախեն: Յետոյ կարգադրութիւն մը կ'ընեն որով սունկը պողպատէ ձողին կը զարնուի թեթևօրէն: Եթէ նոյն իսկ մեծ մուրճով մը զարնէին, այդ հարուածը չպիտի կրնար ծանր ձողը շարժել, ո՛րքան քիչ ազդեցութիւն պիտի ընէր թեթև սունկը: Բայց թեթև հարուածները կը շարունակուին 1,000, 10,000, 100,000 անգամ, և սակայն ձողը չի շարժիր: Վերջապէս կը տեսնուի թէ մեծ ձողը կը սկսի դողալ ու քիչ վերջը զօրաւոր շարժումով մը ետ ու առաջ կը տատանի մեծ ճօճանակի մը պէս: Բացատրութիւնը պարզապէս սա է թէ՛ սունկին ամէն մէկ թեթև հարուածը, որ չէր թուեր թէ ազդեցութիւն մը կը գործէր, բնական օրէնքի մը գործողութեամբ ձողին մարմնոյն մէջ կ'արձանագրուէր: Իւրաքանչիւր հարուած կ'արտադրէր անհունապէս դոյզն շարժում մը որ ձողին մէջ կ'ամբարուէր, մինչև որ բիւրաւոր հարուածներով բաւական շարժում դիզուեցաւ ձողը շարժելու համար:

Մարդու մը նկարագիրը իր վրայ գործուած անհամար ազդեցութիւններու մթերանոցն է: Չկայ խորհուրդ մը, չկայ խօսք մը, չկայ գործ մը, որքան ալ աննշան, որ մեր մէջ

գտնուած բարի կամ չար զօրութեանց մթերքը չաւելցնէ, ու առոնք վերջապէս պիտի որոշեն մեր կեանքին ուղղութիւնը: Ուստի եթէ չար ազդեցութեան մը տակ կը գըտնուինք, անկէ ազատուելու համար՝ աւելի զօրաւոր հակակշռող բարի ազդեցութիւններ պէտք են: Մա խորհուրդը թէ մենք ազդեցութիւն ունինք մեր անձերուն վրայ, թէ մեր ամէն մէկ խօսքն ու գործը մեր նկարագրին վրայ մնայուն տպաւորութիւն կը գործեն՝ մեզմէ ամէն յոյս պիտի չնջէր, եթէ Աստուծոյ սէրը, որ Գրիստոս Յիսուսով յայտնուած է, մեզի օգնութեան չհասնէր: Ուրեմն ո՛րքան կարևոր է որ կեանքին ճամբան սկսող երէտասարդը կեանքին կարևորութիւնը այնպէս զգայ որ Գրիստոսի օգնութիւնը փնտռէ, “Ո՛հիւ ու դողով իր անձին փրկութիւնը գործելով.” “Գիտնալով թէ Աստուած է որ կը գործէ իր մէջ.”

Եւ բացուելիք գիրքին մէկ ուրիշ էջն ալ մեր ընկերական կեանքին մէջ կը գտնուի: Աստուած ըսած է, “Քու ընկերդ սիրես...:” Մենք անշատ և անկախ անհատներ չենք որ կայինք կամ իյնանք միամիակ կամ մենք մեզմով: “Ոչ ոք կ'ապրի իր անձին համար, ոչ ոք կը մեռնի իրեն:” Մենք ընկերական յօրինուածին մասն ենք, ու անհատին փրկութիւնը կը պահանջէ ընկերութեան փրկութիւնը: Բացուած գիրքին այս էջին սկիզբը

գանուող առաջին ցնցող նախադասութիւնը
 աս է, “Ո՛ւր է քու եղբայրդ Հարէլ:” Բովան-
 դակ պատմութեան մէջ մեծագոյն անունը
 Յիսուսի անունն է: Առաքեալը մեզի կ'ըսէ
 թէ անիկա բարձրացաւ իշխան և Փրկիչ ը-
 լալու, որովհետև ժողովուրդին համար մահը
 յանձն առաւ: Թէև հարուստ էր, սակայն
 մեզի համար աղքատացաւ, որպէս զի Անոր
 աղքատութեամբը մենք հարստանանք: Յի-
 սուսէ ետքը կու գայ վկաներու մեծ բազմու-
 թիւնը, որ բազկացած է մեծ ու բարի, խո-
 նարհ ու հաւատարիմ անձերէ, որոնք ծա-
 ռայելը իրենց թագ ու պսակ, ուրախութիւն
 ու պարծանք համարած են: Դատաստանի
 մէջ ո՛չ միայն դուն պիտի կայնիս Աստուծոյ
 առջև, այլ նաև քեզի հետ ու քու քովդ
 պիտի կայնի այն փոքրիկը զոր “գայթակղե-
 ցուցիր,” այն ընկերը՝ զոր մասնեցիր, այն
 դրացիդ՝ որուն կարօտութեան ատենը օգնու-
 թիւնդ դլացար, այն անձը՝ զոր անմաքուր
 խօսքով կամ թեւադրութիւնով մը արատա-
 ւորեցիր. ու վերջապէս քու քովդ պիտի
 կայնին այն բոլոր բարի դատերը որոնց
 միջոցով կրնայիր ընկերութեան վերածնու-
 թեանը նպաստել, բայց չուզեցիր քու
 օժանդակութիւնդ նուիրել անոնց: Գոհու-
 թիւն Աստուծոյ որ ո՛չ միայն մեր վրիպում-
 ներն ու պարտազանցութիւններն արձանա-
 գրուած են, այլ և ուրիշներու համար մեր

քաղցրութիւնները, մեր օժանդակութիւնները,
 մեր անձնուիրութիւնները, ու որևէ բարի
 գործի համար մեր ըրած օգնութիւնը — բոլոր
 ատենք գրուած են մեր դրացիին սրտին վրայ,
 և երբ անոր սիրտը բացուի Աստուծոյ առջև,
 այն ատեն լուսեղէն տառերով պիտի երևի
 մարդուն իր ընկերին մատուցած ծառայու-
 թեանց արձանագրութիւնը:

Դ՛ուք, երիտասարդներ, աւարտեցիք ձեր
 նախապատրաստական մէկ շրջանը կեանքի այն
 ասպարէզին համար որու Աստուած կ'առաջնոր-
 դէ ձեզ այս աշխարհի մէջ: Ձեզի համար իմ
 աղօթքս աս է որ դուք զարգանաք պատասխա-
 նատուութեան զգացումով՝ յիշելով սա երեք
 բաները իբրև ձեր կեանքը որոշող ազդեցու-
 թիւններ: 1. Թէ ձեր իւրաքանչիւր գործը ունի իր
 յարաբերութիւնը Աստուծոյ հետ, և թէ դուք
 ձեր ջանքերուն արձանագրութիւնը կ'ընէք
 Աստուածային համակրանքին վրայ: 2. Թէ
 Յիսուսի սիրալիր համակրութեան և օգնութեան
 շնորհիւ ձեր նկարագիրները կը կազմէք:
 Դուք ձեր ամէն օրուան կեանքով կը կազ-
 մէք այն նկարագիրը որով պիտի կայնիք դա-
 տաստանի ակօռներուն առջև: 3. Դուք ըն-
 կերային յօրինուածին անդամներն էք. ունիք
 հայրեր՝ որոնց պարտիք հնազանդիլ, մայրեր՝
 զորս սիրելու էք, եղբայրներ ու քոյրեր՝ ու-
 ըրոնց նկատմամբ սէր ու գորով տածելու էք,
 ընկերներ՝ որոնց վրայ բարի ազդեցութիւն

ձգելու էք, թշնամիներ՝ որոնց ներելու էք,
մեղաւորներ՝ զորս պարտական էք փրկութեան
առաջնորդել, իշխաններ՝ զորս պատուելու
էք, աղքատներ՝ որոնց օգնելու էք, եկեղե-
ցին ու բարի գործեր՝ որոնց նպաստելու էք,
որպէս զի ձեր օգտակար կեանքերով փա-
ռաւորէք ձեր Հայրը որ երկինքն է :



ՅԱՆԿ

	էջ
1. Ո՞վ ծարաւ է (Յովհ. Է. 37) : վեր- Ատողֆ Մոնօ	3
2. Փրոֆ. Յակոբոս Հ. Ճէճիղեան (Սաղ- Ը. 3-6) :	54
3. Աստուծոյ գործը (Յովհ. Զ. 28, 29) : վեր. Փրոֆ. Աղեքսանդր Վինէ	71
4. Աստուծոյ գործը (Մասն Բ. Յովհ. Զ. 28, 29) : վեր. Փրոֆ. Աղեքսանդր Վինէ	97
5. Վշտաց մէջ ուրախութիւն (Յակ. Ա. 2-4) : վեր. Մանասէ Կ. Փափաղեան	129
6. Մղեղ (Սաղ. Ա. 4) : վեր. Գաւմէ Ապլահատեան	148
7. Պահուած կեանքը (Կող. Գ. 3) : վեր. Տոգ. Հ. Ս. Պարնըմ	164
8. Մխիթարիչը և աշակերտները (Յովհ. Ժ. 9. 12-15) : վեր. Տոգ. Պ. Ֆ. Ուէսթ- ըրթ	179
9. վեր. Գ. Մարտիրոս Շմաւոնեան (Ե- րեմ. ԽԸ. 10) :	193
10. Զատիկի Բարող (Յայտ. Ա. 17, 18) : Եպիսկոպոս Յիլիփս Պրուքս	218
11. վեր. Արսէն Պ. Շմաւոնեան (Գոր. Բ. 36) :	248
12. վեր. Տոգ. Ը. Զէյմպըրս (Յայտ. Ի. 12) :	258

M. 4

1. Die ... (p. 15)
 2. Die ... (p. 16)
 3. Die ... (p. 17)
 4. Die ... (p. 18)
 5. Die ... (p. 19)
 6. Die ... (p. 20)
 7. Die ... (p. 21)
 8. Die ... (p. 22)
 9. Die ... (p. 23)
 10. Die ... (p. 24)
 11. Die ... (p. 25)
 12. Die ... (p. 26)

1m

2

Un. S.

2259

«Ազգային գրադարան»



NL0029288

2155